

ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱՋԻՒԹ

№ 10 1894

ՅՈՎԵՍԵՐԵՐ

1894 № 10

ՎԵՃԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊՈՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1894


Дозволено цензурою. Тифлисъ, 25 Октября, 1894 г.

Թագաւոր Կայսր **ԱԼԵՔՍԱՆԴՐ III** ժամը 2-ից
15 րոպէ անց կէսօրից լետոյ հոկտեմբերի 20-ին
խաղաղ ի Տէր հանգեաւ Լիւադիալում:

Հանգուցեալ Կայսեր մարմինը Պետերբուրգ փոխադրւեց և
հողին յանձնեց նոյեմբերի 7-ին:

ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II

Համայն Ռուսաստանի զահը բարձրացաւ Նորին Մեծութիւն Կայսր
Նիկոլայ II, Օգոստավիառ Որդին հանգուցեալ կայսր Ալեքսանդր III-ի:
Կայսր Նիկոլայ II նոյեմբերի 14-ին պատկադրւեց Մեծ Իշխա-
նուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի հետ՝ ծնեալն Ալիսա Հեսսենեան:



11. 1812. 1812.

vii ՏԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ

"ՄՈՒՐՃԱ"

ՏԱՐԻ VII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱՐՈԿՈԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻՍԿ. ՀԱՄԱՐ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃԱ» ամսագիրը 1895 թւականին կը հրատարակւի նոյն ծրագրով և նոյն գիրքով, որպէս և նախկին վեց տարիներում։
«ՄՈՒՐՃԱ»-ը, որպէս անցեալում, նոյնպէս և ապագայում՝ կը բովանդակի։

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին։
- II. Վէսեր և պատմածքներ։
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ։
- IV. Նկարագրական-ճամբորդական։
- V. Գիտական հանրամատչելի յօդւածներ։
- VI. Հետազոտութիւններ տնտեսական, սոցիալական, պատմական։
- VII. Գրական քննադատութիւն։
- VIII. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի։
- IX. Ժամանակակից Տեսութիւն մեր կեանքի ընթացիկ խնդիրների և այլ յօդւածներ մեր ժամանակակից ներքին կեանքից։
- X. Գաւառական նամակներ։
- XI. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից։
- XII. Քաղաքական տեսութիւն։
- XIII. Զանագան լուրեր։
- XIV. Յայտարարութիւններ և տեղեկատուներ։

«ՄՈՒԲՃ»-ի ԳՐԱԿԱՆ ՄԱՍԻ ապահովւած է բազմաթիւ աշխատակիցներով, որոնց կազմը ուժեղանում է նորերի նպաստներով։

Ներկայ 1894 թւականի մինչ ներկայ այսը աշխատակցել են «ՄՈՒԲՃ»-ին հետևեալ անձերը՝ որոնց անունները դասւորում ենք ըստ աշխատակցութեան հնութեան։

- | | |
|---|---------------------------|
| 1 Արասիսանեանց, Ա. | 21 Դազբաշեան, Յար. |
| 2 Մանուէլեանց, Լեռն | 22 Յակոբեան, Յակոբ |
| 3 Վարդանեանց, Գր. | 23 Խանջաղեան, Խորեն Քահ. |
| 4 Ծատուրեան, Ալ. | 24 Աստւածատրեանց, Գէորգ |
| 5 Միթմալեան, Արշալուս
(Նոյնը և Արգահատեան) | 25 Աղելեան, Ա. |
| 6 Ղազարեան, Երևանդ | 26 Բահամթիւան, Սարգիս |
| 7 Արծրունի, բժ. Վահան
(Նոյնը և Ֆելիքս) | 27 Ղյոճեան, Արսէն Վարդ. |
| 8 Խաժակնեան, Գ. | 28 Մարդանեան, Ֆրիդրին |
| 9 Նաւասարդեան, Մկրտ. | 29 Տէր-Մարտիրոսնեան, Միք. |
| 10 Փափազեան, Վ. | 30 Յովհաննիսեան, Միք. |
| 11 Վանցեան, Գր. | 31 Միրիմանեան, Յար. |
| 12 Մնացականեան, Գարր. | 32 Մելքոնմեան, Մ. |
| 13 Բաշնչաղեան, Գէորգ | 33 Դուրբախեան, Յովհ. |
| 14 Մուրագեան, Յակոբ | 34 Տէրեան, Ստ. |
| 15 Ղարաջեան, Գէորգ | 35 Սողոմոնեան, Բ. |
| 16 Աթանասեան, Աշոտ | 36 Մէղնիկեան |
| 17 Բալաղեան, Սամուէլ | 37 Գնունի, Յովհ. |
| 18 Զաքարեան, բժ. Թագէոս | 38 Տէր. Մկրտչեան, Մ. |
| 19 Աղայեան, Ղազարոս | 39 Մինասեան, Երև. |
| 20 Վըուլ | 40 Դեմիրճեան, Դերինիկ |
| | 41 Բահամթիւան, Լեռն |
- Բաժանորդ գրւելու համար պէտք է դիմել՝
Խմբագրատունը—Տիֆլիս, և բարեկցիո „ՄՈՐՎԵ“
Արտասահմանից—Tiflis, Rédaction „MOURTCH“:
Կամ մեր գործակալութիւնները (ան կազմի վերջին երեսը):
ԲԱԺԱՆԱՐԴԱԳՐԻՆ է 10 ռուբլի տարեկան։
- Աւուցիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի:
ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռ. (կամ
4 ռ.) սկզբում, մնացածը մինչ առաջին կիսամեակի
լրանալը:

ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ

ԳԵՂԻՐԳ. ԲԱՇԻՆԶԱՂԵԱՆԻ

Զմեռայ աստեղազարդ անամակ երկինքը կամար էր կապել սառած երկրի վրա և կարծես ճիգ էր թափում լոյս թափանցել բոլոր մութ անկիւնները։ Լուսնի բարակ աղեղը արդէն վաղուց երեացել և անյայտացել էր։ Գիւղը թմրում էր խաւարի մէջ, սակայն այս ու այնտեղ ցիր ու ցան եղած խրճիթների միջից ճրագների նւազ լոյս էր դուրս ցոլանում։ Ցոլանում էր տիսուր և խղճալի կերպով, իր մէջ պարզ ցոյց տալով բնակիչների աղքատութիւնը։ Զիւնի նշան անգամ չէր նշմարւում ամբողջ տարածութեան մէջ։ Փշում էր սուր քամին և ամեն ինչ սառեցնում ցամաքեցնում էր։ Երբեմն-երբեմն լսում էր դանդաղ հաջոց, երեխ մի պառաւ դամփուի, որ կարծես ուժով ստիպում էր իրան այդ անելու, իր պարոքը կատարած լինելու համար։ Մի քանի կտուրների միջից ծուխ էր բարձրանում և խկոյն ցրում անյայտանում խաւարի մէջ։ Գիւղից մի փոքր հեռու, երկնքի մութ ֆոնի վրա, կրկնագատիկ մութ գոյնով նկարւում էր փոքրիկ եկեղեցի, որի կտուրի վրա նշմարւում էր համաշափութիւնից զուրկ սե խաչ։ Եկեղեցու կողքին բարձրանում էր կմախք զարձած հինաւուրց մի ծառ։ Այդ ծառի ամենացած ճիւղերից մէկի վրա կախւած էր միակ զանգակը։ Եկեղեցին կանգնած էր տերեւաթափ թփերով ծածկւած ըլուրի վրա։ Քամու ընդմիջելու բովէներին խուլ կերպով լսում էր միահնչիւն տաղտկալի ձայն։ Դա մի փոքրիկ աղքիւր էր եկեղեցուց ոչ շատ հեռու։ Գիւղից գուրս երեսում էր սե անորոշ տարածութիւն, և այս տարածութիւնը միախառնեում էր հորիզոնի վրա գտնւած լեռների

հետ, որոնք սահման էին դրել երկնքը: Երկինքը սաստիկ մութէ էր, բայց թափանցիկ, և այդ մութ անսահմանութեան վրա շարւել էին անթիւ աստղեր զանազան մեծութեամբ և ջոկ-ջոկ խըմբակներով: Նրանցից շատերը դիտում էին անշարժ, իսկ շատերը, ընդունելով աղամանդի բոլոր երանգները, տատանւում էին անհուն տարածութեան մէջ: Նրանց մօտով երբեմն-երբեմն անցնում էին արագութեամբ փայլուն գծեր ու խոկոյն մարում: Այդ միջոցին գիւղի ծայրում, մի լայնածաւալ խրճիթ բագում, ուր ցըիւ էին տրւած զանազան անորոշ կուտակներ, հաւաքւած էին մի քանի երեխաներ: Նրանք ծալապատիկ նստած էին տախտակներով ծածկւած թռնրի վրա: Թռնրի մէջ կրակ կար, անշուշտ այդ օրը հաց էին թխել: Ցնցոտիների մէջ փաթաթւած և հագիւ մարմինը ծածկած երեխաները ալինդ կպէլ էին միմեանց և կոնկորնում էին, թէւ տակից այրում էր նրանց թռնրի տաքութիւնը: Նրանք երկար ժամնակ նստած այստեղ պատմութիւններ էին անում զանազան դէպերից ու արկածներից, ով ինչ լսել էր կամ տեսել:

—Վերջացրու, Միխօ, Սանդրօն էլ չի խանդարի... Սանդրօ ջան, քեզ մատազ, մի՛ խանդարի, Ասոււած վկա՞՝ միրդ կը տամ, երբ կ'ունենամ, աղաչում էր կապտաչեայ ու գեղեցկագէմ մի երեխայ:

—Ով է խանդարում, Սաքօ... Ես չեմ խանդարում, թռող ինչ ուղում է պատմէ: Ես հանաք արի, Միխօ, իսկ դու քոծի նման միշտ պատրաստ ես լալու:

—Միխօն լուռ էր: Յոնքերը կիտած, վիրաւորւած դէմքով նայում էր ցած և անդադար բամբակ պոկում իր մաշւած բանկոնի փեշերի միջից: Դրա կողքին նստած էր իրանից գուցէ մի տարով փոքր երեխայ, չափից դուրս նիհար ու ծաղկատար դէմքով և մեծ զլխով: Հազին ունէր անթիւ կարկատաններով ծածկւած մի անձունի բան, որ չէր կարելի հաստատ ասել թէ սկզբում ինչ է եղել: Այսքան միայն կարելի էր ենթադրել որ դրա հագնողը պէտք է լինէր հաստամարմին տղամարդ կամ զիի կին: Նրան անւանում էին գիւղում «Փարաջա» հէնց այդ շորի պատճառով: Փարաջան կոյց էր երկու աչքով: Մի քանի բոսէ լուսութիւնից յետոյ սա Միխօի ականջին փսխաց՝ «ցաւմում է դարձեալ»: Միխօն շպատասխանեց,

միմիայն թեթև կերպով իր մարմինը շարժելով ուզեց հասկացնել թէ խօսել չի ցանկանում:

—Նարունակիր էլի, Միխօ, հրամայական ձեռով նորից դիմեց Սանդրօն: —Նարունակիր, թէ չէ իսկոյն կը վռնտեմ այստեղիդ քեզ էլ, Փարաջին էլ:

Վիրաւորւած՝ այս երկու մանուկները իրար աւելի կպան և չհամարձակւեցին խօսք ասելու: Դրանք հարազատ եղբայրներ էին:

—Մի վռնդիր, Սանդրօ ջան, —նորից աղաչեց Սաքօն, —թող տաքանան այստեղ, մեղք են:

—Ինչ լաւ կօշիկներ ունես, Սանդրօ, ով գիտէ իսկի ոտներդ չի մրսում, —խօսեց մի ուրիշ երեխայ ժալուալով, —հայրդ երեխ նորից կը բերի քաղաքից քեզ համար, երբ այդ կը մաշես:

—Ի հարկէ նորից կը բերի, ընդմիջեց Սաքօն, Սանդրօի հօր նման մի հարուստ մարդ...

—Զես ուզում, Փարաջա, քեզ բաշխեմ կօշիկներս, դիմեց Սանդրօն ծաղրելով: Այդ միջոցին մեկնեց իր ոտները դէպի նաև ծնկներին ամուր գիտցրեց: Փարաջան անսպասելի հարւածից ցնցւեց ու, ծումուելով դէմքը, արձակեց մի խուլ և անորոշ ձայն: Բոլոր ներկայ եղողների մէջ լուռնթիւն տիրեց: Սանդրօն ուշադրութիւն շարժնելով իր անգութ վարմունքի վրա, նորից մեկնեց ոտները դէպի Փարաջան և կեղծ փաղաքշութեամբ հարցրեց: —Զես ուզում, Փարաջա, քեզ բաշխեմ կօշիկներս... Տղերք, ես կը պատմեմ մի լաւ հէքիսթ, միայն այն պայմանավ, որ սուս ու փուս նըստէք ու լսէք:

Ոչ ոք նրան չպատասխանեց: Նրանք լաւ գիտէին որ հէքիսթ ասելու մտադրութիւնն չունի, սակայն ոչ մէկն էլ չհամարձակւեց այս մասին խօսք ասելու: Սանդրօն իր կերպարանքին լրջութիւն տալով սկսեց.

«Արաբստանում մի թագաւոր կար, գեղեցիկ սև աչքերով ու փոքրիկ սիրուն զլիսով: Հազին ունէր զառ ու զսրբաբ, դրա անունն էր Փարաջա...» Երեխաներից մի քանիսը յանկարծ ծիծաղեցին ու խսկոյն ընդհատեցին, իրանց վիրաւորւած զգալով:

—Գողի զաւակ, լիրը, կատաղած ձայնով բացականչեց Միխօն ու արագութեամբ վերթուաւ աեղից, իշաւ թոնրի վրացից և սկսեց իր յետելից քաշել կոյր եղբօրը:

Սանդրօն դեռ մի բոպէ սառած մնաց, իսկ յետոյ, արագութեամբ իջնելով թոնրի վրայից, վազեց դէպի տուն: Միխօն, երեխ միտքը հասկանալով, դէս ու դէն ընկաւ, սկսեց քարեր որոնել. հաղիւ պոկեց սառած գետնից երկու հատ, շտամով դրեց Փարաջի ձեռքը ու նորից սկսեց որոնել: Միւս երեխաների մէջ նոյնպէս իրարանցում ընկաւ: Ամենքը իջան թոնրի վրայից ու ոսներով սկսեցին քարեր որոնել: «Եկ, Միխօ, քար գտաց... Արի պոկիր, շուտ արաւ ամեն կողմից դիմում էին երեխաները հազիւ լսելի ձայնով, վախենալով որ հեռու չլսւի:

Փարաջան մէջքը ամուր կպցրեց թոնրին, գլուխը մի փոքր թեքեց ու ականջները սրեց: Մի վայրկեանից յետոյ բացականչեց՝ «Քալիս է, գալիս է, օգնեցէք»: Այդ միջոցին երևաց Սանդրօն: Նա աջ ձեռքին մտրակ ունէր, իսկ ձախ ձեռքով մի ահագին շուն էր քարշ տալիս իր յետելից: Մօնեցաւ թոնրին ու նշան տւեց շանը: Նունը հազիւ սկսեց հաջել, որ Փարաջան քար արձակեց և դիպցրեց ուղղակի գլխին: Նունը «Ճիկա» տալով վազեց հեռացաւ:

«Հա զոշաղ» բացականչեց Միխօն, ընդունելով վճռողական դիրք: Սանդրօն մտրակը բարձրացնելով ուզեց յարձակել Փարաջայի վրա, բայց նկատելով որ իր դէմ նոյնպէս քար է ուզզած, վազ տւեց դէպի տուն կատաղութեամբ աղաղակելով «աղքատներ, քաղցածներ, քոռ» և անյայտացաւ մթութեան մէջ:

Մի քանի բոպէից յետոյ երեխաները նորից հանդարտեցան: —Տղերք, նստեցէք թոնրի վրա, բարկացած ձայնով խօսեց Միխօն, Սանդրօն գնաց կորաւ:

Երբ երեխաները բարձրացան թոնրի վրա ու առաջւայ նման նստեցին, անսպասելի կերպով մօտեցաւ նրանց մի ծերունի մարդ: Արտաքին տեսքից կարելի էր եզրակացնել որ նա աղքատ է: Մերկ մարմնի վրա հազին ունէր միայն մի մաշւած վերարկու: Չեսքին ինչ որ կապոց ունէր: Երեխաները իսկոյն ճանաչեցին նրան: Նա գիւղում յայնի էր: Նրա իսկական անունը Սրապիոն էր, սակայն համարեա ոչ ոք չգիտէր աչդ: Եռլորեքեան նրան անւանում, էին Ղալիոն: Նրա մասին շատ անեկդոտներ էին պատմում և այնքան տարածւած էին այդ անեկդոտները, որ գիւղի բոլոր երեխաներն անդամ բերան էին արել, և երբ փողոցում հանդիպում էին Ղա-

լիոնին, սկսում էին պատմել և ջգրեցնել։ Հասարակ խօսակցութեան աւարկաց էր զառել թէ ինչպէս Ղալիոնը ձմեռւայ ամենացուրտ օրերին իր հօր զերեզմանի վրա խարոյկ էր վառում, որպէս զի հանգուցեալը տաքանաց։ Պատմում էին նոյնպէս, որ մի օր գիւղի մղղուն փայտով ծեծել էր, պատճառ բերելով այն հանգամանքը, որ քահանան օրինաւոր կերպով չի խոստովանեցրել իրան, ճաշակւելուց առաջ։ Սրա նման պատմութիւններին վերջ չկար։ Ամենքը լաւ ճանաչում էին Ղալիոնին, սակայն ոչ ոք չգիտէր դրա կենսագրութիւնը։ Ոչ ոք չէր կարող մինչեւ անգամ մօտաւորապէս գուշակել թէ քանի տարեկան էր նաև նմանք ասում էին շատ ծեր է, ոմանք պնդում էին թէ ջահել է։

Մի անդամ եկեղեցու գաւթում բազմաթիւ ժողովուրդ էր հաւաքւած։ Այդ միջոցին անց էր կենում եկեղեցու մօտով Ղալիոնը իր սովորական վրազ քայլերով։ Ծերունիներից մինը ցանկանալով գւարճութիւն պատճառել ներկաց եղողներին՝ կանչեց Ղալիոնին, որ մօտ գայ։ «Եկ այտոեղ, Ղալիոն, եկ», կրկնեցին և միւսները։ Երբ նա մօտ եկաւ՝ ծերունին հարցրեց՝ «Ղալիոն, քանի տարեկան ես»։ Նա առանց երկար մոտածելու նայեց ծերունիների երեսին ու ասեց՝ «Ճեր քելեխին պէտք է հարբեմ», իսկ յետոց դառնալով երիտասարդներին, աւելացրեց՝ «Ճեր հարսանիքին պէտք է ուրախանամ»։ Այս ասելով հեռացաւ և շարունակեց ճանապարհը։ Նրա թոյլ կազմւածքը և կուացած մէջքը տեսնողի գութն էր շարժում, բայց մելամաղձոտ գունատ գէմքը և խելացի խոշոր աչքերը տեսնողին մի բոսկ մտածմոնքի մէջ էր գցում։ Նրա շրթունքին ոչոք ժպիս չէր տեսած։ Խնչով էր նա կերակրում—դժւար էր ասել։ Նաց մուրալ նա չէր սիրում, բայց երբ ինչ առաջարկում էին, շնորհակալութեամբ ընդունում։ Էր։ Գարնան սկզբից մինչեւ աշնան վերջը զանազան բոյսեր էր հաւաքում ու չորացնում։ Ոչ մի հանգուցեալ չէր թաղւում առանց նրա ներկայութեամբ։ Նա բոլորին յուղարկաւորում էր՝ առանց կրօնի և ազգութեան խարութեան։ Տնից մինչեւ եկեղեցի և այնուղից մինչեւ զերեզմանատուն դագաղի մի կողմը նա էր ունենում ձեռքին։ Քելեխին երբէք սեղանին չէր նստում հաց ուտում, այլ վերցնում էր բաժինը, խնամ։ Քով փաթաթում էր թաշկինակի մէջ և տանում։ Այդպիսի դէպ-

քերում՝ ներկայ եղող մուրացկանների մէջ ծիծաղ էր առաջանում, սկսում էին սրախօսութիւններ անել ու ծաղրի ենթարկել Ղալիոնին: Այս բոլորից կարելի էր եզրակացնել, որ մուրացկանները բողոքում էին դրա դէմ, թէ ինչ հիման վրա Ղալիոնը արհամարում է իրանց, քելեխին հաց ուտելու, երբ ինքն էլ նոյնն է անում, միայն զանազանութիւնը այն է, որ իրանք, այսինքն մուրացկանները, հանգուցեալի տանն են ուտում իսկ Ղալիոնը իր տանը:

Խւրաքանչիւր մեռելոցին, աղբիւրից կուժը կուժից ջուր էր տանում գերեզմանատուն և բոլորի ծարաւն էր հագեցնում: Մի անգամ մեռելոցի օրը քահանան հարցրեց՝ «Ղալիոն, ինչո՞ւ հօրդ գերեզմանը չես օրհնել տալիս: «Ծարաւ չես, տէրաեր, ջուր տամն եղաւ պատասխանը:»

Նա ապրում էր կիսաքանդ խրճիթի մէջ, ուր ամառը այնպէս էր շոք, ինչպէս զուրսը, ձմեռն էլ այնպէս էր ցուրս ինչպէս զուրսը: Այդ միակ ժառանդութիւնն էր, որ մնացել էր իրան ծնողներից:

Եկեղեցի մտնում էր տարին մի անգամ, զատկի նախընթաց օրը, ճաշակելու, իսկ ամբողջ տարւայ լնթացքում ոսք չէր կոխում այնտեղ, անմիջապէս կամ թաք էր կենում կամ զնում էր անյացանում: Նրա համար ամենասիրելի զբոսանքի տեղը գերեզմանատունն էր, ուր շատ յաճախ ամբողջ օրեր էր անցկացնում: Նա այնտեղ անգործ չէր մնում, այլ ծաղիկներ էր որոնում գաշտի մէջ և, արմատներ հանելով, զգուշութեամբ բերում էր և տնկում թարմ գերեզմանների վրա, ուր թաղւած էին մանուկներ: Այդ ամենը նա անում էր միանզամայն ծածուկ, մարդկանց աչքերից հետու:

Երեխանները շուտով ճանաչեցին Ղալիոնին: Թէպէտ նրանք երբէք բանի տեղ չէին դրել նրան, սակայն այդ վայրկեանին բոլորեքեանք հաւասար կերպով երկիւղ զգացին: Փարաջան էլ վախեցաւ, նա էլ հասկացաւ թէ եկողն ով էր: Տիրեց մեռելացին լութիւն: Ղալիոնը, առանց ձայն հանելու, երեխաններին քաշեց թոնրի մի կողմը, իսկ հակառակ կողմից երկու տախտակ բարձրացրեց ու զգուշութեամբ գետնի վրա դարսեց: Բաց արաւ իր կապոցը, որ ձեռին ունէր, հանեց այնտեղից մի երկու հատ ցնցոտիներ, կախ տւեց թոնրի մէջ և մի փոքր ժամանակ այդ դրութեան մէջ

պահեց։ Վերջապէս, մի քանի անգամ թափ տալուց յետոյ, հանեց և առաջւայ նման փաթաթեց։ Տախտակները իրանց տեղը դարսելուց յետոյ, երեխաներին էլ յարմար կերպով նստեցրեց, ուղղեց և շտապ-շտապ հեռացաւ։ Երբ նրա ուների ձայնը խլացաւ՝ նրանցից մէկը առաջարկեց ցրւել Մի ուրիշն էլ համաձայնւեց։

—Դեռ քիչ ժամանակ դարձեալ մնանք, այսուղ լաւ է, խօսեց Փարաջան, —ինչու էք վախենում Ղալիոնից, նա իսկի չարչէ, նա մեզ չի ծեծի։

Իոլորեքեան համաձայնւեցին որ Ղալիոնը չար չէ։

—Տղերք, խօսեց Սաքօն, —ի՞նչ էք կարծում, Ղալիոնը մենակ ինչպէս է քնում իր տանը, միմէ չի վախենում։

—Նա ոչ մի բանից չի վախենում, ոչ սատանացից, ոչ զեկից, պատասխանեց Միխօն, —գէտէք տղերք, մուժ գիշերներին նա դնում է գերեզմանատուն և ման է գալիս այնուեց։ Ով գիտէ, կարելի է մեռելները վեր են կենում գերեզմաններից և հետը խօսում։

Միխօի այս պատմութիւնը սարսափ ազգեց ամենքի վրա, նրանց սրտերը սկսեցին բարախել։ Քաշւեցին դէպի առաջ և պիոդ կպան իրար։ Աշխատում էին չնայել մուժ տարածութեան մէջ, քանի որ նրանց աչքերին զանազան հրէշներ էին պատկերանում։ Ընդհանուր երկիւղին մասնակից չէր Փարաջան, նա միայն լսում էր հետաքրքիր պատմութիւնը։

Սաքօն փորձեց երգել, երեխ ահի տպաւորութիւնը մոռացութեան տալու համար, սակայն այդ չաջողւեց, ձայնը չէր հնազանդւում իրան։

—Մի երգիր, խնդրեց Փարաջան, —խօսենք, խօսելն աւելի լաւ է։ Միխօ ջան, էլի պատմիր։

—Տղերք, սկսեց Միխօն, —գուք սատանայ տեսել էք։ Ես մի անգամ տեսայ։ Պօղոսենց տանից գնում էի մեր տուն, գիշեր էր, լուսինը նոր էր ծագել, հեռուից աչքիս երեւաց մարդու նման մի ինչ որ բան, Սանդրոնց տան պատին էր կպած… մի-մի անգամ շարժւում էր… ահից ծնկներս թուլացան ու վայր լնկայ։ Դա էլ կորաւ… ես վերկացայ, նա էլ նորից երեւաց… Ես երեք անգամ երեսս խաշակնեցի, երեք անգամ թքեցի ու երեք անգամ էլ կրկնեցի «փու», անիծէ քեզ երեք հարիւր վաթսուն ու երեք սուրբ

Գէորգներ»։ Այս ասելուց յետոյ վազեցի դէպի այն պատը և նա խկոյն հանդաւ, մարեց։ Այնպէս վախեցած էի, որ մեր պառաւը երեք օր աղօթում էր ինձ համար։

Այդ պատմութեան միջոցին բոլոր երեխաները գլուխները մօտեցրին միմեանց, մի քանիսներն էլ աչքերն էին ծածկել։ Փարաջան զգալով, որ ազատեւել է խմբից ու յետ է մնացել, ուզեց քաշւել դէպի նրանց։ Նրա ձեռքերը յանկարծ շօշափեցին Սաքօի և մի ուրիշի գլուխները։ Դրանք երկուսն էլ միաժամանակ ճիշ արձակեցին, ահ ու զողից բռնւեցան։ Միւսներն էլ սարսափեցին, թէպէտ պատճառը յայնի չէր իրանց։

—Ես եմ, ես, լսեց Փարաջի ձայնը։

Երեխաները փոքր առ փոքր հանդարտւեցան։ Տիրեց կատարեալ լրութիւն։ Ամենքը ի սրտէ ցանկանում էին իրանց տանը լինել, բայց ի՞նչպէս գնալին։ Զէ որ հարկաւոր էր իրարից բաժանել և առանձին-առանձին ցրւել։

—Կ'երթամ տուն, ասեց Սաքօն, —լաւ կուշտ կ'ընթրեմ, մայրս սիսեռ է եփում, կը պատկեմ ու կը քննեմ։

—Դէ վերկաց գնայ, ծաղրելով պատասխանեցին ընկերները, —էլ ի՞նչ ես նստել։

Այդ խօսակցութեան ժամանակ նորից երևաց Ղալիոնը, դարձեալ մի ինչ որ կապոց ձեռքին, մօտեցաւ թոնրին ու յենւեց։ Երեխաները այս անդամ աւելի քաջ գտնւեցան, այլ ևս չվախեցան։

—Ինչու չէք ցրւում, հարցրեց Ղալիոնը, —ցուրտ է և ուշ է։

Նրա թոյլ և խուլ ձայնը, որ առաջին անդամ էին լսում երեխաները, խիստ զուր եկաւ իրանց և կարծես միանգամայն վարաւեց այն երկիւղը, որ նախապաշտել էր զրանց։ Զգացին ծնողական զգւանքի նման մի բան։

—Սաքօն ուզում է գնալ, բայց վախենում է, ասեց Միխօն։

—Դու էլ ես վախենում, սրանք էլ են վախենում, բողոքեց վիրաւորւած ձայնով Սաքօն։

—Վախենալու ի՞նչ կայ, որդիք, Ասուած միշտ ձեզ հետ է։ Նա ձեզ սիրում է։ Վերկացէք ցրւեցէք, քնելու ժամանակ է... Ամենքիդ ես կ'ուզեցեմ... Արի զեռ քեզ տանեմ։ —Այս ասելով

բռնեց Փարաջայի ձեռքից և արագութեամբ շալակելով իր մէջքին հեռ ացաւ:

Միսօն սկզբում՝ արձանացած մնաց, յետոյ ու շքի դալով հետեւց Ղալիսնին: Ղալիսնը մէջքը կռացրած, ծանր բեռի տակ տընքալով գնում էր ու ժամանակ առ ժամանակ փնթփնթում էր՝ «ոտս ոլքւում է... Ասուած, օգնիր ինձ, որ այս ողորմելի մանկան իր տունը հասցնեմ... Եթէ վայր ընկնեմ՝ ինչ պէտք է անի այս թշւառ սպարոնը: Ոտին կոշիկ չունի... մերկ... քաղցած... ծարաւ... Ասուած շատ բան լսու է ստեղծել... բայց... բայց մի քանի բաներ չի յաջողւել նրան... Մեղաց Ասուածոյ... մեղաց... կամաց և ակամաց... գիտութեամբ և անգիտութեամբ... Մեղաց Ասուածոյ... մեղաց... շարաման...»:

—Հասանք տուն, բիձա, ընդհատեց Փարաջան:

—Կորդ ես ասում, հասել ենք... դու չես քոռ... ես չեմ քոռ: Այս ասելով բաց արաւ խրճիթի դուռալ, զգուշութեամբ չոքեց և Փարաջին ոտքի կանգնեցրեց: Յետոյ ձեռքին տալով իր կապոցը ասեց. «շուտ արեք, թաշկինակս վերագարձէք»:

Մաշւած դէմքով, կարճահասակ սպառաւ կինը, որ նստած էր խրճիթի մէջ տեղ ու չորացած հաց էր թրջում ջրի մէջ, այս տեսաբանը տեսնելով շտապով վերկացաւ տեղից ու ապշած մնաց:

—Նուտ արեք, գնում եմ, անհամբերութեամբ կրկնեց Ղալիսնը:

—Սրապիսն-աղա, երկի ուրիշ անգամ էլ դու ես բերում մեզ համար կերակուր ու լուսամուտից վայր գցում: Ասուած քեզ...

—Թաշկինակս տուր, քաջթար, գնում եմ, բարկացած ձայնով ընդհատեց պառաւի խօսքը:

Սրապիսն անունը, որ ասաջին անգամ լսեց մարդու բերանից, սարսափելի կերպով վրդովեցրեց նրան:

Պառաւը ցնցւեց, չգիտէր ինչ անէր: Մի երկու քայլ առաջ գնաց, կրկին վերագարձաւ, նայեց ժպատալով Ղալիսնին և, տեսնելով նրա այլայլած դէմքը, արագութեամբ կռացաւ գետնին և սկսեց թաշկինակը բանալ: Ղալիսնը համբերութիւնը կորցնելով յարձակւեց պառաւի վրա, խլեց ձեռքից կապոցը, ատամներով բաց արաւ, թափ տւեց միջում եղած բաները և դիմեց դէսպի դուռը:

— Աղաջան, ցաւդ...

Պառաւը ուզեց շնորհակալութիւն յոցտնել, բայց Նալիսնը, «ձայնդ կտրէ, քափթար» գոռալով ստիպեց լոել և շտապ-շտապ դուրս գնաց խրճիթից: Միխօն էլ համարեա եղբօր հետ միաժամանակ մտել էր խրճիթ և ծածկւել մութ անկիւնում, սիւնի քամակին:

Պառաւը երեխաների տասն էր մօր կողմից: Նրանց ծնողները մեռած էին և այս պատճառով պառաւը ստիպւած էր խնամելու: Լւանում էր, կարկտում էր, եփում էր և առհասարակ տանում էր այն բոլոր հողաբերը, ինչ որ յատուկ է բարեսիրո տատերին: Նրանք միանգամայն չքաւոր էին և կտոր հացի կարօտ: Ոչ մի տեղից արդիւնք չէին ստանում, ոչ մի օգնող ձեռք չունեին: Ունեցածը խարխուլ խրճիթն էր, ուր նրանք ապրում էին: Պառաւը օրէցօր ծերանում էր և գերեզմանին մօտենում, իսկ երեխաները աճում մեծանում: Խնչպէս էին արղեօք ապրում, ինչով էին կերակրում: Գիւղի շրջակացքում մի քանի հատ ուխտատեղիներ կացին, ուր մեծ մասամբ կիրակի և տօն օրերին մատաղ էր լինում և հում միս բաժանում: Ահա այդ ուխտատեղիները ամառ ձեռ այցելում էր պառաւը և բաժին ստանում: Բացի այդ, պառաւը յայտնի էր զիւղում իրեւ հեքիմ: Դրան անւանում էին «ազօժող Աննա»: Եթէ մէկը որ և է բանից վախենար, կամ մէկին «աչքով տային», լինէր դա մեծ թէ փոքր, միւնոյն էր, անպատճառ դիմում էին պառաւ Աննացին, և զարմանալի բան, յաջողութեամբ բժշկում էր ամենքին: Բժշկւածը վարձատրում էր պառաւին կամ հացով կամ մի քանի կոպէկ փողով: Այս եկամուտի երկու փոքրիկ աղբիւրները համարեա մշտուկան կացին, սակայն այս խեղճ ընտանիքը կուշտ փորով սակաւ էր լինում: Պառաւը շատ հմուտ տանտիկին էր, նա գիտէր վարպետութեամբ բաժանել կերակուրը երկու-երեք մասի և երբէք վաղւաց կերակուրը միանգամից այսօր չէր տայ երեխաներին: Մի օր գժգոհութիւն յայտնեց իր հարեւան Եղիսաբեթին, որը նախընթաց գիշեր մի բաժին եփած լոբի էր զրկել իրան: «Երեխաներին հազիւ պառկեցրի-քնեցրի, գանգատում էր պառաւը,— բայց երբ բաժինը ներս բերեցին, նրանք արթնացան և վերջի կտոր հացը, որ ես պահել էի միւս օրւաց հաւար, բաժնի հետ միասին կերան:

Խրճիթը դատարկ էր: Երեւում էին մի քանի ցնցոտիներ և մի քանի հաս զանազան մեծութեամբ կաւի ամաններ, թէ ջրի և թէ կերակուրի համար: Երեւում էր նոյնպէս մի հաս միանգամայն մրուած պղնձէ կաթսա: Ցնցոտիները անշուշտ անկողնի տեղ էին ծառալում: Խրճիթում թէև կանթեղ էր վառած, բայց նրա չափից դուրս նւազ լցու անկարող էր թափանցել բոլոր անկիւնները: Ֆրտի ազդեցութիւնը համարեա նոյնն էր ինչ որ դուրսը երկնքի տակ: Կրակի հետքը անհետացել էր վառարանի միջից:

—Ասուած մեզ կերակուր տեղ, խօսում էր ինքն իրան պառաւը, —մեռնեմ քո զօրութենին: Միխօ, Վանէս, մօտ եկէք, կերակուր ունենք, Սատուծոյ ողորմութիւնը այստեղ է, հաց, միս, պանիր, եկէք, նստեցէք, կերէք:

Միխօն, որ մինչեւ վերջին րոպէն ապուշի նման կանգնած էր մութ անկիւնում և երկու ձեռքով շարունակ դլուխը քորում, մօտեցաւ կերակուրին և ագահութեամբ սկսեց պատառ պատառի յետեից բերանը կոխել: Փարաջան նոյնպէս եկաւ և կերակուրի մօտ ծալապատիկ նստեց, նորից վերկացաւ տեղից, լաւ փաթմաթեց իր լայնածաւալ վերարկուի մէջ և փեշերը իր տակով անելով դարձեալ նստեց:

—Այս հացը սպիտակ չէ, նանի, լքցրած բերանով հարցրեց նա:

—Սպիտակ է, շատ սպիտակ է, շտապեց պառասխանել Միխօն:

—Սպիտակ է, սիրելիս, կրկնեց պառաւը, կշտացէք:

Այս խօսակցութեան միջոցին խրճիթի դուռը բացւեց և ներս մտաւ Նալիոնը: Նա ձեռքին ունէր մի թի, կրակով լի: Երեւ թոնրից էր հանել: Վաղեց դէպի վառարանը և, արագութեամբ մէջը թափելուց յետոյ, անմիջապէս ուզեց վերազառնալ: Այս գործողութիւնը այնպէս կատարեց նա, որ կարծես տեղեկութիւն չունէր խրճիթում դոյցութիւն ունեցողների մասին: Դռան մօտ մի քանի վայրկեան կանգ արաւ, կարծես մտածմունքի մէջ ընկաւ, յետոյ թին ձեռքից վայր գցելով բացեց դուռը ու հեռացաւ:

—Սղաջան... վախեցած ձայնով ուզեց խօսել պառաւը:

—«Զահրումար», լսեց դրսից իբրև պատասխան:

Ո՞եր պատմութիւնից յետոյ անցել էր երեք տարի:

1892-ին յունարի 6-ին հիանալի առաւօտ էր լուսացել Թիֆլիսում: Պարզ երկնքի միջից արեգակը տաքացնում էր բարակ մառախուղով ծածկւած սառած երկիրը, որը բոլոր քրիստոնեաց մարդկանց աչքին սովորականից զուրս պայծառ ու զւարժ էր թւում: Շուրջը ամեն ինչ ժպտում էր, ամեն ինչ մաքուր ու զրաւիչ էր երեւում: Ուրախութիւն էր տիրում ամբողջ քաղաքի մէջ: Բնութիւնը ժպտում էր, մարդկանց սրտերը նոյնպէս: Բոլոր փողոցներում շատ բազմութիւն կար, սակայն ոչ ոք գործի կամ աշխատանքի չէր գնում, այլ ամենքն էլ մի նպատակ ունիին—ուրախանալ և ուրախացնել մերձաւորներին:

Մի տեղ երիսասարդ արհեստաւորների ահագին խումբը, զուգուած, ուրախ-ուրախ անցնում էին: Միւս տեղ հայրը, իր երկու կամ երեք երեխաների հետ գնալով, բարձրածայն խօսում ծիծաղում էին: Մի այլ տեղ երեւում է կանանց ու օրիորդների բազմութիւն, մէկը միւսից զեղեցիկ հագնւած: Այսպիսի ջոկ-ջոկ խմբերի վերջ չկար: Ամեն տեղ, ամեն անկիւնում խառնւում են՝ երեխաներ, պատանիներ, երիսասարդներ և ծերեր: Այս ծովի նման տատանւող մեծ բազմութիւնը զիմում էր միենոն կողմը: Քաղաքի մէջ շարժողութիւնը տարօրինակ էր: Անթիւ կառքեր միմեանց յետելից աղմուկ բարձրացնելով ընթանում էին փողոցից փողոց: Զիաւորները մէկը միւսին յաջորդելով ու «խաբարդա» կանչելով արագընթաց անցնում էին ամբոխի միջով: Խանութները շատ քիչ բացառութեամբ կողպած էին: Աշոք տանը չէր ուզում մնալ, բոլորեքեանք դուրս էին գալիս իրանց բնակարաններից: Հարուստները ամենաշքեղ կերպով էին հագնւել, զարդարւել ու կառքեր էին որոնում: Աղքատները ունեցած շորերը սրբել մաքրել էին, պատած տեղերը կարկատել էին, մագերը խուզել էին և մօրուքները սափրել: Փողովուրդը գոհ էր երկնքից, որ այդպիսի հիանալի եղանակ էր շնորհել ի պատիւ մեծ տօնի: Մսալվաճառներ ու հացթուխներն էլ վւազում էին շուտով վերջացնել իրանց գործերը հանդիսին չուշանալու համար: Սրանից յետոյ ոչ մի քրիստոնեացի խանութ բաց չէր մնալու: Եթէ պատահմամբ բազմութեան միջից հրէաչ կամ թուրք էր անցկենում, կինտոնների անողորմ ծաղրի ու սրախօսութիւնների էր են-

թարկւում։ Բազմաթիւ զանգակների բազմատեսակ հաշիւնները իրար հետ խառնւելով տարածւում էին օդի մէջ և բարեպաշտ մարդկանց սրտերը թնդեցնում։

Համբարները իրանց դրօշակներով, ուստաբաշիների առաջնորդութեամբ խումբ-խումբ անցնում էին փողոցների ու հրապարակների միջով։ Մի քանի պատառ զունաշիներ յաջորդում էին սրանց, սակայն չէին նւագում։ Այս բազմաթիւ ամբոխը զիմում էր գէպի Վանքի մայր եկեղեցին, ուր պէտք է կատարւէր կրօնական մեծ հանդէս—Զրօրհնեքը։ Եկեղեցու շուրջը գտնաւծ տները լցւել էին ծանրաբեռնւել մարդիկներով այնպէս, որ իրաքանչիւր տանտէր երկիւղ էր կրում քանդելուց։ Դոները արդէն կողպել էին և այլ ևս ոչոքի չէին ընդունում։ «Տեղ չկաց, տեղ չկաց» լաւում էր ամեն տան կողմից։ Եկեղեցու պարսպի մէջ գտնաւծ բոլոր ծառերի վրա նստել էին աղքատ դասակարգին պատկանող պատանիներ։ Ոստիկանական ստորին աստիճանաւորները անխնայ հարւածում էին ճիպոտներով այդ պատանիներին և խնձորի նման վայր թափում։ Բայց այս անախորժ կարգադրութիւր բոլորովին չէր վհատեցնում նրանց։ Հայոցական մի քանի խօսքեր ուղղելով ոստիկանների հասցէին, նորից բարձրանում, նստում էին ծառերի ճիւղերի վրա Ամբոխի անընդհատ հոսանքը աստիճանաբար լցնում էր Վանքի գտնի թը։ Յայտնի չէ թէ ինչ տեղից էր մի անտէր շուն մոլոր ել բազմութեան մէջ։ Պոչը փորին կալցրած և երկիւղով լի աչքերով դիմում էր այս ու այն կողմ մի ծակ գտնելու համար, բայց ամեն կողմից աքացիների հանդիպելով՝ երբեմն զդուշութեամբ ճիչ էր արձակում երբեմն համբերութեամբ տանում։ Կապոյտ քթով մի սրիկայ այնքան անգութ դանւեց, որ բռունցքի հարւածով գետնին գլորեց խեղճ կենդանուն։ Այս վարմունքը շատերին ծիծաղ պատճառեց։

—Ինչու ես բեղամաղ անում մեծ եղբօրդ, սրախօսեց մի կինո։

—Աչքն էլ է հանում, արժէ դրան ծեծել, նկատեց մի ուրիշ կինո, —իր խազէնը այսօր խաշ է եփում ու սրան սխառի յետելից է ուղարկել, իսկ առ եկել է այստեղ ու իր քէֆի ման է գալիս։

Ամբոխի միջով անց էր կենում փոքրամարմին ու խիստ նիշար մի պառաւ կին: Նրա դանդաղ քայլւածքը ու տարօրինակ, աննպատակ ապուշ հայեացքը և վերջապէս նրա ծաղկազարդ բարակ ամառայ շորերը տեսնողի ուշադրութիւնն էր գրաւում: Նրան հետեւում էին բազմաթիւ չարաձճիներ և ամեն մի քայլափոխում շրջապատելով նրան «բուլի-բուլի» էին կրկնում: Պառաւը ծամոն ծամելով, ամենաանվայել հայհոյանքներ էր թափում դրանց զլիին: Վանքի գաւիթը և գիմացի կղզին միացած էր ժամանակաւոր փայտէ կամուրջով: Կղզու վրա նոյնպէս մեծ բազմութիւն էր հաւաքւած: Այնտեղ լարախաղացը գոյնզգոյն «ջաղուներով» կուրծքն ու մէջքը զարդարած, թևերը թափահարելով և լանգարը օդի մէջ տատանեցնելով «եա Մուշի Սուլթան Սուրբ Կարապետ» էր բացականչում ու զուռնացի զիլ ձայնից ու թմբուկից ոգենորւած չետ ու առաջ էր թռչկոտում: Տակի մասիսան դէմքը մրոտած ու ծաղրածուի շորեր հագին, աղքի մէջ թաւալում էր: Վեր էր ցատկում տեղից, մօտենում էր մէկին միւսին և կոպէկները հաւաքելուց յետոյ նորից գլորում, մեծ զւարճութիւն պատճառելով պատանիներին: Կղզու վրա, արեւելեան ափին պէտք է կատարէր Զօրհնէքի փառաւոր հանդէսը: Ընդհանուր զւարճութեան մասնակից չէին միմիացն երեք էակներ: Դրանցից մէկը ծերունի էր, երկրորդը երիտասարդ, իսկ երրորդը պատանի:

—Ի՞նչ ես ուզում, քոփակ, այս խեղճ տղայից, խօսում՝ էր երիտասարդը, —հեռացիր, գործդ տես: Ի՞նչ ես պինդ բռնել ձեռքից, եղբայրդ չէ, որդիդ չէ: Թող սրան, մի երկու շացի կ'աշխատի այսօր:

—Ծերունին լուս էր, կարծես իրան չէին վերաբերում այս խօսքերը:

—Տղա, քեզ հետ եմ, լսիր, նորից խօսեց երիտասարդը դիմելով պատանուն, —դու քոս ես և բան չես տեսնում, մարդկանց էլ չես ճանաշում, չգիտես ով է լաւութիւն անողը և ով չէ: Մի քանի օր է թափառում էք քաղաքի մէջ, ինչ աշխատեցիք, —ոչինչ, ինչ կերաք, —ոչինչ: Քաղցած շների նման իզուր չափում էք փողոցներ: Այս քոփակը այսօր է թէ վաղը պէտք է սովածութիւնից սատկէ, որովհետեւ ողորմութիւն ինդրելու շնորհք չունի

ողորմելին, յիմար է, յիմար: Խ՞ոչ ես սրա փեշից բռնել, քեզ էլ կը սպանի, միաւին, մի տեղ աղբանոցում կը կոտորւէք: Անունդ Բ'նչ է: Խնչմու չես պատասխանում... Ասա հոգուդ մեռնեմ անունդ Բ'նչ է:

Վերջի խօսքերը արտաօանեց քնքոյց ու քրիստոնէական հոգատարութեամբ:

—Փարաջա, երկար տատանելուց յետոյ պատասխանեց պատանին:

—Խնչ հիանալի անուն է: Արի, Փարաջա, հոգուդ մատաղ, գնանք, ես քեզ նստեցնեմ լաւ տեղ, ինչքան փող կը հաւաքեմ բոլորը քեզ կը տամ, ուզնում ես: Տաս շայի կը տամ, երեկոյեան էլ տաք կերակուր կ'ուտեցնեմ... Խնչ կը կորցնես, հանգիստ նստած կը լինես մի տեղ... Բիձա ջան, աւելացրեց նա դիմելով ծերունուն,—արի դու էլ սրա հետ կաց, տաս շայի էլ քեզ կը տամ... Այսօրւայ սուրբ ու անմահ պատարագը գիտենայ, կը տամ... Սուրբ Սարգիսն ու սուրբ Գէորգը գիտենայ, կը տամ... Սիօն ու զվթէէբան գիտենայ, կը տամ: Հա, զաբուլ ես:

Երիտասարդը շատ էր աշխատում համոզել երկուսին էլ, սակայն իզուր, զրանք միանգամայն անտարբեր էին: Ծերունին Ղալիոնն էր:

Շուն Զաքէ: Երիտասարդը, որ խօսում էր Ղալիոնի ու Փարաջի հետ, յայտնի է ամբողջ մուրացկան դասակարգին Թիֆլիսում: Զկայ այնպիսի աղքատ անդամալոյժ, հատոտանի, կոյր, կաղ, վերջադէս չկաց թշւառ արարած, որ շճանաչէ նրան: Ոչ թէ ձանաչում են միմիայն հեռւից, այլ նրանցից իւրաքանչիւրը նրա հետ հաշիւներ է ունեցել և այդ հաշիւները միշա կռւով ու զալմազալով են վերջացել: Նրա անունն է Զաքէ, բայց մուրացկանները անւանում են նրան Շուն-Զաքէ: Շուն-Զաքէն ինքնուրոցն մի արհետ ունի և այդ արհետաի մէջ վերին ասորիճանի տաղանդաւոր է: Ասում են թէ տաղանդը պէտք է յարգել, բայց կան տաղանդաւորներ, որոնք հասարակութեան պատժի ու հալածանքի են ենթարկւում: Տաղանդաւոր ստախօսը, խարդախը, հարստահարողը ատելի է ամենքին:

Հէնց այս տեսակ տաղանդի տէր է Շուն-Զաքէն։ Նա գիտէ որտեղ
ինչ թշւառ արարած է գտնւում։ գնում է այնտեղ, իր դիտաւո-
րութիւնը յայտնում, պայմաններ առաջարկում թշւառի ծնողնե-
րին կամ մերձաւորներին։ Սակարգութիւն է անում, շատ բան է
խոստանում և վերջապէս համոզում է։ Վերցնում է կոյրին կամ
անդամալոյցին ացն պայմանով, որ ամբողջ օրը, առաւօտից մինչև
երեկոյ իր մօտ պահէ, հաց ուտեցնէ, ջուր խմեցնէ և վերջը սաղ-
սալամաթ իր տունը հասցնէ։ Բացի այս՝ պայմանաւորւում է վճա-
րել օրական վարձ՝ քսան, երեսուն կամ մի փոքր աւել կոտէկներ։
Որքան խղճալի, հիւանդու և տձեւեսք ունի թշւառը, այնքան
թանկագին է Շուն-Զաքէի համար և ի հարկէ աւելի է վճարում
վարձ։ Հինգ կամ տաս կոսէկ կանխիսիկ է տալիս ծնողներին, իսկ
մնացածը խոստանում է լրացնել երեկոյեան։ Երբ արդէն վարձում
է, օրինսակ կոյրին, նախ և առաջ տանում է մի խուլ անկիւն,
քաղաքից դուրս և մի երկու ժամ պարապում է հետք։ Վարժեց-
նում է թէ ինչ կերպով պէտք է ձեռք մեկնի և դէմքը ծռմախ։
Խօտիւ արգելում է ժամանակ կամ ծիծաղել։ Եթէ կոյրը հագին ունի
դեռ չմաշւած շորեր, հանում է վրացից ու վերին աստիճանի պա-
տառուած շոր հազցնում։ Վերջապէս օրինսաւոր կրթելուց յետոց
դուրս է բերում փողոցներ և նստեցնում այնպիսի յաջող տեղ,
ուր բազմութիւն շատ է լինում։ Ինքը նոյնպէս հին շորեր է հագ-
նում ու կողքին կանգնում։ Երբ մօտով անց են կենում մարդիկ,
դիմում է արդէն բերան արած ու լաւ սերտած երկար նախադա-
սութիւնով, որը պարունակում է իր մէջ աղերսանք, օրհնութիւն,
Աստուծոյ, Քրիստոսի ու բոլոր սուրբերի անունները և այլն։ Նա
կատարում է այս՝ մէջքը կռացած ու խղճալի ձայնով, մատնացոյց
անելով թշւառ արարածի վրա։ Բացց երբ ընդմիջւում է բազմու-
թեան անցուդարձը, նա իր կերպարանքը փոխում է և լիրբ սրա-
խօսութիւններ է անում ողորմութիւն տւողի ու չտւողի վերա-
բերմամբ։ Եթէ այդ միջոցին նկատում է շրջմոլիկներին կամ մո-
րացկաններին, վաց դրանց, լիշոցներ է տալիս, թուքեր է արձա-
կում երեսներին և այլն։

Ամեն մի կոյրին կամ անդամալոյցին երկար չի կարողանում
իր մօտ պահէլ։ Դիմում է անողորմ միջոցների։ Նրա դէմ բողո-

քում են անդամալոյցի կամ կոյրի ծնողները և վերջանում է կլուզով։ Օրինակ, եթէ տեսնում է, որ իր վարձած թշւառը ժողովրդի գութը չի շարժում՝ նա զիմում է զանազան հնարների, կամ քիթն է ջարդում ու արիւնաթաթախ անում կամ դէմքի վրա կապոյտ ուռուցքներ է գոյացնում։ Բայց այս բոլորը այն ձեռվ է սարքում; որ ինքը թշւառի աչքին անմեղ է երեսում։

Պատահում է և այնպէս, որ անյաջողութիւնների է հանդիպում, այսինքն միանգամայն չի գտնում թշւառ արարածներին։ Բայց Շուն-Զաքէն պարապ չի մնում, նա չի սիրում իզուր ժամանակ կորցնել։ Այդպիսի անյաջող դէպերում հազնում է մի շապիկ, կեղասու ու գջլտած։ Գլխաբաց, ուարբորիկ, զզգզած մազերով, կուրծքը մերկացած ու իրան կաթւածահար ձեւացնելով, նըստում է փողոցներում ու ողորմութիւն խնդրում։

Տեսնելու բան է թէ ինչ ճարպիկութեամբ ներկայացնում է ուժասպառ ու բնութիւնից անարգւած էակին։ Նստելու ձեւը, ձեռք մեկնելը, դէմքի ապուշ արտայայտութիւնը տեսնողի գութն է շարժում։ Միով բանիւ կարող են նախանձել առաջնակարգ դերասանները։ Թեփը անսպակաս է նրա գրապաններում։ Եթէ պատահմամբ անձրեւ եկաւ և ցեխս գոյացաւ, իրան խոնաւութիւնից ազատ պահելու համար թեփ է ցանում ու վրան նստում։ Դիշերը հասնելուն պէս գնում է ծանօթ գինեառւն, որ դանուում է Նեյխան-բազարում։ Լաւ ուտելուց ու խմելուց յետոյ այցելում է զահւախանաները, ուր սրիկաների հետ ամբողջ գիշեր թուղթ է խաղում և շատ յաճախ տանուլ տալիս օրւաց աշխատանքը։

Ղալիոնը բերել էր Փարաջին Թիֆլիս երկու օր առաջ։ Նա զիտաւորութիւն ունէր օգնութիւն անել անբազդ արարածին։ Նա գիտէր, որ գոյութիւն ունեն թափառական մանուկ աշուղներ, որմնք աչքերից զուրկ լինելով հանդերձ ապահովում են իրանց անձը, առանց մուրայիկանութեան դիմելու։

Քաղաք համնելուն պէս երկուսն էլ զգացին քաղցածութիւնն ունեցած աննշան հացի պաշարը ճանապարհին արդէն հատել էր։ Ձեռք ձեռքի տւած թափառում էին քաղաքի փողոցներում, մի

տեսակ ծանրութիւն զգալով հոգու վրա: Ղալիոնը առաջին անգամ զգալով այսպիսի մեծ բազմութիւն, կորցրել էր զլուխը: Փարաջան երջանիկ էր Ղալիոնից: Փոքրը տէր և օգնական ունէր, իսկ մեծը անտէր անօգնական էր: Մոլորւելով բազմամարդ փողոցներում, նրանք դիմեցին դէպի Հաւլաբար կոչւած թաղի նեղ փողոցներն ու մութ անկիւնները: Մի հինաւուրց տան դռան մօտ նստած էր սևազգեստ կին: Ղալիոնը հայեացք դցեց իր շուրջը և երբ համոզւեց որ մարդ չկայ, մօտեցաւ կնոջը ու համարեա բարկացած ձայնով դիմեց.

—Քաղցած է այս կոյր երեխէն, հաց տուր, թող ուտի, ես չեմ ուզում, ինձ պէտք չէ:

—Գնա հեռացիր, չփլախ, վրդովւած պատասխանեց կինը, — եթէ հաց ունեա՝ տուր երեխիս. այս ասելով մատնացոյց արաւ իր կողքին կանգնած երեխայի վրա, որի աչքերը վկայում էին, որ փոքր ինչ առաջ լաց էր եղել:

Ղալիոնը փնթվնթալով շտապեց հեռանալ: Անցաւ մի ուրիշ փողոց ու կանգ առաւ հայ կաթողիկ հացթուխի առաջ:

—Հաց տուր մեզ, քաղցած ենք: Թող այս երեխէն ուտի կըշտանայ... ես կը համբերեմ:

—Փող ունեմ:

—Չկայ:

—Փող չկայ, բայց սիրող մեծ է: Կորի այստեղից, հարամ զադա:

Այս ասելուց յետոյ հացթուխը նկատեց կոյրի գունատ ու յուսահատ դէմքը և խղճահարւեց: Վերցրեց հացի երեք մանր կտորներ ու Ղալիոնի ձեռքին դրեց: Ղալիոնը այսպիսի յաջողութիւնից խրախուսւած, նորից դիմեց հացթուխին՝ «որտեղ են լինում աշուղները»:

—Ի՞նչ աշուղ ես հարցնում, զարմացած հարցրեց նա:

—Ուստա, ամենալաւ ուստա եմ ուզում: Աշուղ եմ ասում, ասա որտեղ են աշուղները:

—Հացթուխը չպատասխանեց, միայն ժպտաց, կողքին կանդ. նած ընկերոջը բոթելով նկատեց՝ «հաց գտաւ, հիմայ աշուղներ է կանչելու, ուզում է քէփ անի:

—Հըմ, արոտասանեց ընկերը:

Ղալիսնը կանգնած սպասում էր, բայց երբ համոզւեց, որ իր հարցին պատասխան չի հետևում, հացի երկու կտորները Փարաջին տեղ ու ձեռքից քարշ տալով վերադարձաւ միւնոյն փողոցով։ Կոյրը համարեա առանց ծամելու կուլ էր տայիս պատառ պատառի յետևից։

Միւնոյն տեղ էր նստած տիրադէմ կինը։ Միւնոյն տեղ էր կանգնած քաղցած մանուկը։ Ղալիսնը, ձեռքին ունեցած հացի կտորը տեղ այդ երեխացին և շտապով անցաւ։ Այս գործողութիւնը կատարեց այնպէս ծածուկ կերպով, որ նոյն իսկ Փարաջան բան չհասկացաւ։

Օրը մթնեց։ Նրանց սրտներին տիրեց անտանելի տիրութիւն։ Երկուսն էլ հրճւանկով մատրերում էին անցած օրերը իրանց ծննդավայրում, բայց իրար չէին յայտնում։ Գիշերը անցկացնելու համար հարկաւոր էր նրանց ապատարան։ Օդը ցուրտ էր։ Դրանք մոտան Խոջիւանքի հանգստարանը և ընտրելով քառասիւն և ծածկած կտուրով մատուռներից մինը՝ մոտան մէջը և մէջքը մէջքին պինդ կոցնելով՝ ծալապատիկ նստեցին ստուած քարերի վրա։ Փարաջան կուշտ էր, իսկ Ղալիսնը վերին աստիճանի քաղցած։

—Ե՞րբ կը լուսանայ, բիձա, դողդոջ ձայնով լնդհատեց երեխան լուր թիւնը։

—Լոյս չէ, հապա բ'ն; է, բարկացած պատասխանեց Ղալիսնը, —ասա, երբ կը մթնի։

Տիրեց լռութիւն։ Փարաջան զգաց, որ Ղալիսնի սրտում խռովութիւն է կատարելում, բայց սպատճառը չգիտեր։ Նա առաջի անգամ էր նկատում նրա բարկութիւնը։ Յուրաը աստիճանաբար զգալի էր դառնում։ Փարաջան փաթաթւած էր իր նոյն վերաբերուի մէջ, որ մենք աեսանք երեք տարի առաջ։ Ձեռքերը խաչածեարած և կրծքին ամուր կացրած, ուսերը բարձրացած ու ամբողջ մարմնով կուչ եկած —փոքրացած նիրհում էր։ Ղալիսնը անօթութիւնից ու ցրտից նեղացած կնճռոտել էր դէմքի և կոնկունում էր։ Նրա չորացած ոսկորները կարծես մարմնի միջից դուրս էին պրծած։ Հաղին ունեցած հին շորերը այնքան աննշան էին, որ նա չէր զգում գրանց ներկացութիւնը իր մարմնի վրա։ Գլուխը փա-

թաթել էր կապոյտ թաշկինակով, իսկ իր մորթէ զլխարկը ծածկել էր Փարաջի դլխին:

Սարերի քամակից համեստութեամբ բարձրացաւ կարմրադրո՞ն լուսինը ու իր շողերը տարածեց լնդարձակ հանգստարանի վրա Ղալիոնը, որ միշտ միակ մսիթարութիւն էր գտնում, երբ պառկած իր խրճիթի կոռուրի վրա հետեւում էր լուսնի ծագելուն, բարձրանալուն ու մայր մտնելուն, նոյն լուսինը այս անգամ անախորժ տպաւորութիւն արաւ նրա վրա: Վիզը ծռեց ու աչքերը հակառակ կողմը դարձրեց, կարծես այս գժբաղդ միջոցին վկաչ չունենալու նպատակով: Նրա դէմքից կարելի էր ենթագրել, որ խորասուզւած է մոքերի մէջ, սակայն բոլորովին չէր մտածում՝ բանի մասին: Երկու օրւայ անօթութիւնը պաշարել էր նրա ամբողջ էութիւնը և չարաչար տանջում էր: Մատուռի տակ, սուէրի մէջ անորոշ կուտակներ երևացին նրա աչքերին: Անմիջապէս վերցատկեց տեղից և սկսեց քրքրել կուտակները: Հաց էր որոնում ողորմելին:

—Կաց այստեղ, ես գնում եմ, ասեց Փարաջին, — շտապով կը վերադառնամ:

Այս ասելով արագութեամբ անցկացաւ գերեզմանների վրայով, դուրս եկաւ ուղիի վրա և մի ակնթարթում հասաւ զլխաւոր գուներին: Փորձեց դուռը բանալ, բայց այդ չյաջողւեց նրան: Դուռը կողապած էր: Վանդակների միջից դուրս նայեց և հեռաւորութեան մէջ մարդիկ նկատելով՝ իր սովորական նւազ ձայնով արտասանեց «Հաց եմ ուզում, մարդիկ, տւէք մի պատառ»: Կրկնեց մի քանի անգամ, ձայնը աստիճանաբար բարձրացնելով, բայց իզուր: Երկար սպասելուց յետոց, յուսահատուած, մի անգամ իր կանգնած տեղը պտոյտ անելուց յետոց նորից վերադարձաւ մատուռը: Ճանապարհին ամեն մի քար, աղիւս վերցնում էր ձեռքը, շոշափում էր և վայր գցում: Բոլոր ժամանակ անգիտակցաբար կրկնում էր միեւնոյն խօսքերը «Քաղցած եմ, հաց տւեցեք»: Երբ վերջապէս մօտեցաւ մատուռին, Փարաջի ականջին հասաւ այս

— Բիձա, ուզում ես հաց, ինչու չես ասում, խօսեց երեխան, մօտս մնացել է փոքրիկ կաոր այսօրւաց հացից:

Ղալիոնը առանց պատասխանելու վերցրեց նրա ձեռքից հացի կաորը և ագահութեամբ լցրեց ցամաքած բերանը: Առաջի պատառը,

կոկորդը քերելով ու խեղդւելով կուլ տուց: Իր ընթրիքը մի ակընթարթում վերջացնելով, կատարեալ մսիթարութիւն զգաց: Պատրաստեց նստել առաջւայ տեղը, բայց մի բան ցիշեց ու միտքը փոխեց: «Կաց այստեղ, իսկոյն կը վերադառնամ» ասելով նորից գնաց դէպի հանգստարանի գլխաւոր գուռը: Դուան կողքին գտնւող սենեակի շէմքում անպէտք փալամներ էր ածած: Հաւաքեց այդ փալամները ու երջանիկ սրաով վերադառնաւ իր բնակարանը, ուր այս գիշեր հիւրասիրել էին հանգուցեալները: Վերկացրեց Փարազին նստած տեղից ու թափեց այնտեղ փտած փալամների կտորտանկը: Խնամքով փուելով կարկուտի նման սառած քարէ յատակի վրա, իր կարծիքով անկողին պատրաստեց: Բարձի փոխարէն էլ երկու հարթ քարեր գարսեց: Այդ քարերը դուաւ մի թարմ գերեզմանի վրա, ուր երկու ծայրերին տնկած էին: «Կը լուսանայ, կը բերեմ, առաջւայ տեղը կը տնկեմ» վիճվինթալով՝ հանեց այս քարերը: Կալիոնն ու Փարաջան կուրծքը կրծքին կողցրած ու ամրապինդ գըրկախառնւած պառկեցին իրանց «անկողին» մէջ ու սկսեցին շնչառութեամբ իրար տաքացնել: Երկար ժամանակ ֆնացին այս դրութեան մէջ: Քունը չէր գալի ոչ մէկի աչքին, թէսկաամեն տեսակ միջոցների էին դիմում քնելու համար: Կալիոնը ծածկում էր աչքերը և աշխատում խոմիալ, դարձեալ բաց էր անում ու երկար դիտում լուսնի շողերը: Փարաջան սկսեց ազօթել, այսինքն հարիւրաւոր անգամ կրինեց վսաչ, օգնեա ինձ, տէր ողորմեա», սակայն ի զուր: Յրտի ազդեցութիւնը փոքր առ փոքր աւելանում էր: Բնութիւնը կարծես նպատակ էր զրել չարաչար տանջել նրանց: Ոչ կիսմերկ ծերունուն էր խղճում, ոչ անմեղ երեխային: Երկուսն էլ հաւասարապէս, անշարժութեան մէջ սպասում էին տաքանալուն, բայց ընդհակառակն էր կատարւում: Լուսինը զեռ մատուոի մի կամարի ատակից էր նայում՝ նրանց վրա, յետոց միւսից, կարծես դիտաւորւած էր ծաղրելու: Գիշերը յաւիտենականութեան կերպարանք էր ընդունել, այլ ևս չէր ուզում լուսանալ: Թնդա, տէր իմն դողդոջ ու հազիւ լսելի ձայնով արտասանեց Կալիոնը: Փարաջան, լսելով այս աղերսանքը, սկսեց լալ: Ծերունին անմիջապէս վերկացաւ տեղից և կանգնեց, կարծես ոչ իր սեփական ուների վրա: Բարձրացրեց Փարաջին, շալակեց մէջքին ու սկսեց մատուոի տակ վազ-

վլզել ու թռչոտել խենթի նման։ Շուտով ուժասպառ եղաւ, ծնկները ծալւեցին ու, վայր ընկնելով կուրծքի վրա, իր բեռի ծանրութեան տակ ջարդւեց։ Երեխան ոոռքի կանգնեց ու փորձեց Ղալիոնին բարձրացնել, բայց նա անշարժ էր։ Փարաջան կարծելով, որ նա մեռաւ, սիրտ ճնշող ձախով կանչեց «բիձա»։ Երկիւզը պաշարել էր նրա ամբողջ էռլթիւնը, յուսահատութիւնը իր գագաթնակէտին էր հասել։

—Տա... տաքացար, շունչը կտրած հարցրեց Ղալիոնը։

Կոյրի ուրախութեան չափը սահմանից անցաւ։ Երկիւզի ազդեցութիւնից քրտինք էր առաջ եկել նրա մարմնի վրա։ Այլ ևս նա չէր մրսում։ Յանկանալով հաստատ համոզւել որ ծերունին կենդանի է, շրմունքները մօտեցրեց նրա ականջին ու հարցրեց «Բնչդ ցաւեց»։ Այս խօսքերը այնպիսի ձևով արտասանեց, որ յառուկ է բարեսիրու մարդկանց ծանր հիւ անդի հետ խօսելիս։

Ղալիոնը դանդաղութեամբ բարձրացաւ տեղից, բռնեց Փարաջի ձեռքից ու առանց ձայն հանկիւր կաղալով գնաց։ Դուրս եկան մատուռի տակից ու առանց նպատակի սկսեցին քարշ գալ։ Ամեն մի քայլափոխում հանուխպում էին անշարժ կանգնած մահարձանների, գերեզմանաքարերի, զանազան ձեր ու մեծութեան։ Անցան ոլոր մոլոր սպոոցոներով, աշխատելով ոոռը չղիացնել դերեզմաններին և մօտեցան եկեղեցուն։

—Խաչակնքիր երեսդ, ասեց Ղալիոնը, վերցնելով նրա գլխից գլխարկը։ Իր գլխից ել պոկեց թաշկինակը և երեք անդամ երեսը խաչակնքեց։ Համբուրեցին պատը և ղիմեցին եկեղեցու միւս կողմը։ Այնտեղ մի շքեղ մատուռի մէջ կանթեղ էր վառած։ Նրա մելամաղձու տիտուր գեղնագոյն լոյսը տարածւելով պատերի վրա՝ լուսաւորում էր մէջ տեղ կանգնած սպիտակ մարմարեաչ գագաղաձե քարը։ Ծերունին ապշած մնաց։ Նա իր կեանքում տեսած չէր սրա նման տեսարան։ «Երջանիկ մարդ է այստեղ ննջում» մոտածեց նա և խորասուզւեց մոքերի մէջ։ Թեթև զեփիւռը սլացաւ և բերեց այս երկու արարածների երեսները, որոնք ոգիների նման անշարժ կանգնած էին մատուռի առաջ։ Այդ միջոցին հնչեց զանդը և նրա դողդոջ ախտրժալուր ձայնը տարածւեց երկրի երեսին ու կամաց-

կամաց մարեց։ Նրանց սրտերը բարախեցին։ Զանգը աւետեց լուսաբացի մօտենալը։

Միւս օրը կէսօրին Ղալիոնն ու Փարաջան, Հաւլաբարից իջնելով ցած, դիմեցին դէպի «Միջի փողոց»։ Կամուրջի վրայով անցնելիս, որի տակը աղմկալից կուռ գետն է վազում, կոիւ տալով ժայռոտ ափերի հետ, Փարաջի մարմնի միջով սառսուռ անցաւ։ Տարօրինակ աղմուկը սարսափի էր ազդում նրա վրա։ Ղալիոնի ձեռքից ու փեշերից ամուր բռնել էր և իր լուսազուրկ աչքերը անդար բաց ու խուփ էր անում։

Շուն-Զաքէն, որ նրանց հետեւում էր ամբողջ մի ժամ, ուզում էր գաղափար կազմել զրանց ով կամ ինչ լինելու մասին։ Տեսաւ, ինչպէս մօտեցան հացթուլիսի խանութին, ինչպէս ծերունին անհամարձակ կերպով հաց ուղեց կոյրի համար, ինչպէս հացթուլիսը իր ուշադրութեան էլ չարժանացրեց և զրանք երկար կանգնելուց յետոյ կրկին շարունակեցին ճանապարհը։

Երբ մոտան «Միջի փողոց», այստեղ Ղալիոնը նկատեց մի գիւղացու, ըստ երեսցին սալլապանի, որը կանգնած էր ճանապարհի մէջ տեղ և, ահազին հացը կռանտակին պահած, մի-մի կտոր դջլում ու բերանն էր դնում։

—Երեխին հաց տուր, քաղցած է, ասաց Ղալիոնը մօտենալով յետելից գիւղացուն։

—Վերջինը, առանց խօսք ասելու և երեխին նայելու, իսկոյն տւեց մի պատառ։

—Այդ միջոցին Շուն-Զաքէն կանգնեց գրանց առաջ և ուղղակի Ղալիոնի աչքերին նայելով հարցրեց։

—Ո՞րտեղացի էք, բիձա-ջան, դալուստներդ բարի։

—Գիւղացի, կարճ կերպով պատասխանեց նա։

—Երեխէն ով է։

—Գիւղացի։

—Ինչու էք եկել այստեղ։

—Ո՞րտեղ են լինում աշուղները։

Շուն-Զաքէն հասկանալով թէ ում հետ ունի գործ, բռնեց

Փարաջի ձեռքից և ճեղ պէտք է օգնեմ, խեղճ մարդիկ էք» ասելով մի քանի բոսէի ընթացքում տասնեակ մարդկանցից ողորմութիւն ուզեց և մի քանի կոպէկ հաւաքելով՝ ամբողջապէս ածեց Ղալիոնի գրապանի մէջ, բարձրածայն համարելով «մէկ, երկու, երեք»։ Ղալիոնը, որ ապուշի նման մնացել էր սառած, կամաց-կամաց ուշքի եկաւ և բարկութեամբ լի աչքերով սկսեց դիտել Շուն-Զաքէնն։ Ցեաց առանց ձայն հանելու վերցրեց Փարաջի ձեռքը և, ամուր թափահարելով, հեռացաւ աջնտեղից։ Շուն-Զաքէն էլ գնաց դրանց յետեից, շարունակ փսփսալով Ղալիոնի ականջին։ Հազար տեսակ առաջարկութիւններ էր անում մէկը միւսից լաւ։ Խոսունում էր շատ փող, տաք բնակարան և այն և այն, բայց ծերունու ականջը միտնգամայն խլացել էր, չէր ուզում լսել։

«Միջի-փողոցից դուրս եկան մի հրապարակ։ Աջնտեղ մի առողջակազմ տղամարդ քարշ էր տալիս մի փոքրիկ սացլակ, որի մէջ կուչ էր եկած մսի անորոշ գնդի նման մի այլանդակ կենդանի մարդկացին արարած։ Սայլակին հետեւում էր նոյնպէս մի առողջակազմ տղամարդ։ Այս երկու լնկերները ամեն մի քայլափոխում կանգնեցնում էին սացլակը և ողորմութիւն խնդրում մարդկանցից։

— Օհօ, Շուն-Զաքէ, գարձեալ ճանդեցիր, նկատեցին երկուսն էլ միասին։

Շուն-Զաքէն վիզը ծռեց ու նշան արեց նրան, աղերսանքով լի հայեացքով, որպէս զի լոեն։

Կորի այստեղից, գուացին նրանք, — ի՞նչ դործ ունիս մեր թաղում, լիբր, իշխ քուռակ։

— Եշերը դուք էք, պատասխանեց զայրացած Շուն-Զաքէն, որ երկու անդործ ախմախներ մէկ սատկած օջիլի հաշւով էք ապրում ու քէփ անում։

Այս ասելով բռնեց Ղալիոնի օձիքից ու բռունցքը ցոյց տալով սպառնաց՝ «փողերս տուր, թէ չէ երկուսիդ էլ...»։

Ղալինը անմիջապէս հանեց բոլոր կոպէկները և տւեց իրան։

Երբ Շուն-Զաքէն փողերը դարսեց իր գրապանի մէջ՝ բռունցքի մի-մի հարւած հասցնելով ծերունու և երեխայի դլուխներին, թողեց, հեռացաւ։ Փարաջան լուռ ու առանց բողոքի իր մեծ դլուխը քարշ պցեց, ու արցունքների խոշոր կաթիլները իջան նրա այստերի վրա։

Զրօրհնէքի հանդէսը կղզուց արդէն վերադառնում էր դէպի Վանքի մայր եկեղեցին։ Հոգևորականութիւնը արդէն անցաւ կամուրջի վրայից։ Երեխաների մեծ մասը նոյնպէս անցաւ։ Երեխաները առ հասարակ սպորտականների մեծ հանդէս անցաւ։ Երեխաների միջոցին հոգևորականների շուրջը սրտաւել։ Ամբոխի ահազին բազմութիւնը, մեծ մասամբ տղամարդկանցից բաղկացած, իրար բոթելով, վրաց պառկելով, աշխատում էին իրանց համար ճանապարհ բանալ, հոգևորականութիւնից հեռու չմնալու համար։ Առաջ գնացողները ձեռքերը բարձրացնելով նշան էին տալիս մի քանի հազար հոգուց բաղկացած բազմութեան, որ հանդարտ գնան, որպէս զի ոոնների տակ մարդիկ չտրուին, բայց ամբոխի անզուսպ հոսանքին ոչ մի բան չէր օգնում։ Երբ կամուրջի ամբողջ երկայնութիւնը ծայրէ ի ծայր լցւած և ծանրաբեռնւած էր և երբ տիրացուների ու քահանաների երգի բազմահնչիւն ձայները միախառնաւած երկինք էին բարձրանում՝ լսելի եղաւ սիրտ պատառող և խոռվութեամբ լի աններդաշնակ դուռց։ «Կամուրջը կոտրւեց» աղաղակեց ընդհանուր ձայնով սարսափած ամբոխը։ Լոեց ամեն ինչ Պայծառ արեւը մոռաւ մի կտոր սև ամպի տակ և քօղարկեց՝ բազմաթիւ կենդանի մարդկանց վիթխարի գերեզմանը չտեսնելու համար։ Գերեզման, որ մի ակնթարթում բացւեց և ովզ գիտէ ինչ յոյսերով ու իղձերով լի հոգիներ ագահութեամբ կլանեց։ Տեսարանը զարհուրելի էր։ Փրփրադէզ ալիքների մէջ հազար տեսակ պտոյտներ էին անում մահւան հետ կռւող մարդկանց մարմինները, և զրանք կարծես երկնքից գատապարաւած կռիւ էին մղում լուռ ու անխօս։ Զրկւած էին մեռնող մարդկանց միակ իրաւունքից—յառաջելուց։ Մի քանի տասնեակ մարդկացին արարածներ մերթ խորասուզւելով կատաղի կուր գետի ջրերի մէջ, մերթ գուրս պրծնելով ալիքների տակից, իրար օձիքից պինդ բռնած սահում էին ջրի հոսանքի հետ։ Նրանցից ոմանք, որոնք բաղդի բերմամբ բռնել էին գետի մէջ ցցած կամուրջի գերաններից՝ աշխատում էին ջրից դուրս պահել իրանց գլուխները։ Նրանց լայն բաց արած կիսակենդան աչքերը սիրտ մաշող հայեացք էին գցել դէպի անողորմ երկինքը։ Մի տաս տարեկան մանուկ, որ մի բոսկի շտփ կենդանի մնաց՝ երկու անդամ բերան բաց արաւ, կարծես «մայրիկ» էր կանչում, բայց

գետի խլացուցիչ ազմուկը մեռցրեց այս անմեղ արարածի ձախնք:
 Բազմաթիւ մարդիկ, տարբեր հասակի ու բնաւորութեան, դիզւել
 էին իրար վրայ, ջրի տակ աւազի մէջ և ծոնր գերանների ճնշ-
 ման տակ աստիճաննաբար դիակների էին փոխում: Իազմութիւնը
 բաժանած երկու մասի, մէկը գտնւում էր Վանքի գաւթում իսկ
 միւսը կղզու վրայ: Այս հազարաւոր աշքերի առաջ մեզաւոր ու ար-
 դար հոգիները խումբ խումբ մտնում էին յաւիտենականութեան
 գիրկը: Երկնացին պատիժ էր դա թէ երկրացին եղեւնագործու-
 թիւն—ոչ ոք չգիտէր: Ոչ մահւան դատապարտածները գիտէին
 այս, ոչ մահից ազատածները: Կամուրջի մէջտեղը ընդարձակ ճեղք
 էր բացւած, որին չի կարող նմանել գժոխքն անգամ: Ճեղքի մէջ
 կախւած էին խորտակւած կամուրջի գերանները, որոնք սարսափ էին
 տարածում ամբոխի մէջ: Սարսափ, որ չեն կարող ներշնչել հարիւ-
 րաւոր կախազաններ անգամ: Տարօրինակ գերեզմանը վայրկինսաբար և
 շինւեց և ծածկւեց: Եւ այդ գերեզմանի վրայով կատաղի գետը իր
 պղտոր ալիքներով սահում էր վաղեմի սովորութեամբ: Երկու իրար
 հակառակ ափերին գտնւած ամբոխը քրտինքի մէջ շազախւած
 գոռում գոշում էր, որքան ոյժն էր ներում, ոմանք լալիս էին մեր-
 ձաւորների կորուստի համար, ոմանք աշխատում էին սիրու տալ մեռ-
 նողներին, ոմանք խրախուսում էին կորիճներին օգնութիւն հաս-
 ցնելու համար, ոմանք ուշքից ելած անգիտակցաբար հառաջում
 էին, և վերջապէս ամեն մարդ մի գեր էր կատարում այդ գժբաղդ
 միջոցին: Օրը ամենքի աչքին մթնեց: Հասարակ դասակարգի երի-
 տասարդները անձնւիրութեամբ մտնում էին ջրի մէջ խեղդւողնե-
 րին և խեղդւածներին ազատելու համար: Դրանք դուրս էին բե-
 րում մէջքերին շալակած անշնչացած մարմինները և յանձնում ու-
 րիշներին, որոնք անմիջապէս զիմում էին զանազան միջոցների նո-
 րից կեանք ներշնչելու համար: Դիակներ դիակների յետևից շարում
 էին եկեղեցու գաւթում: Ամեն մի խեղդւածի մարմինը ջրից դուրս
 բերելիս՝ ուրախութեան նշաններ էր ցոյց տալիս բազմութիւնը:
 Մխիթարութիւնը կայանում էր զիակները որսալու մէջ: Կանանց
 գասակարգը մազերը փետելով ու երեսները շանգաելով, խելագար-
 ների նման թափում էին զիակների վրայ ու որոնում իրանց սի-
 րելիներին: Դրանց յուսակտուր աղաղակները խլացնում էին գետի

աղմուկը։ Կային և այնպիսի քարասիրտներ, որոնք լոկ դիակները համարելով էին զբաղւած և սպասում էին յարմար միջոցների, դրանց կողոպտելու համար։ Կային և այնպիսի առատաձեռներ, որ փող բաժանելով խրախուսում էին մեռածներ որսող երիտասարդներին։ Այդ օրւաց զոհերի համար երկինքը որոշել էր երկու գերեզման, որից զրկւած են հասարակ մահկանացուները։ Մէկի մէջ կեսդանի թաղւեցին, իսկ միւսի մէջ դրանց դիակները պէտք է թաղւէին։ Ուրախութիւնը սուգի փոխւեց և այս սուգը ընդհանուրի էր։ Աղետի լուրը կայծակի արագութեամբ տարածւեց ամբողջ քաղաքի մէջ։ Ամեն կողմից, սարսափահար մարդիկ, զանազան կրօնի և առանց ազգութեան խորութեան վազում էին դէպի աղետի տեղը և լեզապատռ դիտում էին դիակների լնդարձակշաբքը, ենթադրելով որ կարող են հանդիպել իրանց մերձաւորներին։

Երկու երիտասարդներ մի ծերունու դիակ գլխի վայր բռնած բերեցին ու դրեցին ծառի տակ։ Դիակը գեռ տաք էր։ Մի քանի անգամ աչքերը բաց արաւ, կարծես բան էր որոնում, յետոյ փորձեց բերանը բանալ և այնուհետև ննաց անշարժ։ «Մեռաւ» կրկնեցին մի քանի անգամ տխուր ձայնով մարդիկ։ Այդ դիակին մօտեցաւ բարձրաձայն լալով մի երիտասարդ, չոքեց զլիսի մօտ և չոքեցնելով ցնցոտիների մէջ փաթաթւած մի երեխին՝ գուաց «բիձածան», ուր ես գնում։» Երեխան, որի զարհուրած դէմքի վրայ մահ էր դրոշմած՝ վայր ընկաւ դիակի վրա։ Երիտասարդը առանձին հոտարութեամբ բարձրացրեց երեխին դիակի վրայից։ «Կոյր է խեղճը», ասելով մի մարդ՝ սև փող դրեց երեխի ձեռքին։ «Ենորհակալ եմ արտասանեց երիտասարդը յուսակտուր ձայնով։ Դա Եռն-Զաքէն էր, իսկ երեխան՝ Փարաւշան։

ՉԵ, ԿԸ ՅԻՇԵՄ ՔԵԶ

Ն Ա Խ Թ Ի

ԶԵ, կը յիշեմ քեզ, հոգիս,
կը յիշեմ միշտ կարօտով.
Եւ միայն այն պատճառով
Որ սեղմըւած ես կըրծքիս:

Թռէւ, իրաւ, հեղ մը լոկ,
Այն ալ պարի մը անցուկ
Պտոյտին մէջ վաղանցուկ,
Բայց այդ նոյն է. որո՞ւ հոգ:

Ա՛հ, նըւագը խելագար
Կը զարձնէր մեզ արագ.
Շուրջն ամեն բան հակառակ
Նոյն թափովը կը դառնար:

Զէինք տեսներ ալ ոչինչ.
Մենակ էինք ես ու դուն.
Գիրկընդիսաւն, զըւարթուն
Վերացման մէջ ըզգըլսիչ:

Պինդ փաթթըւած, օձի պէս,
Նազուկ մէջքիդ նըրբենի,

Ընդհատ շունչըդ կ'ըզգացի,
Որ կը սահեր այտերէս:

ԵՐԲ ազդ հուրէն խելաշեղ
Ա՛լ ջերմեռանդ ու ուժգին
Քու անձնատուր լի կուրծքին
Կը փարէի սիրաշեղ,

Ըսէ—իզուր կը ծածկես—
Այդ հըմայուն լանջիդ տակ
Զէի՞ր ըզգար դուն հեշտանք
Ու սարսուռ մը տենչակէզ:

Հապա ինչու կը դողար
Փափուկ ձեռքըդ քըրտնամած,
Որ ձախ ձեռքիս հետ հիւսւած
Մէջքիս վրայ կը սողար...

ԶԵ, կը յիշեմ քեզ, հոգիս,
Կը յիշեմ միշտ կարօսով.
Եւ միայն այն պատճառով
Որ սեղմըւած ես կըրծքիս:

1892 դեկտ. 28, Կ. Պոլիս.

ԶԻՄ ԵՒ ԶԵԿ

ՊԱՏՄԻԱԺՔ ՕԳԻՒՍՑԵՆ ՓԻԼՈՒՆԻ

Թարգմ. ռուսերէնից՝ ՄԻՔԱՅԵԼ, ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

Զիմն ու Զէկը ծնւեցան մօտաւորապէս 1775 թւականին Բրօ-
ադաստերս փոքրիկ ձկնորսական գիւղում, որ սեղմած լինելով ժայ-
ուերին հիւսիս-արևելեան քամիներից մի կերպ պաշտպանւելու հա-
մար, պատապարւել էր ծովափնեայ բոլորածեւ ու գոգաւոր մի
փոսում:

Նրանց հայրերը ապրում էին բոլորովին կից միմեանց: Սոքա-
երբեմն միասին խմում էին, երբեմն կռւում էին, միևնոցն ժամա-
նակ շարունակելով լինել լաւ բարեկամներ աշխարհում: Երեսում
էր, որ որդիքն էլ նոյն յարաբերութեան մէջ կը լինէին դէպի մի-
մեանց, ինչպէս և հայրերը: Զիմն ու Զէկը խեցգետին ու խաշա-
փար էին փնտրում մօրուտներում և ժամանակն անց էին կացնում
մերթ աւազապատ ափերում, մերթ ջրում: Նոքա բոկոտն վազ էին
տալիս Տանետի ափի պարփակող կալիճեայ ուստի թեք զառիվայրի
վրայ փորած սանդուլսքներով, որոնց ասորիճանները կոպիս կերպով
դուրս են կորւած ժայռերի մէջ մէկը միւսից երեք կամ չորս ոտ-
նաշափ հեւաւորութեամբ, կատաղի ալիքների կոիւներում և քա-
մու խլացնող փոթորիկներում: Այդպիսով նոքա բովեցան ցրոնի,
յոգնածութեան և վտանգների մէջ:

Զիմի հայրը, որ ամերիկական անկախութեան համար եղած
կուի ժամանակ ծառայում էր պատերազմական մի նաւի վրայ, մի
անգամ սաստիկ բաղդաւորւեց: Նոքա նաւը գերի վերցրեց երեք

իսպանական նաևեր, և նա աւարից բաժին ստացաւ վեց դրւանքաց, երեք շիլլինդ և չորս պէսս: Այդչափ մեծ զանձ ինչպէս պէտք էր գործ ածել: Կէսից շատոը նա խմելու վրայ դործ դրեց, իսկ մնացած գումարով իւր երեխաների համար կօշիկներ և գուլպաներ գնեց:

Երբ որ Զէկը յաջորդ կիւրակէ օրը տեսաւ իւր լնկերին, ինչպէս իրեն թւաց, հաղնւած որպէս ջէնոլմէն և ընդունած մի տեսակ ծանր զիրք, նա սկսեց սաստիկ նախանձել և նրան աիրեց ջերմ ցանկութիւն ունենալ նախշուն գուլպաներ և պղնձեայ ճարմանդներով նոր կօշիկներ: Բայց ինչպէս ձեռք բերել: Միթէ ուժով Ակացն չէ որ Զիմը նրանից ուժեղ էր: Այն ժամանակ Զէկը մտաբերեց այն դէպքը, ինչ որ տեսել էր, թէ ինչպէս զիւղի բնակիչները բաժանում էին իրանց ջրահեղձի հագուստը, որի մարմինը ձգւած էր ծովափում:

Այդուեղից նա հետեւցրեց, որ եթէ Զիմը խեղաւի, ինքը կը ստանայ նրա նախշուն գուլպաները և ճարմանդներով կօշիկները: Այդ պատճառով նա վճռեց խեղտել իւր բարեկամ Զիմին:

Նա թէեւ զեռ վեց տարեկան չկար, բայց ամբողջ գործը շատ ճարսիկ կերպով առաջ տարաւ: Նա Զիմին տարաւ ծովափիին կրթնած ժայռի երկարութեամբ ձգւած շատիզներից մէկի վրայ, որի մասին առաջ արդէն խօսել եմ, և մի յարմար ակընթարթ լնութելով՝ բոթեց իւր լնկերին դէպի ծովը: Մանուկը, որ ոչինչ վտանգ չէր սպասում, սայթաքեց և, մինչև անդամ առանց ճիչ արձակելու, ջրի մէջը գլորւեց: Բայց այդ ժամանակ փոքրիկ յանցաւորի հոգու մէջ յառաջացաւ մի ինչ որ անսովոր բան: Երբ որ Զիմը յայտնեց ջրի երեսին ձեռքերը յուսահատաբար շարժելով, մազերը երեսին շաղ անցած, Զէկը թռաւ ջրի մէջ, ընկերին ազատելու համար: Նրանք երկուսն էլ հեշտութեամբ կը խեղդւէին, եթէ որ մաքսատան զինւորը չտեսնէր նրանց և չվագէր նրանց փրկելու:

Երբ որ Զիմին զուրս հանեցին ջրից և չորացրին, նա սկսեց մեղաղրել իր լնկերին: Բայց մոքսատան վերակացուն հաւատացնում էր, որ ինքը տեսել է, թէ ինչպէս Զէկը քաջութեամբ թռաւ ջրի մէջ, Զիմին ազատելու համար: Ոչ ոք ոչինչ չհասկացաւ, բայց այդ ժամանակից սկսած Զէկի բնաւորութեան մէջ յայտն

ւեց երկուսութիւնը։ Հէնց այդ օրից էլ Զէկի մասին սկսեց ստեղծ-
ւել այն աւանդութիւնը, որ ներկայացնում է բարութեան ու կա-
րօտութեան մի օտարութի խառնուրդ։

Զիմը տասերկու տարեկան հասակում մնաւ Օստինդեան լնկե-
րութեան մի մեծ առևտրական նաւի մէջ, որպէս փոքրաւոր հնչ
վերաբերում է Զէկին, նա դարձաւ տեղեկատու մաքսանինգների,
որոնք ացզբան շատ էին այդ ափերում։ Հին ժամանակներում այդ
մաքսանինգները փորել էին ափի բոլոր ժայռերը նրանց մէջ շի-
նելով ստորերկեաց սենեակներ և անցքեր, որտեղ նրանք թաք-
ցնում էին իրանց ապրանքը, և որպէս նրանց մասին պատմում
են, սարքում էին իրանց քէֆերը։ Յաճախ մաքսատան պահա-
պանը նկատում էր, թէ ինչպէս գետնի տակից կարմրաւուն ծուխ
էր բարձրանում։ Նա զգում էր թէ փունչի հոտը և թէ երգերի
ձայնը։ Նա գիտէր, որ ստորում մաքսանինգներ են գտնուում, բայց
աղմուկ չէր բարձրացնում, որովհետև այդ մարդիկ զիտէին իրանց
պաշտպանել, երբ նրանց անհանգստացնում էին իրանց թագըս-
տեան մէջ։

Երբեմն նրանց դէմ ուղարկում էին զինւորական խումբ կամ
միլիցիա, կամ թէ, մինչեւ անգամ, կանոնաւոր զինւորներ կարմիր
նշանազգեստներով։ Ազգախի ծառայութիւն Գէորգ թագաւորի զին-
ւորներին դուր չէր գալիս։ Նրանք ուրախանում էին, երբ բոյնը
դատարկ էին գտնում և թռչունները թռած։ և այդ միշտ էլ այդ-
պէս էր լինում։

Փոքրիկ տեղեկատունները իմաց էին տալիս մաքսանինգներին
թշնամու բոլոր շարժումների մասին, իսկ նրանց ստորերկրեաց
անցքերը անցնում էին մի քանի դռներ կամ դէպի զիւղը տանող
կամ դէպի ծովը։ ծովալինեաց բոլոր ռամփինները օգնում էին նրանց
թագնւելու։

Զէկը բարեկամացաւ ացդախի մարդկանց հետ։ Նա եղաւ այն-
պէս, ինչպէս էին միւսները—ուժեղ, համարձակ մարդ—պատրաստ
ամեն ինչ անելու։ Նրա ծնողները մեռան։ Նա իր գործունէու-
թիւնների մէջ բոլորովին ազատ էր։ Լինելով կարճահասակ, նիհար,

ջղացին և ճարպիկ ինչպէս կատու, նա ունէր և, փոքրութիւնից ազատ օդում մեծացած մարդկանցը յատուկ, բնական գրաւշութիւն։ Նա սովորեց հիւսնութիւն, բայց ամեն մի կանոնաւոր աշխատանք նրա համար ատեի էր։ Նա չէր վախենում ոչ անհաջ օրից և ոչ անսուն գիշերից, բայց և երբեմն պատահում էր, որ զրկանքի օրերը նա յետ էր դարձնում կոպիտ և անսանձ ուրախութեան ժամանուկ...

Այդ միջոցին Զիմը վերադառնում էր իր ճանապարհորդութիւնից։ Նա շատ գեղեցիկ երիտասարդ էր. այլ հին ժամանակւայ անգլիական գեղեցկութիւն էր։ Զիմն ունէր մանկական կապոյտ աչեր, մարմնի լաւ կազմութիւն և քաջ մարդու բուռնցքներ։ Նա մի հարւածով կարող էր իր հակաւակորդին ացնպէս յաջող գետին տապալել, ինչպէս որ Զէկը կարող էր նրան խեղտամահ անել։

Երբ մանկութեան բարեկամները պատահեցան միմեանց, Զիմը տատանում էր Զէկի պարզած ձեռքը սեղմել։ Զիմն ունէր վաստակած փող, մաքուր սպիտակեղեն։ Նա երազում էր լաւ զրւդակցի, եկեղեցում բռնելիք տեղի, պատւի ու յարգանքի մասին։ Նրա բարեգործութեանը, ինչպէս որ յաճախ պատահում է, աւելացնել էր և մեծամտութիւն։ Նա Զէկի վրայ նայում է ճպուռի վրայ—արհամարհանքի, ծաղրի և նախանձի հետ միասին։ Զէկը այդ ջերմութիւնից ու մտերմութիւնից զուրկ ձեռք սեղմելու մէջ զգում էր մի գաղտնի վիրաւորանք։ Նա աշխատում էր Զիմին հանդիսել որքան կարելի է սակաւ։ Վերջը նրանք բոլորովին դադարեցին միմեանց հետ խօսել, երբ որ երկուսն էլ սիրահարւեցին Նիզայի—«Ծագող արեգակ» պանդոկի գեղեցիկ աղախնի—վրայ։

«Ծագող արեգակ» կոչումը բաւական յաջող անուն էր, որովհետեւ առաջին ոսկեայ ճառագայթը, որ դողալով սահում էր ջրի տատանման վրայ, լուսաւորում էր պանդոկի վաղորդեան քամուց տարութերւող հին նշանագիրը (ՎԵՎԵՏԱ)։ Այդ մի քառանկիւնի տունէր յածլիկ, հաստ պատերով, շինւած ցեմենտով միմեանց միացրած մեծ-մեծ մոխրագոյն քարերից, նեղ պատուհաններով—թլն-

դանօթների համար շինւած պատուհանների նման. երևում էր, որ նա ամեն ջանք գործ էր դնում, որպէս զի կուի հիւսիս-արևելեան մշտական փոթորիկների գէմ, որոնք պատահում են այդ ափում և բոլոր ծառերը թեքում են դէպի մի կողմէ: Բայց և այդուղ լինում են խաղաղ ժամեր, և մանաւանդ, ոչ մի բանի հետ չհամեմատուզ, գիշերներ, որոնք զարմացնում են մարդուն իրանց անաղմուկ և հանդիսաւոր լուռթեամբ: Պանդոկի պատուհաններից բացւում էր անդոյթ ծովը, որ բոլորովին միանում էր երկնքի հետ, և նկատելի էր, թէ ինչպէս լողում էին նաւակների մեծ, ծոց առաջաստները, որոնք թոց կերպով լուսաւորւում էին մայր մոնող արեւի կարմիր լուսով: Երջակացքում այլ ևս ուրիշ շինութիւններ չկային, եթէ լուսով: Երջակացքում այլ ևս ուրիշ շինութիւններ չկային, եթէ հաշւելու մինենք Կինսգէտ ամրոցը և Պարսֆորլէնդի հին փարոսը: Ափը արեւելեան կողմում կէս մղոն հեռաւորութեան վրայ կոր կերպով պատույտ էր զալիս դէպի Մարգէտ և ներկայացնում մի սուր հրանդան կտուցի ձեռով, ուր իջնում էին յոդնած ձկնկուները:

Լիզան ծնւեց իբրև հետեանք մի օ:ոար նաւորդի բոպէական հրապուրանքի բոշայի հետ, որ ծաղիկներ էր ծախում Մարգէտում: Եւ որովհետև նրա ծնողները նրան ձգել էին, ուստի գտնեցան բարեպաշտ պառաւներ, որոնք զբաղեցան նրա կրթութեամբ, նրան սիրոյ հրապուրներից ազատ պահելու վստահութեամբ: Տասնեօթ տարեկան հասակում նա արդէն կատարեալ շքնաղ արարած էր:

Նա ամբողջ տունը լցնում էր իր երիտասարդ, բաղրաւոր ծիծաղով և իր փոքրիկ կիսակօշիկների կոկտոցով, որոնք քարէ յատակի վրայ ձայն էին հանում ճիշդ կաստանիկի¹⁾ պէս: Այցելուների հաճոյքներին նա պատասխանում էր զարմանալի կծւռթեամբ և վերջացնելով փախչում էր, շտապ պատւելով իր վանդակաւոր մրջազգեստի մէջ: Այս բոլորը նա անում էր առանց որ և է մտաւ մագպեստի մէջ: Այս բոլորը նա անում էր առանց որ և է մտաւ մագպեստի մէջ: Այս բոլորը լցւում էր ամառ ժամանակ, իւրաքանչիւր օր զալիս էին «Մագող արեգակ» պանդոկը: Որքան սիրահարներ, նոյնքան և

¹⁾ Ծագանակի կճեպի նման փալտիկ, որ պարելիս հաղցնում են մեծ մատի վրայ և չխէլչլացնում:

ալցերուներ: Այդ հոսանքը ուրախացնում և միւնոյն ժամանակ անհանգտացնում էր «Ծագող արեգակի» տիրոջը: Վերջապէս մէկն ու մէկը չէ որ պէտք է հանդիսանար աւելի համարձակ կամ թէ աւելի ճարպիկ, քան թէ միւները, և վերցնէր այդ լաւ աղախնին, և այն ժամանակ «Ծագող արեգակի» յաջողութիւնը ուր կը մնար:

Բարեսաշտ պառաւները, որոնց մասին խօսեցի, այլ ևս հանդիսո քննել չէին կարողանում: Նրանք սարսափում էին այն մոքի առաջ, թէ մի՞ գուցէ իրանց սանուհին յանկարծ մի օր հեռանայ մի մարդու հետ: Զէ որ նրանք երդուել էին, որ այդ աչքերը և այդ շրթունքները կը խորշին դայթակղութիւնից: Անշուշո հարկաւոր էր Լիզային ամուսնացնել պատահած այն տղամարդու հետ, որը կարող կը լինէր նրա սանձը պահել: Փեսացուների պակասութիւն չկար: Նրանց մէջն էին և Զիմն ու Զէկը: Պանդոկապետն ու Լիզայի բարեգործ խնամակալները Զիմին գերադասում էին: Զիմը քսան երկու տարեկան էր և ծառայում էր արդէն «Արիանում», յետոյ արձակուրդ ստացաւ, նորից ծառայութեան մտաւ և նորից արձակւեց: Ծովային ծառայութիւնը նրան ձանձրացրեց և նա պատրաստ էր ուրախութեամբ սպասաւոր լինել «Ծագող արեգակ» պանդոկում: Օտարութիւն: Լիզան, լնդհանրապէս այնչափ խելօք լինելով, դէպի Զիմը համակրութիւն չէր զգում: Նա գեղեցիկ էր. Լիզայի կարծիքով տղամարդու համար այդ չափազանց էր: Գեղեցկութիւնն ախար կանացի բան է:

Սակայն նա ազնիւ էր! Միւնոյն ժամանակ հաւանական է, որ նա չափազանց հոգարտանում էր իր առաքինութեամբ, ինչպէս և իր գեղեցկութեամբ: Համարձակւելով այդ բանում խոստովանել, Լիզան նրան տխուր էր գտնում: Ինչ վերաբերում է Զէկին, ինչպէս դառնալ մի թափառականի կին: Լիզան այդ բանը բացարձակ ասաց նրան: Միւս օրը Զէկը մտաւ հիւնի մօտ բանւոր և նրան զարմացրեց զործի մէջ ցոյց տւած իր ճարպիկութեամբ, ջանասիրութեամբ և նստակեցութեամբ: Բայց այն պառաւները, որոնք խոստացել էին Լիզային օժիտ տալու, հրաժարւեցին հաւատալ Զէկի ուղղւելուն. սպանդոկապետը նոյնպէս միացաւ նրանց հետ: Նախկին լնկերներին գոհացում տալու համար, Զէկը մի գիշեր գնաց նաւից երկու տակաւ ոօմ գուրս բերելու. նրան իսկոյն բանեցին և բանտ նստա-

ցրին։ Լիզացին սկսեցին ամաշացնել իր գէպի այդ անպիտանը ունեցած յարգանքի համար։ և ընդհակառակն ամեն օր նրա մօտ գովում էի Զիմի արժանաւորութիւնները, այնպէս որ մի գեղեցիկ օր, ինքն էլ շիմանալով ինչպէս, նա նշանւեց գեղեցիկ նաւաստիի հետ։

Լիզան այգիի մի ծալրում ջրհորից ջրհանն էր անում, երբ որ Զէկը, որը իր օրերն բ մնտումն էր անցրել, յանկարծ նրա գէմ յայտնւեց։

— Մարդիկ ասում են, որ ես կարող եմ և լաւ լինել և վաս, և ես զգում եմ, որ նրանք ուղիղ են ասում։ Բոլորը ձեզանից էր կախած, Լիզա։ Դուք ուղեցիք, որ ես վաս լինեմ, այգպէս էլ կը լինեմ։ Մնաք բարե! Վայ ձեզ և ձեր փետացուին!

Լիզան փորձեց ծիծաղել, բայց խորը կերպով յուզւած էր։

Նուտով Լիզան իմացաւ, որ Զէկը գնացել է իր նախկին պարապմունքին—իր վաղենի մաքսանենգ լնկերների մօտ։ Բայց այն ինչ վրէժ էր, որ նա սպասում էր։ Լիզան նախազգուշացրեց Զիմին, որը այդ բանի համար իր նախկին լնկերին հայնոյեց կոսկոտ և արհամարհական խօսքերով, իսկ Լիզան իր սրտի խորքում զարմացաւ, որ այդ բանը նրան վիրաւորեց։

Հասաւ և հանդիսաւոր օրը։ Նոքա կէսօրին պսակւեցին։ «Ծագող արեգակին խոհանոցում ափսէների և շշերի չիչիկոցը բանել էր։ Տանտէրը իւր աղախնի և նրա ամուսնու համար հարսանիքի ճաշ էր պատրաստել։ Գիշեր էր, տաք և խաղաղ մայիսեան մի գիշեր, և նորահարսը հագնում էր ճաշի համար ¹⁾), երբ որ տրորւող տերեների շրջիւնը և ցանկալասոի ճռնչոցը ստիպեցին նրան գլուխը դարձնել դէպի բաց պատուհանը, ուր յանկարծ յայտնւեց մի մարդու խաւար ուրւագիծ արշալոյսից շառագունած երկրքի վրայ։ Զէկա! բացականչեց նա և զոյգ ձեռքերով ծածկեց իւր բաց ուսերն ու պարանոցը։

— Ի՞նչ էք ուղում, հեռացէք!

¹⁾ Աւրոպակում ճաշի ժամանակ կանաչք աւելի շքեղ էն հագնուում։ որպէս թէ պատրաստում են մի տեղ գնալու։

—Նախ ես պէտք է տամ ձեզ հարսանիքի ընծայ: Դուք գիշեք թէ այս գիշեր ձեր ամուսինը նւր պէտք է գիշերի:

Լիզան լուռ կանգնած էր, և, որպէս պատասխան, նորա հայեացքը ակամայ կերպով ընկաւ կարմիր վարագոցըներով պատած գեղեցիկ անկողնի վրայ, որը Զիմն էր գնել իւր աշխատանքով:

ԶԵԿԸ ԾԻԾԱՂԵՑ:

—Ոչ, իւր թանկագին բարեկամ, այստեղ չէ! Նա պէտք է գիշերի իւր մահճակալի վրայ «Կալիօպա» նաւի մէջ: Սէր Զօն-Պրայդ նաւակտորը, լաւ պատերազմական մի նաւ 51 թնդանօթներով լարահաւորւած և տասը մղոն արագութեամբ դնացքով...

Բռնի զօրաժողով—այն ժամանակւայ սարսափիր, որ սորիպում էր բոլոր մայրերին, քոյրերին և հարաներին Միացեալ Թագաւորութեան մէջ անիծել պատերազմը! Ազահ զօրաժողով, որ ամեն տեղ խլում էր նրանց, որոնց պիտանի էր համարում: անողորմելի զօրաժողով, որի համար ոչինչ սուրբ չկար, երբ պէտք էր թագաւորական նաւատորմը լցնել: Մի բազէաչափ Լիզան մնաց քարացած, նրա խօսքերից մոլորւած, յետոց վազեց դէպի դուռը, որպէս զի Զիմին նախապատրաստէ, բայց ԶԵԿԸ կանգնացրեց նրան:

—Անօդուու Հ: Երկու զինւորւած նաւեր կէս ժամ առաջ դուրս եկան, մէկը Կինսգէտում, միւսը Ֆորմիս հրւանդանում: Նրանց կառքերը այստեղ կը լինեն 10 բոսէից յետոյ: Ճանապարհը գէպի Մողգէտ պահպանւած է... 0, այո, ես ամեն ինչ պատրաստել եմ:

—Այդ դժուք էք նրան մատնել:

—Ես ձեզ չասացի, թէ այժմ ես վատ եմ և թէ դուք ինքներդ էք այդ ուզում:

—Չարագործ, այդ ինչ սառըութիւն է! ասաց Լիզան և ցոյց տւեց իւր բռունցքը, երեք պատրաստ էր նրան պատառոտել: Յանկարծ նրա բարկութիւնը բոլորովին անցաւ և նա հեկեկաց: «0, ԶԵԿ, ԶԵԿ! Ես ախար քեզ սիրում էի!» Երիտասարդը խիստ ցնցւեց:

—Այո, ես խելազար էի, ես ուզում էի ձեզ հետ ամուսնանալ, թէւ դուք երեւում էիք բռորովին կորած: Ինձ այդ բանը չթոյլ տւին, բայց, չնայելով պատճառաբանութիւններին, չնայելով Զիմի սիրոյն, կային օրեր... 0, ինչու եմ այս բռորը ձեզ ասում:

— Դէհ, ուրեմն այժմ, — ասաց Զէկը հոգոց հանելով — որովհետև
նա պէտք է հեռանայ...

Զէկը մօտեցաւ նրան: Լիզան արագութեամբ հեռացաւ:

— Ոչ, դուք ինձ զզւանք էք ազդում: Դուք անարգւած էք,
և ես մերժում եմ ձեզ իմ հետ ունեցած բարեկամութիւնը: Եւ
դուք տեսնում էք արդեօք, այս բոսկիս ես չգիտեմ, թէ ինչն է
ինձ համար աւելի ցաւալի — Զիմի անբաղդութիւնը, թէ այն, որ
դուք մի այդպիսի անազնիւ գործ էք կատարել...

Նա ընկաւ աթոռի վրայ և հեկեկոմ էր: Զէկը անշարժ կանգ-
նած էր: Նրա զէմքի բոլոր մկանները դողդողում էին: Հէնց այդ
ժամանակ լսելի էր, թէ ինչպէս հրացանի կոթերը շխկչակում էին
ամուր կերպով սոսորին դռների քարէ աստիճանների վրայ: Մի
ձայն լսւեց. «բաց արէք, թագաւորի անունով»:

Պանդոկում մի սարսափելի շփոթ բարձրացաւ: Երեխաներն
ու կանաչք, վախից շփոթւած, վազում էին ու բղաւում: Տղամար-
դիկ շտապ մի տեղ էին փնտրում, ուր կարելի լինէր թագցնել Զի-
մին կամ թէ մի կերպ օգնէին նրան փախչելու:

— Ո՞վ է այստեղ Զէմս Վիլյկինս — հարցրեց վաշտի գլխաւորը:

Այն ժամանակ Զէկն առաջ անցաւ, բոլորին զարմացնելով, և
ասաց զիլ ձայնով. «Այդ ես եմ, գնանք, ընկերներ»: Կեցցէ թա-
գաւորը: Թող կորչին անիծւած գորտակերները: Անզիւսցիք մինչև
այժմ էլ այդ գեղեցիկ կոչումով են մկրտում ֆրանսիացիներին:

Եւ այդպէս, հէնց իրեն — Զէկին վիճակւեց այդ գիշերն անց-
կացնել «Կալիօպա» պատերազմական նաւի մահմակալի վրայ: Նրա
համար այդ մի տաժանելի գիշեր էր: Նա տեսնում էր Լիզացին
Զիմի գրկում, բայց միևնույն ժամանակ ինքնիրան ասում էր, որ իւր
մասին եղած ցիշողութիւնը պէտք է հետեւ թշւառ աղջկան, որ
Լիզան նոյնպէս մտածում էր իրա մասին այնպէս, ինչպէս ինքը
նրա մասին: Գուցէ նա չէր էլ սխալում:

Յամենայն դէսս Զէկին վերագարձել էր այժմ իւր լաւ «ես»:
Վեց ամսւայ ընթացքում նա օրինակելի նաւաստի էր: Բացց մի
անգամ նաւապետի օգնականը կոշտ կերպով հայնուեց նրան մի
չնչին վարժունքի համար: Զէկի վատ բնաւորութիւնն առաջ անցաւ,
նա յանդուզն կերպով պատասխանեց և հրաժարւեց պատւէրը կա-

տարել։ Նրան շղթայեցին և նա ենթարկւեց զինւորական դատարանի։

Ծովային օրէնքը խիստ էր մանաւանդ պատերազմի ժամանակ։ Զէկին դատապարտեցին 150 հարւածների... Նա պատժից յետոց դանդաղ կերպով սկսեց ուղղւել, բայց նրա վիրաւորւած սիրու չկարողացաւ ուղղւել։ «Կալլիօպան» կազմում էր Թեմզայի գետաբերանի վրայ նորայի մօտ կանգնած Անձ նաւատորմի մի մասը։ Այդ նաւատորմում ծագեց անհնաղանդութեան ուժեղ և վտանգաւոր մի ոգի, որ յառաջացել էր զօրաժողովի կոպտութեան, հրամանաւարների բռնապետութեան, ոռոճի անբաւականութեան, ծառայութեան խորութեան և հնգամեայ պատերազմի պատճառով։ Յանկարծ բռնկեց սորուկների խորովութեան նման մի սարսափելի խորովութիւն։ Սպաները սպանեցին կամ թէ իբրև գերիներ փակւեցան իրանց սենեակներում։ Հասարակ նաւասորին դարձաւ փոխծովապետ։ Զէկին այժմ դառնալով «Նաւապետ» Զէկ, կառավարում էր «Կալլիօպան»։ Նա խորովարների մէջ բոլորից էլ գերազանցում էր։ Խռովութեան սկզբում նա իւր ջերմ ճառերով գրաւեց դէպի իւր կողմը տատանւող ծովային զինւորներին, նաև մուածեց մահակալներից պատնէշ կազմել և եթիու թնդանօթ ուղղել սպաների վրայ, որոնք մնացել էին նաւի յետին մատում, վերջապէս հէնց ինքը կացինը ձեռքին յարձակւեց նաւապետի վրայ և խլեց նրանից սուրբ։

Հոլլանդիայի ափերի նաւատորմը միացաւ նորայի նաւասորմի հետ։ Այլ ևս ոչինչ չէր պաշտպանում Թեմզայի մուտքը։ Եթէ որ ֆրանսիան ունենար այն ժամանակ բաւականին նաւեր և նաւորդներ, ֆրանսիացիք կարող էին ներս մտնել Լոնդոն և անգլիական պետութեան վերջ տալ։ Բոլորովին աիրելով նաւատորմին, ապըստամբները ոչ մի կատ չունէին ցամաքի հետ և չէին կարող լրացնել իրանց ոչ պատերազմական և ոչ բռւսական պաշարը։ Բացի այդ, նոքա չգիտէին մինչև անգամ ծովային գիտութեան սկզբնական շափլ։ Այդ պատճառով երբ որ նոքա փորձ արեցին մանել բանակցութիւնների մէջ, նոցա ամենից առաջ առաջարկեցին ենթարկւել իրանց, յանձնել բանտարկւածներին կամ պատանդներին և մատնել իրանց դլխաւորներին։ Այդպիսի հանդամանքների մէջ «Ծովապետ»

Պարկերը գաղտնի հաղորդակցութեամբ յայտնեց իւր հրամանառար-ներին, որ նա ֆրանսիայից ստացել է ձեռքնտու առաջարկութիւններ։ Մի բոլոր այդ մարդիկ լուս կերպով նայում էին մեմեանց անվճռականութեան մէջ ընկած։ Զէկը կանգնեց և ասաց.

—Եթէ մոտածում են մեր նաւատորմը ծախիկ այն շներին, ես կիշնեմ «Կալլիօպայի» վառօդի պահեստը և կը ձգեմ այնուեղ իմ այլուող չիբուխը։

Նրա ոգևորութիւնը հաղորդւեց և միւսներին, թշնամու զեսպանները նախատական կերպով խրկւեցան, և բոլոր այդ քաջերը երդւեցին մեռնել այն ազգի անունով, որը դէպ իրանց վերաբերում էր, որպէս պարիաների։

Ես չեմ պատոմիլ, թէ ինչպէս ապստամբւած նաւատորմը հասաւ այն զրութեան, որ ստիպւած եղաւ անձնատուր լինել, և նախկին խոռվարանները, թագանելով իրանց տիրութիւնը, պէտք է ներկայ լինեին իրանց զլիաւորների պատժին։ Մի սեղտեմբերեան առաւօտ Զէկը բերւեց «Կալլիօպայի» տախտակամածի վրայ պատժի ենթարկւելու համար։

Կանգնեցրին մի ինչ որ կախաղանի նման բան, որի չորս անկիւններում կանդնած էին չորս զինւորներ լի հրացաններով։ Պարանի ծայրը կախւած էր այն ճախարակից, որ ամրացրած էր յետին կայմի կատարի վրայ։ պարանի միւս ծայրը ձգւած էր թնդանօթների խմբի մէջ, և այն բռնած ունեին տասը մարդ, սպասելով նշանին։ Կապոյտ բաճկոնները շարքով կանգնած էին տախտակամածի վրայ անշարժ և վայր խոնարհած աչքերով չտեսնելու այն, ինչ որ պէտք է կատարւէր։ Զէկը յացտնւեց նաւի կորան վրայ սկրիստաւուի և պաստորի հետ միասին։ Վերջինս սկսեց խօսել ապաշխարութեան և ապագայ կեանքի մասին։

—Տէր-հայր, ընդհատեց Զէկը, հինգ բոսկէից յետոյ ձեզանից ես լաւ կիմանամ այդ բոլորը։ Բայց չկամենալով վիրաւորել այն արժանաւոր մարդուն, որի հետ ինքը իր մեծութեան կարճատե միջոցում շատ անգամ էր գինի խմել, նա իսկոցն և եթ աւելացրեց։

—Գեղեցիկ օր է, այնպէս չէ, տէր-հայր։

Այո, իրաւ, գեղեցիկ օր է, չափազանց գեղեցիկ մեռնելու համար...

Օդը թեթև, թարմ և թափանցիկ էր, ուրախ-պայծառ լոյսը հեղւում էր ալիքների վրայով։ Երկինքն ու երկիրը ժամանում էին։ Այնտեղ հեռւում արեգակի ճառաղայթների տակ մեղմ մշուշի միջով Զէկի առաջ սկին էին տալիս ծանեաի սպիտակ ափերը։ Պայծառ դէմքը մի ակընթարթում երեեցաւ նրան։ Լիզան նախշուն շրջազգեստով հիւրասիրում էր հիւրերին Շագող արեգակից դահլիճում։ Զզային դողը վերջին անգամ անցաւ։ Նրա գունատ դէմքով։ Բայց ազգ տեեց մէկ կամ երկու վայրկեան, որից յետոյ նրա դէմքը խաղաղ տեսք ընդունեց։ Ըստ սովորութեան, ոստիկանը իր ձեռքը մեկնեց նրան և Զէկը ամուր կերպով սեղմեց այն իր ձեռքում։

—Դուք ունէք արգեօք որ և է չյալտնած ցանկութիւն, որ վշտացնում է ձեզ, հարցրեց ոստիկանը։

—Ոչ, ես ի հարկ է կուգէի աւելի շուտ գնդակահար լինել։ Կախւիլը ոսորութիւն է։ Բայց այս աշխարհում մեր ցանկութիւնները երբէք չեն կատարում։ Միայն աշխատեցէք, որ պարանը ուղիղ իմ պարանոցովը լինի։

—Երեսում է, որ նա լաւ կը լինի, դուք գոհ կը լինէք, ասաց ոստիկանը, որի ձեռքերը դողովողում էին։ Պարանը Զէկի պարանոցովն անցկացնելիս, արձակեցին նրա շապիկի կոճակները։ Այդ ժամանակ ոստիկանը ու պասաօրը նրա կրծքի վրայ կարդացին կապոյտ տառերով դաճած «Լիզա» անունը։ Մի րոպէ տիրեց սարսափելի լուսութիւն։

—Պատրամատ է, հարցրեց առաջին հրամանատարը. Զէկը պատասխանեց. «Այո»։

—«Արձակիր», հրաման տւեց հրամանատարը։ Թնդանօթն այնպէս արձակեց, որ ամքողջ նաւը ցնցւեց։ Թնդանօթի խմբի մարդիկ բոլորը միասին ձգեցին պարանը։

Զէկը մի մեծ թոիչք գործեց, որպէս զի աւելի ևս մեծ ոյժով լնկնի տարածութեան մէջ։ Նրա մարմինը վեր բարձրացաւ թնդանօթների ծխի հետ միասին։ Ոչ ոք չէր նայում... Երբ որ ծուխը ցնդեց և ներկայ գտնւողները վեր բարձրացրին իրանց աչքերը, տեսան Զէկի անկենդան մարմինը, որ կամացուկ օրօրւում

Էր յետին կայսի ծայրի վրայ, նոյն կամրջի վերեռւմ, որտեղից նա ոչ շատ վաղ հրամացրւմ էր: Մի ժամկց յետոյ նրան արձակեցին և ուերից ռումբեր կապելով, ծովը ձգեցին 20 ոռնաշափ խորութեան մէջ:

Այդպիսի մի անհաճոյ գործ շտապեցին աւելի շուտ վերջացնել: Գատը, վճիռը, նրա կատարումը, այս բոլորը 24 ժամում կատարւեց: Երկու օրից յետոյ իմացան, որ Զէկը ծառայում էր ուրիշի անունով, որ նա կամովին զոհաւեց ուրիշի համար: Իմացան նոյնպէս, որ նա է խսնգարել ընկերներին իրանց նաւատորմը Փրանսիացիներին մատնելու:

— Յաւում եմ, որ մենք կախել ենք մի հերոսի, ասաց ծովագետը:

— Ես նոյնպէս ցաւում եմ այդ բանի համար, պարոն, պատասխանեց Վալլիովացի նաւապետը:

Լիզան դարձեալ գեղեցիկ է, բայց նա գունատ է և այլ ևս չի ժամում:

Մարգէտի զւարձախօսները այլ ևս չեն համարձակում նրան բարկացնել: Նա միշտ մտածմանց մէջ է: Վիշերով, երբոր Զիմը քնած է խոր քնով, նա վեր է կենում և լսում է քամու հառաչանքներն ու ձկնկուլների աղաղակը, այնպէս սուր և յուսահատ, որպէս խեղդող երեխացի աղերսանքը...

Նա կորցրեց ապրելու ցանկութիւնը և հանգիստ կերպով մեռաւ առանց որ և է նկատելի պատճառի: Զիմը նրա շիրիմի վրա խաչ կանգնեցրեց, վեց ամիս սգի շորեր հագաւ և յետոյ ամուսնացաւ առաջող արեգակին նոր աղախնի հետ:

Լիզացին դաստիարակող բարի պառաւները շատ էին քաջալերում այդ ամուսնութիւնը, որովհետեւ մարդս միակ չպէտք է ապրի:

Ահա այն բոլոր յիշողութիւնները, որոնք մնացել են այս աշխարհում Զէկի և Լիզացի մասին:

* * *

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Երբ խորազննին հայեացքս լարած
նայում եմ մաշւած գունատ պատկերիդ,
և այդ գրաւիչ դէմքիդ գծերում
Տեսնում թագնւած կիսամար ժաղիտ.

Երբ քո աչքերը հեռուն դիտելիս
Մի վերջին ոյժով փայլում են յանկարծ,
և կամ խոնջացած վշաերի բովից
Գաղտնի մրմունջով մարում մելամաղձ, —

Ես միշտ յիշում եմ ալեկոծ ծովիլ
Նոր հանգիստ առած անզուսպ փոթորկից,
Ես յիշում եմ այն ասպառածները,
Որոնք ջարդում են ալեաց զարկերից:

Ո, իս այդ աչքերը մի օր վառվուն,
Իսկ այժմ տանջւած յուսախաթ սէրից,
Ինձ յիշեցնում են ծովիլ անզորրուն
Ցաղթւած, զսպւած ահեղ փոթորկից...

IN ASIAM PROFECTUS EST

Նորւեգիական գրականութիւնից

ԱՄԱԼԻԵ ՍԿՐԱՄԻ

Թարգմ. ՄԿՐՏԻՉ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

Հազբարտ Ենսընը իր լատինական շարադրութիւնն էր պատրաստում:

Նա նստած էր համալսարանի դահլիճներից մէկում, քանի մի ուրիշ ուսանողների հետ, որոնք բակալաւրի քննութիւնն էին ուղում տալ. մէջքը կորացած, կզակը սև գրասեղանի վրա կախած՝ նա եղունգներն էր կրծոտում. նրա բաց-խարտեաշ մազերի գանգուրները քսում էին թեթեակի առջեւը դրած թղթին, կրծքով յենել էր ձեռների վրա այնպէս, որ իր երկար բազուկների արմուկները գրասեղանի ափերիցն էլ աւելի հեռու էին տարածւել:

Ամբիոնի վրա՝ պատուհանի մօտ զրւած մի փոքրիկ սև սեղանի առաջ, նստել էր կոնդագլուխ, սպիտակամորուս, նոր սափրած ծռաբերան մի մարդ:

Ձեռները սեղանի տակ պահած՝ նա այնպէս էր թեքւել դէպի առաջ, որ նրա մէջքը մի կոր գիծ էր ձևակերպում: Աչքերը կիսախուփի և դիմագծերը անշարժ էին, կարծես թէ քնելիս լիներ, բայց երբեմն նրա նիհար և ձերմակ ձեռքը թերթում և դարձնում էր զգուշութեամբ մի բարակ բրոշեր:

Գրասեղանների շարքերի արանքներում շրջում էին յամրաքայլ վերահսկողները: Պատուհաններից շատերը բաց էին թող-

ւած. բայց և այնպէս սաստիկ շոք էր անում, տոթագին շոք:

Երբեմն-երբեմն ջահելներից մէկը հառաջում էր կամ հազում: Ոչ մի աղմուկ, բայցի վերահսկողների յամր քայլերից առաջացած և դրիչների ճշգնդըզոցից, չէր խանգարում ծանրագին լոռովիւնը:

Ուսանողներից մէկը վերջապէս գրիչը վար դրեց և տեղից ելաւ: Հագբարարը զլուխը շրջեց և տեսաւ թէ ինչպէս մի ջահիլ, բարձրահասակ և ամրակազմ մարդ մօտեցաւ ամբիոնին, զլուխ տւեց ծերունուն, յանձնեց սրան մի տեսրակ, նորից գլուխ տալով դուրս գնաց դահլիճից:

—Ինչպէս է կոտրատում, մոածեց Հագբարտը հետեւելով նրան աչքերով: Այ, կը տեսնէք թէ ինչպիսի յիմար բան կը լինի գրած: Եւ չի էլ ամաջում այնպէս ման գալ, երբ վերահսկողները յամրաքայլ են շրջում: Նա նորից սկսեց իր եղունգները կրծոտել:

Նատ չանցած՝ դարձեալ մի այլ ուսանող ելաւ ու այսպէս հետաելները, մէկը միւսի յետեից, մինչև որ քննողների կէսը հեռացաւ այնտեղից:

Պատուհանի մօտ նստած ծերունուն փոխարինեց մի այլ ալեոր, բոլորովին նմին-նման, այն զանազանութեամբ միայն, որ վերջինս ծուարերան չէր:

—Դուք դեռ չէք սկսել. կարելի է, հիւանդ էք:

Վերահսկողներից մէկը ձեռքը դրեց Հագբարտի ուսի վրա, ցած ձայնով նրան ասելով:

Հագբարտը, անհաստատ սայւածքով, որը կարծես թէ շատ հեռուն էր տարածւում, նրան պատասխանեց. «Ես սովոր եմ նախ և առաջ ամեն բան գլխիս մէջ կենդրոնացնել»:

Վերահսկողը հեռացաւ ձեւները յետեւը դրած և սկսեց յետ ու առաջ քայլել:

Արգէն: Հագբարտը կարդաց վերստին իր բնագիրը, նախադասութիւն՝ նախադասութիւնից յետոց: Վերջը մի կողմը դրեց այն, փակեց աչքերը և բերանացի թարգմանեց լատիներէն: Նատ անգամ կրկնեց համոզւելու համար, որ առանց սխալւելու է յիշում այն: Խնդիրը դիկոատոր Սիլլացի ոխերիմ և նրա ձեռքով տարագրւած կեսարի ու սրա գէսի Ասիա մեկնելուն էր վերաբերում:

Գրչակոթի ծայրը մատներով սեղմած՝ նա սկսեց գրել: Վերջացնելուց յետոյ նկատեց, որ ինքը ամենից վերջն է մնացել:

Թեթևաքայլ իջաւ սանդուխքի ասուհմաններով: Քննութեան շարադրութիւնները պատրաստ էին արդէն: Նա լաւ էր գրել անկասկած: Լատիններէնը սումանաւանդ խաղ և պար էր նրա համար: Այն գրւածքում սխալներ չունէր, բաց առնելով քանի մի թեթև մանրամասներ, որոնք մեծ նշանակութիւն չունեն: Նա փայլուն քննութիւն կը տայց, հրճւանք կը պատճառի իր զառամեալ բարի ծնողներին և մանաւանդ իրան օժանդակող հպարտ գիւղացիններին կապացուցանի, որ սրանք իրանց փողերը զուր տեղը չեն փչացրել:

Հայրենիքից մեկնելուց առաջ սրան գեղի քահանան ասել էր, որ գեղջուկների զաւակները շառ անդամ հեռաւոր տեղեր են գնում, որովհետեւ նրանք անդրդւելի են մնում իրանց մանկական հաւատի մէջ և սովոր են քըով բաւականալուն:

Այն, փառք Աստծուն, իր մանկական հաւատը կարողացել էր պահպանել, իսկ ի՞նչ կը վերաբերի ստկաւապետութեան, այս նրա ամենաշնչին արժանիքներից մէկն էր:

Ամեն մի քայլափոխին նա շարժում էր իր ձեւները և մի առանձին հրճանեքով էր նայում իր նոր հագուստների վրա, որոնք շատ լացն էին նրա նիհար և տեղահան եղած ոսկրներով մարմնի համար, դիմում էր, ոտներին հազած և մեխերով գամած ծանր կոշիկներով, դէպի էժանագին ճաշարանը, որտեղ ամբողջ կեանկքում առաջին անդամն էր ցանկանում ճաշել:

— Աա, ի հարկէ, երբ մարդս աշխատել է վարձատրութեան է արժանի, հառաջեց նա իր առջևն ունենալով մի աման լիքը տաքտաք ոլոռնով, որոնց երեսին մի փոքրիկ կտոր ճարպ էր լողում: Մի փառաւոր ճաշ, մի արտաքոյ կարգի ճաշ մասմառեայ սեղանի վրա, իսկական մառմառեայ սեղանի վրա մատուցւած: Իսկ հացի այն քանակը, որ ձրի էին տալիս, ոլէտք եղածից աւելի էր քան թէ կարելի էր ուտել: Բայց մնացորդը կարելի՞ էր հետը տանել... Կամ թէ երեխ այսաեղ այս սովորութիւնը չունին: Նա կամենում էր ուշադրութիւն գարձնել երբ մէկը ուզէր դուրս գնալ. որովհետեւ ամենուրեք ու միշտ տեղական սովորոցթիւններին պէտք է հետեւել:

Մի ջահել մարդ ելաւ իր տեղից: Բայց տես, հացը հետը չէ

տանում. այն գեղեցիկ հացը, որ ճաշի կէսն է կազմում։ Երեխ հարսուական է, մտածեց Հազբարտը։ Տեսնենք, ի՞նչ կ'անեն հետեւեալները։

Բայց հետեւալ դուրս գնացողն էլ սեղանի վրա թողեց հացը։ Նատ կարելի է, որ արգելւած լինի հետը տանելը։ Այս գէպքում նա գերազանց ուտել բոլորը։ որովհետեւ յանցանք կը լինէր թողնել հացը այս հարուստ էժանագին ճաշարանին։

Նա գդալը վար դրեց, կշանալուց յետոց խորասուզւեց իր աթոռի մէջ և, բթամասները վարակիքի դրապանների մէջ դրած՝ իր պարզորակ, կլորիկ ու հարցասէր աչքերը դահլիճի զանազան կողմերն էր դարձնում։

Նրա գէմ առ դէմ, մի այլ սեղանի առջև, նասել էր մի կինմարդ, զլուխը փօշիով (fichu) փաթըթած, և կողքին մի փոքր աղջիկ, որի մերկ սրունքները սեղանի տակից երեւում էին։ Երեխան գդալը բերանը տանելիս կէսը իր կզակի վրա էր թափում ու ամեն անզամ իր բաց գորշագոյն բամկոնակի թևով էր սրբում։ Յանկարծ ձեռքից գդալը վայր դցեց. կինմարդը կուացաւ վերցնելու։ Սակայն երեխան գդալը խարխափով որոնելու միջոցում թասը պրանեց (շուռ ուեց), որի սպարունակութիւնը հոսեց սեղանի վրայից մի լաւ հագնւած մարդու ծնկների վրա։

Մարդը տեղից վեր թռւաւ սրտմուած ձիչ արձակելով։ Կինմարդը ձեռքը բարձրացրեց աղերսելով, կարծես թէ նրան արգելելու նպատակով, որպէս զի չզարկէ երեխացին։ ճնա կոյր է, խեղճ թշւառը։

Մի աղախին եկաւ մաքրելու, և այն մարդը իր ռեդինգոտի փեշերը թաշկինակով սրբելով՝ շարունակեց ուտել առանց մի խօսք արտասանելու։

—Եթէ նա Սիլլան լինէր, տնյապաղ կ'աքսորէր երեխացին, ասաց ինքն իրան Հազբարտը։ Այս միտքը նրան այն ասովիճանի ծաղրաշարժ թւաց, որ ծիծաղել սկսեց։

Արդէն վազուց ի վեր կեսարը իր մեծահոգութեան և արտաքոյ կարգի հոգու ուժգնութեան աղացոյցներ տւեց,—կրկնեց ինքն իրան Հազբարտը իր շարադրութիւնից և փոքր առ փոքր վերստին թարգմանեց այն ամբողջովին։

Այս, անկասկած, շարադրութիւնը աջողւած է. հաւանական է, որ նրանում մի սխալ անգամ չի գտնւի: Հազբարտ Ենսը՝ ոչ մի սխալ: Նա գերազանց լժւանշան կըստանայ: Աքանչելի աջողութիւն:

Յանկարծ նա ամբողջ մարմնով ցնցւեց: Նրա արմուկները վեր-վեր ցատկացին, մսալի բերանը կծկւեց և սփրթնեց: Տեսիլի շման երեւեց նրա աչքերին - «in Asia prefectus est», փոխանակ աչքերին «in Asiam»:

Քանի մի վայրկեան նա մնաց քարացած, յետոյ ելաւ տեղից, թերցրեց գդակն ու դուրս գնաց:

Առանց այլ ևս բան տեսնելով նա անցաւ փողոցները: Նրա թեւերը չէին շարժւում այլ ևս ու նրա ծանր, մեխերով գամած կօշիկները չէին արձագանգում փողոցի սալերի վրա: Կզակը կահած ու թշերը կարծես թէ թուլացել և լզարել էին:

Մանելով իր սենեակը, որ նրանքերումն էր դանւում, նստեց մահճակալի մօտ մի աթոռի վրա ու ձեռները ծնկների վրա խաչ մերեց:

Երբէք, անկարելի է, որ նա «Asia» գրած լինի, որ նա այս սխալը գործէր: Նա որ շատ լաւ գիտէր թէ հարկաւոր էր «Asiam» և ոչ թէ «Asia» գրել: Կամ արդարութիւն միթէ այս աշխարհում:

Նա դոփեց ոսներով ու բռունցքները սեղմած կրծտեց ատաները:

Բայց կարելի է, որ նա սխալում է հիմա:

Ա'ս, ոչ, նա շատ պարզ կերպով է կարլում այդ: Հէնց ձախ կողմը, էջի ցածրում, վերջին տողի վրա խոշոր ու կլոր տառերով «in Asia» գրւած:

Վերջնականապէս նա ամենուրեք «Asia» խօսքը տեսաւ գրւած: Այս խօսքը՝ ցատկառում էր նրա աչքի առաջ. հսկայական տառերով կախւում էր պատերից, սեղանի և աթոռի վրայից, առաստաղից:

Ա'ս, եթէ միայն կարելի լինէր, որ «ո»-ը աւելնար վրան, ուրիշ ոչինչ բացի մի հասարակ «ո»-ից: Նա փորձեց մոտաւոր սպէս աւելցնել, տեսնել իր առաջ «Asia» խօսքը «ո»-ով վերջաւորւած, բայց չյաջողեց: Իր շարադրութեան մէջ նա իսկապէս «Asia» էր գրել էջի ցածրում, հէնց ձախ կողմը, վերջին տողում և «Asia» էր գրւած պատերի, սեղանի, աթոռի և օճոռքի վրա:

Որչանի տանջալի է այսպէս անկար մնալը, որովհետեւ ոչինչ չէր կարող փոխել: Նարադրութիւնը պրովեսորի ձեռին էր և սրա համար մի 4 է ստանալու, որը, ուրիշ ոչինչ չինի, մէկով պակտում է ստանալիք թւանշանը: Իսկ եթէ սրան աւելացնեն քանի մի այլ փոքր սիսալներ, որոնցով շարադրութիւննը վիտում է անկառկած, միթէ կարող է նա 5 ստանալ, որը նա սպարտաւոր ու պէտք է ստանար: Նրա աչքերից արտասուքներ ցայտեցին, որ նա սրբեց քթոսկրը ցուցամատի վերին մասով շփելով:

«In Asia profectus est»:

Ա'ի, ինչպէս էր մաշում այս, խայթում նրան: Նա հօ սրանով կը մե՛ռնի: Ուրեմն ոչ մի այլ փրկութիւն հնարաւոր չէ:

Նա տեղից վեր կացաւ և հանդարտ ու մեծ մեծ քայլերով շափչիեց իր երկար սենեակը: Ինչպէս է պատահում մարդուս այսպիսի մի բան: Թոյլ կը տայ այս արդարագատ Աստւածը: Այս առաւոտ սակայն, այնպէս չերմաջերմ ազօթք էր արել: Ո՞ւր էր թէ այս մասին անփոյթ գտնւէր: Ամենահին, իսկի էլ չէ: Նա մինչև անգամ չէր ցիշում, որ այս վերջին օրերում մի ծանր յանցանք լինէր գործած: Հետևապէս, միթէ Աստւած քմահան, փոփոխամիտ է: Այն. որովհետեւ այս խակապէս բերմունքի մի խաղ էր թւում, կարծես թէ Աստւած մոռացել էր այլ ևս նրա մասին փոյթ տանել: Աստւած ինչի թոյլ կը տար նրան այս սխալը գործել գիտենալով հանդերձ, որ Հագբարտը լաւ գիտէր քերականութիւնը: Ինչու նկատել չուեց նրան հէնց սխալ գրելու միջոցին, քան թէ սպասել, որ բանը բանից անցնէր արդէն:

Բայց անկարելի է, որ Աստւած գոհ լինի դրանով: Նաև այնպէս վշտացած կը լինի, ինչպէս Հագբարտն ինքը. այս ացնովէս ճշմարիտ է ինչպէս որ նա արդարութեան Աստւած է: Եւ այս հանդամանքում նա կարող է հնարք գտնել, հասկացնել պրովեսորին թէ ինչպէս է բանը սպատահել: Աստւած ամենակարող է... ամ են ականքող: Եթէ նա կամենաց, պարտաւոր է նրան փրկելու միջոց գտնել: Մնում է ուրեմն նրան կամեցնել միայն:

Բայց ինչպէս:

Հազար աղօթքը:

Նա կ'աղօթի մինչև ուժասպառ լինելը, կ'աղօթի այնպէս, որ

փողոցի քարերը յուգւեն և, Աստծու սիրտը մի անգամ մեղմած, կը հաւատայ բոլորովին, որ իր ազօթքը ընդունւել է ու չի մտածի այլ ևս գէպքի մասին, չի տեսնի այլ ևս ոչ Asia և ոչ էլ Asiam իր աչքի առաջ:

Որովհետև կառարեալ հաւատն անհրաժեշտ է, առանց սրան Աստւած չի լսում: Եւ հաւատի ամենափոքրիկ մասն անգամ, նոյն իսկ մանանեխի սերմի մեծութիւնով, բաւական է լիսները տեղից շարժելու համար: Վանմ, վեհ ճշմարտութիւն:

Նա զուրը գոցեց բալնիքով ու չոքեց իր մահմակալի մօտ: Արմուկներով յենաեց անկողնուու վրա և միախառնւած ձեռները կոտրապում էր.

—Հայր մեր, որ երկնքումն ես, Դու որ բոլորի հայրն ես, արդարների ու մեղաւորների, հաւատացողների և անհաւատների. Դու որ տիրում և կառավարում ես ամեն բան, բարձրացրու դլուխդ այնտեղ բարձր, երկնքումը և թափանցիր աչքիդ լոյսը այս երկրացին բնակարանի առաստաղի միջով, այս սենեակում, որտեղ ես, Հագբարտ Յլիւարիուս Ենալն ուսանողս, Սեօնդմեօրի Բոլղէն գեղի ժամհարի գաւակը, քեզ աղերսում է...

«In Asia profectus est»:

Նա ողբաց աղեկտուր և ձեռքով տրորեց աչքերը այն երեւովթքը հալածելու համար, որը անդադար նկարւում էր նրա աչքի առաջ և հոգին առչորում էր:

—Հայր, օօ Հայր իմ, սկսեց նա աւելի բարձրաձայն, վերցրու Ձեռքդ, որը պրկում է ինձ չարաշար: Ես արժանի չեմ երբէք այսպիսի մի նւաստացնող և ապաշնորհ դժբաղզութեան: Դու զիտես թէ ի՞նչ կը նշանակէ այս ինձ համար և Դու զիտես նոյնպէս, թէ որչափ անհրաժեշտ է ինձ լաւ քննութիւն տալ: Եւ Դու տեսնում ես, Տէր, թէ ես արժանի էի «Asiam» և ոչ «Asia» գրելուն և այս անել տւողը Սատանան է, Քո և իմ թշնամին, որը իմ գրչին այս սխալը գործել է տել: Այս պատճառով գէպի Քեզ եմ վերառաքում իմ ամենախսոնարհ ու հաստատուն ազօթքներս, գէպի Քեզ, ով Բանդ Ամենակարող, որ ուղղես իմ սխալը: Դու այս կարող ես, եթէ կամենաս ու այս շատ հեշտ է Քեզ համար: Դու, որ այլ անգամները գործել ես այնքան մեծամեծ և փառաւոր հրաշք՝

Ներ, Դու հեշտութեամբ կարող ես գործել այս փոքրիկ հրաշքը, եթէ մէկը Քեզ խնդրէ այսպէս ջերմագին։ Ես այս հաւատում եմ, որ Դու կարող ես անել, այլ և որ Դու կը կատարես այս ես հաստատիս եմ հաւատում։ Այս մասին ես համոզւած եմ։ Ամէն։

Նա ոտքի ելաւ ու մօտեցաւ լուսամուտին, որտեղից նա տեսնում էր Ուրանիա լեռան անտառը։ Պարտաւմր էր նա արգեօք վերստին նստել և գերմաներէն դասը պատրաստել, — բերանացի քննութեան առաջին փորձը。— կամ թէ առաւել լաւ չէր լինի դուրս գնալ այս գեղեցիկ եղանակին ու ընթրիքից առաջ վերադառնալ և, Ասոծուն մի անգամ ես ազօթելուց յետոց այն մասին, որը նրան արգէն յայտնի է, կանուխ պառկել քնելու։ Այո՛, նա դուրս կը գնայ։ Սակայն վարանեց նա ու երկար ժամանակ նայում էր գէպի հեռուն իր կորիի ու պարզորակ մանկական աչերով, որոնք տակաւին թաց էին ազօթելուց և թափած արտասուքից։

«In Asia profectus est»:

Ո՞չ. մի՞թէ կարելի է։ Զէ որ նա խոստացաւ Ասոծուն այս մասին այլ ևս չմտածել։ Եւ, հակառակ իր ցանկութեան, իր շարադրութիւնը դարձեալ երևեց աչքի առաջ, և նա կարդաց այն տողը, ձախ կողմում, էջի ցածրում, վերջին տողի վրա, — «in Asia profectus est»։

Նա յափշուակեց իր գլակը ու նետուեց դուրս։

«In Asia profectus est»:

Այս խօսքերը երևում էին նրան ոչ թէ միայն ծառերի բուների վրա, այլ ամենուրեք՝ օկում, գեծանների, տան պատերի վրա։ Աշխատեց ազատել իր միտքը այս կաշկանդից, բայց իզուր։

«In Asia profectus est»:

Նիոթւած՝ նա կանդ առաւ։

Նա հաւատացել էր, որ յանձնելով Ասոծուն՝ կ'ազատւէր այս ծանրութիւնից, սակայն հետն էր տանում ամեն տեղ։ Արդեօք այս աղացոյց չէր այն բանի, որ Ասուած մերժում էր նրա ազօթքը ընդունել, քանի որ այս բեռից աղատւելու համար ոչժը պակաս էր։

Անշնչաց, այսպէս պէտք է լինէր։

Հետեւապէս, անհրաժեշտ էր վերսկսել ազօթք անելը և մի այլ տեսակ։

Նա կիսամանփին շրջւեց և վերադարձաւ Բրիսքերի:

Ով որ ուզում է շնորհումն ընդունել Նրանից, Որը գիտէ մարդկացին սրտի խորքերը, սպառաւոր է լինել առաւել խոնարհ, և առաւել զզջացող, իր ապարժանութեան մասին աւելի համոզւած:

Նա հպարտացել էր իր իրաւունքով և գոռողաբար պահանջել էր այն, ինչ որ պէտք է աղերսէր, մուրար թողի մէջ սողալով։ Ասուած լսել էր տհաճութեամբ նրա աղօթքը։ Նա պարտաւոր էր, ինչպէս մի որդունք, զո՞ւ բերել, փոշու մէջ սողալով, իր քայլքայւած, արիւնաթաթախ հոգին իրբեւ այրւող ողջակէղ Տիրոջ սեղանին։ Այս է պահանջում Ասուած։

Ներս մանելով իր սենեակը՝ նու նորից փակեց դուռը։ Եերանքս ի վար տարածւած, նա բացեց իր զեղուն սիրաը սոչորուն և մալեռանդ խօսքերով։ Նա արտասանում էր այն խօսքերը լոիկ հառաջներով, երկար ժամանակ մնալով զետնատարած, կզակը կցւած ձեռների վրա զրած, զլուխը դէպի յետ ընկած այնպէս, որ նրա կզակը ցաւում էր։ Յանկարծ նա հեկեկաց ցնցող արտասուլքներ թափելով և նրա դէմքը ընկաւ գետնին փոււած ձեռների վրա։

Երբ, վերջապէս, նա տեղից վերկացաւ, զգաց իրան մսիթարւած, ամոքւած և, նորից գուրս գալով, համարեա թէ, կարողացաւ հալածել իրան մտառանջող «Asia»-ն։

Լիքը յոյսով ու արիասիրտ նա քնեց այն գիշեր, բայց միւս առաւոտ զարթնելով՝ «in Asia profectus est-ը ճիւազի նման ձնշեց նրան և շորերը հագնելիս իր աչքի առաջ միայն իր սիսալը տեսաւ։

Նա սկսեց երեակայել անհեթեթ պատահարքներ, որոնք կարող էին նրան փրկել։

— Եթէ, օրինակի համար, արեի խաւարումն վրա հասնէր յանկարծ, կամ թէ «համալսարանը այրւում է» կանչոցը գզրդաց և կամ ուշաթափւելով աթուից վայր ընկնէր «Asia» զրելու վայրկեանին։

Նրա թշերը այրւում էին, քունքերը ուժգնասպէս զարկումն բաց լինչ օգուտ մտածել այժմ այս ամենի վրա։ Այս նշանակում է միմիայն կենսականութիւնը ուժերը մաշել զուր տեղը Ա. աղօթել։ սրանումն է կայանում միակ փրկութիւնը։ Կարելի է Ասուած

մոնացել էր նրան։ Բիւրաւոր, միլիոնաւոր գործերով է զբաղւած նա։ Հարկաւոր էր նրան զիշեցնել։

Նա վերստին սկսեց ազօթք անել. վերջը, փոքր ինչ սփոփւած, պարապեց։ Սակայն այն օրւաց ընթացքում հետաքրքիր եղաւ իմանալու թէ Աստւած Բնէպէս կը վարւէր նրա սխալը ուղղելու համար։ Աշխատութիւնը պրոֆեսորի մօտն էր ու, բնականաբար, մի զզրոցի մէջ լաւ պահւած, կամ թէ, ամենահասարակ կերպով, մի մեծ գրքի մէջ՝ իր գրասեղանի վրա դրած։ Հետեւապէս, եթէ Աստւած կամենար հրաշք գործել, միմիայն զիշերով կարող էր անել... Բայց, այն ժամանակ, չէ որ բոլոր գոները գոց կը լինեն։

Վահ, ի՞նչ վեաս ունի որ։ Աստւած շատ և շատ խելացի է գոցւած դռներից ներս մոնելու համար։ Բայց այս ի՞նքը կ'անի, թէ կ'ուղարկէ Պետրոս առաքեալին կամ հրեշտակապետներից մէկին։ Բացի այս, բաւական է, որ կամենաց պրոֆեսորին քնաշը ջիկ գառձնել և նրա ձեռքով սխալը ուղղել տաց։ Կամ թէ, որ առաւել լաւ է, այն էլ բաւ կը լինի եթէ ինքը կամենաց, երկնքումն և եթ, ու «ո»-ը ինքն իրեն կաւելնաց։ Եղիցի լոյս ասել է Արարիչն և լոյս եղաւ։

—Կարծեմ, խելքիդ շատ ես զոռ տալիս Աստծուն խորհուրդներ տալու, ասեց ինքն իրան Հագբարտը և, յանկարծակի, քահքահ ծիծաղեց նա բարձրածայն։

Սակայն նա շարունակ կասկածում էր։ Իւրաքանչիւր առաւօտ նա արթնանում էր յուսահատ, վերստին ձեռք բերելու նպատակով գիշերւաց միջոցին, չարիք ու բարիքով լեցուն ցերեկից յետոց, փոքր ինչ հաւատ, յոյս և հաստատամութիւն։

Օրերն անցնում էին։

Վերջապէս, թւանշանների կարդալուց առաջ՝ նախընթաց գիշերը նա իր շարադրութիւնը երազում տաճարի բեմի վրա տեսաւ։ Թուղթը այն աստրճանին երկայն էր, որ մինչև տաճարի վարագոյրին էր հասնում ու հէնց ձախակողմը, էջի ցածրում, վերջին տողի վրա կարդացւում էր,—*in Asia profectus est*։ Սակայն, այդ միենոցն վացրիեանին, նա զգաց թէ ձեռին՝ թանաքում թաթիսած մի գրիչ ունէր բռնած։

Նա ուղեց մօտենալ և «ո» տառը աւելցնել, երբ օդի մէջ

սոսափիւն լուեց: Եկեղեցու գմբեթը թռաւ ու մի սպիտակ, մեծ ձեռք իջաւ բեմի վրա: Բեմին հասնելուն պէս ցուցամատը մեկնեց ու եղունգով մի «ո» զծեց: Յետոյ մեծ ու ճերմակ ձեռքը վերստին դէսլի վեր բարձրացաւ հանդարտութեամբ, շատ բարձր, օդի մէջ և անհետացաւ:

Նա զարթնեց: Նրա հոգու մէջ չէր մնացել կասկածի ամենափոքր մասն անգամ, որ Աստուած, իր սեփական ձեռքով, սիսալլ ուղղել էր:

Հետևեալ օրը, երբ պրովեսորը թւանշանները կարդաց, նա լսեց այս անվրդով և համոզւած կերպով. Նրա պարզորակ աչքերը ցոլում էին: Սակայն երբ նա լսեց, որ լատիններէնից ստացած թւանշանը ամենից գերազանց է ու հետևապէս շարադրութիւնը անսխալ, ամբողջ մարմնով ցնցւեց, ինչպէս ելեքտրական շանթոցից, և ձեռքով դէմքը շփեց:

Երեկոյեան, ներկայ չգտնւեց Հագբարտը ուսանողական խնջորքին: Չափագանց յուզւած լինելով ինպաստ իրին կատարւած հրաշքից, նա ուզեց միայնակ մնալ նուանով սքանչանալու համար և գոհանալ Աստծուց: Եւ իր միայնութեան միջոցում խոստացաւ ամբողջովին նրան նւիրւել:

Նա քահանայ ձեռնադրւեց: Եւ երբէք, իր ամբողջ երկարատև ու բարեպաշտ կեանքի ընթացքում, չէ կասկածել ամենեին, որ հէնց սկզբից և եթ ու սեփական ձեռքով, շատ կարելի է, գրած կը լինէր «In Asiam profectus est ¹⁾»:

¹⁾ Աւոմինքն՝ Նա գնաց Աստիա:

ՄԵԾ ՓԱԿԱՆՔ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

Դիլիջանից մինչև Ալեքսանդրապոլ տրոյկայով գնացի. լնկեր վերցրի Պարսկաստանից եկող մի պարսիկ. և որովհետև լաւ էի վարում հետը և քաղաքավարութեամբ, նա իրան երախտապարտ էր զզում, իր հովանոցով ինձ արեիցը պաշտպանում և կամ իր խօսակցութիւններով ինձ զբաղեցնում: Խնչպէս երեսում է, պատմիչ էր. լիքը բերնով էր արտասանում՝ նախադասութիւններ կամ բառեր և պատմածի մտքի համեմատ էլ շեշտուած միմիկաններ ուներ:

Զգիտեմ ինչպէս եղաւ որ նա ինձ պատմեց այդ զրոյցը. կարծեմ այդ այն ժամանակն էր, երբ ես ցանկութիւն յայտնեցի իջնել, ճանապարհից զուրս գտնուող մի հանքային ջրի մօտ գնալ և երբ գնացինք, գտայ որ ի զուրս ժամանակ էինք կորցրել, որովհետև ջուրը ոչինչ բան էր:

Այդ բանից յետոյ մենք կառք նստեցինք և պարսիկը մօրուքը շփելուց յետոյ, վարդապետական ձայնով ու շեշտելով արտասանեց.

«Յանկալի առարկան նմանում է շիրմի,—բաց՝ բայց դռան վրայ մեծ փականք»...

Յետոյ քիչ լոեց և աւելացրեց երազողի պէս.

—Ով Մանի, քո մոքերդ էլ քո քսան կանգունաշափ ձեռքովդ դժած զծերի պէս ուղիղ են...

Ու լոեց: Ես ի հարկէ ոչինչ չհասկացայ: Մանի առասպելական նկարչի մասին զիտէի. զիտէի նաև որ նա կարողանում էր ձեռքով քսան կանգուն երկորութիւն և մի թափով դիծ քաշել այնքան ուղիղ, որքան կը լինի քանոնով գծւածը:

Բայց աֆորիզմը:

Խնդրեցի բացատրել: Ամենայն սիրով լնդունեց խնդիրս պարափկը և պատմեց ինձ սոյն զբոցը:

«Նկարիչ Մանին—պատմեց նա—մոռնելուց առաջ մոքումը գրեց մի լաւ բան նկարել ու յետոյ մեռնել:

«Այդ մոքով էլ նա սկսեց ման գալ և նկարի նիւթ որսնել: Ուզածն էր մի նոր, ցանկալի, տարօրինակ նիւթ:

«Մտաւ խոր ձորեր, պրապտեց իւրաքանչիւր խուլ անկիւն, մագլցեց լեռներն ի վեր, աչքի տակ տւաւ շատ տեսարաններ: Բայց որովհետեւ շատ տեսել էր, շատ էլ զննել և ոչինչ չէր խուսափել նրա աչքերից, ուստի և չէր կարողանում գտնել մի առարկայ որ լինէր տարօրինակ և որ գրգուէր նրա ցանկութիւնը:

«Եւ նա տիսրում էր: Անտառի ողին, լեռների հիւրիները ու ծովի ձուկ-կանաչք նոյն խակ անկարող եղան նկարչին մի նիւթ տալ, մի նիւթ թելաղրել: Ի զուր նա ոտքի տակ էր տալիս ամբողջ բնութիւնը. ոչինչ նոր բան, ոչինչ ցանկալի, ոչինչ յարատեւ տըռփալի:

«Եւ նա ախրում էր ու յուսահատւում:

Այսպէս ախրութեամբ նա թափառում էր ամեն կողմ, Շիրազի գաշտերի ու յեռների մէջ, երբ մի օր էլ գերեզմանատուն մոտաւ և այնտեղ մի շիրիմ տեսաւ: Կանգ առաւ:

Մի մեծ շէնք էր, բարձր պատերով: Բայց ինչ որ մի բան գարմացրեց նկարչին. դա այն ահազին խոշորութեամբ կողակէքն էր, որ գրւած կար շիրմի փակւած գուան վրայ:

Խակ գուան ճակատին էլ, արաբական տառերով գրւած էր— «Մոհիր այստեղ եթէ կարող ես և կը գտնես ինչ որ փնտում ետք Մեծ նկարիչը զայրացած գոչեց.

—Ո՞ր տիմարն է արգեօք զբել այս տողերը. մի՞թէ գերեզմանի մէջն է որ մարդ կարող է միայն գտնել իր փնտուածը:

Յետոյ ծիծաղեց և աւելացրեց.

—Դա անշուշտ մի մեռնողի խօսք է. չկարողանալով ապրել, կամեցել է մահը ցանկալի դարձնել, իրան միմիթարել. անձար է եղել ու բանջար կերել:

Ասաց ու մէջքը դարձրեց հեռանալու: Բայց յակամայից միոքը միշտ այդ տողերին էր, այդ վերտառութեան:

Մի քանի բողէ մտածեց, յետոյ մի քանի քայլ մօտեցաւ դէպի մեծ կողակեքը, նայեց նրան ու ասաց.

—Զարմանալի է. նախ՝ ինչու փակել մի շիրմի դուռ և յետոյ ինչ մտքով դնել այդ դրան վրայ մի այնպիսի մեծութեամբ կողպէք, որ միայն զնում են բանտերի կամ գանձարանների վրայ:

Եւ նա նորից վեր նայեց ու կարգաց.

—«Մտիր եթէ կարող ես և կը գտնես ինչ որ ուզում ես»:

—Մտնենք — մտածեց նա — գուցէ մի նոր բան կաց իսկապէս թաղնւած այդ մեծ կողակեքի եաւում: թշւառութիւն կամ գերութիւն արգեօք թէ գանձ կամ իշխանութիւն...

Նարժեց կողակեքը. շատ ծանր էր. վերցրեց մի մեծ քար և նրանով սկսեց ծեծել փականքը:

Հետաքրքրութիւնը այնքան սկսեց գրաւել արտիստին, որ նա յանկութիւնից դողում էր:

Երկար չարչարւեց և երեկոյեան դէմ վերջապէս շարժւեց փականքը, յանկարծ փշրւեց մեծ կողակեքն ու շիրմի դուռը կրնգան վրայ դառնալով՝ լայնութեամբ բացւեց:

Յած ձգեց քարը, մի քայլ արաւ. ներս մտաւ և զարմանքի մի մեծ աղաղակ արձակեց.

Դէմ ու դէմի պատը բաց էր լիովին և այդ բացւածքից երեւում էին Շիրազի տներն ու այդիները:

Շիրիմը միայն երեք պատ ունէր, ետեի պատը լիովին չէր էլ շինւած: Իսկ շիրմի ներքին տեսքը ապացուցանում էր, որ այդտեղ ոտ կոխողը առաջինը նկարիչը չէր:

—Ինչպէս... ինչու ուրեմն այդ այլանդակ գործողութիւնը:

Շինել մի շէնք միայն երեք պատով, ետեի պատի տեղը բաց թողնել և ապա դւան վրայ էլ մի մեծ փականք կանգնեցել. ինչու

— Լաւ ծաղրւեցի, ճակատը կնճռեց արտիստը — և սակայն դռան ճակատի գրւածքը չկատարւեց իսկ, որովհետեւ փնտուածս էլ չեմ գտնում գոնէ:

Իայց հազիւ թէ դարձել էր, որ աչքը ընկաւ պատի վրայ քանդակւած սոյն երեք տողերին և նա կարգաց.

«Ամեն ինչ նոր է աշխարհիս վրայ, սակայն ոչինչ նոր չէ,

Զեռք բերելու դժւարութիւնը առարկան ցանկալի է դարձնում,

Մի անգամ ձեռք բերւած՝ նա դառնում է սովորական»...

Մանին ընկղմնեց մտածութեան մէջ. այդ տողերը խիստ աղդեցին նրա վրայ:

Գտել էր փնտուածը, բայց և չէր գտել. որովհետեւ եթէ գըտ. նէր՝ փնտուածը այդ չէր լինիլ: Ուրեմն փնտուում էր մի այնպիսի բան, որ չպիտի գոնուէր:

Հասկանում էր այժմ:

Դուրս եկաւ շիրմից, գնաց տուն, ձեռքն առաւ վրձինը և նստաւ կտաւի առաջ:

Նկարեց շիրիմը երեք պատով, ետեի բացւածքով, նկարեց դուռը և զրեց նրա վրայ խոշոր երկաթեայ փականքը:

Ցետոյ փոխանակ գրելու շիրմի վրայի խօսքերը, գրեց սոյն տողերը.

«Յանկալի առարկան նմանում է այս շիրմին — բայց՝ բայց դռան վրայ մեծ փականք»...

ԱԴԱՍԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՅԱՌԻՋԱԲԱՆՈՎ, Ա. Մ. ՎՐՈՅՐԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Թիւ 21

29 լուլիսի 1888, Քիշինէվ

Միրելիդ իմ Ա.

Ահա ակար 8 երրորդ օրն է որ ճանապարհորդում եմ Քաղանից մինչ Ռումինիու մալրաքաղաքն գնալ, շատ հեշտ չէ, ուր հրաւիրւած եմ նոցին վսեմութեանց թաղաւորի և թագուհոյ առաջ մի քանի մինախօսութիւնք արտասանել, կամ ներկացնել՝ եթէ մի խումբ գտնւի. . . .
Գրիր ինձ առ աջմ հետեւալ հասցէին.

Руминію. Iassy—Яссы.

Hotell le Russie, artiste Adamian

Համբուր և ողջո՞ն սիրելեաց. գրկելով քեզ մնամ սիրող եղբակը:

Թիւ 22

23 սեպտ. 1888 Կ. Պոլիս

Իմ սիրելի, եղբակը իմ Ա.

Երկու նամակներն էլ առի, թէ Մոսկավից գրածդ և թէ Տիֆլիսից՝ վերջինը, և անշուշտ կը գուշակես որ ինչպէս միշտ, այս անգամ էլ ուրախացավ Սակայն Մոսկավ երթալդ ինձ շատ ու շատ զարմացուց. անշուշտ գործի համար էր:

Նամակներդ երբոր կ'առնեմ, շատ կը տիսրիմ, երբ կը տեսնիմ որ կէսից աւելին դատարկ թուղթ է. բայց այդ տիսրութեան մէջ կաէ և ուրախութիւն... սակայն կուզեմ որ երկար ու շատ երկար գրես:

1) Տես «Մուրճ» 1891 թ. № 7—8 և 9:

Ակստեղ միծ և անսպասելի ընդունելութիւն գտավ, արգէն Օթէլոն Յ անգամ ներկալացուցի. լոդւածներ ամենն լրագրաց մէջ ամենն օր կան. շակախ ոչ մի հատ չունիմ հետո որ ուղարկեմ. տեսնենք ինչպէս կը լինի Եւրոպա երթալուս նպատակը:

Սիրելի Բաշինջաղեանս ինչպէս է, ափառս որ ալնքան խառնակ դրութեան մէջ եկաւ և չկարողացաք իրան հետ ունենալ ի Պոլիս. Արդէն Պոլսոյ բոլոր հանութիւնը պիտէ թէ Աղամեան մի Սանդրօ և մի Բաշինջաղեան ունի ի Տիփսիս:

Ուղարկիր ինձ, եթէ տեղուող լրագրաց մէջ կը լինի մի բան ինձ հետաքրքրելի

Գրութիւնից կարող ես գուշակել որ շտապում եմ,

Քող անձնէր. խնդրելով որ մատուցանես ողջոններս իմ բարեկամաց. մամնաւորապէս մօրկանդ և սիրելի քրօջդ:

Քեզ ի սրտէ սիրող և լարզող.

Թիւ 23

7 հոկտ. 1888, Կ. Պոլիս

Սիրելի եղբայր իմ Յ.

Վերջերս նամակ մի գրեցի քեզ, լուսամ մինչ արդ ստացած կը լինիս: Այժմ առանց սպասելու դորա պատասխանին, գրում եմ ներկայս ըստ խնդրանաց իմ եղբայր, բարեկամ և փեսաք պրն. Պետրոս Վասիլեանի, որն որ ինձանից շատ լսած լինելով քո մասին, վափաղեցաւ ալս նամակաւու ծանօթանալ հետդ և մի քանի խնդիրք անել քեզ, ալնպիսի խընդիրք՝ որ միան քեզ նման մի անձի կարելի է առաջարկել Սա էլ պէտք է ասեմ որ իմ եղբայրը Պոլսոյ մէջ իմ Սանդրօն է... Մնացեալը կը գուշակես և կ'իմանաս իր նամակ կարդալով:

Իր խնդրածներէն մին էլ սա է որ ալս ներփակեալ թուղթս ներկայացնելով կենարոնական գրատան, առնես 50 օրինակ իմ Համելէտի քննադատութիւնից և ուղարկես իրան: Քու բնիկ ազնւութենէդ քաջալերհալ համարձակեցաւ տալ քեզ ալս նեղութիւնը, և միանդաման ուզեցի ծանօթայնել քեզ ալնպիսի մի անձի՝ որ քեզ նման մարդասէր, աղդամէր է, և որոք ընկերութեանց և ազգին մատուցած ծառալութիւնքը անհուն էն՝ իր համեստութեան քօղին տակ:

Դիտցիր նոչնպէս որ ալսակ Օթէլոն ներկալացրի Յ անգամ, միախ վերջինը թրջւեց անձրեխ և սառեցաւ ցրախից:

Կարդակ «Արևելք» ները սեպանմբեր ամսին: Շուտով գրիր ինձ, համբուրիր մեր սիրելի Բաշինջաղեանին իմ կողմից, ողջոն ազնիւ մօրկան և քրոջդ. քեզ ի սրտէ սիրող.

Թիւ 24

28 Հոկտ. 1888, Կ. Պոլիս

Սիրելի և անմոռանալի բարեկամ Ս.

Ուրախութեամբ ստացաէ սիրալիր նամակներդ, և ազնիւ հոգւող տիպարը կրող լուսանկար պատկերդ, որու համար առանձին չնորհակալ եմ Յուց աւի բոլորին, և վերջապէս բոլորն էլ իրանց հետաքրքրութիւնը քադեցրին՝ տեսնելով վերջապէս Աղամեանի Տիմիսում գտնւած բարեկամին պատկերը, որու վրաէ ալճքան շատ խօսած էի հետեւնին:

Սիրելի Բաշխնջաղեանին լատուկ բարեներս առուր, և ասա իրան որ նույնմբերի մէջ կը պատասխանեմ իր նամակին Առ աչժմ ակաքանս կ'ասեմ որ եթէ Ռումինիակից խառն զրութեան մէջ և վնասով ալս տեղ գալիս Օդէսակից անցնելով միասին գնալինք իրան հետ, ան ժամանակ կարող էր մի պատկերահանդէս ցուց տալով օգտւել: Թէպէտ ալսուել պատկերահանդէսներ շատ սակաւ են պատահում, զոնէ ես մի հատ չեմ վշիր՝ բացի այս օրերս բացւած Ալւազովսկու պատկերաց մի ցուցահանդէս, ուսւաց գևսպանատան պալատի սրահին մէջ:

Բայց եթէ Բաշխնջաղեան ինձ հետ և քիչ վաղ եկած լինէր, կարող էր միծ մասամբ վատահել հաչ հասարակութիւնից գտնելու ընդունելութեան, սական այս տարւան համար քիչ ուշ է կարծեմ, և եղանակը անցած է: Առ աչժմ ալուքան:

Գրիր ինձ, կաղաչեմ, երկարօրէն և չուտ. տուր ինձ որոշ լուրեր . . . յատեսութիւն Աստուծով, զրկելով քեղ մնամ քո եղբար և մտերիմդի որտէ:

Կորրատովի մէջ գտամ մեծ ընդունելութիւն. ինձ հարցանողաց բարի ի սրտէ:

Թիւ 25

16 Նոյեմբ. 1888, Կ. Պոլիս

Սիրելի և ազնիւդ իմ Ս.

Ահա վերջապէս գտամ ալզատ ժամանակի գրել քեղ

Աստոիկ ցաւեցակ լսելով մեր սիրը Բաշխնջաղեանի հիւանդութիւնը, անչապաղ ինձ գրիր թէ ինչպէս է:

Ինձ որ հարցնես, առողջ եմ, փառք Աստուծով, ի չնորհս տեղւուս կլիմաչի և ջրին: Պործերս կաղ են և քիչ նպատաւոր. ընդունելութիւն շատ մեծ, փքւած և զատարկ գովարանութիւններ՝ որ շռակում են ինձ տեղւուս էֆէնտիւները, որոց (բացի մի քանի բացառութիւնք) ինչ ասարի ճանի ինձ համակրելի լինելը 9 տարի Պոլիս վերադառնալ չփափաղելու կարող ես գուշակել:

Եթէ գիտենաս թէ որքան կարօտել եմ ձեղ ամենքդ. նոյնպէս իմ Պաղարը, որ աչժմ իր տունը Մոզդոքում հիւանդ պառկած է խեղճը. յթէ ժամանակ ունենաս զրիր իրան երկու տող, շատ կը միսիթարւի, քեզ շատ սիրելով. Հասցեն Ե' Մօզդոք, Լազար Իվանովիչ Մամուկօվը.

Յանչափս չնորհակալ է քեզանից մօրեղբօր որդիս վասիլեան. ալ
ես . . . կարող ես երեակակել ափսոս, ափսոս որ սա բոպէիս մօտս չես
որ մի լաւ համբուրէի քեզ և Գէորգին

Ժամանակս սուշ՝ է, ողջոն բոլոր բարեկամաց, չատկաբար սիրելի
Բաշխնջաղեանին: Փոչտ սիրող անձնէր:

Յ. Գ. Գարնան մտադիր եմ չել ի Լոնգոն եթէ չաջողւի...

Թիւ 26

15 դեկտ. 1888, Կ. Պոլիս

Ազնիւ բարեկամս, սիրելի Ս.

Ամսուս 4 թւականով գրած նամակդ առ.ի, ուրախացաց ինչպէս
միշտ, երբ նամակդ ստանամ. շատ ու շատ գոհ եմ որ մեր սիրելի Բաշխն-
ջաղեան ելեր է վերջապէս անկողնուց, և աւելի գոհ պիտի լինիմ, եթէ
այսուհետեւ գիշերները միայն նորա մէջ մտնէ՝ իր առողջութիւնը քնով
կազդուրելու համար՝ ալ ոչ հիւանդալով: Համբուրէ իրեն իմ կողմից
սիրով և կարօտով Սա կազ միայն որ սաստիկ կարօտացիլ
եմ քեզ և Բաշխնջաղեանը, և նոյնպէս այն անձինք՝ որ Ռուսաստանում
աւելի սիրեցին և գնահատեցին ինձ իրը արւեստէր:

«Արձագանք»-ի մէջ տպւածը, իմ հեղինակութեանց մասին, ան-
խորհուրդ մի թշնամանք համարելով շատ ցաւեցաւ:

Խրիմեան Զօր և Ներսէս պասրիաբքի պատկերները նորից տպել եմ
տալիս Ապսուլլահեանց գործարանում, որպէս զի գալ թվատարով ու-
ղարկեմ քեզ:

Ալս ներփակեալ ստանաւորը լանջնեցէք «Աղբիւրի» խմբադրատունը,
մեր ազնիւ բարեկամ պ. Տ. Նազարեանցին իմ սրտագին բարեմազթու-
թեանց և ողջոններլ հետ. եթէ չեմ սխալիր ինձ գրեր եիր թէ ինքը
փափագ էր չալանած որ «Աղբիւր» ամսատեսրի մէջ տպւելու համար մի
քերթւած ուղարկեմ. ահա ուրիմն այն քերթւածը, եթէ հաւանի թող
տակէ և մէկ օրինակ չանձնաբարեալ ուղարկիր ինձ, այն օրացուցին հետ
ուր պատկերս ասում ես պիտի տպեն

Շնորհակալ եմ պատկերիդ համար. կատարեալ իմ Սանդրոն է նըս-
տած, աչքիս առաջն եմ զրել և շատ կը նեղանամ որ չխօսիր: Ուստի դու
գոնէ շուտ և շատ գրէ, որ նրա չխօսելուն պակասը ծածկի:

Սա երկու պատկերացս մին էլ լանձնիր մեր Բաշխնջաղեանին, զորս
նոր ալստեղ հանել տւի. լուս ունիմ որ ձեզ երկուսիդ էլ հաճու կը լինի
մի մի հատ ունենալ, և ի նշան հաճութեան վերջապէս խիզճ կ'անէ
Բաշխնջաղեան և իր պատկերը կ'ուղարկիէ ինձ, որին ցարդ չունենալուս
կը դժւարանամ հաւատալ:

Մեր պատւակուն և սիրելի բարեկամ և քերթող պ. Պազարոս Աղա-
յեանցին հաղորդիր մասնաւոր իմ սրտագին համբուրն ու ողջոնը: Եթէ

մի հաստ ուղարկէ ինձ իր պատկերից, ևս էլ երկու հաստ կուղարկեմ փոխարէն

Առ ալժմ ալսքան, անհամբեր սպասում եմ նստմակիդ, զրկելով քեզ և համբուրելով, քող եղբար:

Թիւ 27

27 Էռևութ. 1889, Կ. Պոլիս

Սիրելի բարեկամուն.

Հագար անզամ ներումն կը խնդրեմ քեզանից, երեար ժամանակ նամակ չգրելուս համար, սական պէտք է աչքի առաջ ունենալ այն ամեն լոգնութիւններն և պարապմունք, որ ունեցաւ այս վերջի ամսու մէջ Յոթեանիս առթիւ, որու համար ձեր ուղարկած չնորհաւորական հեռագիրը լանչափս ուրախացուց ինձ, և կը խնդրեմ որ ալդ հեռազիրը ստորագրող բողոք ազնիւ անձանց մասուցանես իմ սրտագին չնորհակալութիւններս:

Մեր թանկագին և սիրելի Բաշինջաղեանի պատւական պատկերն առի, որու վերակ ճիշդ առ ճիշդ նկարւած է իր ազնւազոն հոգին, վրան նախելով ի սրտէ համուք կըզգամ և կըսփոխիմ. շատ ու շատ չնորհակալ եմ. Պ. Ղ. Աղակեանի պատկերն նորնալու ստացած լինելով, փոխարէն իմն էլ ուղարկեցի մի համակաւ քո հասցեով, անշուշտ ստացած և լանձ. նած կը լինիս:

Գալով Յոթեանիս հանդիսին, ալսքանս միան կարող եմ ասել, այն էլ քեզ, թէ Տփլսիսում տւած բինէֆիսս կամ Մոսկաւում աւելի նշանակութիւն ունէր. Յոթեանիս ոչ գաղտնի, ոչ էլ լազանի մի նւէր, մի ծ կոսէկանոց բան, իշշատակի համար գոնեա, չեմ ստացել: «Արևելք»-ի մէջ գրւածները սիսալ բաներ են, ընդհանուր հասութն իր 160 սոկու մօտ, որից մեռում է ինձ զուտ 90 սոկու չափ՝ 70 սոկի ծախքն հանելուց լեռտուք: Ազդ ծախքի մէջն է նորնալէս իմ կենսազրութիւնը պատկերիս հետ պարունակուզ գրքուկին տպագրութեան համար արւածը: Աը բաւակի որ գոնէ աչդ տպագրութեան ծախքը չառնէր մասնաժողովն ինձանից՝ քանի որ ինքը կամեցել և տպագրել էր՝ առանց ինձ նախապէս իմաց տալու, որ աչդ իմ հաշուքն է, և զորս աչժմ ծախտելու է տրւած իմ հաշուէն: Բայց արի տես որ տակաւին Յոթեանիս արդիւնքը 90 ուութին (ոսկին) էլ չեմ ստացած, մի ամբողջ ամիս անցաւ և գեռ մասնաժողովը հաշիւները չէ տեսնում: ապառիկները հաւաքած չլինելուն համար:

Ահա քեզ Յոթեանիս նկարագիրը ճիշդ կերպիւ Անշուշտ իմացարտ սիրելիս, որ Պոլիս գտնելուս ի վեր հաղիւ թէ ամիսը երեք ներկայացում կարողացիլ և տալ, և վեց ամսւակ ընթացքում սուխնք մօս 15 ներկայացումն: Սոցանից մի եօթը ներկայացում ունեցան հասութ, աչդ էլ զրահամար որ զանազան բարեգործական նպատակների համար էր. և իւրաքանչւր անդամին էլ, աչդ էլ Մաղաքեանի ձեռամբ, հաղիւ թէ կանխիկի

կը վճարէին իմ 25 ոսկի վարձատրութիւնը, խակ մեացեալ ներկաւացում՝ ներից կամ վեատեցանք, կամ հաղիւ թէ ծախքն հանեցինք:

Յօբելեանից լեառու և նպաստ մեր գերասանաց խմբին ծրիաբար ներկաւացը Ուրիէլ Ակոստան: Դորանից երկու շաբաթ լետու մի չդիտեմ ինչ մասնաժողով կամեցիլ է կրկին տալ այդ խաղը ի նպաստ Վանակ մի զպրոցի, սակարկելով պ. Մաղաքեանի հետ 60 ոսկի, որու 25-ը զարձեալ ինձ պիտի պատկանի. ինչպէս երեսում է, լետու խմացակ, որ գնելի սաստիկ ողութեան համար օթեակ և նստարան շատ չեն կարողացել ծախել: Սական պ. Մաղաքեան, ինչպէս միշտ, վճարեց իմ 25 ոսկին, և ես առանց մի որ և է մասնաժողովի անդամ տեսնելու կամ խոռնելու, ըստ իմ Մաղաքեանի հետ ունեցած պայմանիս, խղճի մոռք ներկաւացը իմ դերս

Միով բանիւ, երբ իմ հաշվին ներկաւացում տամ' թատրոնը կիսով չուի դաստարկ է, այլ երբ իմ Պոլիս զունելուց օգտւել ողելով գանազան ընկերութիւններ ի նպաստ մի դպրոցի կամ աղջափին հաստատութեան մի ներկաւացում տան, կամ հասովթ եղած ատեն դժւարաւ կը հաստուցանեն վարձքս կամ վեաս արինք սանելով տւածնիս իստ առնելու միջոցների կը դիմեն «աղջասէր չէ» «աղքատաց դարոցին փողը առաւ առնելով և ալին և ալին, զրպարտէին և բամբասէին ինձ... ինչ, կը կարծեն թէ ես օղով կապիւմ, ինչ է... Միով բանիւ այս բոլորից անպէս զղւել առանցել եմ, որ երեակալել չես կարող... ինողրեմ քեղանից որ անպատդառնացել եմ, որ երեակալ էլ չես կարող... համարները

Ե. Գ. Գիտես ու կը ճաննաչես ինձ բոլորից աւելի, ուստի չես կատածիր որ բոլոր գրածներս ճշմարիս են

Թիւ 28

31 լունվ. 1889, Կ. Պոլիս

Միրելիդ իմ Ա.

Սական երէկ միայն տվին Յօբելեանիս հաշիւը որ խաւառակ բան է, և որոց ճիշդ օրինակը պիտի ուղարկեմ քեզ որ ցուց տաս նոնպէս պ. Մելիք-Աղաբեանցին: Խակ Յօբելեանից ինձ զուտ արդիւնք մնաց մօտաւորապէս 500 սուբլու չափ ոսկի... ցտեսութիւն, բոլորին բարե, համբուր բաշինչաղեանին, վաղը ընդարձակօրէն կը գրեմ:

Քեզ ի սրտէ սիրող եղբարդ:

Թիւ 29

2 մետր. 1889, Կ. Պոլիս

Սիրելի և ազնիւ Ա.

Ինչպէս որ վերջին նամակիս մէջ գրեր էի թէ Յօրելեամսիս հաշխում մի խատառակ բան էր, ալժմ էլ նունը պիտի հաստատեմ. Ուզում էի քիո հաշխին օրինակը ուղարկել բաց ալդ կանեմ ան ժամանակ, եթէ Յօրելեամին մասնաժողովը իր արած տմարդութիւնը չուզզէ, ան ժամանս կ պիտի խնդրեմ քեզ հրատարակութեան տալ ամեն ինչ «Մշակի» մէջ:

Այսքանս միան քեզ լաւտարարեմ որ, հաշխին մէջ ուր ամեն ծախոք գրւած են, ծախքերի մէջ են անցկացրել ինձ չնորհւած պսակին և փրնչերի հաշխւը 170 զուրուց, մօտաւորապէս 20 ուրբլի, և ինչպէս որ ուրիշ անդամ գրել էի իմ հաշւովս տպել են նունակս իմ կենսագրութիւնը հազար օրինակ, որու ծախք է եղել 1440 զուրուց. Եթէ գոնեա Տվիսիսում ծախւի ալդ գրքերից, ուղիղն ասած գո՞ս պիտի լինիմ... Է՛՛ եղբար, ասա տեսնեմ, երբէք լած ունիս թէ աշխարհիս որ և է մի կողմ, եթէ իսկ ամենալետին գիւղը լինի, մի դերասանի, մի որ և իցէ ժողովրդական գործողի պսակ ընծառի և ալդ պսակի համար եղած ծախքը ինու գրուի նրա հաշխն...

Ո՛չ մի նէր, ոչ մի բան չեմ ստացել, հազիւ թէ 70 ոսկի զուս արդիւնք մնացել էր... Ալդ էլ մնծ գուարութեամբ մի ամսից չետոց հապաւ կարողացաւ ստանալ, և ծախսել ուր որ հարին է... ալդ բոլորը բաւական չեն. մէկ էլ տեսնես մի Գ. Նիկողոսեան կելլէ լանկարծ և կը լանդգնի ինձ դէմ գրել և խօսել՝ ամենայն անիրաւութեամբ... ասել է ուրիշներին թէ առանձին թշնամութիւն և հակակրութիւն ունի եղել ինձ դէմ. Սական ես գոնեա ալդ մարդուն եթէ ոչ բարիք, ալսու հանգերծ ոչ մի չար բան չեմ արել և չեմ խօսել. ուրեմն երեմ նեղացել է թէ ինչու իրան չեմ զնացել ալցելութեան... տես մի անդամ ընդմիշտ, թէ ինչ են մարդիկ...

Թէ Նիկողոսեանի թշնամութեանց և մանաւանդ այս տրւած հաշչին դէմ բոլորը կատաղած են. Տիկ. Սրբունի Տիւսար նունակէս. Ես քեզ զրում եմ ալտեղ զրւու ճշմարտութիւնը դաղոնապէս. կարող ես միախն հաղորդել իմ բարեկամաց երկուամին, ալսինքն Բաշինջաղե անին և Մելիք-Ազարեանցին. Նթէ մի օր հարկ լինի, ուրիշները պիտի գրեն արդէն, ալ ինձ դոցա մասին գրելը չի վակելիր և չի պատկանիր. Ուստի գոնեա ինձանից իմացած մի լինիր. սակայն ես էլ անշուշտ չի կարող ալս բոլորը ծածկել քեզանից, որ իմ ամենամերձ եղբար ու բարեկամն ես. Մարզո գրեն լով իր բարեկամին կը թեթեանակ, մանաւանդ սա քանի օրս շատ լուզեալ և վատ տրամադրութեան մէջ ևմ դանուում...

Օրացուցն ստացալ ու շատ չնորհակալ եմ:

Եթէ մասնաժողովն կամենաչ էնտ դարձնել պսակիս 170 զուրուշ ծախքը, վճռել եմ չընդունել:

Այստեղից, եթէ գործերու քիչ կարգի դնեմ, պիտի դնամ Փարփղից անցնելով Անդլիա... Դրկելով գքեղ մնամ ի սրաէ սիրող.

Յ. Գ. Ազգ հաշիւը ստորագրուած է մասնաժողովի գանձապես Սըւաճեան կարապետ էֆենտիի ստորագրութեամբ. եթէ հարկ լինի օրինակել կը տամ և կուղարկեմ քեզ:

Թիւ 30

1889 թ. 16 փետր. Կ. Պոլիս

Սիրելիդ իմ Սանդրո.

Իմ Ղաղարը Մողղոկից կը գրէ թէ ազատւած է զինւորագրութիւնից և կը փափագի դարձեալ գալ ինձ մօտ, սական իմ զրութիւնս չի ներեր ինձ (հակառակ բոլոր իմ բաղձանաց) բերել տալ նորան ինձ մօտ Նա արդէն մտադիր է, երբ գալնան օրերը լաւանան, գալ Տփխիս մի գործ ճարելու համար, մինչեւ որ դարձեալ կարդանամ կոչել նրան. Ուստի իմ աղնիւս, եթէ գալու լինի մի զլանալ իրեն հարկ եղած բարուական օգնութիւնը. ես էլ որքան կարող լինեմ կաշխատեմ երբեմ, նիւթապէս օգնել իրեն. Շատ երախտապարտ պիտի լինեմ քեզ և բոլոր նրանց՝ որք պիտի նպաստեն իմ Ղաղարի աղնիւ ապագալին:

Մտաղիր եմ երթալ Վոնդրա, բայց չփիտեմ թէ պիտի կարողանամ...

Ստացակ ինձ գրած ոտանաւորդ, որն որ ինձ համար վեր է քան զամեն քերթւած և ուրելի, որովհետեւ աղնիւ հողովզ հարազատ արձագանքն է աղ. սիրելի Բաշինջաղիանին կարօսով համբուրէ իմ կողմից: Քեզ ի սրաէ սիրող եղապերդ:

Թիւ 31

23 մարտ, 1889 Կ. Պոլիս

Սիրեցեալդ իմ բարեկամ Սանդրո.

Պոլսու մէջ տեսած զրկանացս վրաէ աւելացաւ. մըսելով հիւանդանալս, որու գլխաւոր պատճառած նեղութիւնը ձանիս մարելն է. անցաւոր բան է թէպէտ, սական շատ նեղացնում է ինձ:

Նիկողոսեան տմեն կողմ շարունակում է ինձ բամբասել և վատարանել. մտածում եմ թէ ինչ եմ արել արդեօք արժանանալու համար աղ հալածանաց. ևս ոչինչ չեմ գտնում խղիս վրաչ. Ամեն օր մի նոր զըրպարտութիւն և նախատինք է հնարում. Հիմակ ոկտել է ամեն կողմ ասել թէ աղ Տօնապետեանի հրատարակած տհարակների մէջ (զորս լոբելեա. Նիս առթիւ Տփխիս էլ ուղարկած ենք ծաթելու) զրւած բոլոր բաները սուտ են, եթէ ոռու թերթերը այն տեսակ բաներ չեր գրած իմ մասին և թէ դոքա ամենը Տօնապետեանի շարադրածն է. Մինչդեռ դու լաւ զիսես որ ակդ ոռուսերէն բեցէնդիաների հաւաքածուն ինձ մօտ կաէ նաև մի մեծ

գրքի մէջ ամփոփւած և թէ զուք ինքներդ կարդացել էք ալդ Տվիխտուամ.

Ենորհակալ եմ, սիրելիս, որ ալդ զրքերից նամակիդ մէջ վշած անձանց մի մի հատ նւիրելու գաղափար ունեցել ես, ես էլ թէ լինէի նորնը պիտի անէի, զորանով, ինչպէս զեռ միշտ և շատ բաներով կ'ապացուցանս որ սիրոս կարդալու և զգալու չափ մտերիմ ես ինձ. ուրեմն Աստւած քեզ պահէ. ց'տեսութիւն, խնդիրքս ճշդիւ. կատարես:

Քեզ սիրող և ի սրտէ չարդող:

Թիւ 32

29 ապրիլի, 1889, Կ. Պոլիս

Սիրելի բարեկամ Ա.

Երեք ամսից ի վեր է տանջում էի մի կոկորդի հիւանդութեամբ, որ ընդհանրապէս չատուկ է ձաներնին շատ գործածող անձանց. իմ ձանս էլ բոլորովին խանդարւած լինելով, ներկայացնել անդամ չէի կարող. ուստի կարող ես երեսականել զորա հետեանքները... Փառք Աստուծու ալժմ լաւանում է. Երկու օրից հրաւէրով և իմբով գնում եմ Զմիւռնիա:

Թիւ 33

Զմիւռնիա, 16 մայսի 1889 թ.

Grand Hôtel „Heck“ Smyrne

Թիւ 9, 10

Սիրելիդ իմ բարեկամ Ա.

Խնչպէս որ ահսնում ես, ալժմ Զմիւռնիով մէջ եմ, ուր մեծ չաջողութիւն և պատիւ, ալզ տակաւ չունեցաւ մի նիւթական շահ՝ մեծ ծախքերի պատճառով. Լրագրաց լուրերը կոկորդիս հիւանդութեան մասին՝ սասոց չեն. ուսեցաւ թէպէս մի ջղակին տկարութիւն, որով քիչ ձանս մարեցաւ, բայց ալժմ գնալով լաւանում է. ապացուց որ կարողացաւ ունենալ ախտեղ աննման չաջողութիւն. Դեռ 20 օր ալսաեղ եմ, ուղարկիր ինձ ինդիքեմ Համիլէթի զրքերից մի քսան հատի չափ. շտապում եմ, բոլորին ողջոն, Քեզ ի սրտէ սիրող բարեկամ:

Թիւ 34

16 լուսիսի, 1889, Կ. Պոլիս

Սիրելի բարեկամ Ա.

Ահա չորս օր կը լինի որ վերադարձաւ Զմիւռնիակից մեծ և աննման պատիւ և ընդունելութիւն գտնելով և զրպանից էլ բաւականի բան կորցնելով՝ փոխանակ շահելու, որովհետեւ օդերի խառնակութիւնը արգելում էր հասարակութեան բացօղեաւ պարտիզի մէջ թատրոն լաճախելու:

Առողջութիւնս, հազիւ թէ կարող եմ ասել որ գոհացուցիչ լինի. Նիւթական նեղ վիճակս բարուապէս և նիւթապէս վեասում է ինձ. Մի ասիր բոլորին թէ ես նիւթական մէջ եմ, վասն զի իմ տաղանդով հիացող հասարակութեան անդամներից շատերը չիլ աշքով կը նաև վրաս,

երբ իմանան թէ դրամ չունիմ։ Դրամիցս շատ անգամ կը գուշակեն իմ արևոտերի արժանաւորութիւնս։

Լաւ վատ պիտի ջանամ երկու կամ երեք ամիս մնալ այստեղ, խոկ լետու պիտի աշխատիմ ճարել, փոխ առնել գոնեա մի 1000 ռ. որպէս զի նու ոպա երթամ. բայց ումից ճարել այդ գումարը. Պոլսու անտարքեր-ներից... Ահա ինդիրը,

Ներկայացում, երկու երեք ամիս բժշկի արգելքով չեմ կարող տալ. եթէ և տալի՛ ոչ ոք չպիտի լածախէր ալս չոքերին... Մինչդեռ տմինքը ասում են, և դու ել գիտես, որ իմ ներոպա երթալ ներկայացնելո աղ գալին մի պատիւ է։

Ներէ, իմ թաճգագին եղբար, իմ լակամաւս պակասաւորութեանս... Աստւած այնպէս կը տնօրինէ, տուսամ, որ ազդ ամենը լրացնելու երջանկութիւնը վաչելեմ։

Սիրելի Բաշինջաղեանի հիւանդ լինելը ինձ շատ կը տխրեցնէ, փութով տեղեկութիւն տուր ինձ խնդրեմ նորա մասին և իրեն իմ ողջոնները ու համբուրներն... Յ'տեսութիւն, ազնիւդ իմ, զրիր անշապաղ և երկար։ Ստացալ գրեանքը, չնորհակալ եմ ի սրտէ։ Քող եղբար անձնելու

(Կը շարունակւի)

ՓԼԱՍՄԱՐԻՈՒԾ ԺԸՆԵՒՂԻՄ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿԱՆԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

Երբորդ դասախոսութիւն. Աստղերը և ամսվերթութիւնը:

«Դիշերակին խաղաղ անդորրութեան պատճառն—սկսեց դասախոսը— երբ լուսնը մելամաղձուս գէմքով նալում է երկրին, սփռելով իր կաթ-նագոյն լուսն ամեն կողմ կամ երբ, արծաթափալլ լուսատուի բացակալութեան պատճառով, խաւար մթութիւնը խանգարուս է բարձր երկնակա-մարի բազմաթիւ լուսատուները, մեր լուս վկաները. երբ չորս կողմդ ամեն կենդանի շունչ քնած է, օրւակ գործունէութիւնից հանգիստ առ-նելով—այդ ժամանակ բարձր աշտարակների վրաչ, աչքներս անթարթ բոնած հսկալական հեռաղէտներին՝ դիտում ենք «երկնքի աչքերին», աշ-խատում ենք անպարկեցո կերպով թափանցել նրանց լուս մենակութեան մէջ, մասնակից լինել նրանց լաւտենական զաղտնիքներին. Այդ բոպէ-ներին իսկական աստղագէտի սիրտն ալեկոնծում է միւս մարզկանց համար մի բոլորովին անձանօթ զգացմունք. ամեն լուսէ պատում է գըլ-խումդ, որ աճնտեղ, հեռուն, միջաստղագին անհունութեան մէջ ապրում են, քեզ նման էակներ, գուցէ քեզանից աւելի երջանիկ, գուցէ անհամե-մատ աւելի թշւառ. նրանք աճնտեղից դիտում են քեզ... Մարդկազին բա-ռերը շատ անզօր են այդ մութ, սիրտ ճմլող զգացմունքը ճշդութեամբ արտակարուելու համար»...

Նա նորից վիշեցրեց այն ճշմարտութիւնը, որ մեր երկիրը տիեզերքի կենդրունը չէ, ոչ էլ մի առանձին նշանակութիւն ունեցող մարմին, աչք

¹⁾ Տիւ աՄուլճ» № 9:

մի ամենաչափավոր մալմին), մի մոլորակ, որ միւս իր նմանների հետ միասին շրջում է ալեր չորս կողմը, իսկ այս վերջինս «իր ձագուկ-ներում» ոլանում է անհունութեան մէջ, իսկ մենք՝ մարդիկս, ոչ այլ ինչ ենք, եթէ ոչ երկնակին արարածներ, որոնց նման շատերը, հաւանակա-նորէն, ցրւած են միւս բազմաթիւ մոլորակների վրաց Մեր կենսասու-արել մի հասարակ և շատ փոքր աստղ է միւս բազմաթիւ աստղերի շար-քում: Ամեն մի աստղ մի արել է, շրջապատած իր մոլորակներով իրա-նից լուս և տաքութիւնն է արձակում ե, գուցէ, նաև կեանք տալիս իր մոլորակներին, ինչպէս արել մեզ: Ազդ հեռաւոր աստղերի վրաց մեր արել ևս երեսում է հազիւ նշմարելի մի աստղի չափ:

Արելի սխտութիւն լիտու տարածում է մի տագին անաստղ տարա-ծութիւն և ապա գալիս են աստղերը: Մեզ ամենամօտ աստղն է Կեն-տաւր (Centaur) համաստեղծութեան Ալֆան (առաջին աստղը), որ արելից 275,000 անգամ աւելի հեռու է, քան երկիրը: Մի բովիւմ մի կիլոմետր (մօս մի վերստ) գնացող գնացքը նրա կը համնէր 76 միլիոն տարում, իսկ այդ ճանապարհորդութեան տոմսակի դինը, կիլոմետրը 10 սահման հաշվելով, կը լինէր 4000 միլիարդ ֆրանկ (և միլիոն ան-գամ միլիոն ոսկի ոռութի) աչսինքն — անհամեմատ աւելի, քան ոշ-խարհիս բոլոր պիտութիւնների բիւշեանները միասին վերցրած... Ազդ-քան հրեշտակը թւերի մասին հասկացողութիւնն կազմելու համար այդ տե-սակ համեմատութիւններն այլ ևս չեն օգնում, ինչ ասել է 76 միլիոն տարի կամ 4000 միլիարդ ֆրանկ... Աչժմ վերցնենք լուսը, որ մի վայր-կենում (սեկունդ) անցնում է 300,000 կիլոմետր (280,000 վերստ): Արե-լից մինչև մեզ լուսը համնում է 8'—13''-ում (աչսինքն 8 և 13 վաթ-սուներսրդական սեկունդում), աշնակէս որ մենք տեսնում ենք ոչ թէ արելի պատկերը ճիշտ տւած բոպէին, այլ 8'—13'' առաջ եղածը: Մեր զրայի հենուաւրի Ալֆակից լուսը մեզ համնում է 4 տարի 4 ամսում: Սին (Syne) համաստեղութեան 61 դ աստղից, որ մեր երկրորդ ամենամօտ գրացի աստղն է, լուսը մեզ համնում է 7 տարում: Միրիուսը — Փոքր շուն համաստեղութեան Ալֆան և մեր երկնակամարի ամենաապահառ զարդը — իր զուրեկան լուսի ճառագալիքները մեզ հասցնում է 10 տարւաչ մէջ, իսկ բնեռապին աստղը 36 տարում... և այն և այն: Աթէ, օրինակ, բնե-ռապին աստղն աչսօր ոչնչանակ կամ հանգչի, մենք այդ կ'իմանանք ուզիլ 36 տարի լիտու, երբ լուսի վերջին ճառագալիքները կը համնի մեզ: Գուցէ աչժմ կան բազմաթիւ աստղեր, որոնք իսկապէս դադարել են ասաց լինելուց, իրանց սեփական լուսն արձակելուց, բայց որոնց մենք զեռ հաշում ենք զործող, լուս և տաքութիւնն արձակող մարմիններ, որովհետե-նրանց լուսը գեռ գալիս է մեզ, զեռ չի գաղարել բոլորովին: Երկրից անդ-բաղարձած լուսն ևս ճանապարհորդում է անհունութեան մէջ: Նոյնպիսի

Ճանապարհորդութիւն կատարում է նաև երկրի արտացոլացած լուսը, Եթէ հնար լինէր վագրկենաբար տեղափոխւել օրբինակ, Սիրիուսի վրայ, մենք կը տեսնէինք երկիրը 10 տարի առաջ եղած զրութեամբ, եթէ անցնէինք բևեռալին աստղի վրայ, մեղ կ'երեար երկիրն իր 36 տարի առաջ ունեցած կերպարանքովն ու գեպքերալը, նթէ աւելի հեռու զնակինք, անովերջ գէպի վետ կը վազէինք, գէպի երկրի պատմութեան խորքերը... ի հարկէ, եթէ օժտուած լինէինք արդքան հեռու տեսնելու ձիրքով¹⁾). Ավագէս անվերջ կերպով երկիրն ուղարկում է իր պատմութիւնը երկնակին մարմիններին, և մեր լուռ վկաներին» ի պահեստ, ոչինչ, ոչ մի դործողութիւն անզամ չի կատարէի աշխարհիս երեսին, առանց վկալի, առանց հետքի: Ինչպէս երկրի վրայ բան ամեն փափոխական է, նոյնպէս և տիեզերքի մէջ չկաչ ոչինչ կալուն, մշտական, անշարժ. կը գան նոր-նոր երկիրներ, նոր ու նոր օրդանական կեանքեր, կ'անցնեն ու կ'երթան հները, կը փոխափամեն բան, միայն ազդ բոլորի ճառագաւթագիր պատմութիւնը պահում է ու կը ողաճէ լաւիտեան նոյն անհունութեան խորքում—գուցէ լուսի ձեռվ, զուցէ շարժում, էլեֆտրականութիւն կամ տաքութիւն դարձած—ոչինչ չի կորչում:

Կարծես հին խաչնարած ցեղերն ազդ բանը գիտէին, հասկանում էին, որ մինք մեր բոլոր գաղտնիքները աստղերին ենք պահ տալիս և դրա համար էլ նրանց միջոցով ուզում էին զուշակութիւններ անել: Այս սկզբնական գիտողութիւններից սկսւեց աստղաբաշխութիւնը, գիտութիւններից ամենահինը: Այժմ քաղդէական հին աստղագիտութիւնից ոչինչ չի մնացել, ամեն բան փոխւել է, բացի, գուցէ, մի քանի համաստեղութիւնների անուններից, որ կայցրել են գառ երեակացութեան տէր մարդիկ այս կամ այն խումբ աստղերին, ումանեցնելով զանազան կենդանիների: Այդ փալուն մարմինները սգեսորել են բազմաթիւ հին ու նոր բանաւուեղջների...

Աստղագէտն ապրում է աւելի ապագալի համար, սերունդներն են վայելում նրա աշխատութեան արդիւնքը. գոնէ մինչև օրս ազգպէս է եղել: Հալլէն ձեզ օրինակ: Այդ մեծ անդվացին գեռ 1682 ին հաշւեց, որ Նեպտոնից էլ այն կողմ, արեից 5 միլիոնք կիլոմետր հեռու, կաչ մի մոլորակ, որը 1759 թւին գալու է երկրին աւելի մօտ և երեալու է մարդականց: Ինքն ապրեց մինչեւ 1742 թիւը, բայց նրա մահից ուղիղ 17 տարի էնեաց երեաց ազդ մոլորակը, որի անունը մարդիկ կնքեցին չաւլէ ի մոլորակ, ի պատիւ հոչակաւոր աստղագէտի:

Մի ուրիշ օրինակ: Սիրիուսը, որ մեր արեից 2,000 անդամ աւելի

¹⁾ Այս ֆիզիքական պարզ օրէնքի վրայ է հիմնւած լարգելի հեղինակի «Ալմէն» Փահտաստիք պատմածքը:

մեծ է, իր կողքին (շուրջը պատռող) ունի մի մոլորակ կամ աւելի ճիշդն ասած մի փոքրիկ արև, որի գոյութիւնը չալտնի չէր աստղագէաներին, Ահա դուրս է զալիս մի ուրիշ չալտնի աստղագէտ և նախօրօք հաշտում է, որ Սիրիուսի շրջման ճանապարհի աջ ինչ տեղում ակաքան խոտորումն առաջանում է մի ուրիշ մարմնից, որ նրանից պատճան հեռու է և աչքան մեծութիւն ունի: Եւ 49 տարի էնուոչ բացւում է ազդ մարմինը:

Արդէն ասացինք, որ աստղերն արեներ են, ալֆմ կ'աւելացնենք, որ արեներ, բայց բազմատեսակ և բազմազոյն: Կան աստղեր, որ կազմւած են 2, 3 և նույն խոկ և լուսատու մարմիններից. դրանք «Բարդ աստղերն» են, կան նաև աստղեր զանազան զոների, ամեն տեսակ նուրբ խառնուրդներով, որ հասարակ աչքով չի կարելի ջոկել: Դրանցից լուս ստացող մոլորակների բնակիչները, հաւանական է որ, չնու զգում իրանց լուսատաների զոների գեղեցկութիւնները, որովհետեւ նրանց ջզերն արդէն վարժած կը լինեն այդ զոնին, ամենագեղեցիկ բանը սովորական դարձաւ թէ չէ: Կորցնում է իր գրաւչութիւնը և իմաստը:

Երկնքի մուշ ու հանգիստ տեսքը մարդու կարծել է տալիս, որ այնտեղ ամեն բան մեռած, ամեն բան խաղաղ է: Բայց արելի և Մարտի վրայ ինչ ահապին շարժումներ ու վտիտութիւններ որ տեսանք, նրանցից հազար անգամ աւելին կը տեսնենք այնտեղ, հեռու լուսաւորների շրջանում: Ազդ մեղ համար անշարժ երեացող լուսատուների շարժման արագութիւնը մարդկակին խելքից բարձր է: Դեռ թողնենք նրանց անսահմանութեան մէջ կատարտ շարժումը և վերցնենք իրանց առանցքի շուրջ կատարածը: Երկիրը երկաթուղու ամենաարագ գնացքից 11,000 անգամ աւելի արագ է շարժում (իր առանցքի շուրջը), խոկ գնացքը 11,000 անգամ աւելի արագ է սլանում կրիալից: Ուրեմն ինչ համեմատութիւն որ կաչ փորսող տեղ կրիալի քալեների և ճեպընթաց գնացքի արագութեան մէջ, նոյն համեմատութիւնը կաչ նաև վերջինիս և երկրի շարժման մէջ: Բայց երեակալեցէք, որ նոյն և դեռ աւելի խիստ չարաբեթիւն կաչ երկրի շարժման արագութեան և աստղերի արագութեան մէջ: Սրանք անհամեմատ աւելի արագ են շրջում, քան երկիրը: Ալսուղ արդէն թւերն անօգուտ են:

Մեր արեգակնակին սխատեմը շարժում է, ինչպէս ասացինք, զէպի Հերքիւէս համաստեղութիւնը: Այս շարժման հետեանքն ան է լինում, որ աստղերից ոմանք մեզանից արագ հեռանուում են, ոմանք մօտենում: Օրինակ՝ մի աստղ, որ աստղաբաշխական ցուցակի մէջ № 1830 անունն է կրում, մօտենում է մեղ օրական 2,822,000 լիիօ արագութեամբ: Թւում է, որ նա գալիս է ուղիղ երկրի վրայ: մի քանի միլիոն տարուց լետով նա կը համնի և կը կաչի երկրին, եթէ երկիրն իր տեղում կանգնած մնաչ բոլոր միւս աստղերը ես շարժում են: Սրանից չառաջանում է աչն, որ

համաստեղութիւնները կամաց վոփոխում կամ կորցնում են իրանց որոշ ձեերը։ Դա կատարում է անտանելի դանդաղութեամբ։ Երկրաբանութիւնը իր ժամանակները հաշւում է 10 կամ 100 հազարաւոր տարի։ Ներով, իսկ աստղաբաշխութիւնը միլիոն և միլիարդներով։ Երկնային մարմինների այդ անվերջ ու բազմաձև չարժումների ժամանակ աստղերից ումանք հագուստ են, ունանք նորութիւն են կազմակերպւած, ումանք էլ իրանց զարգացման զագաթնակէտին են հասկել կամ հասնում են և այն և այն։ Անպէս որ մեղ համար լուս և մեռած երկնակամարը ներկալացնում է իրապէս—մի շարժուն ու կենսալի օջախ (oyer)։

Աստղաբաշխութեան մէջ աստղերը բաժանում են զանուզան զաստիարգերի, նաև լով նրանց երեացող փակին։ Հասարակ աչքով տեսնուող աստղերի թիւը հասնում է 6,000-ի։ Մինչև IX մեծութիւն դիտակի տակ երեսմ են 300,000 աստղեր ամեն մը կիսապնդում, իսկ մինչև XI մեծութիւն՝ 14,000,000։ Աերջերս ֆրանսիակում—ծովագետ Մուշէն (Mouchez) մտածեց լուսանկարել երկինքը։ Այդ անազին աշխատանքը բաժանւեց 18 դիտարանների վրա։ պէտք է հանեն 40,000 կլիչներ և ապա իրար կպցնեն։ Այդ քարտէսը կը հասնի մինչև XI մեծութիւնը և կը պարունակի մօտ 14,000,000 աստղեր։

Մինչև XV մեծութիւն աստղերի թիւը հասնում է մօտ 100,000,000 ի, մինչև XVI՝ 300,000,000-ի և այլն։ Լուսագիտութեան մէջ կատարւած ամեն մի նոր առաջադիմութիւն բազմացնում է նրանց թիւը միլիոններով։ Երբ այսմեան մեծ հեռաղէտն ուղղում էք զէպի միջաստղալին բաց տարածութիւնները, ձեր աչքի առջե բացը բացը է մի անապատ, ծածկւած ուկու և ազամանդի փոշիով, որ հազարաւոր փակվիոց է արծակում։ Աւելի կատարեալ հեռաղէտն ալդ աստղալին կոտսերի միջից կը ջոկէ և առանձին աստղեր, և առաջէս անվերջ կը շարունակի։ Ո՞ւր է վերջանում դա, ուր է զրա սկզբնաւորութիւնը, ուր է զրա կենարոնը—ամեն տեղ և ոչ մի տեղ զի Նթէ մի անմահ էակ լուսի նման արագ ոլանակ տիեզերքի մէջ մի ուղիղ զծոլ՝ նա կը թուչի միլիոնաւոր դարեր և մի քալ անդամ մօսեցած չի լինի անվերջութեան ծալրին։ Նթէ նա չաւիտեան ոլանակ, կրկին նա չի հասնի մի ծալրի։ Չաւիտեան ականութիւնը չի կարող չաղթել անվախճան անվերջութեանը...

Անվերջութեան մասին ունեցած այս մարդկարին հասկացողութիւնը մեզ տանում է զէպի ժամանակի սնվերջութեան հասկացողութիւնը կամ ծնեցնում է մեր մէջ չափտենականութեան դաղսիարը։ Տարածութիւնն է ժամանակի մակարը։ Զկայ սկիզբ, զկայ նաև վերջ... մեր ներկայ ժամանակը չունի ոչ մի առաւելութիւն անհուն անցեալից, ոչ էլ անվերջ առագալից, որ դալու է շատերի նման և գնալու է, ինչպէս և կել է։ Արմերջութեան և չափտենականութեան այս հասկացողութիւն-

ները մարդում դարձնում են անտարբեր դէպի երկրակնը, որի մեծութիւնն անասելի չնչին է, տիեզերքի անվախճանութեան հետ համեմատած։ Մարդ ակամաէ սկսում է ատել երկիրն իր անարդարութիւններով, իր հզօր կիտաստածներով, իր թնդանօթներով ու հրացաններովը, իր սորիկացումով ու բռնակալութիւններովը։ Աստղաբաշխութիւնը մարդու տանում է վեր, միջաստղապին սահմանները, ուր թագաւորում է լուսի մէջ լաւատենական ազատութիւնը...

Բայց եթէ մենք ցուց տվինք, որ երկիրը տիեզերքի կենտրոնը չէ, ոչ էլ աստղերն ու արեն ստեղծւել են միան նրան ծառակելու համար, որ ամեն մի աստղ մի արե է և մեր երկից աւելի մեծ ու աւելի լարմար, որ երկրակնը փոքր է, չնչին է, որ մեր ժամանակները ոչ մի առաւելութիւն չունեն անցեալից ու ապագաից և այն և ալին—մենք այս բոլորը ուոյց աւինք, բայց չառ հեռա ենք կարծելուց, որ երկիրն անկախ է, որ նրա կեանքն ինքնուրուն ու ինքնազու է կամ անհնարէ որ և է կապ երեսութների մէջ և ազն Աչ, երկիրը և իր վրաչի էութիւնները մի չնչին մասն են արդ անվերջութեան, արդ անսահման ու անվախճան ազատութեան։ Մարդկացին կեանքը ես դրա մի մասն է, միան այն չափով, ինչ չափով որ նա է և կը լինի իսկական ազատութիւնը —լուսի ու անմահութեան նման։ Բոլոր երկնակին մարմինները կապւած են իրար, Ակդ կապերից մի երկուսը մեզ լաւանի են, խկ, զուցէ, ուրիշ միլիոնաւորներն անչափ, ծածուկ։ Միթէ Մարսը կամ Նեպտունը, չնաւիլով իրանց ահազին հեռաւորութեանը, չնն ազդում երկրի վրաէ, զեռնրանց ձգողական ուժը մեզ լաւանի է։ Միթէ արեի վրա էլեքտրականութեան փոքր ինչ աւելանալը չի ճօճացնում կողմնացոցի մագնիսի պարը, Երկնակին մարմիններին բաժան ող տարածութիւնը դեռ ոչինչ չի նշանակում, մարմինների հիւէններն անգամ իրարից բաժանւած են մանրիկ տարածութիւններով։ Զկալ երկու հիւէլէ բոլորովին, մաթեմատիքաբարիւրուր կապած։ Տարածութիւնն անհրաժեշտ է լարաբերութիւն։ Մի տեղ տարածութիւնները մեծ են, միւս անդ շատ փոքր։ Տարբերութիւնը քանակական է, ոչ որակական, ոչ սկզբունքի։ Եւ ինչն է իրաւունք առվաս ձեզ կասկածելու, որ վազը չեն գետնի մի «Փոտոֆոն» (լուսախօս) և դրա մի ջոցով չեն կապի իրար հեա Մարսն ու Երկիրը, ինչպէս ազմ տելեփոն (ձանախօս) կապում է իրար Պարիզն ու Մարսելը—ալսինքն ոչնչացնում է 800 կիլոմետր տարածութիւնը։ Եւ այս դեռ ձանն է, որ լուսից անհամեմատ դանդաղ է զնում։

Մեր նախնիքն աշխատում էին աստղերի միջոցով գուշակել մարդու ազագան։ Նրանց չէր չաջողութիւն բանը գուցէ կը չաջողութիւն մարդուն մի քանի միլիոն տարի լետով։ Մի վախենաք, աստղերը մոռացկու չեն։

Նրանք ամուր են պահում բոլորիս ճառագալթագիր պատմութիւնը, Եւ այն ժամանակ անշնչտ աստղագիտական օրէնքներ կը լինին մեր բազզի ու կեանքի շարժիչները: «Տեսնում էք, տիկիններ և պարոններ, որ աստղաբաշխութիւնը մահան դիտութիւն չէ. ընդհակառակը—նա չափանական, տիեզերական ու անվախճան կեաքնի դիտութիւն է: Երբ աստղաբարդ գիշերները, գրաւաած երկնքի հմայիչ գեղեցկութիւններովը, գիտելիս լինէք փաղուն լրտաստաներին՝ մտածեցէք նաև անտեղի մարդկութիւնների մասին, ողջունեցէք նրանց»:

Բուռն ծափահարութիւնները թնդացրին դահլիճի մուալլ կամարները և, կարծես, վերջ չունէին: Դասախոսը նշան արեց, բոլորը լոեցին: Նա չնորհակալութիւն չալանեց իրան արած սիրալիր ընդունելութեան համար և ներողութիւն խնդրեց, որ «աստղաբաշխական չոր նիւթը դարձրեց ժողովրդական դասախոսութեան առարկալ և, գուցէ, չատերին ձանձրացրեց: Երա այդ պարկեցաւթիւնը կրկին վարձատրւեց անվերջ ծափահարութիւններով»:

*
* *

Պ. Ֆլամմարիոնի երեք դասախոսութիւններն էլ լիքն էին բազմաթիւ փիլտրակական դասողութիւններով, երբեմն նույն իսկ—եթէ կ'ուզէք—խառը փոքր ինչ մետաֆիզիքալի հետ, ինչպէս—«մարդկալին կեանքը մասն է չափանական ազատութեան և անհունութեան»: Սա մեզ լիշեցնում է Հեգելի «իդէան» և «իր աստիճանաբար զարգացումը կամ իրականացումը կեանքի, բնութեան և աստածութեան ձեռլու: Ամենատեղ ցրւած էին բաղմաթիւ վստահ և մինչեւ անգամ չափազանց չանդուգին գիտնական ենթադրութիւններ, ինչպէս օրինակ «ՓոստՓոնը» կամ «Ճառագալթագիր պատմութիւնը» և ալին Լեզուն վերին աստիճանի դիւրըմբոննելի էր, բանաստեղծական և տեղակեղ կծու հումօրով համեմաւած: Այս բոլորը նրա վերածութեանը տալիս էին մի շատ ներդաշնակ ու պարզ ժողովրդական ձեւ: Սրանով էլ պէտք է բացատրել նրա գրւածքների արագ առածւելու գաղանիքը: Խակ նրա ազդ մեծ չափութիւնը և ճշմարիտ գիտութեան խոր ուսումնասիրութիւնը միասին արդէն նրան տւել են համաեւրոպական պական և նույն իսկ համաշխարհի հոչակ:

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ

(Շարունակութիւն¹⁾)

Բ.

ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԱՆհասուական օրինակումն:—Տարգի, կիերօի և ուրիշների կարծիքը:—Արագ և մեղմ ընդորինակումն:—Մեծ մարդիկ: Հաւաքական նմանողութիւն:—Հիւանդական նմանողութեան գէպքեր:—Ընդօրինակումն ընդհանուր է և փոխադարձ:—Ինչ ձեի ներշընչումներ ևն ընդունում հասարակութիւնից:—Պատմութիւնը և հասպիսութիւնը նմանողութեան ահսակէտից:—Սմիւփումն:

La Société c'est l'imitation.
Tarde.

Հասարակութիւնը նմանողութիւն է,
Տ ա բ ա ն ։

Մեր ծննդեան առաջին լուպէից մինչեւ մեր կեանքի վերջին լուպէն մենք ենթակակ ենք ներշնչումների, — ներշնչում չէ արդեօք մօր «օրօրը», ներշնչում չէ արդեօք երեխադին քայլել խօսել սովորեցնելը, ներշնչում չէ նրա ամբողջ կրթութիւնը ու դաստիարակութիւնը, ներշնչում չէ արդեօք ուրիշների ծէսերի, սովորութիւնների, ուրիշների լեզւի, դազափառների, քաղաքակրթութեան գոխառնումնի?

Անհատի և հասարակութեան ամբողջ զարգացումն ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներշնչման արդիւնք: Միան այս ձեւի ներշնչումները կատարուամ

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 5, 6 և 7—8:

են մեզմ հաւաքրեա անդգայ կիրապով, առանց զղրդիւնիս Աջստեղ տիրապետում է ։ Կ թի ն ու թ եւ ան ազգեցութիւնը, որը կայանում է նրանում, որ մինուն ազգեցութիւնը չաճախ կրկնելով (օրինակ մի բառի լսելը կամ մինուն տարազի տեսքը) մեզ կիսարթնութեան մէջ է գցում և մենք հետեւմ ենք ազգ ներշնչման։

Նթէ լաւ քննելու լինենք ներշնչողի հոգեբանութիւնը, կը տեսնենք, որ նրա գլխաւոր հիմնաքարը նմանողութիւնը կամ ընդուրին ակումն է, որի ամենախոշոր ու աչքի ընկնող արտակազտութիւնները մենք ուսումնասիրել ենք այս աշխատութեան առաջին մասում Կապիկութիւն անունով (տ. մ. առաջին, բրոցիւրի էջ 32):

Այս նմանողութիւնն է, որը վերջին ժամանակներս մի շարք լուրջ հասարակագեաններ և մարդարաններ անհատի և հասարակութեան զարգացման միակ գործոն են համարում։

«Մի անձն, ասում է Տարդը, որը ապրում է բազմակողմանի և գործունեակ կեանք վարող հասարակութեան մէջ, որը բացում է նրա առջև տեսարաններ, կոնցերտներ, ընթերցումն, խօսակցութիւն և այս բալորը միշտ փոփոխւած, միշտ նորոգւած ձևով—այս անձն ապաստ է մնում մտաւոր մեծ ճգնումից, նրա քարացման մէջ ընկած և, մինուն ժամանակ վերին աստիճան գրդուման հասած, ուզեզը, կրկնում են, ընկնում է հիպնոտի մէջ»։

Տարդից առաջ, լալտնի Վիերօն բացագրել էր ընդօրինակման օրէնքը։
«Նթէ ուշաղրութիւնով քննելու լինենք թէ ինչիր են կատարուում մարդու հոգու մէջ, ասում է նա, կը նկատենք, որ ընդօրինակումն մի պահանջ է նրա համար, նրա գոլութեան անհրաժեշտ պահմանն է, Մարդ խորհում է, հաւատում է, դատում է և արագացնում է իր մաքրը իր ընդօրինակելու զատկութեան չնորհով։ Նրա ամենափոքր գործն անգամ նմանողութիւն է ուրիշների արածին։ Եւ այս ընդօրինակումն կատարուում է մեքենայաբար, առանց և չաճախ հակառակ մեր կամքին։ Այսպէս անդիտակցաբար և չաճախ ակամայ մարդ լորան ջում է, երբ մէկը լորանջում է, կամ շւացնում է, ելգում է և ալին։ Եւ մարդ հաղարաւոր ալսպիսի բաներ է անում և մինչեւ անգամ չգիտէ, թէ ումից է վեր առել ալից։ Պատահում է, որ մարդ ուրիշց լսած մի եղանակ երգում է, կարծելով, թէ իր հսարածն է երգում»։

Լաւ ու վաս ձեերը ու սովորութիւնները կազմուամ են միան սովորութիւնով։ Այս մի ատրական գիտելիք է, որը և թելագրում է ծնող ներին հեռու պահել իրանց զաւակներին վաստ ազգեցութիւններից...»

«Մենք ընդօրինակում ենք ոչ միան այն բաները, որոնք հարւածում են մեր զգացմունքները այլ և այն բոլորը, ինչ որ հարւածում է մեր բանականութիւնը։ Այս, անդիտակցաբար մենք սեփականացնում

ենք ուրիշների բարովական և քաղաքական համոզմունքները, սնապաշտութիւնները և ազն, մի խօսքով—մենք ընդունում ենք այն բոլորը, ինչ որ մեր մտքի մթնոլորդն է կազմում... Մարդու աւելի տրամադիր է գետի համակրութեան կամ հակակրութեան ընդօրինակումն: Մենք սեպհականացնում ենք, առանց քննելու, ցնծութիւն, լաց, արհամարհանք, զարովթ, ատելութիւն, վրէժ և ազն, Այս բոլոր զգացմունքները ընդօրինակաման հետեանքն են, Նու մի խեղճ մարդ եմ տեսնում, ինձ նրա տեղ եմ դնում, երեակացում եմ ինձ նրա տանջանքները և խղճում եմ նրանու:

Տոկարսկին ասում է. «Մարդուս ձգտումն զէպի նմանողութիւնը նրա հոգեկան կեանքի հիմնական օրէնքն է, Այս մի մեծ ոժ է, որը մզում է մարդկութիւնը զէպի անդադար այս աջ դիմութիւնն:

Մեզ շատ հեռու կը տանէր այս երեսովթի հոգեբանական պատճառների քննութիւնը,—սա ուղեղի վանդակների ներքին գործունէութեան և նրանց փոխադարձ չարաբերութիւնների խնդիր է: Կ'ասենք միան, որ դրայց եկած ոչ մի ազգեցութիւն, ոչ մի զգացողութիւն անհետք չի մնում ուղեղի վրա և որ երեխայութիւնից մինչև մահ մեր ստացած տպաւորութիւնները ժողովում են ուղեղում: կարգաւորում են, բարգւում են և կազմում են բանական մարդը իր հոգեկան ցուցմունքներով, իր կրքերով, իր բանականութիւնով, իր չակումներով, մի խօսքով՝ իր հոգով և սրտով:

Ինչ և իցէ, հասարակական հիպնոտիսմի զլիսաւոր ուսումնասիրողները—Տարգը, Ֆոոլին, Բորդիէն և իտալական դպրոցը—Մերգին, Մեգելէ և ուրիշները միաձայն ընդունում են, որ չակումն զէպի օրինական մարդուս հոգեբանութեան հիմքն է, ալդ նրա «Հոգեկան կեանքի հիմնական օրէնքն է», ինչպէս ասում է Տոկարսկին: Այս մի անդիմագրելի պահանջ է մարդուս համար:

«Ամեն մարդ տրամադիր է օրինակել ուրիշներին, և այս ընդունակութիւնը սաստկանում է երբ մարդիկ խմբւած են» (Բորդիէ): Տարգը ասում է. «Մարդու չակումն զէպի նմանողութիւնը, նրա բնութեան ամենախոշոր գծերից մէկն է»:

«Ամրոջ աշխարը, ասում է Մեգելէն, ինչպէս ամենալուրջ, նունպէս և ամենաթեթեամիտները, ծերերը և երիտասարդները, ամենազարգացած և ամենաստիտ մարդիկ—ամենքը շատ ու քիչ բնադրումով օրինակում են, իւրացնում են իրանց լսածը, տեսածը, սովորածը»:

Շատանում ենք այս հեղինակաւոր զիտնականների կարծիքով:

Նմանողութիւնը հնարաւոր է այն ժամանակ միան, երբ ընդունակութիւնը և օրինակողի և օրինակի մէջ մի որ է տարբերութիւն կարաց ինչ է ալդ օրինակը, եթէ ոչ նուն իսկ ներշնչող, հիպնոտող ան-

ձըն. «Ն մանողութիւնը ոչ աչլ ինչ է եթէ ոչ ներշըն-չումն, այսինքն հիպնոտիսմ, ասում է Տարդը. մի մարդու որ և է լատկութիւնը հարւածում է մեզ, մեխում է իր վրա մեր ուշաղրութիւնը, ուրիշ խօսքելով — ապշութեան մէջ է քցում, հիպնոսում է մեզ, և մենք անդիտակցաբար չափշտակւում ենք այդ մարդով և աշխատում ենք նմանել նրան:

Այս տարբերութիւնը մարդկանց մէջ կամ փոքր լինել նիթէ նա մեծ է, հիպնոսումն լանկարծակի է լինում, և այն գէպքում ընդօրինակումն արագ, ստիպողական է դառնում: Երեակացնք մի անձն, որը լանկարծ ընկնում է մի երկիր, որտեղ կեանքը միանգամայն տարժեր է իր մինչեւ այժմ տեսած կեանքից: Ազգ մարդը խոկոն իրան օտար է զգում, նա անդադար հիպնոսման մէջ է և անդադար ձգտում է նմանիլ իր նոր շրջանի մարդկանց: Բայց որչափ աշխատանք է հարկաւոր նրան դրա համար և որքան ոչ է կորցնում նա այս գործում: Կան զէպքեր, երբ այս մարդը ընկնում է, նրա ոչերը սպառւում են և նա կորչում է, անհետանում:»

Այս է կեանքի կորիւը... Այս է այն մեծ օրէնքի հիմքը, որով ոչ կուլուրական աղգերը կորչում են, երբ նրանց տիրապետում են քաղաքակրթւած աղգերը: Դարւինի դրած մեծ օրէնքը հասկանալի է դառնում մեզ: Ուժեղը (Փիլիքապէս, թէ բարուապէս) կլանում է թովին, միան այն պատճառով, որ այդ երկուակի մէջ տարբերութիւնը մեծ է և որ ժամանակ չի տրում թովին հանդարտ, կամաց ընդօրինակումով հասնել ու ժեղին: Բայց այս մասին լեառու:

Աւ, ճշմարիտ որ, ամբողջ աղգեր անհետանում են այս կուփի մէջ: Բաւական է լիշել Ամերիկակի հնդիկներին: Այս երկրներում քաղաքակիրթաղգերը լանկարծ տիրապետեցին կիսավարենի ցեղերին և կլանեցին նրանց, ժամանակ չտալով զարդանալ և իրանց հասնել:

Եթէ Հայ աղգը կարողացաւ պահպանել իր գոլութիւնը, — գրա պատճառն անտարակուր այն էր, որ նա միշտ շրջապատւած է եղել անսպիսի աղգերով, որոնք քաղաքակրթութիւնով իրանից շատ բարձր չեն, գուցե և աւելի ցած են եղել: Եւ իրեն ապացուց առաջ բերենք Լեհաստան զաղթած հայերին, որոնք իրանցից շատ աւելի քաղաքակրթւած երկիր ընկելով անհետացան¹⁾:

Ուրիշ կերպէ լինում, երբ մի աղդ միջոց և ժամանակ է ունենում կամաց կամաց ընդօրինակման (ուրիշ խօսքերով քաղաքակրթութեան) աստիճաններով բարձրանալու Ընդհակառակը Ա. Արասիսմնեանցի «Թիւ և Ուժ» լուսածը «Մուրճ» 1890, № 5:

¹⁾) Ակատեղ աշքաթող է արւած ժողովրդի թւի կարևորութիւնը, որպէս Քակսոր կեանքի կուփի համար: Համեմատէք Ա. Արասիսմնեանցի «Թիւ և Ուժ» լուսածը «Մուրճ» 1890, № 5:

զիւրին է լինում ևն քիչ ոքեր են վասնուում այդ գործում: Մի օրինակ կը լուսաբանի մեր միտքը:

Եթէ մի անուս մարդու ստիպեն համալսարան շաճախել նա անասելի ձիգ պէտք է թափի, որպէս զի ըմբռնի գիտութիւնները, և գուցէ այդ նրան երբէք չչաջողի, այն ինչ եթէ նոյն դրութեան մէջ դնենք մի պատրաստած անձն, օրինակ գիմնազիան աւարտած մէկին, ոս անհամեմատ աւելի քիչ ուժ կը վասնի և կարճ ժամանակ գործ կը դնի նոյն նպատակին հասնելու համար: Ահա թէ ինչ է ալսպէս ասսած անհատական ընդօրինակումն:

Բայց քանի որ մարդիկ խմբովին են ապրում, հետևաբար մի որ և է անձնաւորութիւն կարող է գրաւել, հիպեսոսել, ուրիշ խօսքերով, օրինակ դառնալ ոչ մէկին, այլ մի քանիսին, մի ամբողջ դասակարգի, մի ամբողջ հասարակութեանը: Հայրը հիպեսոսում է և ներշնչման ներքու է պահում իր զաւակներին, որոնք աշխատում են ընդօրինակել նրան, ուսուցիչը օրինակողների աւելի մեծ շրջան ունի, հրապարակախօսը աւելի ևս մեծ և աղին: Բարձրանալով ընդօրինակման սանդուխտները, մինք կը հասնենք այն առերես անհասկանալի երեսիթին, երբ ամբողջ ազգեր, ինչպէս մի մարդ, անձնաւուր են լինում մի անձնաւորութեան հիպեսոսման, սենեկով նրա վրա իր ամբողջ ուշադրութիւնը, ինքնամոռացման հասած, զօրեղ թովվութեան ներքու:

«Եւ քանի քանի, մեծ մարդիկ Ռամզէսից սկսած մինչև Ալե, սանդրը Մեծը, Ալեքսանդրից մենչև Մահամմէդից, Մահամմէդից մինչև Նապոլէոնը, հմայել են ալսպէս ազգերի հոգին! Քանի քանի անգամ աչքերը փառքի կամ հանձնարի վրա սենուած, ամբողջ ազգերը քարացման մէջ են ընկել, Ալսպէս, այս դարի սկզբին բոլորովին քարացած և մի և նոյն ժամանակ վերին աստիճանի լուղման հասած, պատերազմասէր Ֆրանսիան հպատակում էր իր կայսերական հիպեսոսիզորի (Նապոլէոնի) մի շարժումն և հրաշքներ անում: Այս երեսովը զարձնում է մեր ուշքը անցեալի խորքերը և հասկանալի է անում մեզ այն մեծ կիսաառասպեկտական անձնաւորութիւնների գորութիւնը, որոնք ալսպիսի ազգեցութիւնն են ունեցել իրանց ժամանակակիցների վրա, և որոնց ազգերը դնում են իրանց պատմութեան սկզբին» (Տարդ):

Պատմութեան մէջ «մեծ» մականունը կրում են այն մարդիկ, որոնք հիպեսել են ամբողջ ազգեր և իրանց ետեսից քարշել: Կաէ արդեօք մի պատմական շրջան, որի մէջ ալսպիսի վիթխարի անձնաւուրութիւններ չլինէին? Կրօնական շարժութիւնը, քաղաքական, հասարակական լիղափոխութիւններ, պատմութեան բոլոր խոշոր դէպքերը կատարւել են այս օրէնքի զօրութիւնով: Մարդիկ ոչխարների նման հետեւել են իրանց հմայողին, զուրկ կամքից, միմիան հպատակման և նմանողութեան անձնաւուր եղած!

Արևելեան բռնակալների սոսկութիւնները չեն վրդովում անդամ հիպնոսած ժողովրդին։ Միլիոնաւոր մարդիկ հետեւում են մի Զինկիզ խանի, մի Ազէքսանզր Մակեդոնացու, մի Նապոլէոնի, պատրաստ ամեն րոպէ իրանց կեանքը զոհելու լաճախ անչափ նպատակի համար...

Բայց մարդիկ չեն միայն, որ հետեւումն և ընդօրինակումն են ներշնչում իրանց շշապատողներին, — մի որ և է գործ, մի որ և է գաղափար կարող է նոյնակու լափշակման հասցնել ամրողջ աղղեր, Շեքսպիրի դրամանները, Ռաֆայէլի նկարները, Քեթհոովինի երաժշտութիւնը ապշութեան մէջ են քցել մարդկութիւնը ամբողջ գարերով։ Ամբողջ միջին զարու գիտութիւնը կայանում էր Արխատոտէլի և մի քանիշուրից հին փիլիսոփաների գրւածքներին բացատրութիւններ տալու մէջ!... Եւ քանի քանի հազարներով են զիղել մարդկութեան գլխում այն սնապաշտութիւնները, այն անմիտ դաւանանքները, որոնք խորհող մարդու մէջ միան ծիծաղ կարող են լարուցանել!...

« Բայց ինչ հարկ կալ պատմութիւնը քրքրել? բացականչում է Տարդը. — նաևնք մեր շուրջը Մէկը շփոթւում է հասարակութեան մէջ, կամ մի ուրիշի հաջեացքից և խնկարծ նրա մտքերը խառնում են, նրա լեզուն ու ձեռները կապ են ընկնում և նրա ամբողջ մարմինը մի օտարութի քայլքայման մէջ է ընկնում։ Գուցէ համաձայնն ինձ հետ, եթէ ասենք, որ այս դրութիւնը, որի մէջ մենք ամենքս երբ և իցէ գտնուել ենք որոշեալ հասակում, սաստիկ նման է սոնամբուլիս (լուսնոտութեան) դրութեանը։ Բայց երբորակ վախը անցնում է և այդ անձն իրան միանգամայն վրասի է զգում, այդ նշանակում է արդեօք, թէ նա հիպնոսից դուրս է եկել? Ամեննենոչ ոչ, Մի հասարակութեան մէջ իրան ազատ զգալ — այդ նշանակում է տիրապետող տրամադրութեանը լարմարել, խօսել նրա բնորոշ լեզուի, ընդօրինակել ներկայ եղողների լաւ ու վատ ձևերը և, վերջապէս, անարգել ամէնասուր լինել բազմահասակ ներգործութիւնների լասանքներին, որոնք շրջապատում են մեղ, որոնց հետ մենք ի զուր կուսմ էինք առաջ, և այն աստիճան հլու դառնալ այս ամենին, որ մարդ կորցնի իր գիտութիւնը զգալու ընդունակութիւնն անդամու։ Եւ այս է խակապէս այն զարմանալի կուրութեան պատճառը, որ մարդիկ կարծում են, թէ իրանց գործերը կամաւոր են և ինքնուրազն։ Բայց ախօր խօսել ազատ կամքի, ինքնուրոգնութեան մասին այլ ես անկարելի է։ Մարդս ազատ չէ, նա հլու գերի է շրջապատող հանգամանքներին և լաճախ նա լախտակման մէջ կատարում է այնպիսի բաներ, որոնց, եթէ ինքնուրոզն լինէր, չէր կարող կատարել։

Մի լաւոնի միտք, մի ձգտում, լուղմունք կարող է լանկարծ մէ-
կեց անցնել մի քանի ուրիշ մարդկանց և, այսպէս ասած, վարակել
նրանց և այս ժամանակ առաջ է զալիս հաւաքական նմանողու-
թիւն:

Այսպիսով բացատրում են այն դէպքերը, որոնք լաւոնի են զիտու-
թեան մէջ ներգալին վարակումն անունով, և որոնցից ամենա-
նշանաւորները մենք առաջ բերեցինք անցեալ գլխի մէջ:

Հիւանդական ընդօրինակման մի շարք զարմանալի դէպքեր արձա-
նագրում են մեզ հեղինակները: Մենք աղջկները կախում են մէկը միւ-
սից մոտու: Յատոնի ֆրանսիական հոգեդէտ Լըգրան Դիւսուլը առաջինը
նկարագրեց այն զարմանալի վարակումն, որի չնորով երկու մարդի մի
տեսակ ներդափն հիւանդութեան տէր են զառնում: Մէկը միանդաման
իշխում է միւսի վրա, որը կապիկի նման օրինակում է առաջինին: Այս
հիւանդութիւնը լաւոնի է զուգական խելագարութիւն անունով (folie à
deux): Այս զուգական խելացնորութիւնը կարող է զառնալ երեք, չորս և
հինգ մարդի խելացնորութիւն: Խնաւլիդիների (հին զինուոերնի անկե-
լանոցը) մի զուս կար, որից կախուում էին հին զինուորներ: Մի ան-
դիւսցի իրան վեկուսիւալի հրաբուխի անողունդն է քցում, և շատ ու-
րիշներ հետեւում են նրան: Իր լողւածի մէջ Տոկարսկին պատմում է, թէ
նոր կալեգոնիա աքսորած տաժանակիրների մէջ ինքնատանջման սար-
սափելի համաճարակ երեսց: — շատերը փորում էին իրանց աչքերը, միւս
ները կտրում էին իրանց թեսերը և ոսները և լողանան էին անում իրանց
անդամները:

Վերջին տարիներս ամբողջ աշխարհ սարսափի մէջ քցող անար-
իխուանները, իրանց սոսկալի ոճիրներով, անտարակուս նոյն ձևի հիպնոսա-
կան և նմանողութեան օրէնքների մի խոշոր հիւանդական արտակարու-
թիւն են:

Ահա հիւանդական նմանողութեան մի քանի դէպքեր, բայց որչափ
բազմակողմանի են հաւաքական ընդօրինակման առօրեալ դէպքերը և որ-
չափ կարեոր է նրանց ուսումնասիրութիւնը:

Ֆրանսիացի լաւոնի մարդարան Տարդը ուսումնասիրում է այս խըն-
դիրը մի նշանաւոր, արդէն զասական դառած, աշխատութեան մէջ¹⁾,
որին կը հետեւենք մենք:

Մինչեւ այժմ մենք ենթադրեցինք, թէ մարդիկ ձգտում են նմանել
մի անհատի, ընդօրինակելով նրա ձեսերը, տարածը, մաքերը, չակումները
և ալլն: Այսպիսի մարդիկ արտակարդ անձնաւորութիւններ են լինում: —
Հերոսներ, մեծ դահակալներ, քարոզիչներ, ինդափոխիչներ և ալլն: Այս

¹⁾ Les lois de l'imitation. Tardé.

դէպքերում ամբողջ ազգեր ապշութեան մէջ են ընկնում և կուրացած հետեւմ են մի որ և է զօրեղ անհատի այս շարժումներին և ալդ օրինակում արձանագրում է պատմութեան էջերում խոչոր գծերով:

Բայց այս խոչոր երեսովներով չի սպառւում ընդօրինակումն մարդկանց մէջ:

Ընդորին ակումն ընդհանուր է և փոխադարձ. այս է չարդի հասարակական մեղմ և կանոնաւոր գարգացման օրէնքը:

Մարդիկ իրանց նմանողական բնութեան չնորհով լավշտակում են և հետեւմ ոչ միայն վերև լիշտ մեծ հերոսներին և հանճարներին, այլ և անխտիր բոլոր իրանց շրջապատող անհասներին.

«Մեր իրաքանչիւրիս ամեն մի գործողութիւնը ներշնչում է՝ մեզ շրջապատողներին համարեա անդիմադրելի մի ձգտումն՝ անպատճառ նման ել մեզ, խոկ եթէ երեմն սրանք դիմադրում են ալդ ցանկութեանը, զրա պատճառն այն է, որ նրանց մէջ չարում են առաջ սուացած հակառակ և ներշնչումները, որոնք և արգելք են դառնում նոր ներշնչման իրագործմանը» (Տարդ):

Ակուակս, հասարակութեան իրաքանչիւր անդամ ներշնչող կամ օրինակ է դառնում իր որ և է լատոկութիւնն չնորհով միւս անդամներին, և փոխարէնաբար ինքը ներշնչովից գառնում է ներշնչող, ապինքն՝ նաև ևս ուրիշներին է ընդօրինակում: Այս է այն փոխադարձ ընդորին ակման օրէնքը, որը և կազմում է հասարակական կեանքի մեղմ և կանոնաւոր գարգացման գործոնը:

Եւ այս տրիտուր ընդօրինակումն կատարում է չնորհով այս տարբերութիւնների, որոնք միշտ գոլութիւն ունեն միենոն հասարակութեան բոլոր անդամների մէջ: Անկարելի է գտնել երկու անձնաւորութիւնն անգամ, որոնք մըանգաման նման լինէին միմեանց, թէ ֆիզիկապէս, թէ բարուապէս, թէ մուաւրապէս: Եւ այս հասկանալի է, քանի որ մարդու ֆիզիկական և բարուական կազմութիւնը հետեանքն է ոչ միայն նրա դաստիարակութեան, նրա ուսման, այլ և նրա ժառանգականութեան: Ամենաշնչին աարբերութիւնը կրթութեան մէջ, ամենաաննշան, երբեմն աննշմարելի զանազանութիւնը կեանքի պարմանների մէջ, տարբերութիւնն է մատնում նաև երկու, առեւբևս միանգաման համանուման, անձերի մէջ: Ահա այս թուլ զանազանութիւնն է, որը հասկանալի է դարձնում մեղ փոխադարձ օրին ակման գոլութիւնը: Նոր գիտութիւնները, նոր գիւտերը, նոր գաղափարները, նոր տարազը, նոր ձեերը և այն զարմանալի հեշտութիւնով են տարածում և ժողովուրդը շատ արագ ընտելանում է նրանց: Եւ այս կատարւում է այն օրէնքի հիման վրա, որը նկատում է արւետական հիպնոտիսմի մէջ: Այս օրէնքը հետեւալի է. — որքան լաճակ հիպնոսի մէջ գցենք մի մարդու, այնքան աւելի կը հեշտանաէ նրան քնեց-

Նելը և ներշնչումներ անելը. Մենք գիտենք այս աշխատութեան պռաջի մասից, որ մարդիկ լաճախակի հիպնոտիմներից լետսէ այն աստիճան թուլա-նում են, որ բաւական է ասել նրանց «ֆնիր»—և նա ամսմիջապէս քնարածութեան մէջ կ'ընկնի և ներշնչումներ կ'ընդունի. Նոյնը կատարում է և քաղաքակիրթ հասարակութեան մէջ, նրա անդամները, իրանց ծննդեան օրից անդադար ներշնչման մէջ լինելով, այն աստիճան ընտելանում ևն ներշնչում ընդունելու և օրինակելու, որ նորութիւնների նմանողութիւնը կատարում է ալսապէս ասած ինքն իրան:

Սական մի պարման կալ, որը ակներև է անում Տարդը և որի բար-ցագրութիւնը նոյնպէս տալիս է մեզ արևեստական հիպնոտիամի ուսումնա-սիրութիւնը, այն է, որ հասարակութեան մէջ տարտծւում են մի միաւն այն նորութիւնները, որոնք չեն հակա-սում նրա գաղափարներին, այլ համապատասխանում են նրան: Նոյնը նկատում է և արևեստական հիպնոսի մէջ. —մի ֆակտ, որը ապացուցեցին Նանսիի գիտնականները, եթէ մի սոնամբովի այն. պիսի ներշնչումն անէք, որը հակառակ է նրա կրթութեանը կամ նրա բարուական գաղափարներին, զուք մի սարսափելի, ներքին պատերազմ կը լարուցանէք նրա մէջ, —պատերազմ ձեր պահանջը կատարելու և նրա բարուական գաղափարների մէջ, և նա չի կատարի ձեր ներշնչումն. —Հա-սարակական հիպնոսի մէջ այս աւելի պարզ է:

Օրինակ, անկարելի կը լինի ընդունել տալ մեր հասարակութեանը մարմոնների բազմակնութիւնը: Աթէ մի խելազար կառավարութիւն փա-կէր բոլոր զպրոցները և արդելէր ժողովրդին ուսում առնել—անտարա-կուս ալսպիսի մի տէրութիւն մի օր անգամ կարող չէր զոցութիւն ունե. Նալ, Այն ինչ, երբ հասարակութիւնը հասունացած է մի նորութեան հա-մար, մի կարծ միան բաւական է, որ հնի վոնտումն տեղի ունենալ:

Այսպէս են բացարւում խաչակրութեան ծագումն, ֆրանսիական մեծ լեզափութիւնը, մեծ ժողովրդական շարժումները և կառավարչական բա-րեփոխումները, որոշեալ քարոզութեան ըմբռնումն, որոնցով հիմնում են դաւանութիւններ, եկեղեցիներ, ընկերութիւններ և այլն և այլն:

«Պատմութիւնը, ասում է Տարդը, գիտնականների կարծիքով, մի ժողո-վածու է փառաւոր զործերի, իսկ մենք աւելի տրամադիր ենք ասե-լու. —այնպիսի զործերի, որոնք ամենից աւելի լաջողութիւն են ունեցել ապահնքն, այնպիսի նորութիւնների, որոնց ամենից շատ ընդօրինակել են. Մի որ և է մեծ լաջողութիւն ունեցող ֆակտ կարող է բոլորվին փա-ռաւոր չինել, —օրինակ, մի որ և է նոր բառ, որը մացնում է լեզու մէջ և տիրապետում է նրան—ոչ ոքի ուշադրութիւն չի գրաւում: Նոյնպէս ան. նկատելի է անցնում և մի նոր միտք կամ կրօնական մի նոր ծէս, որոնք կա-մաց-կամաց առանց աղմուկի մատում են ժողովրդի մէջ, և ամ մի արհեստի վերաբերեալ բարեփոխումն, որի հնարողը անալիս է մեռում:

Պատմութեան հայատակը պիտի լինի մարդկութեան հոգեբանութեան ուսումնասիրութիւնը պատմական ժամանակամիջոցում, ինչպէս նախա-պատմական շրջանների մարդկանց հոգեբանութիւնը ուսումնասիրելու հսմար մենք զիմում ենք հնագիտութեանը:

Այս հիման վրա պատմութեան համար ահագին նշանակութիւն են ստանում ժողովրդական լնագիտութիւնների, գահակալների, դիականների, մի խօսքով այն բայոր անձերի հոգեբանութեան ուսումնասիրութիւնը, որոնք մի նորութիւն են մտցրել մարդկութեան մէջ, սահագելով նրան հետեւ իրան:

Այն գերը, որը կատարում է պատմութիւնը պատմական ժամանակների համար, նոյնը անում է հնագիտութիւնը նախապատմական շրջանների համար: Անօթների ծեները, զամբանների շնորհը, կամ գրամները ցուց են տալիս, թէ որ աստիճան ընկունելութիւն է զտել ալս ինչ նորութիւնը ալս ինչ երկրում, կամ քանի ժամանակից լնառ ալս ինչ նորութիւն մի երկրից անցել է մի ուրիշ երկիր: Եւ ալս դիտողութիւններից կարելի է մօտաւորապէս հետեւցնել որոշեալ երկիրների քաղաքակրթութեան և նրանց իրար վրա ունեցած փոխադարձ աղղեցութիւնների չափը:

Ահա նմանողութեան զլսաւոր օրէնքները, նմանողութիւնը հետեւնք է ներշնչման, ազինքն հիպնոսի: Նա ենթադրում է մի որ և է ատրբերութիւն օրինակի (ներշնչողի) և նմանողի (ներշնչողի) մէջ: Որքան միծ է ալս տարբերութիւնը, այնքան զժւար է օրինակում:

Հասարակական կեանքի մէջ ամեն մէկը համ ներշնչող է համ ներշնչող, ուրիշ խօսքերով՝ հասարակութեան իւրաքանչիւր անդամ օրինակ է առնում ուրիշներին այն բաները, որոնք իրան պակասաւոր են:

Այս է փոխագարձ նման ողութեան մնած օրէնքը, որով շարու նակ կատարում է մարդկանց հաւասարումն: Եւրոպական ազգերը այժմ համարեա բոլորը նոյն աստիճանի քաղաքակրթութեան են հասած: Ամեն տեղ նոյն գիտութիւնները, նոյն արհեստներն են տարածւած, նոյն քաղաքակրթութիւնը, նոյն ձեռները և նոյն տարագն է տիրում: Նոյն գաղափարները, նոյն ձգտումները, նոյն իդէալներն ունին համարեա բոլոր այդ ազգերը: Այս մի ահազին հասարակութիւն է, որը տարիների ընթացքում լածախ հազորդակցելով միմեանց հետ, ընդորլնակել են միմեանցից այն շատկութիւնները, որոնցից իրանք զուրկ են եղել տաշել են նոյն ձեր կրթութիւն, ոնւեւ են նոյն գաղափարներով և գնալով մօտեցել են միմեանց և նմանւել իրար: Ուր մնացին հին գարերի կիսավարենի աղգերը, որոնք նոյնպէս տարբեր էին միմեանցից իրանց հասարակական կենցա-

դավարութիւնով. Ուր են միջնադարեան հարիւրաւոր տարբեր ցեղերը և հասարակութիւնները, որոնցից իւրաքանչիւրը իր սեփական կեանքն ունէր. Մանր ազգութիւնները կորցրին իրանց առանձնակատկութիւնները քաղաքակրթական դրօշակի ներքու, ընդօրինակման ոճով և, ով գիտէ, զուցէ անցնեն զարեր, և լուսաւորութիւնը անքան մօտեցնի մարդկանց, որ հասնի բանաստեղծական զարին, երբ պիտի կորչեն ազգութիւնների և կրօնի խորութիւնները և ամբողջ մարդկութիւնը ձուլի մի վիթխարի ընտանիքի մէջ!...

Սակայն, որքան էլ մօտենան միմեանց մարդիկ, որքան էլ հաւասարւն նրանց բարուական և մտաւոր աշխարհները, Կըրէք նրանք չեն միակերպւիլ և միշտ կը մնայ նրանց մէջ այն փրկարար տարբերութիւնը, ի հարկէ շատ նւազած, առանց որի անկարելի է օրինակումն և հետեւաքար առաջադիմութիւնը, որովհետև այն ժամանակ կը կորչի իդէալը և կը դադարի մրցումն:

Կըրէք մարդիկ չեն միակերպւիլ, որովհետև բացի կրթութիւնը, բացի քաղաքակրթութիւնը, կամ նաև հողի, կլիմավի ազդեցութիւնը, տարբեր է կացուցանում մարդկանց նաև ժառանդականութեան մեծ օրէնքը, որը իր ինքնուրուցնութեան կնիքը միշտ դրոշմած է պահում բիւրաւոր սերտնդների ճակատին:

(Շալունակելի)

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

ՕՐ. Ա. ՇՏԵԽԵԼԻ

Թարգմ. ՅՈՎԱ. ՄԵԴՆԻԿԵՍՆԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

Սակայն մեր գրագիտութեան դպրոցների կեանքը և գործունէութիւնը պարզելու համար առնելից առաջ պէտք է մի քանի խօսք առել նրա ուսուցիչների մասին։ Առաջին ուսուցիչները բոլորն էլ իմ Նաբլոնակի դպրոցի սաներն էին։ Հիմա արդէն նրանք բաւականութիւն չեն տալիս և պակասորդը լրացւում է ուրիշ զեմստաւգին և եկեղեց, ծխական դպրոցների աշակերտներով, աճն պայմանով միայն, որ վարժապետ լինելու ցանկացող պատանիները պարուական են մի փոքր ժամանակ լաճախել Նաբլոնսկի դպրոցը, մասսամբ իրանց գիտութիւնը լրացնելու և մէկ էլ զլխաւորապէս նրա համար, որ ես կարողանամ նրանց բնաւորութեան և ընդունակութիւնների մասին գաղափար կազմել։ Ուսուցիչների լաւ պատրաստութիւնը, կամ, աւելի պարզ ասած, լաւ ուսուցչական դպրոցը մի շատ անհրաժեշտ կարիք է, բայց այդ բանին հասնելու դեռ հնարաւորութիւն չկար։ Դպրոցներիս թւի բազմանալու օրից, այսինքն ներկայ ուսումնական տարւակ աշնանից (18⁹³/₉₄) ես խնդրեցի մեր գաւառական զեմստաւգի ժողովին, որ միջոցներ լատկացնեն իմ Նաբլոնսկի զեմստաւգին դպրոցում, բացի ինձնից մի ուրիշ վարժուհի նշանակելու. ժողովը համաձանութիւն տուց, բայց վարժապետացու աշակերտներին պատրաստելու համար առանձին ուսուցիչ հրաւիրելու ես միջոց չունիմ և ինքու իւ բոլոր ժամանակս բացառապէս նրանց նւիրել չեմ կարող։ Որովհետեւ ես

¹⁾ Տես «Մուլճ» № 9.

աշխատում եմ գոնէ երկու շաբթէնը մի ամսամ լինել ամեն մի գրագիտութեան դպրոցում, ուստի և այդ երկու շաբթւակ մէջ 5 կամ 6 ուսումնական օր ամբողջովին գնում է 15 հեռաւոր զպրոցների ացելութեան համար, իսկ մնացած 7 կամ 6 ուսումնական օրերին ես միշտ երեկոեան դէմ տանից գնում եմ մօտակաէ զպրոցներից որ և է երկուսին ացելութեան, Առաւուները մինչև 2—3 ժամը պարապում եմ միծ աշակերտների հետ. իմ բացակալութեան ժամանակ նրանց հետ պարապում է նոյնպէս և Ասքլոնսկի դպրոցի նոր վարժուհին, բայց նա էլ երկար ժամանակ չէ կարող դրանց նւիրել, Սակայն անուամենախնիւ կարելի էր գոհացուցիչ հետևանքների համեմ, եթէ ապագաի վարժապետացուները աւելի երկար մնային զպրոցում, բայց նրանք ազգտեղ մի հաստատուն տեղ չունին. Սովորում և քնում են այն սենեեկում, ուր ցերեկը սովորում են Նաբլոնսկի դպրոցի բոլոր 50—60 աշակերտները, սնունդն էլ մի քանիսը Եաբլոնսկի գիւղացիներից են ստանում, մնացածներն էլ կերակրում են հէնց դպրոցում Աստուծոյ տւածից՝ տանից վերցրած կարկանդակներով և լաւաշով: Ուստի և Նաբլոնսկի դպրոցում մնայր պահանջում է նրանցից կամ սնունդի ու գիշերելու համար ծախսք, և կամ զրկանք, և այն էլ այն պիսի զրկանք, որ մինչև իսկ գիւղացի երեխաների համար բաւականին զգալի է: Ազգպիսով նրանց երկար պահել դպրոցում չի կարելի: Բացի դրանից հետզհետէ սուանողների պահանջը աւելի և աւելի շատանում է: Դրա համար հէնց որ լրանում է պատանու 14—15 տարին և ես համոգում եմ, որ նա առհասարակ պիտանի է այդ գործին՝ մի ձմեռ կամ երեմն էլ միադն երկու-երեք ամիս պատրաստելուց լետու պաշտօնի ևմ կարգում նրան Նորաբաց դպրոցում նա սկիզբը ալլուրեն ու ալզօթքներ է սովորեցնում, ուստի և նրա ջահելութիւնը և անպատրաստութիւնը շատ արգելք չեն լինում զործին: Եւ որպէս զի երիտասարդ ուսուցիչները որքան կարելի է աւելի լաւ կատարեն իրանց ասպագաէ պարտականութիւն: Ները, նորից հաւաքում եմ նրանց մի վեց շաբթաթով իմ զպրոցը զարնանը զպրոցներում զբազմունքները վերջանալուց լետու և աշնանք՝ սկսւելուց առաջ, երբ դեռ տղաները համեմատաբար աւելի աղատ են լինում զաշտալին աշխատանքից: իսկ այդ աշխատանքներում նրանք չնախելով իրանց ուսուցչական կոշման, առաջւել նման եռանուղուն մասնակցութիւն են ցոյց տալիս: Այդ ժամանակ ինձ մօտ սովորում են զեռ բալորովին ուսուցիչ չեղածներն էլ, մի տարի ուսուցչութիւն արածներն էլ և արդէն 2—3 տարւակ ուսուցիչներն էլ: Դրանք բոլորը ևս 14—15—18—20 տարեկան ջահել պատանիներ են, որոնց թիւը, օրինակ, անցնալ աշնանը ինձ մօտ քսան ու հինգ էր: Սիրում եմ ես այդ արագ սլացող վեց շաբաթների մտաւոր եռանուղուն զբազմունքները արգէն աճող ու հասունացող երիտասարդ ովտերի հետ: Դեռ շատ հեռու չենք գնացել, շատ ջանք

պէտք է զեռ թափինք ուղղագրութեան, կէտադրութեան նշանների, կտպաւոր նախադասութիւնների և թւաբանական խնդիրների տրամաբանական բացաղրութեան վրա: Մինչև անդամ և այն ընդհանուր զազափարները, որոնցով ենք ոգեսրում ենք — զէսի մարդիկ տածած քրիստոնէական սիրու և զէսի եկեղեցին ու տէրութիւնն ունեցած պարտականութիւնների գաղափարները ներկալացնում են մեր աչքին զեռ միանի իրանց ամենասառորին և տարրական շրջանում: բայց տեսնելով, թէ ինչ քանի քիչ բան ենք արել, մենք ևս առաւել համոզում ենք, որ անձրաժեշտ է առաջ շարժւել և վրաւի զգալի կերպով հաւաջապիմում ենք ազդ արագալաց վեց շաբաթների ընթացքում: Շատ լաւ է լինում ազդ ժամանակը, օրերը երկար, ևս դնալու ոչ մի տեղ չունիմ, խակ մեր գասարանը ընդարձակ ու խաղաղ պատուհանները բաց են և նրանց միջից լայն հոսանքներով ներս է թափում թարմ ողը, արեգակի լուսը, աքաղաղների ծուղրուղուն և թուչունների ճուղինը, բոլոր գոյները, ձաւները և բուրմունքը, մի խօսքով գիւղական բնութեան բոլոր անդորր գեղեցկութիւնը և զօրեղ կեանքը: Եւ խոկոն զգում ես, որ ազդ մատաղ պատահները, որ զբաղւած են սլաւերէնի թարգմանութեամբ կամ ռուսաց պատմութեամբ, նոյն բնութեան անրաժան մասն են կազմում, բայց նրանք աւելի թանգ են և աւելի լաւ, քան արեգակն ու երկինքը, քան կտնաչը և թուչունների ճուղինը, որովհետեւ նրանք կոչւած են մի ուրիշ աւելի վեհ հոգեկան զեղեցկութիւն մացնելու ազդ անթիւ զեղեցկութիւններով անտարբերութեամբ փալող թագաւորութեան մէջ: Բայց վեց շաբաթները անցնում են արագութեամբ, ոժւար է միանգամից պարապել տարբեր հասակի և տարբեր գիտութիւնների տէր բազմաթիւ աշակերտների հետ: Ու սումնական պիտուքները մեզ մօտ քիչ են, և ինքս էլ լաւ ծանօթ չեմ դասաւութեան լաւագոն մեթոդների հետ, դրա համար էլ վերջ ի վերջու խմ ուսուցչացուներս որքան էլ շինի դարձեալ մնում են բաւականին վատ պատրաստած: Եւ եթէ նրանց մեծամասնութիւնը այնուամենազնիւ գոհա: յուցիչ կերպով է կատարում իւր առաքելութիւնը, այդ էլ պէտք է վերագրել միան նրանց անձնական չատկութիւններին: Այն ուսուցիչները, որոնք գիւղական ծագումից չեն, չաճախ մտնում են ուսուցչական պաշտօնի մէջ միան նրա համար, որովհետեւ ուրիշ ելք չունին, այն ինչ զիւղացի աղան այդ զէպքում բոլորովին ազատ է, նա ունի իւր սեփական տունը և աշխատանքը, ուսուցչական պաշտօնը նրան առանձին նիւթական օգուտներ չի տալիս և եթէ նա պատկանում է սովորական ցած ճա: չակի տէր բնաւորութիւնների թւին, հենց ինքը չի ցանկանաչ լանձն առնել այդ գործը: Բայց զրա փոխարէն ուսուցչութիւնը աւելի շատ հրապուրիչ կողմեր ունի այն քանքարաւոր պատահների համար, որոնք թէ հոգեպէս, թէ մտաւորապէս աւելի շատ են զարգացած որոնց գրաւում է

գործի մեծութիւնը, որոնք ցանկանում են ցոլց տալ իրանց և մէկ էլ այն առանձին տիպի համակրելի ուսւս երիտասարդների համար, որոնք թէ-պէտ լաճախ վազլոն ընդունակութիւնների տէր չեն, բայց զրա վոխա-րէն օժտւած են, խոր իդէալականութեամբ և հաղւագիւտ հոգեկան մաք-րութեամբ: Հին ժամանակները զրանք թողնում էին մեղսալից աշխարհը և հեռանում: վակւում վանական խցերի միանութեան մէջ կամ գեղեցիկ մալրանապատի ծոցում, իսկ աղժմ զրանք մասամբ իրանց համար տեղ են գտել գիւղական գպրոցներում: Եւ դրանց՝ գործին անշահատէր ու ջերմե-ռանդ վերաբերմունքը հաւարեա միշտ գեղեցիկ արդիւնք է բերում: Բայց դրանցից քիչ չեն ուսւաց հողի վրա հէնց նորնալիսի ընդունակի, բարի պատանիներ և աղջիկներ, որոնք դեռ չեն բժացել ու ազտոտել կեան-քի ճահճի մէջ և, եթէ նրանց տրւի հարկաւոր զարգացումը և մատչելի առարկել լուցւի առաջները, դրանք էլ շատ բարիք ու լուս կը ատիին իրանց բազմամիլիոն գիւղացի եղբարիններին: Վինչդեռ նրանք անց են կացնում ամբողջ կեանքը ոչինչ չարած և չաճախ կրելով ոչ ոքից չաս-կացւած և ոչնչով բաւականութիւն չստացած ձգտումների ծանր խաչը... Ի հարկէ մեր բոլոր 26 ուսուցիչները և 5 վարժուհիներն էլ միատեսակ պիտանի և ընդունակ չեն: Կան գպրոցներ, ուր վարժապետը շատ լաւ տղալ է և աշակերտներից սիրւած, բայց բաւականաչափ աշխատասիր է և քիչ սովորեցնում: Կան անպիսի գպրոցներ, ուր ուսուցիչը շատ է աշ-խատում և վատ էլ չի սովորեցնում, բայց իր ջահելութեան ու անփոր-ձութեան համար բաւական երկար ժամանակ հաւատ չեն ընծալում նրան, որը բաւական արգելք է լինում գործին: Վերջապիս կան և մի երրորդ տեսակի գպրոցներ, ուր ուսումը լաւ է չառաջ զնում: — լաւ կարդում են, լաւ գրում, մինչեւ անդամ ալֆերզների գովասանքին են արժանանում, բայց ուսուցչի և աշակերտների լարաբերութիւնները ստոն են: Վերջին-ներս քաշում են, չեն ձգտում գրքեր տանել տուն կարդալու, բայց և հէնց աղղիսի ուսումը, եթէ նա իր մէջ չի պարունակում ոչ մի զրակա-նապէս վատ տարր, կարող է թէ հասարակութեան և թէ առանձին ան-համեմատ աւելի օգտակար է, քան չների ետեից ընկնելը և զագանակա-խաղը (որք եւ դյանեք), որով, ինչոքս վկարում են գիւղացիները, զբագ-ւած են բացառապէս իրանց գպրոց չչաճախող մանուկները: Բայց կան և անպիսի գպրոցներ, որոնք չնակելով բնակարանի նեղութեան, պիտիք-ների քչութեան, ուսուցչի անպատճառատականութեան և ուսման ոկտելու նորութեան՝ մի տեսակ կեանք և լուս են մտցնում մեռելութեան ու խա-ւարի մէջ:

Սիրում եմ ես աւցելի աղղիսի գպրոցները: Եթէ զնում ես երե-կուեան դէմ, երբ արդէն աշակերտներին արձակել են, նրանք, լսելով

գանգակի ձախը, ալնպէս շտապով են ներս թափւում դպրոց, որ կարծես վախենում են մի ամենաչիշին վազրկեան կորցնելուց: Դու սպասում ես, մինչև որ նրանք բռորը կը հաւաքւեն և չես կարողանում պատասխանել: ազդ իրար ետեից տանից ներս թռչող պատասխների ուրախաձան բարեներին, չես կարողանում նաևել տիտրակները, որ անընդհատ նրանց ցուցեն տալիս, չես հասնում պատասխան տալու նրանց իրար ետեից տեղացող հարցերին, և որքան ազգափսի հարցեր են կիտել այս երկու շաբաթւակ իմ բացակալութեան միջոցին! նրանք որուում են իմ ասած իւրաքանչիւր մի խօսքը, որքան էլ չպատմեմ, խնդրում են էլի մի բան պատմել, խնդրում են հարցնել իրենցից, կարդալ հետները, հարցեր տալ երիտասարդ ուսուցիչը զւարթ ու աշխուժ, լուրջ զէմք ընդունած կառավարում է նրանց և նրա աշքերը փալում են ուրախութիւնից հէնց որ աշկերտը լաջող է պատասխանում: Խսկ տղաները բարեկամաբար պատում են նրա շուրջը և թէպէտ տշակերտաներից մի քանիսի համար հասակով նա աւելի շուտով ընկեր է, քան մեծ, բայց վերջիններս աճնուամենանիւ պատում են նրան Դրիգոր Ֆեոդորովիչ, կամ Խվան Խապոլխովիչ կանչելով: Գիւղացիները ևս դուան մօա հաւաքւած լսում են թէ իմ պատմածս և թէ աշակերտների պատասխանները: Նրանք գովում են բարութեամբ ժպտալով ուսուցին, և պատմում են ինչպէս տանը եռանդով են պարապում ու կարդում նրանց Միշաներն ու Պետեաները, թէ ինչպէս քաղցր է իրանց համար լսել նրանց պատմածը: Պատմում են, որ տղաչքը դեռ լուսը չբացւած են ուղենորուում դպրոց և մութն ընկնելուց նոր տուն ցրւում և որ նոյն խսկ փողոցում նրանք արդէն սկսել են իրանց զգալի կերպով աւելի լաւ պահել, քան առաջ: Այդ բոլորի շարքում լսում են և ալնպիսի պատմութիւններ, թէ ինչպէս թանգ ու վասէր առաջւան տարիները, նրանց միակ մատչելի ուսումը, ինչպէս առաջւան տիրացուները, պաշտօնաթող զինւորները ու ծերերը քարշ էին տալիս մազերից, և ահագին ժամանակի ընթացքում ոչինչ չէին սովորեցնուում: Պատմում էին նաև թէ ինչպէս նրանցից մէկը կամ միւսը անդրագէտ մնաց այն պատճառով, որ թագնւել էր տան չետեր, երբ կամեցել էին նրան ուսման տալ, խսկ ամֆմ շատ պատում է ազդ մասին:

Ալատեղ առիթ է լինում լսելու և շատ հետաքրքիր հակացքներ առհասարակ ուսման վրա: Երբեմն ծնազները դժգո՞ն են, որ իրանց երեխաները ամեն բան չեն սովորել հէնց առաջին տարւակ մէջ, երբեմն էլ գտնում են, որ հէնց առաջին տարին տղաները ալնպէս լաւ են սովորել ամեն բան, որ էլ սովորեցնել են պէտք չէ նրանց: Բայց ազդալիսի թիւրիմացութիւնը բացադրել շատ գժւար չէ, և մեծ մասամբ դիւղացիք համոզւում են, որ իրանց որդիլիքը երեք տարի պէտք է սովորեն և վերջացնեն մինչև քննութիւնները: Քննութիւնն տալուց չետու նրանցից շատերը

մտնում են Եաբլոնսկի դպրոցը և ազգային մերից եօթը հիմա արդէն ուսուցիչ են գրադիտութեան դպրոցներում։ Տարաբաղդաբար միշտ խիստ շուտով է վրա հասնում այն ժամանակը, երբ ես ստիպւած եմ լինում մի դպրոցից մի. ուր գնալ։ Պարապմունքները վերջանում են, բայց հրաժեշտից առաջ աշակերտները լաճախ առաջարկում են մի բան ելգել, մեծ մասամբ կրօնական երգերից, նույրը բարձրանում են տեղից, զանգրատը ու հարթ, խարտեաշ ու սե զլուխները շուռ են զալիս կիսով չափ դէպի ինձ, զարձնելով երեսները պատերին։ Մանկական նիշար ու լիքը, թուխ ու վարդագուն դէմքերը լրջանում են, արագ շարժում են խաչակնքող ձեռքերը։ Հնչում, հոսում, զողանջում են բարձր ու ցածր, մեղմ ու ուժգին ձախները, հետեւելով ուսուցչի մասակ և ներդաշնակութեանը ու չափը պահպանող ձախնին։ Երգւում են աղօթքների վաղեմի գեղեցիկ եղանակները, թէպէտ ոչ բոլորպին հմտութեամբ և ներդաշնակութեամբ, բայց աճնուամենանիւ քաղցրաձայն ու ողերութեամբ։ Հնչում են նախկին գեղեցիկ բառերը, և ուզում ես հաւաալ, որ այդ բովեներին դրանք լսողների և երգողների համար ոչ միան լոկ բառեր են, այլ բառեր, վի վսիմ ու գեղեցիկ նշանակութեամբ։ Խոնարհում են գեղջական զուկուները, բառում մտախո՞ն մի կէտի դիւզացու վառվուուն ու սուր աչքերը խոկ պառաւները զլուխները շարժելով հառաչում են և կամացուկ սրբում արտասունքները։ Բայց ոռուս մարդը ամաչկոտ է և զգուչ իւր զգացմունքները արտաչափելուու։ Մենք չենք թողնում շարունակելու այդ սրատաշարժ տեսարանը և միանդամից դառնում ենք իրական կեանքին։ Երգեցութիւնը վերջացած է, ժողովրդով սրեւած խրճիթ մէջ բարձրանում է իրարանցումը։ Տղաները մէկ մէկու վրաից անցնելով զուրս են հանում իրանց կիսամուշտակները, զլխարկները, վզնոցները, որպէս զի զուրս գան տեսնելու եմ գնալու Յւ ես, ինչպէս գալուս ուսուցչին եմ հարցնում՝ գոհէ արդեօք աշակերտներից, այնպէս էլ գնալուց առաջ հարցնում եմ աշակերտներին ու զլխարապէս նրանց ծնողներին՝ գոհ են արդեօք ուսուցչից։ Պատահում են, ի հարկէ, ինչպէս աշակերտների կողմից անհնազնութեան դէպքեր, բայց մեծ մասամբ ես երկու կողմից էլ իրարու վրա լաւ կարծիքներ եմ լսում։ Զգիտեմ ինչ ցուց կը տալ ապագաի փորձը, բայց կարծում եմ, գիւղացիների և պատանի ուսուցչի մէջ լաւ չարաբերութիւններ ստեղծելու զործին ի միջի ալոց նպաստում է և այն, որ վերջինս իւր բոլոր աշակերտների տանը հերթով նախաճաշ, ճաշ և ընթրիք է անում։ Աչղպիսի թափառական կեանքի պերսպեկտիվը սկզբում փոքր ինչ վախեցնում է նոր ուսուցչին, բայց գիւղացիք միշտ եռանդով համոզում են, որ նա քաշւելու ոչինչ չունի։ Չուտով կ'ընտելանաց իրանց, ինչպէս իւր հարցադատներին, որ իրանք մինչև անգամ ուրախ կը լինեն, եթէ նա իրանց աղբւ հացի

Հնորհակալութեան փոխարէն պարապէ իրանց երեխաների հետ, մի բան կարդաչ կամ պատմէ իրանց համար, Եւ փրափի, ալդ երեկոնքան զրոցները և ընթերցանութիւնները հաճուքով են ընդունուում ընտանիքներուում և ունին իրանց օգուտը, իսկ ուսուցիչն էլ ապահով միշտ բոլորովին գոհէ մնում իւր վիճակից, Ուսուցչին որքան կարելի է լաւ են կերակրում և զրա հետ լինելը մէկ էլ ան առաւելութիւնը ունի, որ նա աշխատում է ալդ ժամանակ ըստ կարելոյն բարձր պահել իւր նեղինակութիւնը ընտանիքներում, և ալդ, ինչպէս ամեն մի քավլը ուսուցչի գործունէութեան մէջ շատ լաւ աղքեցութիւն է ունենում զիւղացի պատանու զրա և լաճախ նրան բոլորովին բարեփոխում է: Ալդ ուսուցիչներից չառերը հասախն առնելով, գուցէ և չբաւականան իրանց ստացած համեստ վարձատրութեամբ և աշխատեն զրագիր դառնալ, իսկ որովհետեւ լաւ գաւառական գրագիրներ էլ մեզ շատ պէտք են, ուստի և ես ալդ դժբաղդութիւն չեմ համարի և չուտով եմ, որ դպրոցներում մէկ ուսուցչի տեղ միշտ կարելի է գոնել մի ուրիշը:

Աւելացնում ենք ի վերջու, որ զրագիտութեան պահանջի հետ աճում է մեղանում և գրքերի պահանջը, Նաբրոնսկի զպրոցը ունի արդէն մի փոքրիկ զրադարձն, որ կազմւած է զլիսաւորապէս Մոնկալի զրագիտութեան վաճառաժողովի ուղարկած գրքերից: Ալդ զրքերը իրար ձեռքից խելով են առնում նաբրոնսկի և մօտական զպրոցների աշակերտները և կարդում են կամ ձմեռան երեկոները իրանց տանեցիների ու ծանօթների շրջանում, և կամ ամառաւ տօն օրերին փողոցում լաճախ մի ահազին խումբ զիւղացիների առաջ, թէ այս, և թէ ան գրքերը, որ ուղարկել է ժամանակաւորապէս օգտևելու համար մեր՝ Նիժեգորոդի տարրական կըրթութեան նպաստող ընկերութիւնը, ես ուղարկում եմ և միւս զպրոցները: Եւ ինչպէս աղաջում են ալդ զպրոցի տղաները իրանց ուսուցչին, որ շուտով տաէ իրանց կարդալու հէնց նոր բերած թանկագին գրքովկը: Իսկ զրանք անքան քիչ են, որ մի զպրոց մի ամբողջ ամսաւ ընթացքում ստիպւած է բաւականանաւ մի որ և է տասնեակ բարակ րրոշիւրներով Մեր՝ Նիժեգորոդի ընկերութիւնը ուղարկում են նոցնպէս ծախու զրքեր, և էժանազին կոսէկանոց գրքերը միշտ շատ շուտով ծախ-ծխուում են: Հատ են ծախուում նոցնպէս աւետարաններ, սաղմոններ, ժամագրքեր, սրբազն պատմութիւններ և ալբենարաններ: Ալդ բոլորը դեռ կը ծախւէին անհամեմատ ամելի մեծ քանակութեամբ, ևթէ ես ժամանակ ունենալի աւելի ուշադրութեամբ զբաղւելու դրանցով և եթէ միշտ լինէին ձեռքիս տակ պահանջած գրքերը: Երբեմն էլ այնպէս է պատահում, որ մէկ գրքին երկու դնող է զտնւում և ստիպւած ես լինում վիճակ ձգել, որ ոչ ոքի իրաւունքը խախտած չլինես: Եւ պէտք է տեսնել, ինչպէս այն երեխան, որին ընկնում է գիրքը, զլիսապատառ վազում է տուն, փող է ուզում հօրից և լա-

փշտակւած վերադառնում է, տալով գրքի գինը՝ 30 կամ 50 կոպ.. Խնչպէս նա հիացած բռնում է երկու ձերռքով այդ՝ իր սեփական գիրքը, որը նրան ամբողջ 50 կոպէկ փող է նստել:

Եթե որ մտաբերում եմ գիւղում անցկացրած այս վերջին ուժ տարիները, լիշողութեանս մէջ զարձեալ շատ ու շատ զանազան տեսարաններ են առաջ գալիս, որովհետև շատ զեղեցիկ ու գւարճալի, անբացարելի ու սրտաշարժ էջեր է պարունակում այն անզուգական գիրքը, որը կարգում ես ձանօթանալով կեանքի հետ և որը լաւ է մանաւանդ նրանով որ մենք ինքներս կարող ենք նրա մէջ ամբողջ նոր էջեր ու տողեր մըտցնել: Ցիշում եմ, մի կիրակէ օր դպրոցում հաւաքւել էին մի քանի գիւղացիներ և ես նշանդ համար կարդացի խմ գրած մի փոքրիկ վեպիկը, Աւնկընդիրները լսում էին և գովում: Խակ ես ինքս սաստիկ ամաչում էի. որովհետև անկարող էի չնկատել այն հակապատկերը, որ առաջ էր եկել այդ առնական դէմքերի վրայ արտադատող հոգեկան ծարաւի և խմ առաջարկած թուլ, մանկական մնունդի մէջ: Չհմ կարող նոյնպէս չխոստովանել, որ խմ բոլոր դպրոցները միան շատ թուլ և չնչին չափով են բաւականութիւն տալիս ժողովրդի կրթութեան պահանջներին: Ես գոհ եմ նրանցով միայն նրա համար, որ, որքան էլ չինի, զարձեալ աւելի լաւ են, քան բոլորովին չեղած, ինչպէս և քաղցածին ոչինչ չտալուց աւելի լաւ է մի կտոր չոր հաց տալ: Ես զիտեմ, ի հարկէ, որ այդ բաւական չէ, զիտեմ, որ մարդկանց, որոնք ընդունակ են մտածելու և իրանց հարցեր տալու, մարդկանց, որոնք ձգտում են զէպի բարին, տէր են զեղարւեստական գեղեցիկ ձիրքերի և հակումների, ունին բոլոր բարի և վասմարդկացին լատկութիւնները, չի կարելի միայն ուսման չնչին փշտանքներ տալ և դրանով հանգուաանալ: Ոէտք է ըստ կարսողութեան գոհացում տալ նրանց հոգեկան ծարաւին, եթէ ոչ վերջինո խելագարութեան կը հաս, ցնի հողեապէս աւելի շատ օժտւածներին և կը հանդչի մնացածների մէջ: Խակ ուր այդ ծարաւը հանգած է, անտեղ ընդարձակ ասպարէղ ունին բոլոր անաւնական ինստիկտները, այնտեղ բալորի նպատակը միայն փողն է ու շահը և բոլորի երջանկութիւնը չւալու, հարբեցող կեանքը, Ալնակդ չկաչ ոչ մի սրբութիւն, չկաչ մարդկացին կեանք, և անտեղ են կատարում այն բոլոր արհաւիրքները, որոնց լիշողութիւնը միայն սարսափ է աղղում, այնքան նրանք սոնհանկանալի են ու վարի... Մինչդեռ ամեն մի մարդու տւած են հիմքեր մարդկացին բանական կեանքի համար, մարդկացին և ոչ անաւնապին, խակ մարդկացին կեսմաքով արդէն ապրում է այն երիտասարդ գիւղացին, որը կարզում է հողեոր գրքեր և ջանք է զնում հասկան ալ իր այդ գրքերի մէջ ենթադրած վսկեմ ու բարին: Մարդկացին կեանքով ապրում են դպրոցի այն աշակերտները, որոնք պատահելով մի որ և է ցինիկ ու մշտապէս գինեաներում քարշ եկող մարդու, աշխատում

հն ապացուցանել նրան, որ մարդը ունի հոգի և բարուական պարտականութիւններ և որ շարժաղը երկիրն է և ոչ արեց: Ապրում է մարդկագին կեանքով և ան պատաճին, որ երկիւղած շփոթմոնքով ցուց է տավուձեղ իր առաջին անկատ ու անմեղ բանաստեղծութիւնը—և' այն դաշտից վերադարձող բանւորները, որոնք կանգնած տիրոջ տան առաջ լսում են հիւրասենեակից եկող զաշնամուրի ձախնը. և ալդ ժամանակ նրանցից նոյն իսկ ամենալիմարի և ամենից կոպտի դէմքը տարօրինակ կերպով փոխւում է մեղմ, մտախոհ տրամադրութեան ազդեցութեան տակ:

Ապրում են և' այն տղաները, որոնք իրար վրայ են բարձրանուու տեսնելու հետաքրքիր պատկերը և ամբողջ ժամերու անշարժ նոսուում են որ լսեն ընթերցանութիւնը: Մարդկագին կեանքով ապրում է և' մշտապէս հարբած զիւղական տիրացւի երիտասարդ աղջիկը, որը, վերջացնելով տնալին մանր աշխատաճքները, զնում է ազգին և միանակ սկսում է երդել հիանալու իր ձախնի թարմ, արծաթի հնչիւններով, կամ հաւաքում է իր չուրջը ողեզմալ պատանիներին և պատմում նրանց իր հնարած պատմութիւնը—զրանք բոլորը ալդ բողէին ապրում են արդէն մարդկագին կեանքով: Եւ որպէս զի նրանց կեանքը մարդկագին լինի ոչ թէ միան մի քանի կարծատե վայրկեաններ, ալլ միշտ—պէտք է. որ ճշմարիտը, բարին ու գեղեցիկը նրանց մատչելի լինի որքան կարելի: Է աւելի մեծ ծաւալով:

Ինձ թւում է, որ չկատ մի ճշմարտութիւն, որ տեղ չգտնէր ժողովրդական կեանքի մէջ և մատչելի ըլինէր նրա հասկացողութեանը, եթէ միան զա արտակարտի ժողովրդական պարզ լեզով, կամ եթէ ժողովուրդը սովոր է հասկանալ զրականական լեզով: Ես համոզւած եմ, որ թէ պատմութեան մեծ դասերը, թէ բնութեան երեսովների ծահօթութիւնը և թէ գեղարւեստի արտադրութիւններից սուացած բաւականութիւնը բալորն էլ ազգում են գիւղական ժողովրդի վրայ և նրանց էլ պէտք են, նրանց համար էլ թանգ են նոյնքան, որքան և մեղ համար: Եւ ալդ բոլորը կարելի է տալ ժողովրդին, թէպէտ և ի հարկէ ոչ աճալուի անկատար զըստ րոցներով, ինչպէս են իմ փոքր առաջ նկարագրածներաւ Բալց անուամնանիւ ալդ դպրոցները աւելի ընդունակ աշակերտներին միջոց կըտան զրքերի օգնութեամբ շարունակելու իրանց կրթութիւնը, իսկ մնացածներին կը սովորեցնեն գրադիտութիւն և փոքր ի շատէ զաղափար կը տան աշխատաճքի, հայրենիքի և քրիստոնէութեան մասին: Զպէտք է ի հարկէ բաւականանալ սոսկ զբաղիտութեամբ և ալդ առաջին անորուշ զաղափարներով, պէտք է ձգտել զէպի անսահման վսեմը ու լաւագունը. Բալց գեռ հէնց ալդ էլ ես արդէն մի քալլ չառաջաղիմութիւն եմ համարում. թէ մեր Արդամասի և թէ մի քանի ուրիշ գաւառներում կանոնաւոր կազմակերպութիւններ շատ քիչ են և չի կարելի սպասել, որ նրանց թիւը

շուառվ մեծանայ մինչեւ ընդհանուրի կրթութեան անհրաժեշտ սահմանը, ուստի և ես շատ ցանկալի եմ համարում աւելացնել որքան կարելի է դրագիտութեան դպրոցների թիւը, կանդ չառնելով մինչուն ժամանակ դրա վրաչ, այլ միշտ ձգտելով նրանց բարձր տիպի դպրոցների փոխարի. նելու: Ես անկարող եմ մոռանալ, որ եթէ մենք սպասենք այն բոպէին, մինչեւ որ ամեն տեղ կը շինեն կանոնաւոր կազմակերպւած դպրոցներ— ամբողջ սերուղներ կ'աճեն, կը մեծանան և կը մեռնեն չզիտնալով թէ Բնչ է ուսումը, չսահնալով գէթ չնչին փշրանքներ այն գանձից, որը ուրիշները առատութեամբ վաճիռում են, կը մեռնեն, չդառնելով գոնէ մի թով նեցուկ իրանց գէպի լուսաւորութիւնն ունեցած ամենուաւ, իրաւա. ցի, զուտ մարդկացին ձգտումներին:

Քայլց ես մենակ եմ, և մինչեւ ալժմ ունեցած միջոցներովս արածիցս աւելին չեմ կարող անել Միջոցներ են պէտք նոր դպրոցներ բանալու համար, որովհետեւ նրանից ամեն մէկի վրաչ տարեկան մօտ 25 ո.ուրիշ փող եմ ծախսում: Հարկաւոր են կրթւած և գործին անճնւէր մարդիկ, որոնք բանակցութիւններ սկսէին գիւղացիների հետ և հսկէին ուրիշ տեղերի դպրոցներին աշնակէս, ինչպէս ես եմ հսկում մեր՝ մօտիկ շրջակաւ. քում: Հարկաւոր են նաև աւելի ընդարձակ միջոցներ և ժողովրդական կրթութեան գործին նվիրած գործիշներ գլխաւորապէս նրա համար, որ թափւեն ուսուցչական դպրոցները, և ունենանք բաւականաչափ թւով, ըստ կարելուն լաւ պատրաստած ուսուցիչներ: Միջոցներ են պէտք որ. քան կարելի է շատ ունենալ լաւ ուսումնական գրքեր և այնպիսի պատ. կերներ ու աշխարհագրական քարտէզներ, որոնք թէպէտ գեռ մեղ պէտք չեն, բաց իսկապէս անհրաժեշտ են: Միջոցներ են պէտք, որ իրադործւի մեր և աշակելտների ընդհանուր նվիրական իրգը—կազմւի մի լաւ, կատարեալ գիւղական գրադարան, որովհետեւ գրադիտութեան դպրոցների համեմա. տաբար քիչ սովորական և կրկին անկիրթ շրջանը ընկնելով, երիտասարդ ուսուցիչները կարդալու միջոցով և վերջնիս առաջարկած մտքերի փոխա. նակութեամբ կարող են պահպանել և շարունակել այն զարգացումը, այն բարդ ուղղութիւնը, որ ստացել են ուսուցչական դպրոցում: Աչք, այդ բո. լորի համար մեծ ուժեր և միջոցներ են պէտք և ես ներկազումն իմ առաջին պարտականութիւնս եմ համարում գտնել այդ ուժերը և միջոցները: Երբ որ իմ սեփական ուժերս և միջոցներս սկսեցին չբաւականացնել արդէն, ես զիմեցի մեր նահանգական զեմստուի ժողովին: և նա համաձայնւեց մի փոքրիկ օգնութիւն անել ինձ: Աչք բարձրաստիճան անձը, որի մասին ես վերջը վշեցի, նոնպէս խոստացել է ինձ իր օգնութիւնը: բայց ես լուս ունիմ և ուստ հասարակութեան օգնութեան վրաչ, որովհետեւ, բացի զբամական միջոցներից, նա կարող է ինձ աշխատակիցներ տալ: Չեմ կար. ծում որ ես անկարելի բան պահանջած լինեմ: ութ տարի սրանից առաջ

ես ի հարկէ չէի համարձակւում լուսալ, որ կ'ունենամ 30 դպրոց և 800 աշակերտ։ Բայց ալժմ ալդ իրականութիւն է։ Եթէ ոռու հասարակութիւնը ցանկանալ մասնակցել ալդ գործին, նա կը գտնէ իր մէջ ոչխեր և միջոյներ իմ արածից անհամեմատ աւելի մեծը և լաւագոյնը կատարելու։ Հակառակ դէպքում նա արժանի չի լինի ռուսաց մեծ ազգի ներկայացուցիչը լինելու Նթէ ալդ գործում ինձնից աւելի դիտցողներին։ իմ նախագծած ճանապարհը ուղիղ չի թվի, ալդ դէպքում ես նրանցից էլ ոպատում եմ ցուցումներ։ Թող ասեն։

ԿԱՊԻՏԱԼԻՍՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄԻՔԱՅԵԼ, ՅՈՎՀԵՆՆԵՍԵԱՆԻ

Ծանր ճգնաժամը, որ այսօր տիրում է քաղաքակիրթ ժողովրդների տնտեսական կեանքի մէջ, ամենուրեք լարել է մոքերը։ Լուծձել այդ ճգնաժամը, դէմ մասամբ թեթևացնել աշխատաւոր պրոլէտարի օրհասական վիճակը և այդպիսով խոյս տալ ապագայում սպառնացող ահաւոր փոթորկից, — այս է ահա ժամանակակից եւրոպայի ամենախոշոր հոգսերից մէկը։ Վաղուց է սակայն, որ գոյութիւն ունի սոցիալական խնդիրը. վաղուց է, որ եւրոպական սիետութիւնները ձգտում են հնարաւոր փոփոխութիւններ մտցնել բանւոր դասակարգի կացութեան մէջ։ Գերմանիան, որ համեմատաբար անքան ջահէլ է կապիտալիստական արդիւնաբերութեան տեսակէտից, տակաւին նիսմարկի օրով հրատարակեց մի շարք բարւոքումներ բանւոր պրոլետարիատի համար։ Հիմնեց կասսա բանւորներին նիւթապէս օժանդակելու հիւանդութեան և այլ դժբաղդ բոպէնների միջոցին։ Մի այլ կասսա ծերեր, հաշմանդամների և առհասարակ այն բոլորի համար, որոնք ընդմիշտ զուրկ էին աշխատելու կարողութիւնից։ Սակայն այդ կասսաները իրանց չնչին ոյժերով և տէրութեան շատ բարի ցանկութիւնները անկարող եղան դարմանելու պրոլետարի անթիւ վէրքերին և նա այսօր դեռ աւելի ևս ծանր բոպէններ է անցկացնում։

Խնդուսորիան հսկայական քայլեր է անում Գերմանիայում։ Դրան առաջոցց այն, որ ներկայումս Բերլին, Համբուրգ և ուրիշ մեծ քաղաքներում արդէն հազարներով են թւում աշխատազուրկ բանւորներին (sans travail)։ Վերին աստիճանի յուսահատական ձայ-

ներ են լսում ամեն կողմերից։ Մի բանի Փարբիկաներում անհնարին է գարձել աշխատելը։ «Աշխատանքի ժամանակամիջոցը չափազանց երկար, վարձատրութիւնը չափազանց սուղ, բանւորներին նեղում են, նեղում»—ահա ամենօրեւայ սովորական տեղեկութիւնները, որ կարգում ենք գեմոկրատական լրագիրներում։

Պահպանողական մամուլը ասես իսկի ոչինչ չի նկատում, իսուլ է նա դէսի այդ ձայները, բանւորի կրած տառապանքները նրան չեն հետաքրքրում։

Մարդ, մինչև ինքն անձամբ չի տեսնում, դժւարանում է հաւատալ նկարտգրութիւններին, հազարաւոր մարդիկ մաշում են իրանց կեանքը դժոխային աշխատանքի մէջ և գեռ վազ դերեզման են իշխում։ Հազարաւոր մանուկներ, տղա և աղջիկ Յ տարեկանից սկսած ամբողջ օր անընդհատ աշխատում են գործարանի սպանիչ մթնոլորդում, գեռ մանուկ հասակից չքանում ֆիզիքապէս և բարոյապէս...

Ոչ պակաս ցաւալի են գիւղօրայքից ստացած տեղեկութիւնները։ Այնտեղ խոշոր կարածատէրերը կատարում են իրանց պատմական գերը, կլանելով մանր սեփականատէրերին։ Գիւղացին երբ ծախեց իր կալւածների վերջին թիզ հողը, դառնում է արդէն «սեփականազուրկ» պրոլետար։ Այդ չարաբաստիկ մոմէնտից սկսած, նա ձեռքով ոտքով հողատէր աղացին է պառկանում, այդ աղացի կամացականութիւններին է ենթարկւած։ Ազան, որքան իրա քէնիը տալիս է, հարստահարում է զիւղացուն, անկուշա ազրուկի նման ծծում է նրա արիւնը, նրա արդար քրտինքը։

Իսկ կաթոլիկ կղերը այդ ժամանակ անզուսպ մոլեռանդութեամբ իր «սրբազն պարտքն» է կատարում։ Յանուն եկեղեցու, յանուն ազգի և հայրենիքի, հնագանզութիւն է քարոզում, հնազանդութիւն կեղեքիչներին... ծառեր է խօսում եկեղեցու ամբիոնից, բրոշիւրներ է հրատարակում, գիւղական տղէտ, նախապաշտրւած ժողովրդին անդադար յորդորում է։ «զգուշացէք ագիտատորներից, նոքա կործանել են ուզում ինչ որ սուրբ է, ինչ որ նւիրական է, խորշեցէք նրանցից—այդ ամթէիստներից», — նոքա ձեզ մոլորեցնում են... Եւ այդ տեսակ մոլեռանդ քարոզներով նոքան են, որ իրանց կողմից լցնում են խեղճ աշխատաւորի դառնութեան

բաժակը, նոքա են, որ կեղեքում են ամենուրեք և, կեղեքելով հանդերձ, քրիստոնէական «համբերողութիւն» են քարոզում... Այդ տեսակ քարոզներից խրախուսած, մեր կալւածատէր աղան ևս կրկնապատկում է իր հարստահարութիւնները...

Ահաւասիկ տխուր իրականութիւնը ժամանակակից Գերմանիայում:

Բայց միթէ միայն Գերմանիայում: Միթէ միայն այստեղ է երեան գալիս կապիտալի բանակալ տիրապետութիւնը:

Անցէք դէպի հարաւ, դէպի Խտալիա, նրա ջինջ, գեղարեսատական երկրների տակ տեսէք ի՞նչ քստմնելի զեղծումներ են կատարւում:

Զեր աշքերին ներկայանում է խոտական խղճուկ գիւղացին իր մի հատիկ եղով, կամ ջորիով, մի քանի այծերով, վերին աստիճանի թշւառ կացութեամբ: Նա հող չունի, կամ եթէ ունի, շուտով ծախու պիտի հանէ. իսկ նրա մի քանի կենդանիների համար նա շօշափելի հարկեր է վճարում¹⁾: Խեղճութիւնը կատարելապէս թագաւոր է այդ երկրում: Կըթութեան զործը յանձնուում է էլի աղաներին, ժողովուրդն աղքատ է, մեծ մասամբ զուրկ հողացին սեփականութիւնից, ծանրաբեռնաւծ անթիւ ուղղակի և անուղղակի հարկերով, իսկ վաշխառուները... համարձակ կարող են մրցել իրանց թիւրքիաբնակ կոլեգաների հետ²⁾:

Մի թոյլ գաղափար տալու համար Խտալիացի հարստահարութիւնների մասին, լնթերցող, անցնենք միասին սիրուն նէապոլի

¹⁾ Խտալիալում անասուններից հարկէ առնւում, նաևած թէ ի՞նչ անասուն է, ում է պատկանում: Օրինակ էշից, ջորիից, աչծից, որոնք գիւղացու անհրաժեշտ սեփականութիւն են կազմում, առնում են հարկ: Իսկ եղների համար հարկ չկաչ, որովհետեւ եղները մեծ մասս մբ կալւածատէրներին են պատկանում:

²⁾ Եթէ Տաճկաստանում կեանքի և ստացւածքի ապահովութիւն լինէր, թերես Խտալիան տնտեսապէս բարձր չէր գասւի Սուլթանների աշխարհից, լնթերցողը գուցէ զարմանալ այդ տարօրինակ համեմատութեան վրայ: Բայց ի՞նչ կ'առարկէք: Խտալիայի ներկաւ օրհաստական վիճակը ճակատաղրական արդիւնք է կապիտալիստական լնդուստրիալի: Իսկ աշորքազական ամենաազատամիտ բէժիմն անդամ անզօր է հանդիսանում կապիտալի աւերումներին: ուահման գնելու:

շրջակաները։ Տեսէք, հազարաւոր մանուկներ աշխատում են այն-
տեղ յուլիսեան տօթերին, արևի կիզող հառագայթների տակ։ Չալ-
թուկի արտերում «քաղնան» են անում։ Կորացած ամբողջ 12 ժամ
(12 ժամ—սա վակտ է), կորացած արիւն քրտինք թափելով աշ-
խատում են արտատէր կապիտալիստի համար։ Վերին աստիճանի
ծանր և զգւելի մի աշխատանք է, որ կատարում են այդ թշւառ-
ները գարշահոտ, որդնառատ հողի մէջ։ Վերին աստիճանի ծանր է
նամանաւանդ այն պատճառով, որ աշխատանքը կատարում է ամե-
նախիստ հսկողութեան ներքոյ։ Հենց որ մէկը տարաբազդ մանուկ-
ներից վեր բարձրացաւ փոքր ինչ շունչ առնելու համար... Abasso! (կորացիր) գոռում է անխիզճ վերակացուն, և լուս, անտրտունջ
մանուկը դեանին է խոնարհեցնում գլուխը...

Սոքա այնպիսի սարսափներ են, որոնց առջեւ կանգ է առնում
գրիչը... Այդ աշխատաւոր մանուկները մեծ մասամբ 7—8 տարե-
կան են։ Նոքա զպրոցի աշակերտներ են, որոնք ամառաց արձա-
կուրդներին մօտիկ և հեռաւոր քաղաքներից այսուղ են եկել։ Կա-
պիտալիստը գնել է նրանց երեք ամիս ժամանակով, օրէնը իւրա-
քանչիւրին 25 սանտիմ (մօտ 9 կոպէկ) վճարով։ Եւ ծնողները
համաձայնել են, իմանալով, որ տարտարոս են ուղարկում իրանց
սիրելի զաւակներին... Հացի խնդիրը ի՞նչ տեսակ գառնութիւնների
հետ չի հաշտեցնում մարդուս...»

Ահա նա,—մօր սիրելի զաւակը—գրեթէ չոքէչոք քիթը իւրած
գարշահոտութիւնների մէջ քաղնանում է շալթուկի (բրնձի) արտը...
Արդէն մանուկ հասակից դատապարտւած սոսկալի տանջանքների...
Որքան երկար ժամեր դառնագին աշխատանքի, որքան լուռ ար-
ցունքներ, խուլ հեծեծանքներ... Գէթ քիչ լիներ բանելու Շամս-
նակը, գէթ առատ վարձատրէին, գէթ հանգիստ տային... Ահա
նա զգուշութեամբ վեր բարձրացրեց գլուխը, մի քանի րոպէ լուռ
հիւշման մէջ աչք է ածում շրջակայքը։ Նրա երեակայութիւնը
մի ակնթարթում սլացաւ լեռների, ձորերի վրայով... Նա այժմ
իւր մօր մօտ է... Փաղցը համբոյրներ, մայրական գգւանք... Նա
աղիողորմ թախանձում է մօրը՝ այլ ևս իրան չծախէ կապիտալիս-
տին... Abasso!—հնչւում է յանկարծ անագորոյն ձայնը և մա-
նուկը, մի ցնցում գործելով, լոիկ դառնում է իւր աշխատանքին...»

Անցէք դէպի Անգլիա—խոշոր ինդուստրիայի այդ կլասիքական վայրը։ Տեսարանը աւելի քան ցաւալի է։ Դաշտերը, երբեմն շէն ու առառ զիւղօրայքն այսօր աւազ դատարկել են բնակիչներից։ Եթէ Գերմանիայում, Ֆրանսիայում զիւղացիք գէթ ունին մանր հողաբաժիններ, անգլիական զիւղացին դրանից էլ զուրկ է։ Առզը—ահա հողատերը։ Միջնադարեան աւատականութեան հզօր ներկայացուցիչ՝ ծծում է նա երկրագործ աշխատաւորի ոյժը։ Երկրագործական նորամուս մեքենաները մի կողմից, լորդի ծաշրայեղ հարստահարութիւնը միւս կողմից ստիպում են զիւղացուն թողնել դաշտերը, հեռանալ քաղաք՝ գործարանական աշխարհը... Սակայն լորդի թունաւոր ճիրաններից ազատւելով, իսեղճ զիւղացին յանախ աւելի զժւարին վիճակի մէջ է յայտնուում։ Նրան տեղ չեն տալիս փարբիկաններում, ամենուրեք բռնւած են տեղերը... Այդպիսով օրի վրայ ստարանում է «աշխատազուրկ» բանուորների թիւը, որոնք տասնեակ հազարներով այսօր վիստում են Լոնդոնի, Քիրմինգամի և այլ արդիւնաշահ կենտրոնների անկիւններում... Բայց և այնպէս զիւղացիների հոսանքը դէպի քաղաքները անընդհատ շարունակում է։ Վերջին տարիններում այդ հոսանքն անասելի ծաւալ է առել։ Ամբողջ զիւղեր ամացի, անմարդաբնակ են դարձել¹⁾։ Երկրագործ դասակարգն իսպառ անհետանալու վրայ է։ Այս է ահա Անգլիայի զիւղական ազգաբնակութեան տիսուր պերսպեկտիւրը։ Եւ այդ բոլոր չարիքների սկզբնապատճառը արիստոկրատ լորդն է իւր անխիղճ հարստահարութիւններով,—լորդը, որ տակաւին իւր վաղեմի արտօնութիւններով կատարելաւակէս իշխում է երկրի քաղաքական և տնտեսական կեանքում²⁾։

Անցէք վերջապէս ովկիանոսի միւս անկիւնը—քաղաքակիրթ Ամերիկա՝ այնտեղ, ուր զեմոկրատական պրինցիպը լիակատար տիրապետում է քաղաքական կեանքի մէջ։ Ազտեղ ևս, նոյն անմիտ-

¹⁾ 1891 թւականի ստատիստիկան վկանում է, որ այդ տարին անդպիսական ամբողջ ազգաբնակութեան 72% ապրում էր քաղաքներում, և միմիացն 28% զիւղերում։ (Revue des Revues).

²⁾ Անշուշտ, անգլիացի լորդի, իբր հարստահարող ուժի, նշանակութիւնը ազտեղ մի վոքր չափազանցրած է։ Ծան. Խմբ.

թար երեւյթը, նոյն անսուսական կործանիչ ճգնաժամը: Այսուղ
պրոլետարն արդէն պարզել է ապստամբական դրոշակը և բացար-
ձակ կոխ է յայտարարել բուրժուազիային... 65,000,000 բնակիչ-
ներից 3,000,000 արդէն «առանց աշխատանքի» են այսօր:

Առանց աշխատանքի» —Ահա կապիտալիստական հասարակու-
թեան հարազատ անխուսափելի ծնունդը: Նա է, որ այս բոպէիս
որոտում է սարսափահար բուրժուազի դէմ, նա է, որ երկաթուղի-
ներ է կանգնեցնում, որ դործարաններ է հրդեհում, նա է՝ այդ
սովալլուկ հրէշը, որ մարդկացին ամեն զգացմունք կորցրած սպառ-
նում է աւեր ու կործան տարածել երկրի մէջ: Ամեն խոշնդրու ան-
զօր է նրա զիմաց, որովհետեւ խնդիրը կեանքի և մահւան խնդիր
է... Արջք օրհասականք հզօրագոյնս կուին...

Այդպէս, ոչ մի երկիր զերծ չէ կապիտալիսմի չարիքներից,
եթէ նա քաղաքակրթութեան համն առել է արդէն: Ուր կայ խո-
շոր ինդուստրիա, այնաեղ կայ պրոլետար, այնաեղ կայ անշուշտ
և «անգործ» արդիկ:

Եւ քանի աւելի կառարելագործում՝ են մեքենաները, ա ելի
են սասականում մարդկացին թշւառութիւնները: Այդ թշւառու-
թիւնները մաշինիզմի արագաքայլ պրոգրէսի անբաժան ուղեկիցն են:

Քննենք այժմ կապիտալիսմի ծագման պատճառները, տեսնենք,
ինչպէս է նա ծնունդ առել և ինչպէս է գարգացել մասնաւորապէս
գերմանական հողի վրայ:

Վաղեմի ժամանակները, երբ ամեն ինչ տակաւին իւր նահա-
պետական դրութեան մէջ էր, մշակը, աշխատաւորը լիակատար
տէրն էր իւր աշխատանքի միջոցների: Դաշտում բանում էր երկ-
րագործը իւր ընդարձակ հողաբաժնում, քաղաքում բանում էր
արհետաւորը իւր սեպհական արհետանոցաւմ, իւր սեպհական
գործիքներով: Այդ գործիքների՝ ինչպէս նաև աշխատանքի արդիւնք-
ների հետ աշխատողը մի անբաժան միութիւն էր կազմում:

Այսօր մենք տեսնում ենք այդ միութիւնը խախտած, այսօր
արդիւնաբերողը զառւած է արդիւնաբերութեան միջոցներից: Մի թի-
զաչափ հող, մի ողորմելի խրճիթ, մի քանի կենդանիներ, ահա ար-

գեան գիւղացու ամբողջ կայքն ու հարատոթիւնը; Ի տեղի առանձին արհեստաւորների, —ահազին գրուպպաներ միասին, միատեղ աշխատող, ի տեղի մանր կղզիացած արհեստանոցների՝ մի վիթխարի հիմնարկութիւն, որ «Փարբիկ» անունն է կրում: Օտար է բանւորը ի դիմաց իւր աշխատանքի գործիքների. միակ ոչժը, միակ սեպհականութիւնը, որ նա դործարան է բերում; —այդ իւր ձեռքերն ուսուներն են:

Ինչը՝ խլեց բանւորից նրա աշխատանքի միջոցները, ինչ հանդամանների շնորհիւ աշխատաւորը կորցրեց իւր տնտեսական ինքնուրոյնութիւնը:

Եղել են, այս, տնտեսական կեանքի զարգացման ընթացքում եղել են հզօր Փակտորներ, որոնք յեղաշրջել են վաղեմի յարաբերութիւնները արդիւնաբերութեան և նրա միջոցների մէջ: Սակայն իրօք միայնակ չեն գործել այդ Փակտորները, նոցա հետ միացան հարիւրաւոր մանր ոչժեր, որոնք ընդհանուր ոյժով առաջ բերեցին մեծ յեղաշրջումը: (Umwälzung): Նախ քակտւեց աշխատաւորի և նրա գործիքների մէջ գոյութիւն ունեցող ամուր կազը, ապա սրան հետևեց այն ինքնաշխատաւորի ինքնուրոյնութեան կատարեալ ոչնչացումը: Այդ բոլորը այսպէս ասած նախազուն է կազմում և այն երեւլի շրջանին, որ կրում է խոշոր կապիտալիստական անունը:

Մի կողմից կապիտալիստական խոշոր ձեռնակողներ (Unternehmer), միւս կողմից անինքնուրոյն, «սեփականազուրի» բանւորներ, —ահա այդ նշանաւոր շրջանի տիրապետութեան անմիջական հետեւանքը: Այժմ փորձենք ներկայացնել անտեսական մեծ յեղափոխութեան համառօտ պատմութիւնը:

Միջնադարեան գիւղացին աշխատում էր իւր տարրական գործիքների հետ պարզ, բնական եղանակով և աշխատում էր սոսկ իւր անձնական կարիքները լրացնելու համար: «Ապրանք» ասած բանը գոյութիւն չունէր, որովհետև փոխանակութիւն չկար: Համայնական սկզբունքը տակաւին հիմք էր կազմում գեղջկական կեանքի: դաշտերը, ծմակները, արօտամարգերը ընդհանուրի սեպ-

հականութիւն էին: Գիւղացին ինքն էր հսկում անասունների վրայ, նա ինքն էր իրա համար համ դիւրգեար, համ զերձակ, համ հացթուխ, համ և այլն և այլն, նա «հազարափէշակ» էր: Այդ բարձմատեսակ պաշտօնները կատարում էր նա իւր ընտանիքի օգնութեամբ, նրա հետ միասին:

Համերաշխ գործում, համերաշխ վայելում էին աշխատանքի պառղները:

Գիւղացին հարկատու էր: Բայց հարկատութիւնը ևս կատարելապէս in natura էր (սովորաբար ձու, իւղ, պառղներ և այլն և այլն): Նրա «տէրը» (Landherr) այնքան էր պահանջում, որ կարողանար իւր ստամոքսին բաւականութիւն տալ: «Տիրոջ» ստամոքսի ծաւալով էր սահմանափակում այն ժամանակւայ ամբողջ հարստահարութիւնը (exploitation):

Սակայն իրերի վիճակը փոխւեց ժամանակի ընթացքում: Տնային արդիւնաբերութիւնը հետզհետէ աճեց, զարգացաւ: Գիւղացին իւր ընտանիքով աւելի էին արդիւնաբերում, քան թէ պահանջում էին նոցա տարրական կարիքները, ահա այդ աւելորդ արդիւնքները և սկսեց նա վաճառանոց հանեց: Նա լարում էր իւր ջղերը, իւր մկանունքները, տենդային գործունէութեան մէջ նա ամեն ջանք գործ էր զնում, որպէս զի աւելի «ապրանք» արտահանէր, որպէս զի աւելի փող վաստակէր: Ոսկի գումարելու տենչանքը օրի վրայ սաստկացաւ զիւղացու մէջ և այդպիսով կործանեց նրա պարզ, նահապետական կեանքի բնական հիմունքները:

Նոյն երեսյթը տեղի ունեցաւ և քաղաքներում: Չնայելով, որ այստեղ համքարական տիրող կազմակերպութեան կանոնադրութիւնները խիստ սահմանափակում, խանգարում էին արդիւնագործութեան ընթացքը¹⁾, բայց և այսպէս տամնեակ տարիների մէջ ծաղկեց բազացին արդիւնաբերութիւնը: Առեւատուրը զարգանալով, բարձրա-

¹⁾ Համքարների բոլոր սահմանափակումները ուղղված էին դարձեալ դէպի անհատի բարօրութիւնը: Ստամուտներում ի միջի ալլոց գըրւած է, ամենք սահմանափակում ենք աշակերտների թիւը, մենք մաքառում ենք ազատ կոնկրենցիալի (մրցման) դէմ և անուն իւրաքանչիւր արդիւնաբերող անհատի անձնական ապահովութեան:

ցաւ քաղաքացու նիւթական հարսոութիւնը։ Պահանջներն աւելի բազմատեսակ, կեանքն աւելի բազմակողմանի դարձան։

Այն ինչ աւատական (fœdus) ազնւականութիւնը իւր բարձրաբերձ դղեակներից խորին անհանդառութեամբ գիտում էր իրերի ընթացքը։ Քաղաքացու բարեկեցութիւնը շարժեց նրա նախանձը և իրեն ևս մղեց զէպի զործունէութիւն։ Դրամի և զօրքի (իւր սեփական զօրքի) օգնութեամբ զրաւեց նա շատ գիւղորացք, հալածեց կալածատէրերին (Landherr), քշեց զիւղացիներից շատերին և այդպիսով հաստատեց արդաւանդ գաշտերի վրայ իւր բռնական տիրապետութիւնը։ Նոյն աւատականները 16-դ դարում զրաւեցին եկեղեցապատկան կալածքները (գլխաւորապէս հիւսիսային Գերմանիայում), որոնք լութերի ստատուտների հիման վրայ ազատած էին կաթոլիկ հոգևորականութեան ձեռքից։ Մինչ այս, մինչ այն, վրայ հառաւ երեսնամեայ արիւնահեղ պատերազմը, որ այնքան արհաւիրքներ բերեց Գերմանիայի գլխին։ Անթիւ գիւղեր ու աւաններ իսպառ կործանւեցան և իրանց ֆլատակների տակ թաղեցին միլիոնաւոր անմեղ զոհեր։ Սովոր թագաւորեց ամենուրեք. իրանց հայրական օջախից հալածւած, պանդուխտ, տարագիր գիւղացիք սկսեցին թափառել ծայրէ ծայր։ Երկիրը լցւեց արկածախնդիր աւագակներով, մուրացկաններով։ Դաստիարակուած, ամայացած հողերի մէջ բուն զրեցին Փէոգանները։ Ահա թէ որպիսի նգաստաւոր պատմական հանգամանքների շնորհիւ զօրացաւ ազնւականութիւնը։ Եւ որսէս զի աւելի հաստատուն լինէր այդ զօրութիւնը, պարտադիր ծառայութիւն մոցրեց իւր հպատակ գիւղացիների մէջ, ապա փոքր յետոյ կառավարութեան հեղինակութեամբ, նրա համաձայնութեամբ։ օրէնք հրատարակեց, որով զիւղացին կաշկանդւում, կապւում է իւր բնակավացը հողաբաժնի հետ։ Ազգայիսով ծնունդ առաւ ձորտութիւնը, որ շարունակ երկու դար ծանրացած մնաց գերմանական ժողովրդի վրայ և միայն 1805 թւականին հրատարակւեց նրա ոչնչացումը։

Այդ մութ, արհաւրալից շրջանը բնորոշելու համար, բաւական է բերել հեռեւեալ տողերը։ «Ճորտի հետ վարւում էին, ինչպէս որսկան շան հետ։ Նրան ստիպում էին հազար ու մի անվայել խեղկատակութիւններ անել «տիրոջ» զւարձացնելու համար, նրան

առիսպում էին անընդհատ աշխատել, և այդ միջոցներին անողոք դադանակը կառարում էր իր քսամնելի վերը...

Ան թէ ինչպէս է նկարագրում պրոֆ. Կնապս¹⁾ ճորտերի կենսական սպազմանները։ «Նրանց ուտելիքը բրինձ էր, սիսեռ, երբեմն գետնախնձոր, տարին մի քանի անգամ էլ հիւանդու կամ սատկած անսառունների միւս Հազնում էին կտուէ շապիկներ, և նոյն տեսակ վարտիկներ, մեծ մասը, ամբողջ տարիներով գուլպաների երես չէր տեսնում։ Նատերը կիսամերկ էին ման գալիս։ Թշնառութեան գագաթնակետին հասցրած՝ նրանք միշտ երանի էին տալիս բանտարկեալների վիճակին։ Մեռնում էր ճորտը մոռացւած, արհամարւած ամենքից գերեզմանն էր իջնում։ մեռնում էին մի քանի ճորտ միաժամանակ՝ լսոր փոս էին փորում և այնուղեղ գագանաբար նետում էին թշնառ մահկանացուների զիակները»...

Սրդ, նախընթացից երեսում է, որ հնագարեան, նահապետական կեանքը իր սպարզ բնական սկզբունքներով դարերի ընթացքում յեղաշրջւել էր արդէն։ Ասպարէզ էր եկել նոր կեանք, նոր յարաբերութիւններ «տիրոջ» և «հպատակի» մէջ։ Կեանքը փոխւեց, որովհետեւ տնտեսական ոպայմանները փոխւեցին։ Գիւղացու և կալւածատիրոջ փոխադարձ յարաբերութիւնների մէջ արդէն շօշափելի է դառնում շահների անտագրնիզմը (թշնառութիւն)։ Տնտեսութեան մէջ հետզհետէ աւելի և աւելի սուր զծերով երեան է գալիս կապիտալիստական բնաւորութիւնը։ Կալւածատէրը, որպէս ապրանքի արդիւնաբերող, սկսում է, որքան հնարաւոր է, շահագործել իր հլուհապատակի, գիւղացու, աշխատաւորի ոյժը։

Սակայն ճորտութիւնը իր թունաօր ազդեցութեալը չէր տիրել համայն Գերմանիացին։ Տակաւին մնում էին ազատ անկիւններ, ուր գիւղացին, թէսպէտ զարձեալ զուրկ նախկին տնտեսական ինքնուրոյնութիւնից, բայց և այնովէս ապրում էր համեմատաբար աւելի աջող հանդամանքներում։ Ըստ առաջնոյն հերկում էր հողը (ար-

¹⁾ Knappe, Bauernbefreiung.

զիւնքների մեծ մասը հարկ էր տալիս), պարապւում էր մանր արդիւնաբերութեամբ:

17.դ դարու վերջերում մուտք գործեց այսաեղ տնացնադործութիւնը (Haus-indistrie), որ տակաւին իր սաղմի մէջ կապիտալիստական գոյն էր կրում արդէն:

Հաւաքւում էին մի յարկի տակ մի քանի ընտանիքներ, բոլորում էին օջախի շուրջը, հայր, մայր, զաւակներ, 5 տարեկանից սկսած մինչև խորը ծերութիւնը աշխատում էին գրամատէր վաճառականի համար: Վերջինս մատակարարում էր նրանց հում նիւթը, — զիցուք կտաւ, բուրդ, քաթան —և չնչին վարձատրութեամբ ստանում էր բոլորովին պատրաստի արդիւնքներ, — զիցուք շապիկ, գտակ, գուլպա, — որոնց նա ծախու էր հանում, ահագին փող էր վաստակում: Ընթերցողն անկասկած նկատում՝ է, որ տնացնագործութեան մէջ արդէն լիակատար կերպով երեւան է գալիս կապիտալիստական կերպարանքը: Արդարեւ, մի կողմից ներկայանումէ մեզ փողատէրը, իր հում, անմշակ նիւթերով, միւս կողմից՝ անինքնուրոցն, վարձկան աշխատաւորը, որ ամբողջ կեանքի ընթացքում մանկութիւնից մինչև զառամեալ հասակը պրոլետար է մնում: Առաջինը ղեկավարում է արդիւնաբերութիւնը, նրա ձեռքին է ոյժը, իրաւունքը:

Հլու հնուզանդութիւն, անընդհատ վիշտ ու տառապանքներ—երկրորդի բաժինը:

Մենք տեսնում ենք, ինչպէս տարիների ընթացքում աւելի և աւելի լայնանում է արդիւնաբերող ապրանքների արտահանութիւնը, հասարակաց վաճառանոցը հետզնետէ ընդարձակ ծաւալ է և բռնում: Մենք տեսնում ենք, ինչպէս աշխատաւոր գիւղացու ազնիւ քրտինքը ծծելով՝ օրէցօր հարատանում է դրամատէր առևտրականը և հարստահարւած պրոլետարի թշւառութիւնների վրայ հիմնում է նա իր անձնական բարեկեցութիւնը:

Այս ինչ քաղաքներում փոքր առ փոքր կերպարանափոխուում էր համբարական կազմակերպութիւնը (Zunftverfassung): 18.դ դարի վերջերում հարստարակած տէրութեան մի շարք հրովարտակների զօրութեամբ համբարական վարպետը զբկւում է ինքնուրոցնութիւնից: Նա այլ ևս իրաւունք չունի սահմանավակելու աշա-

կերտների թիւը. աբսոլիւտ կառավարութիւնը հրամայում է նրան զանուն արդիւնագործութեան պրոդրէսի» ոչնչացնել ամեն ասհմաննափակումն, վերացնել համքարական մննուպոլը և ազատ մրցման ասպարէզ տալ, աւելացնել, անսահման դարձնել աշակերտների քանակութիւնը: Կանանց ևս թոյլ տալ աշակերտելու արհեստանոցներում:

Համքարների կազմակերպութեան նախկին հիմունքների քայլայումը ինքն ըստ ինքեան մեծ զրաւական էր կապիտալիստական «մանուֆակտուրա»-ի զարգացման: Մանր արդիւնաբերութիւնը տեղի տւեց խոշոր արդիւնաբերութեան: Մանուֆակտուրան հաւաքեց ցիրուցան եղած աշխատաւորներին, կենտրոնացրեց նրանց մի ահագին արհեստանոցում. աշխատանքի բաժանութեան սկզբունքի վրաց սկսեց մի տենդային գործունէութիւն: Բանւորը, աշխատում էր ըստ մեծի մասամբ օրավարձով, աշխատում էր զբեթէ միշտ մի և նոյն առարկայի վրաց, կատարելով միշտ մի և նոյն օպերացիան: Տակաւին մեքենայ չլինելով, մանուֆակտուրան հիմնւած էր ամբողջապէս ձեռագործի վրայ:

Արդիւնաբերութիւնը արագ քայլերով առաջ էր դիմում: Կառավարութիւնը իր հովանաւորող դիրքով (protectioniste) աւելի էր նապատում այդ առաջադիմութեան: Խոշոր ձեռնարկողներին նա միշտ օժանդակութիւն էր մատակարարում վողով, աւաորիտով: Նա ինքն էր բերել տալիս արտասահմանից հմտւած վարպետներ (Meister), ուժեղ գործունեաց բանւորներ, նա ինքն էր ամեն ճիդ թափում, որպէս զի աւելանաց երկրի նիւթական հարստութիւնը, որպէս զի ծաղկէր ինկուսորիան:

Տնտեսական կեանքի աստիճանաբար զարգացման հետ հասարակութեան մէջ զոյացան նոր դասակարգեր: Գիւղացիների մի խոշոր մասը, զուրկ ամեն ինքնուրոյնութիւնից, մատնւած էր ճորտատէրերի կամայականութիւններին: Միւս մասը, որ լաւագոյն պայմանների մէջ էր, տնայնադործութեան շնորհիւ ենթարկւած էր կապիտալիստ վաճառականների կեղեքումներին: Քաղաքներում զեռգոյութիւն ունէր մանր, ինքնուրոյն արհեստաւորների դասակարգը: Իսկ նա, որ ամենքի վրայ իշխում էր և որի ձեռքում կենտրոնա-

ցած էին կապիտալն ու խոշոր արդիւնաբերութիւնները, դա ամենաբարձր դասն էր՝—այն է ազնւականութիւնը:

Ներկայ դարու սկիզբը նոր կեանք բերաւ Գերմանիայի գիւղական ժողովրդին: Ճորտատիրութիւնը վերացաւ, գիւղացին ազատ շունչ քաշեց: Էլ չեն ստիպում նրան աշխատել, մորակել, այլ ևս դադանակի ոյժով նրան չէին բանեցնում: Ազատ է նա ձեռքով, ոսքով, նա ինքն է աշխմ տնօրինում իր ոյժերը, իր ընդունակութիւնները: Կամ իր չնշին տնտեսութեամբ զբաղւելով մի կերպ հայթայթում է օրական ապրուսոր, կամ թէ ծայրացեղ դէպքում այդ տնտեսութիւնը վեարջելով՝ կապիտալիստին ծախուէ բերում նա իր մկանների ոյժը:

Վերը մենք բացատրեցինք, թէ ինչպէս ժամանակն առաջ ընթանալով, գիւղատնտեսութեան մէջ աւելի և աւելի զգալի էր դառնում կապիտալիստական բնաւորութիւնը: Մենք տեսանք նաև, որ նոյն կապիտալիստական բնաւորութիւնը աւելի խոշոր գծերով երևան էր զալիս ինդուստրիայի մէջ ևս, շնորհիւ տնայնագործութեան և մանուֆակտուրայի ներմուծութեան: Արդիւնաբերութեան այդ երկու ձևերը, երկուսն էլ ձեռագործի վրայ հիմնւած, արդէն հարթում էին ճանապարհը կապիտալի ապագայ կենարոնացման համար:

Մինչ Գերմանիան կրիայի քայլերով էր ընթանում արդիւնաբերութեան գործի մէջ, Անգլիայում արդէն ահագին սրոզգրէս էր արել խոշոր ինդուստրիան:

Մանելու մեքենան (Textilmachine) աշխարհ զալով, յեղափոխել էր իրերի նախկին դրութիւնը և մեծ զարկ էր տեղ արդիւնագործութեան զարգացման: Սաստիկ արագութեամբ և առասորէն պատրաստելով, արդիւնքները բնական արար էժանացան, և այն աստիճան էժանացան որ միանգամայն աւելորդ դարձրին ձեռքով մանուղների աշխատանքը (Handspinnerei): Հասկանալի է, որ վերջիններն, իրանց չնշին ոյժերով, անկարող էին մրցում տանել մեքենայի հսկայական արդիւնաբերութեան հետ և ստիպւած էին յետ քաշւել իրանց նախկին գործունէութիւնից:

Մեքենայական արդիւնքների ծայրայեղ էժանացումը անհետևանք չմնաց և Գերմանիայի համար Չեռագործ արդիւնաբերութիւնը ընկաւ, ձեռքի աշխատանքն այլ ևս լսու առաջնոյն չէր գնահատուում։ Անգլիան այսուեղ ևս տարածում էր անհամեմատ աւելի էժան գնով իւր ապրանքները։ Բանւորները անել վիճակի մէջ էին. թողին տնայնագործութիւնը, պարապ, յուսաբեկ շրջեցին անկիւնից անկիւն, հազարներով մեռան տովի ճարակից, մեռան, դառնագին անիծելով մեքենան և նրա աշխարհ գալու չարագուշակ օրը¹⁾։

Անգլիական մրցումը ունեցաւ իւր ազգեցութիւնը քաթանի գործածքի վրայ ևս (Weberei)։ Քաթանի գինը ընկաւ զարմանալի արագութեամբ, մաւանդ Սիլեզիայում։ Այսուեղ արդէն քառասնական թւականներին կարօտեալ բանւորների թիւը 120,000-ից անցնում էր, դեռ չաշւած երկաններին։ 1845 թւականին մեծ խլրուում տեղի ունեցաւ Սիլեզիայի մի քանի գիւղերի բանւորների մէջ։ Ծայրայեղ յուսահասութեան մէջ ահագին խմբով ներս խուժեցին նրանք մի հարուստ վաճառականի խանութը և սկսեցին թալանել՝ ի վրէժ իրանց կրած հարստահարութիւնների։ Միայն վառօդի և գնդակի օգնութեամբ կարելի եղաւ զսպել կատաղի յուզմունքը...²⁾։

Մենք ասացինք, որ անայնագործ բանւորը ստանում էր հում նիւթը մշակելու համար, որով կատարելապէս ենթարկում էր վաճառականի ազատ տրամադրութեան։ Խնդիրը նրանումն է, որ պատրաստի, մշակւած արդիւնքները յետ գարձնելով, բանւորը խսկոյն և եթ չէր ստանում իւր վարձատրութիւնը, այլ նրան խոստանում էին վարձատրել ապրանքը վաճառելուց յետոյ։ Յաճախ պատահում էր, արդիւնքները «բազարում» գին չէին գնում, չէին վաճառում։ Եւ ահա մեր վաճառականը, ի տեղի դրամական վարձատրութեան, դարձնում էր ապրանքները նրանց արդիւնաբերող մշակներին։ իսկ վերջիններս բնականաբար իսկի կարիք էլ չունեին այդ ապրանք։

¹⁾ Schmoller, Die Geschichte des deutschen Kleingewerbes.

²⁾ Bünning, Gesellschaftliche Zustände der civilisirten Welt.

ների մէջ։ Նոքա փողի էին ծարաւ, փող են սպասում վաճառականից, որովէս զի կարողանան գէթ կենսական ամենաանհրաժեշտ պիտոչքները ձեռք բերել։

Դրութիւնը աւելի ևս դառնացաւ, երբ մի նոր հարստահարիչ էլեմենտ ևս մուտք գործեց արդիւնաբերական աշխարհի մէջ։ Մի տեսակ «միջնորդներ» (faktor) հաստատեցան բանւորի և վաճառականի մէջ տեղ։ Վերջինս էլ ուղղակի, անմիջական յարաբերութիւններ չունէր տնայնազործի հետ։ ամեն ինչ կատարւում էր ֆակտորների միջոցով, որոնք մատակարարում էին անմշակ նիւթը և մշակւած յետ էին ստանում վաճառականին հասցնելու համար։ Այժմ հետեւապէս միջնորդն է բանւորին պարապմունք տւողը, նա է նրա վիճակը տնօրինողը։ Հասկանալի է, որ այդքան լայն իրաւունքներով նա ևս հարկ է համարում իւր կողմից շահագործել աշխատաւորին՝ և աւելի քսոմնելի, աւելի տմարդի կերպով։

Անդիւական մրցման հետեւանք՝ ծանր աւելիչ ճգնաժամը մի կողմից, վաճառականների և նոցա միջնորդ ֆակտորների անլուր հարստահարութիւնները միւս կողմից, — այդ տխուր, աննպաստ տնտեսական պայմանների ծայրայեղ ճնշման տակ հեծելով՝ միւնոյն ժամանակ զուրկ ամեն պատարից և կազմակերպութիւնից, աշխատաւոր ընդհանրութիւնը արդէն յիմնական (50-ական) թւականներին մօտ ներկայացնում էր Գերմանիայում մի վերին աստիճանի անմիսիթար, մի ողբալի կացութիւն։

(Շարունակելի)

ՍԱՍՈՒՆ

(Դմբ յիշատակարանից)

ՍԵՅԼԱՆԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քանի որ հայ ազգի պատմութիւնը, մանաւանդ վերջին գարերի ան-
լիշտակ, եղերական անցքերը հնախօս պատմաբանների խորին ուշա-
դրութեան տուարկակ են, հայի թէ օտարների ուշքն ու մխտքն են զբաղեց-
նում, կարող է աշխատութիւնս մի փոքր լուս տալ, նոցա հետաքրքրու-
թեան մի մասը լրացնել իւր ստուգ և հաւատարիմ բնաւորութեամբ:

Ոչ գովեստ և ոչ տարակոյս ունենալով՝ դժւարա, հազար տեսակ
նիւթական և բարոխական զոհաբերութեամբ հաւաքւած, կազմւած գործիս
մասին, թագնւած ճշմարութիւնը վատահօրէն լուս ընծակելու ներքին
զոհումնակութեամբն եմ շատանում:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Երթամ Սասուն քերեմ թալան,
ալալի եղներ բերեմ լըծկան,
«Ատրիմ Հառւն էնիմ խնդիր,
«Ճնկլուզ մանցին Հառւն ճժիր...»

Աւանդութեանից:

«Յետ նաւելոյ Քսեսութիւնակ ՚ի Հալս և դիմելոյ ցամաքի, գնաց,
« ասէ, մի լորդոց նորա կոչեցեալն Սիմ ընդ արևմուտս հիւխտոյ գիտել
« զերկիրն, և դիպեալ դաշտի միում փոքրու առ երկանանստիւ միով լե-
« րամբ, գետոց ընդ մէջ նորա անցանելով՝ ի կողմանս Ասորեստանի, գա-
« զարէ առ գետով երկլումնեալ առորու և անուանէ լանուն իւր զիւառն
« ՍիՄ...»:

Խոր. քառ. Զ.

Տեսարան Սասնոչ—ի բաց թողած պատմական ալլ և այլ ապացուցներ, Սասնոչ, Մշու հաջ քուրդ ժողովուրդն այս աւանդութիւնն ըստ գրւածքին պատմում են, ցուց տալով Մշու արևմտեան կողմի լեռնաշղթան, Մոկաց լերինք, Սասնոչ սարելըն, ասելով—այս է Նովի-Թոռ, Սիմին երկու ամսւաց կալարանն, իսկ վրանի տեղը ացմ գիւղ է Սէմա կամ Սէմալ անունով: Մուշ քաղաքի անմիջապէս ետևն է բարձրանում հոչակաւոր Սիմը, Սասնոչ անդրանիկ լեռ, որ իբրև գաւառական սահմանաքար որոշում է Մուշը, նորա գողարիկ լանարձակ գաշտը իւր անվախ զաւակների լեռնոտ հայրենիքից: Նորա գլուխը կանգնողը զմալլում է շքեղ տեսարաններով, անկարող է զրիչը զծել և լեզով ճշդիւ պատկերել աչքիւ տեսածը:

Արեւելեան կողմը, հորիզոնի հետաւոր փեշերին մէջ, մէգով պլլւած է սգակիր Խնուսը, Պուլանըզը, գէալի արենելահիւսիս Կէլ-առէշի ծորով բարձրանում են Նիմրութ, Գրգուռ սարերը, իրանց ետև պահելով Վան ու Նորա ծովակը, միւս կողմը ո. Կարապետ Մշու պահապանը, կտրում են հայմանուն զաշտը միւս գաւառներից, որի հարթ մակերսովթի վերաց ափուած են գեղեր, աւաններ Մեղտի և Եփրատ գետերի ափերում:

Բաց Սիմա արեմուեան կողմը, վսեմ, պատկառելի է տեսարանը, ծովի լեռնացած ալիքների պէս օդակ-օղակ շարւած են հաղարաւոր վիթ-խարի լերինք, որոց կոները հիւսում են մի հիւնալի շարոց լանածաւալ հորիզոնի լսորբին մէջ, ումանց գլուխներն մերկ, ասպառած, ումանք սէզաւէտ, ումանք անտառներով, սրբակներով պսակալարդ շրջապատում են երկնից կուրծքը խրւած Անտօքը (Անտօն ըստ աւանդութեան), որ երեմն Անտօն ճգնաւորի բնակվալուր-ճգնարանն է եղած: Գեղանի հարսի նման պճնազարդն Սասուն, ուր կը թադւեն Սանասար-Ատրամելէք արքալազանց բերդ-բնակալին Քաղքին, իսկ Սիմ հսկախական պարսպի նման մի ահաղին օղակով իւր ծոցն է ժողովում իւր հաղարաւոր զաւակները, Մշու ո. Կարապետից մինչև Բաղէշ ծաւալերով, մօտառը արապէս 24 ժամի ճանապարհ, կամ 150 վերստ....

Ամարան տօթագին օրերը, մենք չնշասպառ Մշու ընդարձակ դաշտից երբ հեռացանք և ելանք Սիմի կոնը, չանկարծ ոկտեյլն հնչել ալդ գողոր լերանց գագաթներից սրտազով, անուշանոտ հողմիկներ, սոխակների, տաարակների զալապիկով, բալասանի, բիւրաւոր ծանօթ ու անծանօթ ծաղիկների լափակնելի բոլուրով խառնւած... Ջինջ ու պածառ լերանց մէջ կորչում են մարդու նախածքը... բացւում են հոգեկան աչերը, իսկոն պատկերանում է մթամած անցեալը:

Զկարողացաւ ծածկել իմ զմալլումը, որովհետև չտեսաւ Կովկասում, Խտալիացում, Տաճկաստանում մի ասալիսի վսեմ պատկեր և դուցէ տեսնելու ել չեմ....

Պատմեցի իմ տպաւորութիւնը, ականաչ էիշեցի ընկերներիս Սասնու անցեալը, մեծամեծ դէպքերը Աանասարից մինչև մոր օրւաչ հերոսը, Գորպէն՝ որ առաջնորդում էր ինձ առիւծների հայրենիքը, իւր օրրանը, Գորպէն՝ որի անոնը ծանօթ է Եւրոպալին, կամ նորա 1878 թվի դեսպաններին, ազ նաև ող Կամսարականին իւր անվեհեր, վստահ առաջարկով...

*
* *

Սասուն և նորա դիրք՝ Արդ՝ Սասուն գտնւում է Տարոսի բարձրագիտակ շղթակում։ Արեելեան կողմից՝ Մշու գաշտ, արևմտեան-հիւսիսից՝ Տիգրանակերտ կամ Ամիզ, արեելեան-հարաւալից՝ Ալէւան, Բչէրիկ, հարաւարիմտից՝ Բաղէշ նահանգներն են շրջապատում նրան։

Սասուն բաժանում է մի քանի գաւառակների.—Սասուն, Խոլթ, Խարզանք, Խիանք, Քաղարինք, Գտանք, Կէնճ, Բշերիկ, Դալւորիկ, Շատախ, և ազն, որոց մէջ ալֆմ կան 110—120 մեծ ու վորքը քրդական գլուղեր, 60 հայկակուն։ Ուրիշ անասնաբուժ աղղիրի ողէս բնակուում են մի-մի վերտանիմեանցից հեռի, ազդ իսկ պատճառաւ իւրաքանչիւր գիւղ բոնում է միջին թւող 30 քառակուսի վերտան կամ 5—10 սարեր ու հովտներ, իրբ արօտավալրեր իրանց բաղմաթիւ ոչխարիներին։

Անձամբ բալոր գաւառները շրջած չլինելով, աշխարհագրական հանգամանքը լաւ ուստամիասիրած չլինելով, չեմ էլ փորձում ուրիշ հեղինակներից օգտական պատկերել բավանդակ Սասունը։ Հետևապէտ՝ Շատախի, Դալւորիկի մասին միան սիստի առեամ մի քանի խօսք։

Շատախ առաջին գաւառն է կամ միացողն է Մշին, Արեելքից՝ Մուշ, արեմուտքից՝ Դալւորիկ, Հարաւալից՝ քրդաբնակ Սասունը, հիւսիսից Խիանք գծում են նրա սահմանը ապառաժներով։ Գլխաւոր գիւղերն են Կոմի, Խրիցանք, Գեղաշէն, Շուշնամերիկ, Աիժա կամ Աէմալ Շէնիկ, Գալէ-Կուզան, Տափկի, Աղմի, Հիթէն, որոց բոլոր բնակիչներն հաւ են, միան Տափկակ մէջ կան 20 տուն քրդեր։

Այս գաւառակում՝ ամենանշանաւոր սարերն են՝ Սասուն, Անտօք, Կամք, Ելք, Տորուղ, Միմ և ազն։

Խրաբանչիւր հալափից կարկաչելով անցնում են առւակներ, միան մի գետակ վազում է Գուլէ-Կուզանից զէպի Անտօք, անտի Հիթէն, ոլորւղ ալ և ալ ձորերով միանում է մի ուրիշի և առնում է Կուս-գիտանունը, որի ապառաժ ափին շինած է համանուն գիւղը։

Երկիրն աւագուտ, ապառաժու, հարիւրաւոր լեռ ու ձորեր ունենալով, բայցի Սիմից, միւսները չօւնին ազ և ազ բոլուր Հարուսա են կաղիններով, թփերով, Մարերի վրաչ գտնւում են տեսակ-տեսակ քարացած ծովալին կենդանիներ, իրեն ապացուց ծորոսի Ան-ծովի տրգանդից վերամբանալուն։

Ա. Առաքելոց վաճառքի վաճառակար գեր. Յ. Վ. Մուրագեան իր մօտ պահում է քարացած ձուկ Խամսի կոչւած տեսակից, որ լինում է Սև-ծովում և որ այս աւուր Տրապիզոնցու ամենօրեալ կերակուրն է: Անտոքի կոնին վրատ գտաւ մի քանի հատ խեցիներ և փոքրիկ Վաճառաձուկ:

Սամնոյ սարերը հարուստ են հանքերով: Դաւորիկի երկաթի հանքը հոչակաւոր է: Հայեր հանում են երկաթը և կոփում իրանց համար սուր, նիդակ, վաճան և հրացան, վաճառում են Տիգրանակերացուն, քրդին, Մշեցուն: Կան և մի քանի հավաներ, ուր սակաւ են բուսեր, բաց՝ ծածկ, տում են սպիտակ բորակով, նրանից Սամնիկը ստանում է վառօդ, զոելով ու պատրաստելով:

*
* *

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Գ.—Այս ահաւոր սարերի մշջ ապրով ժողովուրդը խիստ առողջ, կարճահասակ, թխադէմ, ճարպիկ, անվախ, չարքաշ լինելով՝ հային տալիս է իր պարձանքը, առիւծասիրա Սամնիկը: Անհամեմատ տարերութիւն կաչ որանց և գաշտեցոց մշջ: Հին, ինկած քաղաքակրթութեան նախանձելի սկզբունքներ տակաւին հպատակեցնում են Տորոսի զաւակներին աշատեղ չկան և խարդախութիւն, չկան սուրկութիւն և գաւաճանութիւն և խորամանկութիւն, բարոչական բառի չեղինդում և մոլութիւն... աղատ լեռնականը ապրում է և աղատ և պարկեշտ, բաց և տղէտ, մի խօսքով Սամնցին բոլորովին տարբերուում է ամեն տեսակէտով իր համարիւն հայերից:

Սական՝ չէ կարելի ամժմ սառւդիւ ասել թէ ինչ պատճառներով Սամնոյ ժողովրդին զարգացումը կարելի է երեք զգալի ասամաճանների բաժանել: ա) Սամնոյ անմատչելի լեռներում, անդշախոր ձորերում, աշքից փախչելով ապրում են վայրենիներ, որ և ոչ իոկ հագնւել զիտմէ, միան սովոր ժամանակ, երբ սարերը չեն տալիս խոտ, ծառերը միրով ու տերեկ՝ պաշտնուում են զիւղերում իրեւ զազան: բ) Կիսավայրենիներ՝ որ կոսիտ ձեռվ շալէ շապիկ հագած, զազանի կամ ալծի մորթով իրանց քամակը ծածկած ապրում են իրեւ աւազակ մերձակաց զիւղերից գողանալով, կամ մի քանի ալծ ու ոչխար պահելով: գ) Խամիկ՝ որ զիտեն պաշտել Ասուած, հագնւել քրողի նման, դիմագրաւել թշնամուն, ահա սոքա են մեր քաշ Սամնեաք:

Առաջինք՝ լեռները, երկրորդները՝ Քաղաքինց սահմանը, երրորդը Խովթ, Բշերիկ, Հատախ և ալ տեղեր են բնակում:

*
* *

Տ ա ր ա ղ.—Սամնցոց հանդերձը տարբերում է արեմանան թէ արեւելեան ալ և ալ աղքերի տարաղից: Սական՝ իթէ իրեւ հայաստով լուրջ

քննութեան առարկաէ դարձնենք, մեր ունեցած թերի ծանօթութիւններով պիտի եղակացնենք թէ զոցա հանգերձը բռն հայկականն է:

Օկրոկոպիսալի նկարագրած բրդէ քրդամիտ ծիրանեգուն ոսկեթել զգեստը, փոխանակ ոսկի աղամանդպակին շինդղների, կլապիտոն և գոյն զբուն թելերով մետաքսով հիւաւած, փոխանակ ոսկէ շղթաներից քակինթներ կամենու, նունգունակ հասարակ կոճակներ ալոր զարդարում և նքաջ Սամնցու իմէղէքին (թիկնոց) և ապան (վերարկու):

Խաչանիշ հիւաւած մետաքսաթել խորը, սև կամ դոհնզգոցն ապարոշով փոտթաթած թեները մինչև ուսը գրեթէ միշտ բաց են. նա հադնում է մի տեսակ շապիկ, անկար, երկար եռանկիւնի թեներով, որը նրան ծառալում է իբրև զրաբն, իսկ կռւի ժամանակ երկու թեների ծարերն իրար կապելով քաշ կը տաէ զգիցը, կը բացւին քաջին թեները իրեն կիսագէկ երկաթ, հոլանի կը խէ վահանը, անվախ զուրս կը զաէ կռւի դաշտը... Լազն վարդիկներ, վուշից հիւաւած կոշիկներ ծածկում են մարմնի արտաքին մասերը...

Կիները հագնում են աւելի լաւ Նոքա պատում են զլուժները շատ ապրուներավ՝ աշնակիս որ ձևանում է մեր քահանակականին նման մի թագ, զորա արտաքին մասը ծածկւած է լինում շատ հին ու նոր արծաթ դրամներով. նոցա զգեստն է մանաւանդ ամառը, ծիրանի շապիկ, թեները արականաց ոճով, օձիքը ատղնեգործերով զարդարած և դոցւած արծաթ շինջզով, նա երկան է լինում, բռալափ նման մինչև սոները ծածկելով: Մէջքերը կապում են պարսիկ կամ հասարակ շալով, միան հասակաւոր նաները կրում են ասեղնեկործ կարմիր մէզար (գոգնոց) և սպիտակ շապիկ: Զմոռանանք ասել թէ մանկամարդ հարսները իրանց գլխին ծածկում են սպիտակ կտաւէ քօղ, որ իջնում է մինչև սոները:

*
* *

Ընտան և կան կ եանք.—Հայաստան խուժող աղքեր չեն կարողացել Սասնցու ընտանեկան կեանքի վերաէ ազգել Սասնցին զերծ է մոնղոլների վաւաշոտութիւնից, զերծ է տաճկական հարեմական սովորութիւններից, զերծ է լունական խարդախ անբարտականութիւնից: Սասնցու նահապետական ընտանիքը վարժ չէ բաժանելու գաղափարին, մի տան մէջ ապրում են մի և նոյն նախահօր հեռաւոր թոռնիկները. կան տներ որ բաղկանում են 70—80 հոգուց, զոքա կառավարում են տան առաջի ձեռով ամենախն արդարութեամբ, առանց զրկանքի: Սասնցի հարսներ ամօթ են համարում և մեղք տան բաժանման պատճառը, ուստի պարկէշտ և ազնիւ հնազանդում են տան-ափրուհուն:

Անհնար է Սասնցու ընտանեկան կեանքը, բարքը, սովորութիւն-

Ները զծել այս անձուկ գործի մէջ, այդ ամենը ամփոփած եմ իմ «Ֆէ-րիտէ» վէպի մէջ, որ կենդանի տիպերով, ստուգ իրողութիւններով ցորինւած է Սուշ, Սասուն, Բաղէշ գաւառներն բազմակողմանի կերպով պատկերելու Հետեապէս, ընթերցողս կարող է Սասունն իրապէս ճանաչելու համար կարդալ «Ֆէրիտէն» ¹⁾:

(Յարուճակելի)

¹⁾) Այդ վէպը ալժմ դանւում է մեզ մօտ:

Դանօթ. խմբ.

ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿՅԸ

ԵՐԱՒԱՆԴ ԴԱԶԱՐԵԱՆԻ

Գիտե՞ք թէ որքան խարուսիկ են լինում մարդու պատանեկան հասակի կախարդիչ երազները, ինչպիսի բարձր մտքեր, ինչպիսի ոսկեղոն պատկերներ ու տեսարաններ անդադար գրաւում, բորբոքում, գրգռում են պատանու թարմ երեակալութիւնը. Ինչե՞ր չի մտածում մարդը իր մասին—պատանեկան հասակում.—լինել և աչս, և աչն, —լինել չափնի, լինել նշանաւոր, բոլորի ուշադրութեան, բոլորի համակրութեան, չարգանքի, սիրու առարկակ գառնալ... Ել որ մէկն ասեմ: Նայելով մարդու ժառանգական, բնածին չատկութիւններին ու ձիրքերին—պատանեկան հասակում դրա համեմատ էլ լինում են նրա մտաւոր թուիչքները, նրա ցնորդները, նրա վարդադոն երազները ապագաի մասին:

Մէկը մտածում է, որ ինքը ապագայում կը դառնաչ մի նշանաւոր զինւորական, մի երեկի զօրավար, որ կը գնակ քաղաքներ ու երկիրներ կը նւաճէ, որ ամեն տեղ մարդիկ կը հնազննդեն, կը խոնարհեն նրա սուած, երկրագագութիւն կըտան նրա փառքին, նրա կարողութեանը, կը հիանան ու կը փառաբանեն նրա աշխարհաճռչակ գործերը:

Միաը երեակալում է, որ ինքը կը դառնաչ երեկի գրող, նշանաւոր բանաստեղծ, վիպասան, մտածող, որ նա իր հեղինակութիւններով կը հարստացնէ իր մարեկնի գրականութիւնը, որ նրա մասին գովեատներով ու հիացումներով լցւած կը լինեն գրքերը և լրագիրները, որ նա անմահ կը դառնաչ, որ մեռնելուց լնոտ նրա երախտագէտ հալրենակիցները անշուշտ փառաւոր արձան կը կանգնեցնեն նրա գերեզմանի վրաչ...

Մի ուրիշը անդադար զրազւած է հարստանալու, մեծ կարողութիւն, մեծ նիւթական միջոցներ ձեւք բերելու մտքով: Նա իրան երեակալում է փառաւոր պալատների, ոսկողօծ սենետակների, թաւիչների ու մէտաքսի մէջ երեակալում է բազմաթիւ ծառաներ, չքեղ կառքեր, հանդիսաւոր ձայկերութներ, մշտական ուրախութիւն, քէփ, զւարձութիւն, երաժշառ-

թիւն և էլ հազար տեսակ վայելքներ ու փառքեր ապագալում։ Այդ պատահնեկան մաքի պատրաճքները անշուշտ մեծ մասամբ չեն իրագործում ապադալում, շատ անգամ նոյն իսկ լաւ է, որ չիրագործվին էլ։

Բայց կան զէպքեր, երբ մարդ զրկւելով իր կեանքի պատահնեկան ցնորքներից և լուսերից՝ ամբողջ իր ապագալում չի կարող մոռանալ իր այդ զեղեցիկ անցեալը, ամբողջ կեանքում երանի կը տաչ ան օրերին, երբ նա ապրում էր հաւատով, ապրում էր ողերուելով. երբ նրա ամբողջ էութիւնը շրջապատած և լցւած էր մի տեսակ գաղափարական վսեմութիւնով. թող այդ գաղափարական վսեմութիւնը լինի անորոշ մեաափիզիկական, թող նա մոլորութիւն համարի հասակաւոր մարդու տեսակէտից՝ բայց գարձեալ նա շրջապատած է մի տեսակ լուսաւոր օդակով, գարձեալ նա զարթեցնում է մեր մէջ մի ազնիւ, մաքուր, անսահման զրաւիչ լիշողութիւն անցեալ կեանքում մտածած և զգացած ոսկի րոպէների մասին... Եւ իրաւ որ առսկի էին ան րոպէները Սկսեալ 17-ից մինչեւ 20—22 տարեկան հասակը, երբ մեր գիտութիւնը և կեանքի փորձը միմիան դրքերից էինք քաղում, երբ մեր հոգեկան աշխարհը անչափ ապահութեամբ կլանում էր նշանաւոր գրքերի մէջ լաւտնած մտքերի ճշմարտութիւնների, զգացմունքների և պատկերների անվերջ պաշարը, երբ մենք զեռ ևս հեռու գտանելով մեզ շրջապատող իրականութիւնից, միան տեսականապէս պատրաստում էինք այդ իրականութիւնը հասկասալու համար,—այդ գաղափարի վերացականութեան շրջանում՝ մենք ապրում էինք խկական կեանքով, ապրում էինք համոզմունքներիս, զգացմունքներիս ու զաւանութիւններիս համաձայն։ Եւ որքան հեշտ էր ան ժամանակ ապրելը, որքան քիչ դժւարութիւն էր ներկացնում կեանքը՝ իր բոլոր բարդութիւններով, կնճիռներով և հակասութիւններով։ Խոնչ էր զըս պատճառը. —պատճառը ան էր, որ մենք խոկապէս չինք էլ ապրում ան կեանքով որի հետ ֆիզիկապէս կապւած էինք, մենք հոգեկան ոչ մի առնչութիւն, ոչ մի հաստատուն կապ չունէինք մեզ շրջապատող իրականութեան հետ, հեշտ էր ապրելը, որովհետև մենք ան ժամանակ մեր կեանքը տեսնում էինք միան դրքեր կարգալու, ողերուելու և զաղափարական վիճաբանութիւն անելու մէջ, որովհետև մեր երջանկութիւնը, մեր հոգեկան բուականութիւնը կայանում էր նրանում թէ՝ ինչպէս մենք կարդում և ողերուում էինք թելինակու, Դուրովլւովի, Զերնիշեւկու, Պիսարեւի, Շելգունովի, Նալբանդիանի, Արծրունու զրւածքներով, Տուրգենեւի, Շպիլշապէնի և Բաֆֆիի վեպերով, Շէլդրինի զրած երգիծաբանական պատիեններով, Գլ. Աւստրիանոկու ժողովրդական կեանքի հետազօտութիւններով. —որանումն էր մեր կեանքը, մեր երջանկութիւնը, մեր փառասիրութեան և ինքնասիրութեան միակ ապաստանը։ Գիրք կարդալը, և ան էլ լաւ զիրք կարդալը, ան ժամանակ մեր կարծիքով միակ լաւ բանն էր կեանքի մէջ, և մենք, երեակաչեցէք

ալդ միակ լաւ բանը ալգավիսի շտապողութեամբ և ազահաբար կատարում էինք... Եւ ինչոքս չկարդավինք մենք ալդ վերոիշեալ հեղինակների գըր-ւածքները, քանի որ աջնտեղ մենք գտնում էինք ամեն բան, — ամեն հարցի, ամեն կատածի և տարակուսանաց ամենալաւ պատասխանը, թէ ինչ էին սովորեցնում մեզ ալդ գրքերը, ալդ երեւի անման հեղինակները, — մէկ մէկ թւել, հաշւել ու դառաւորել՝ անհնարին է։ Միտքն կասկած չկայ, որ մեր մտաւոր կեանքի լուսաւոր փարուսները դրանք էին, դրանք են մեզ ներ-չնչել ե՛ ազնիւ զդացմունք, ե՛ բարձր զաղափար, ե՛ հասարակական ձրգ-տումներ, ե՛ հաւասար դէպի ապագան, և իդէալ մարդկավին կեանքի։ Ահա ինչու վերոիշեալ հեղինակների անունները այսքան մօտ են մեր սրախն, այնքան սիրելի են մեզ համար։ Ավմէն իս շատ լաւ հասկանում եմ՝ զիցուք որ Պիտարեւը, կամ Շելդունովը և կամ մեր Նալբանդեանը, Արծրունին ոչ մի նոր միտք չին չաղանել ամիովզ իրանց զրականական զրցծունվութեան ժամանակ, որ նրանց արծարծած և պաշտպանած զաղափարները շատ վա-ղուց արգէն քարոզւած և տարածւած են եղել եւրոպական մեծ գրողների հեղինակութեանց մէջ։ Ալդ բանը դիմենալով հանդերձ ևս զարձեալ չեմ կարող իմ մէջ նւազեցնել ան պատկառանքը և ոէրը, որ ես վազուց սո-վոր եմ տածել դէպի Պիտարեւ, Դոբրոլիւրովի Նալբանդեան անունները, և ալդ նոյն պատկառանքը ու ոէրը երրեք ես չեմ ունեցել դէպի եւրոպա-կան աւելի մեծ և աւելի բարձր հեղինակութիւնները։ Սրա պատճառը ալն է, որ ալդ իմ սրախն մօտիկ հեղինակները իմ առաջին ուսուցիչներն են եղել, նրանք զրաւել, կախարդել են իմ պատանեկան թարմ երեակապու-թիւնը և զգացմունքները։ Ավմէն, կարդալով աւելի լուրջ և աւելի գիտնա-կան հեղինակութիւններ, ևս լաճախ նկատում, ճանաչում եմ իմ պաշտելի հեղինակների արած սիսալները, նրանց մտաւոր թուլութիւնը, միակող-մանիւթիւնը, — բայց նրանք զարձեալ մում են իմ աչքում առաջւան բարձրութեան վրայ, զարձեալ իմ մէջ չի պակասում խորին և անկեղծ համակրութեան, սիրու զգացմունքը՝ դէպի նրանց անունները։

Մեր պատանեկան լիշեալ «երանելլո» հասակում, մեր ունեցած ընդհանուր զաղափարների և համոզմունքների մէջ՝ կար մի աներկբազելի, կենդրոնական համոզմունք, որի չնորհիւ միան կազդուրւում, ամրանում և դասաւորւում էին մեր միւս բոլոր զաղափարները, համոզմունքները, — մեր ամբողջ հոգեկան հարատութիւնը։ Ալդ զլսաւոր, կենդրոնական հա-մոզմունքն էր՝ մեր ունեցած հաւատը դէպի գիտութիւնը, դէպի բարձր ընդհանուր-մարդկավին զաղափարները, դէպի մտաւոր զարգացումը։ Մենք հաւատում էինք զաղափարի ամենակարող զօրութեանը... Եւ որովհետեւ զաղափարը մեզ համար ոչ էր, գիտութիւնը և զարգացումը, (լայն ընդ-հանուր մարդկավին, աղնիւ զարգացումը) մեր համոզմունքով՝ միակ մի-ջոցն էր կեանքի մէջ ապրելու, բարձրանալու և «փոկական» մարդ զառ-

նալու, —մենք էլ աչդ հասակում՝ ամեն բան մոռացած՝ անդադար աշխատում էինք որքան կարելի է շատ մտքերի, գաղափարների, գիտնական, գրականական թէօրիաների մեծ պաշար հաւաքել մեր գլխում, աշխատում էինք՝ ինչպէս այն ժամանակ ընդունած էր ասել՝ «զարդանալ», անվերջ պարզանալո... Ա՛խ, որքան միամիտ էինք մենք այն ժամանակ, և այդ բոլոր մտաւոր բարուական պաշարը մենք ժողովում էինք ոչ թէ մի որ և է գործադրութեան, մի որ և արտաքին երեացող նպատակի համար, աչ այնպէս, ներքին, զուտ հոգեկան կատարելութեան համար: Զէ որ միր նպատակն էր՝ պատրաստել մեղանից՝ զարդացած, կատարելագործւած անհատներ... Կատարեալ անհատի նշանակութիւնը աշնչան մեծ էր մեր աչքում, որ մենք իրականութեան մէջ չգտնելով մեր ուզած կատարեալ անհատը, ազանութեամբ դիմում էինք վիպասանութիւններին, և նրանց մէջ դուրս բերած հերոսները դառնում էին մեր հետեղութեան, ընդօրինակութեան առարկաւ:

Ո՞րքան խօսակցութիւնների, տաք վիճաբանութիւնների նիւթ ևն տեսլ մեզ ծուրդինեվի վէպերը. նրա Բազարովը (Օւցի և Ջետի), նրա Խնսարովը և Նլէնան (Նախընթաց օրը), նրա Ռուդինը... Մենք աչդ մարդոց մատին խօսելիս, բոլորովին մոռանում էինք, որ դրանք վէպերի մէջ են միան զուրս բերած, և վերաբերում էինք նրանց, որպէս դէպի կենդանի մարդոց. նրանց կարծիքները, շատ անդամ նրանց խօսքերը՝ սովորական վէճերի մէջ՝ իբրև վկացութիւն, առաջ էինք բերում: Եւ ինչ ասել կուզէ, որ աչդ վիպական հերոսների ունեցած ամենաընտիր լատկութիւնները մենք աշխատում էինք իւրացնել, աշխատում էինք, որքան կարելի է նմանւել նրանց: Որքան հետեղներ ու երկրպագուներ է ունեցել մեր միջից Շպիլհագէնի Լէօն, ծուրգենեւի Բագրատովը, Բաֆֆիի Ալլանը, Կարոն, Չերնիշեվսկու Բախմէտովը, (Պիտի ձվալաւ?) Յուլիսկու Սւէտլովը (Ռագբ և տագօմք) և ազն և ազն: Եւ չպէտք է մոռանալ, որ աչդ բանում մենք դատարկ փառասիրութիւնից չէինք դրդւած. մեղանում ամեն ինչ անկեղծ էր, ամեն բան լուրջ էր, իդէալական էր: Մենք անկեղծ համակրութիւն, չարգանք էինք տածում դէպի վերովիշեալ գրականական տիպերը, և երեխաւական հաւատով հաւատում էինք, որ մենք էլ կարող ենք նրանց պէս լինել: Հատ ծանր է այս խօսառվանութիւնը, բայց պէտք է անել զարձեալ իթէ չինք ուզում, որ անցեալի վիշատակը ծածկւած մնաչ անչափ տութեան, անորոշութեան քօղի տակ, եթէ աչդ գեղեցիկ անցեալը ուզում ենք պարզել, հասկանալի գարձնել մեզ, միր աչժմեան դիտակցութեան և փորձերի հասակում: Որպէս զի իմ միտքս պարզվի թէ՝ ինչպէս մենք աշխատում էինք նմանւել վէպերի մէջ կարդացած հերոսներին՝ ևս կ'աշխատեմ մասնաւորել խօսքս օրինակներով:

Ռուսաց գրականութեան հետ ծանօթ մարդը անշուշտ ճանաչում է.

Տուրգենեւի հերոս Բազարովին։ 60-ական թւականների ռուս մամուլը համարեա լիքն է այդ հերոսի վերաբերութեամբ գրած ջողւածներով։ Եւ այդ բացատրւում է նրանով, որ Օտպի և Ճետի վէպը և նրա մէջ դուրս բերած տիպերը—Բազարովը, գլխատրապէս մի ամբողջ պատմական մոմենտ են ներկացնում՝ գեղարեսատական ձեռվ արտակալուած։ Բազարովը ներկալացուցիչ է 60-ական թւականների ռուս ինտելիգենտ երիտասարդութեան։ Այդ այն երիտասարդութիւնն է, որ Ռուսաստանում առաջացաւ ճորտերի ազատութեան և դրա հետ կապւած մի շարք բեփորմների ժամանակի ճորտավին Ռուսաստանը չէր ընդունում մարդկային անհատի ազատութիւնը և մարդու բարովական նշանակութիւնը ոչնչացրել էր, անելով նրան հլու հպատակ կալւածատիրոջ կամալականութեան։ Մարդկային անհատները, ճորտավին օրէնքների ժամանակ՝ հաւասար իրաւունքներ, ապրելու, զարգանալու հաւասար յաւակինութիւններ չունեին Ռուսասանում։ Անհատը այն չափով կարող էր չառաջազիմել դէպի իր կեանքի երջանկութիւնը, որչափով որ նրան հրամակուած էր վերելից, որչափ որ կամենում էին նրա իշխողները և տէրերը... Հրաման և հպատակութիւն, կամալականութիւն և կորավզութիւն—առա ճորտավին Ռուսաստանում ալ րող հասարակական բարք ու վարքը։ Ճորտերի ազատութեան ժամանակ՝ Ռուսաստանում բոլորովին նոր քամի փից։ Ամբողջ կառավարչական մարմինը, բարձրագուն Պետրի կամքով՝ պաշտօնապէս ընդունեց, որ ճորտերը նոյն իրաւունքները պիտի վայելն տէրութեան մէջ, ինչ որ վայելում են իշխող կալւածատէրերը։

Այդ հաւասարութեան գաղափարը շուտով ահագին իրարանցում առաջացրեց կեանքի մէջ և ունեցաւ դորձնական հետեանքներ։ Երիտասարդութիւնը, որպէս հասարակութեան ամենադիւրազգաց մասը, ամենից լաւ ըմբռնեց իր ժամանակի ողին և ճորտավին հպատակութեան, ստորութեան զգացմունքի հակառակ՝ սկսեց զարգացնել իր մէջ անհատի ազատութեան, անկախութեան ողին։ Եւ այդ նոր ճգտութը,—անհատի մարդկային իրաւունքները բարձրացնելու, սրբազործելու այդ ուժեղ ցանկութիւնը՝ որպէս մի բողոք հնութեան, ճորտավին իրաւունքների դէմ՝ ունեցաւ իր մոլեռանդ վարդապետները և հետևողները։ Ահա այդ մոլեռանդներից մէկն է Տուրքենեւի Օտպի և Ճետի վիպասանութեան հերոս Բազարովը։ Թէ համոզմունքների ամբութեան և թէ ինքնուրոշնութեան ոգու կողմից՝ Բազարովը իսկ որ մոլեռանդ է։ Որպէս մեծ վերանորոգութիւնների ժամանակի մարդ՝ Բազարովը խիստ քննութեան է ենթարկում ուսուաց կեանքի անցեալը իր բոլոր սովորութիւններով ու տրադիցիալով։ Եւ այդ բանի մէջ,—կեանքի վնասակար պարմանները քննութեան են։ Թարկելու և ծաղրելու մէջ—Բազարովը կատարեալ վիրտուօզութեան է հասել։ Նրա քննող ու վերլուծող խելքը, նրա անբողոքող բնաւորութիւնը,

գաղափարների վերին աստիճանն պարզութիւնը, որ չի թուլ տալիս նրան կառկածելու իր ոչ մի կարծիքի մէջ անդամ, — Բազարովին տալիս հն մի անսպիսի հոգեկան ոչ, որով նա կատարեալ հեղինակութիւնն է ստանում իր շրջապատող երիտասարդների աչբռւմ. նու վերին աստիճանի չափ-զըդնութիւնը, երբ հարցը գալիս է իր գաղափարների սրաշտականելուն, նրա անստիպողականն, համարձակ վարւողութիւնը մարդոց հետ, ինչ պաշտօնի և դիրքի տէր ել որ լինէին ալդ մարդիկ, նրա չափազանց անկեղծութիւնը, պարզ և հասարակ սովորութիւնները — սոքա ախափիսի չափ-կութիւններն են, որոնցով չի կարող չդրաւել մարդ, և այն էլ պատառնեկան հասակում: Եւ իրաւ, Բազարովը ունեցաւ ահազին թափ հետեղութիւնը ուռւ երիտասարդութեան մէջ, և ալդ չարժումը չափանի է ուռւաց զրականութեանը՝ «Բազարովչինա» անունով: Իթէ ոչ այն չափով, ինչպէս Ռուսաստանում, միայն կութիւնով և հետևանքներով ոչ պակաս ընդունելութիւն գտաւ Բազարովը և մեր հայ երիտասարդներին մէջ, մեր պատանեկան հասակում: Մինք ոչ միայն կարդում, ուսումնասիրում էինք Բազարովի կեանքը, նրա աշխարհակացութիւնները, ալ և ամեն բանում աշխատում էինք նմանել նրան, աշխատում էինք լինել նրա պէս դրական, անկախ և համարձակ, աշխատում էինք իւրացնել մեղ այն տեսակէտը, ինչ որ պաշտպանում էր Բազարովը, — նաև ել կեանքի և իրերի վրայ նրա աչքերով: Շատ քիչ է պատահում վիստական մի զրւածքի ալդ-պիսի ծառաւսւթիւն անել ընթերցող հասարակութեանը, ինչպէս ծուրգենեւի լիշեալ վէպը, իսկ վիպական հերոսների մէջ Բազարովը կարող է անման համարւել, Մեր զրականութեան մէջ նովնակս կան թեթև փորձեր՝ նոր մարդիկ, նոր ձգտումներ և նոր աշխարհականցողութիւն զուրս բերել վիպասանութեան ձևով: Բայց ալդ փորձերը, բացի Բաֆֆիի «Կաչքերից» միշտ մնացել են անձմարելի և ոչ Բաֆֆիի Սասիսեանը (Ուսկի աքաղաղ), ոչ էլ Սունդուկնանի Միքայէլը (Ելի մէկ զոհ) չեն կարող բոլորով վին համեմատւել ծուրգեններ հերոսի հետ: Այս է իսկական պատճառը, որ մննք, հայ պատանիներս և երիտասարդներս, այնքան ազահութեամբ կարդում էինք ուռւաց գրականութեան նշանաւոր ստեղծագործութիւնները:

(Յարուճակելի)

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱԱՐԳԻՍԵԱՆ, վարդապետ, Միհիթար. ուխտից. — «Ազաթանգեղոս և
իւր բազմամեայ դադոնիքն»: Վենետիկ, 1890 թ..

Յօդւածագիրս ուրախութեամբ
խօսում է ալոր մի քննադատական
աշխատութեան մասին, որը գրւած է
գերմանական պատմական-քննադա-
տական մեթոդ և ըստ իւր արժա-
նեաց և արդեանց առաջին գիտնա-
կան աշխատութեանց հետ մրցել
կարող է: «Ազաթանգեղոս և իւր
բազմամեայ գաղտնիքն» մեծաձան
վերնագիրն ոչ միան ոչ մի չափա
զանցութիւն չէ պարունակում, այլ
և շատ համեստ է այն արդեաց հա-
մար, որ արժանապատիւ հեղինակը
ցոլց է տալիս իւր հետազօտութեան
մէջ, որովհետև նա, չշատանալով
միան Ազաթանգեղոսի պատմական
դրքի հետազօտութեամբ, իւր աշ-
խատանքի ընթացքում դէպքից օ-
գուտ քաղելով, արժարծում և մե-
ծաւ մասամբ լաջող կերպով վճռում է
բազմաթիւ կողմնակի հարցեր, մեկ-
նում է հալոց պատմութիւնից և զրա-
կանութիւնից շատ մութ տեղեր։
Այսպէս նա, զլ դ. եր. 25-38 խօսե-
լով Ազաթանգեղոսի աւանդութեան
մասին որը նա տալիս է Հայաստա-

նի քաղաքական կացութեան մասին
խոսրով Մեծի մահից իւտով, ըստ
արաւաքին պատմագիրների մեզ տա-
լիս է Հայաստանի 100-ամեալ քա-
ղաքական կացութեան ճիշդ նկա-
րագիրը (195—297): Գլ. ե. երես
38—54 նա խօսելով Ազաթանգե-
ղոսի օխոր վիրապինո վերաբերեալ
տւած տեղեկութեանց մասին, միծ
կորովով մեկնաբանում է, թէ ինչ
էր «Խոր վիրապը», ուր Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ 15 տարի ապրեց։
Գլխ. ժ. երես 119—157 խօսելով
Ազաթանգեղոսի հալոց հեթանոսա-
կան կրօնի վրալ տւած տեղեկու-
թեանց մասին, նա մեզ այդ հարցին
վերաբերեալ մի անպիսի հիմնաւոր
և հետաքրքիր լոկւած է ընծալում,
որը մինչև ալոր երեացածներից ոչ
մէկից լետ չէ մեռում: Գլ. ժա. երես
157—203 խօսելով այն նախա-
րարների մասին, որոնք Ս. Գրիգոր
Լուսաւորչին կեսարիա ուղեկցեցին
ձեռնադրութեան համար, նա պար-
զաբանում է լաջողութեամբ այն
ժամանակւայ Հայաստանի նահան-

գական բաժանման հարցը. Ընթերթողը կը գտնէ և ազ շատ կողմնակի խնդիրներ, որոնք գովելի կերպով հետազոտած և մեկնած են.

Հեղինակը քաջ ծանօթ է իւր առարկալին վերաբերեալ բոլոր աղ բիւրների և բոլոր երկասիրութեանց հետ. Նրա գիտնական պաշարը շատ ընդարձակ է, հազիւ գտնւի մի աղբիւր կամ աշխատասիրութիւն, որ ժրածան հեղինակի սուր աչքից անտես մնացած լինի. Աւտեղ ընթերցողը լիշւած է գտնում բաղմաթիւ աղբիւրներ և աշխատութիւններ հին և նոր լեզուներով՝ պատմութեան, դրականութեան, աշխարհագրութեան, զրամագիտութեան, ասուածաբանութեան վերաբերեալ. Հայր Սարգիսեանը իւր քննադատական հարցերի լաջող լուծման համար մինչև անդամ դիմում է Les Mille et un jours գրքին (եր. 72) և անշուշտ Les Mille et une nuits-ից ևս օրինակ բերած կը լինէր, եթէ ալդ կարեոր համարէր:

Հ. Սարգիսեանը իրեն նպատակ է զրել, Աղաթանգեղոսի բաղմակընճիր խնդիրը լուծել: Խնչպէս լաւոնի է, Աղաթանգեղոսը համարում է մեր ամենաերանելի Տրդատ արք չի քարտուզարը, որը նորա հրամանով հաջոց դարձն ի քրիստոնէութիւն զրել է: Դեռ ևս մեր պատմութեան հարցը, հայր Միքայէլ Զամշեան, իւր «Հայոց պատմութեան» մէջ հատ. ա. եր. 385 համարում է Աղաթանգեղոսին «ականատես վկալ»: Իսկ հայր Սարգիսեանը ցուց է տալիս, որ ոչ միայն Աղաթանգեղոսն իւր պատմած դէմքերին ականատես չէ եղել,

ալ որ նա բնաւին չէ ապրել, որ մեր ձեռքը հասած ալժմեան «Աղաթանգեղաչ պատմութիւնը» լառաջացել է աւելի ուշ ալ և ազ աղբիւրներից: Եւ իրաւ, միայն մարմնացեալ անշարժութիւնը, հայր Սարգիսեանի քննադատութեան ընթերցումից չետով, կը մնաւ իւր հին կարծիքին: Հայր Սարգիսեանը կարծեցեալ Աղաթանգեղոսի գոլութեանը ալսպիսի մահաբեր հարւած է տւել որ մարդը հետազոտութեան ընթերցումից լետու ստիպւած է Երեմիալի խօսքերը կրկնել: «Ի զուր լաճախեցեր զրժշկութիւն քո և օգուտ չի քուսեք քեզի կուսդ զուստը Եղիպտոսի, լուան զգուժ քո աղբք և աղաղակաւ քով լի եղել երկիր» (Երեմ. խզ. 11—12): Հայր Սարգիսեանը ալս ալպացուցանում է նախ համեմատական քննութեամբ: Նա Աղաթանգեղոսի աւանդութիւններն համեմատելով արտաքին պատմագիր ների աւանդութեանց հետ, գտնում է, որ նոքա միմեանց գլխովին հակասում են, հետեւապէս նոցանից մինը կամ միւաը ուղիղ կարող է լինել: Բայց որովհետեւ արտաքին պատմագիրների աւանդածները ուղիղ և անկատկածելի պատմական զէպքեր են, հաստատած նաև զրամներով, ուսափ Աղաթանգեղոսի աւանդածները ումանք ըստ կամս հերիւրեալ են, և աւելի լեղաշընած ըստ մողովրդական վիսպաց և զրուցաց հայոց: Իսկ ընդհանուրին ընթացքը հակառակ է արտաքին պատմագրութեան լուծաց և հոռվակեցոց» (եր. 38): Երկրորդ, նաքննելով Աղաթանգեղոսի մի քանի ալ աւանդութիւնները, գտնում է,

որ նոքա և priori անկարելի, նոյն իսկ անմիտ բաներ են, Եւ սոցանից արժանապատիւ հեղինակը ամենայն իրաւամբ եզրակացնում է, որ Ագաթանգեղոսն ոչ ականատես պատմագիր է և ոչ էլ նրա աւանդութիւնները հարազատ պատմագրութեան չարգ ունին (եր. 31 և 84): Համառօտենք աշխանդ հայր Սարգիսեանի առարկութիւնները:

Երես 30 հայր Սարգիսեանը գըտնում է հետեւեալ ժամանակագրական սխալները.

ա) Ագաթանգեղոսն ասում է, որ Խոսրով Մեծն մեռել է 10—12 տարի Արտաշրի գահակալութիւնից չետու (ասինքն 236—238 թւականին). Ե միենո՞ն ժամանակ պատմում է թէ Նա թագաւորել է մինչև 260 թւականը. Սական ակդ անկարելի բան է:

բ) Ագաթանգեղոսը պատմում է, Խոսրով Մեծն Հռովմագեցոց Փիլիպպոս կալսեր (244—249) օգնութեամբ վերոբիշեալ Արտաշրի դէմ (226—241) պատերազմներ է մզել, որը նոյնպէս անկարելի է:

գ) Ագաթանգեղոսն աւանդում է, որ Արտաշրը Խոսրովի մահից չետուց, որ տեղի ունեցաւ 236 թւականին, 26 տարի առանց ընդհատութեան, ալսինքն մինչև 262 թւականը, տիրել է Հայաստանին. Այս ևս անկարելի է, որովհետեւ Արտաշրը արդէն 241-ին մեռած էր:

դ) Ագաթանգեղոս պատմում է, որ Տրդատը Խոսրովի մահից չետուց (+236) Հռովմ ազատելով, սնաւ և ուսաւ Լիկինիոս կոմսի մօտ. Սական ալս անկար բաելի ն է, որովհետեւ

Լիկինիոսը Տրդատից շատ կրտսերէ. Նա 263 թւականին ուր ուրեմն գեղջուկ ծնողներից ծնաւ:

ե) Ագաթանգեղոս պատմում է, որ Տրդատ 286 թւականին Հայատան վերադառնալով, իսկուն և եթ Շապոհ Ա. (241—272) հետ չարաշար պատերազմներ սղեց, որը նոյնպէս անկարելի բան է, որովհետեւ Շապոհ Ա. 272 թւականին արդէն մեռած էր, իսկ Շապոհ Բ. թագաւորեց 309 թւականին:

զ) Քրիստոնչութիւնը ընդունող Տրդատը կոչւում է ոչ թէ Տրդատ Ա., ինչպէս սխալմամբ աւանդում է Ագանթագեղոսն, ալլ Տրդատ Գ. (եր. 37), Տրդատ Ա. ապրել է Ներոն կայսեր ժամանակ, իսկ Տրդատ Բ.-ը Տրդատ Գ.-ի պապն է (Երես 33): «Իրեմ զսէցն Տրդատ, որ սիզալով աւերեաց զթումբ գետոց, և ցամաքեցոց իսկ ի սիզալն իւրում զցորձանս ծովուց» ժողովրդական երգը պատականում է Տրդատ Ա.-ին և ոչ թէ Տրդատ Գ.-ին, ինչպէս Ագաթանգեղոս սխալմամբ պատմում է (Երես 45):

է) Խոսրով Մեծի տասնամեաց պատերազմները (228—237) և չաղթութիւնները Արտաշրի դէմ միանդամն հակառակ են արտաքին պատմագրութեանց, ուստի և արդինք «ազգակին մնապարծութեանց» (Երես 26):

ը) Հակապատմական են նաև Տրդատ Գ.-ի մասին աւանդւածները, ալսինքն նրա կարծեցեալ պատերազմները և չաղթութիւնները Շապոհ պատմ պարսից թագաւորի դէմ: Հռովմ ալսեցոց կալսեր Դիոկղետիանոսի և

պարսից թաղաւոր Ներսէնի մէջ պատերազմ ծագելով, Գիոկղիտիանոսի զօրախար Գագերիտուը լաղթելով պարսից, Մծբին քազաքու 297 թւականին 40 ամեալ դաշն է կապում պարսից հետ, որի պատմաններից մինն էլ աճն էր, որ Ներսէնը հայոց թաղաւորութեան անկախութիւնը ճանաչում է, և ալսպիտով Տրդատ Գ. հւովմակեցոց օգնութեամբ 297 թւականին հաստատում է « լաթոռ կործանեալ կամ լսու և լքեալ և բաժանեալ թագաւորութեան Արշակունեաց» (Եր. 36): Եւ որովհետեւ աճս դաշն մինչն 337 թւականը ըստ ծանրակշիռ պատմագիրների անխախտ պահպանմալ է, ուստի « եթէ իրօք ևս ուզէր հոկալազօրն Տրդատ՝ չէր կարող « զամենալն ժամանակս իւրութագաւորութեան աւերել, քանիդել զերկիրն պարսից թագաւորութեան» (Աղաթանգեղոս Երես 49) առանց 40 ամեալ դաշին դրժելուց (Եր. 36): Շինծու են նաև Տրդատակ անեղ պատերազմները լետ ընդունելով զքրիստոնէութիւն և հակառակ Փաւատուի ասածին, որը դպր. գ. գլ. 15 աւանդում է, թէ Տրդատը քրիստոնէութիւնը ընդունելուց լետով խաղաղ կառավարութիւն ունեցաւ:

թ) Աղաթանգեղոսը Տրդատի պատուհասւելն պատմելով ասում է. « Անձզակեալ ստիւք և ձեռօք, կնձմաւն գոճանաց, մեծամեծ ժանեօք և խոզանասու մորթով... բոխոհելով փրփրացեալ զիզեալ զկնձթակերպ երեսօքն. . . » Տրդատի կարծեցեալ քարտուզարը լետով պատմելով Գրիգորի վաթմանօրեալ քարոզութիւնը, նորան դարձեալ խողակերպ է հաճ-

դէս բերում ասելով. « Խակ թագաւորն Տրդատ դեռ ևս չաշնժամ էր լամնաւն կերպարանս խոզի՝ բացի մարզկապէսն խօսելուն»: Արդ ալս անմիտ և անտեղի, այն, մինչեւ անդամ լանդուզն հէքիաթները մինչեւ հիմակ բանասէրները մեկնում էին աճն պէս, իբր թէ Աղաթանգեղոսի խօսքերը բառացի չպէտք է հասկանալ, որ Տրդատը խոկապէս խող չէ դարձել և ազն Ասկալն մի ալսպիտի բացարութիւն պարզ ինքնախարէութիւն է, որովհետեւ հասկացողի համար շատ պարզ է, թէ Ա. Տրդատի կարծեցեալ քարտուզարը կամ լաւ ևս ասել՝ աճն կոպիտ և տղէտ գըրչակը, որ ծածկւած է Աղաթանգեղոս անւան վարագուրի տակ, Տրդատի մասին ինչ է ուզում ասել: Ուստի հայր Արդիունը աճս տեսակ բացարութեանց չէ զիմում, ալ եր. 84 Աղաթանգեղոսի վերոլիշեալ վկանութիւնը մէջ բերելով արզարացի զարդութով բացականչում է. « Եւերէ ալս ակամակ բացարութեանն, ով երանելիդ ի թագաւորու» և եր. 84. « Բարէ զարծաղարձ անդամարութեանց, լորում կը ներկալացնէ կենսուզիրն զիմապատկեր իմն ճշմարտութեան՝ ընդ սոսութեան, հնարաւորին ընդ անհնարութեան, ծազուն նշաւանաց ընդ կարեկցութեանուն և իրաւ, որ բանական մարզը, որ առողջ դատողութեան տէր է, կարող է մի ալսպիտի անմիտ հրաշքի հաւատ ընծակել, մի հրաշքի, որի նմանը սուրբ Գրքում իզուր կը լինէր որոնել: Որովհետեւ աճնտեղ Պատմի կինն քար դառնալով կորցնում է նաև իւր բանականութիւնը և խօ-

սելու ընդունակութիւնը, իսկ պատեղ Տրդատը խող զառնալսվ, պահպանում է բանականութիւնը և խօսելու կարողութիւնը: «Աղաթանգիւղու» այս նկարագրութիւնը տալով, անշուշտ ուզում է Ս. Գրիգորի ամենակարողութիւնը ցուց տալ, բայց աւաղը, որ նա այս աստիճանի նւաստացրել և սատրացրել է հաջոց արքացին, որին միակ վերագրելի է քրիստոնէութեան ընդրկումն և տարածումն Հայաստանում, որի վիշտակը ամեն մի հաջու համար նորնպէս սուրբ և նւիրական է, որչափ Ս. Գրիգորինը:

ժ) Ականատես պատմագրի գըրչից չէ կարող ծագած լինել նաև «Խոր վիրապի» նկարագիրը: «Խոր, դժնդակ, դառնաշունչ, վասն կարակում տղմին, օձախառն բնակութեան, Վասն չարագործաց իսկ էր շինեալ զան տեղին և ի սպանումն մահապարտաց ամենաշն հալոց», Ալստեղ հայր Սարդիսեանը իրաւամբ հարցնում է: «Յիրաւի, եթէ բովանդակ Հայաստանի մահապարտներն ալպտեղ կը ծգւէին, ընթացս հնդետասն ամաց՝ ինչպէս Ս. Գրիգոր չծածկեցաւ ալդ բազմաթիւ զիականց ներքե, կամ ալդ հորը ինչպէս չլցւեցաւ նոցա դիակօք, առ որ ամիս մի միան բաւական էր» (Երես 52): Յետոյ փոքր ինչ ներքե հայր Սարդիսեանը, ինչպէս ասացինք, չառ նկատում է, որ խոր վիրապն ոչ ազ ինչ է եղած, եթէ ոչ մի դժնդակ բան, նման Անկուշ և Մամերտեան բանտերին:

Աղաթանգեղոսի գրից ուրիշ շատ օրինակներ ևս հայր Սարդիսեանը առաջ է բերում, որոնք ա-

ռասպելի գրոշմ են կրում. զորօրինակ Տրդատ, որին Գրիգոր երկար ժամանակ ծառակիլ էր, երբ վերջինս հրաժարում է Անահտի արձանին երախտեաց չնորհակալիք մատուցանելու, այն ժամանակ առաջին անգամ ճանաչում է, որ Գրիգոր քրիստոնեալ է (Երես 40): Տրդատը եօթն օր անընդհատ տանջում է Գրիգորին, նա օգի մէջ կախւած խօսում է և նշանագրերը դրում են. սական մեղ ոչինչ չէ աւանդում Տրդատի կարծեցեալ քարտուզարը, թէ Գրիգոր ինչ է խօսել: «Միթէ ալդ եօթն աւուրց մէջ, ոչ մի արքունական բանակցութիւն... չպատհեցաւ» (Եր. 41): Աղաթանգեղոսի աւանդութիւնը, թէ Գրիգոր Դիցաւանում եօթն օրւակ մէջ պարքունական բանակէ անտի՝ մկրտեաց ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի աւելի քան զչորեքհարիւր բիւր» ալսինքն 4,000,000, չափազանցութիւն է (Եր. 208): Ալգրան և աւելի ապացուցներից էնտոյ, որ Հ. Սարդիսեանը բերում է Աղաթանգեղոսի անգութեան համար, նա Եր. 264 վերջապէս ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վերաց, որ Աղաթանգեղալ գիրքը առ նւազն 103 տարւակ պատմութիւն է պարունակում (222—325), և որովհետեւ կարծեցեալ Աղաթանգեղոսը ալաքան դէպքերի ականատես լինել չէր կարող ուստի նորա վկաչութիւնը իւր մասին, թէ «Ո՛չ եթէ ի հին համբաւուց տեղեկացնալ և մատենագրեալ զայս կարգեցաք, ալ որոց մեղն իսկ ականատես կերպարանացն և առընթերակալ գործոն և լսողք

շնորհապատում վարդապետութեան և
նոցին արբանեակք ըստ աւետարա-
նական հրամանացն» կեղծ է և ան-
հարազատ:

Սորանից լիտոյ արդէն նա
անցնում է մի այլ կէտի, այն է
ցուց տալ, թէ երբ և ինչ աղբիւր-
ներից Ագաթանգեղոսի ալժմեան
պատմագրական գիրքը առաջացել
է, Այս նոր հարցերի մասին մենք
երկար խօսել չենք կարող, չկատե-
նալով մեր լողածը շատ երկարաց-
նել: Հայր Սարգիսեանը Ագաթան-
գեղոսի ալժմեան պատմական գիրքը
չառաջացած է համարում չորս աղ-
բիւրներից, որոնք են ա. Պատմու-
թիւն կամ կենսագրութիւն Գրի-
գորի, բ. Պատմութիւն Մեծին Խոս-
րովու և Տրդատայ, գ. Վ.կալութիւն
սրբոց Հռիփիսինանց, դ. Հատուկսոր
հատւածք խմբագրի գրոց (եր. 265):
Սակայն հայր Սարգիսանի այս են-
թաղրութիւնը համոզվէ փաստեր
չունի իւր համար, Ագաթանգեղոսի
գիրքը կարող է նաև այլ, աւելի
կամ պակաս հեղինակութիւններից
լառաջաղաւած լինել:

Հայր Սարգիսեանի քննադատու-
թեան արժանիքը միանգամայն խոս-
տովանելով, ինչպէս և հարկը պա-
հանջում է, մենք հիմա ցանկանում
ենք նորա մի քանի թերութեանց
վրայ ուշադրութիւն դարձնել, ինչ-
պէս ամեն մի գիտնական, այնպէս
էլ պատմաբանը ունի մի սահման,
որին նա համեն լով, կանգ պէտք է
առնէ և ցաւօք սրտի բացականչէ.
Non liquet!—այլևս հնար չկաչ առաջ
գնալու Ահա այս սահմանը կարծես
թէ հայր Սարգիսեանը ճանաչում

չլինի, նա ցանկանում է և այնպիսի
հարցերի լուծում տալ որոնք պատ-
մական լիշտակարանների բացա-
կալութեան պատճառով դեռ ևս ան-
լուծանելի են: Այսպէս հայր Սար-
գիսեանը Զ. զլխում գրում է. «Վ.կա-
լութիւն Հռիփիսիմեանց և նորա գաղտ-
նիքը» կարդում է ընթերցողն այս
գլուխը մինչև վերջը, այն ժամանակ
նա տեսնում է, որ հայր Սարգիսեա-
նի փորձը Նապոլէոնի եղիպատական
արշաւանքից էլ արկածախնդրական
է: Թողլ լսէ ընթերցողը և տեսնէ:
Հայր Սարգիսեանը իրան նպատակ
է դրել ցուց տալ, որ Գալանէն ոչ
այլ ոք է, ևթէ ոչ Դիոկղոսիանոսի
ամուսին Պրիսկան, իսկ Հռիփիսիմէն
սրա դուսարը՝ Վալերիան (եր. 70):
Անոնների տարիերութիւնը այստեղ
հայր Սարգիսանի համար նշանա-
կութիւն չունի, նա ուղղակի ասում
է, որ «Հռիփիսիմէ անունն անկատուկ
կերպով է գործածւած, այսինքն,
ընկեցեալ լաւո է թէ ի ծիրա-
նավառ տիկնութենէ անտի» (եր. 72):
Հայր Սարգիսեանը Հռիփիսի-
մեանց գալուատն ի Հայս և նահա-
տակութիւնը զլխովին պատմական
համարելով (ընդդէմ Գուղչմիթի),
նախ և առաջ մի հաւատարիմ նկա-
րագիր է տալիս այն անլուր և քստ-
մելի հալածանքների, բռնաբարու-
թիւնների, որոնց Մաքսիմինոս
բռնակալն անմեղ քրիստոնեակ կու-
սերին ենթարկեց (եր. 68), և լետոչ
իրաւամբ նկատում է, որ Հռիփիսի-
մեանք և Գալանեանք ես այն հա-
լածական կուսերից պէտք է եղած
լինին, որոնք իրանց անմեղութիւն
և սրբութիւնը պահպանելուն համար

օտար աշխարհ էին փախում։ Հը-
ռիսիս. և Գայան, հայր Սարգիսեանի
կարծիքով Վալիրիան և Պրիսկան են։
Ահա թէ ինչպէս է ցոյց տալիս հայր
Սարգիսեանը նոցա նոցնութիւնը։
Լակտանտիոս եկեղեցական պատմա-
գիրը Պրիսկալի և Վալերիալի մա-
սին պատմում է, թէ նոքա իրանց
հաւատքի համար Դիոկղետիանուից
հալածւեցան, ապա առանձնակի Վա-
լերիալի մասին, թէ երբ նա Վա-
ղերիոսի մահով ազրիանում է, նրա
հարսնութիւնը նախ խնդրում է Լի-
կինիոսը և ապա Մաքսիմինոսը։ Սա-
կան երկուսին ևս մերժելով, նա
պատրուում է Ասորիքի անապատե-
րը Ալստեղ հայր Սարգիսեանը գրտ
նում է Հռիփսիմեանց հալածանք-
ները պատմւած։ «Ո՞չ ապաքէն Լակ-
տանտիոսի ալս աւանդութեանց
վերակ ջրինւած են Հռիփսիմեանց
հալածանքները» (Եր. 70)։ Յետու
պատմում է «Դիոկղետիանուի
պատկերաց» (ալս խորհրդաւոր
խօսքը հայր Սարգիսեանը ինքը
ընդգծել է) ի բաց բարձումն և խոր
տակումնու։ իսկ հայր Սարգիսեանը
ալստեղ գտնում է Հռիփսիմեանց
պատկերների նկարագրութեան պատ-
մութիւնը (Եր. 70)։ Նոյն Լակտան-
տիոսը պատմում է, որ Վալերիան
ամուլի էր, ալդ պատճառով որդե-
գրել էր Կանդիդիանոս ոմն։ Երբ նա
լում է, որ Մաքսիմինոս կանդի-
դիանոսին Նիկոմեդիացում գերել է,
առնացի զգեստով շտապում է այն-
տեղ, բաց լսելով որ իր որդեգիրը
արդէն մահացած է, փախչում է ալս-
տեղից և արևելեան աշխարհներում
15 ամիս թափառելով էետու իւր

մօր Պրիսկալի հետ միասին նահա-
տակւում է Թեսաղոնիկէում, որոնց
մարմինները ծովն են ձգւում։ Ակս-
տեղ հայր Սարգիսեանը գտնում է
«Հռիփսիմեանց գալուստն ի Հայս,
լաւանւիլն ի Վաղարշապատ քաղա-
քի և աղետալի նահատակութիւնը»։
Մաքսիմինոս հայր Սարգիսեանի
կարծիքով=Տրդատէս, Թեսաղոնիկէ
=Վաղարշապատ, երեխ ծովն էլ ուր
գգւեցան Պրիսկալի և Վալերիալի
անշնչացած դիակները, = Արարա-
տեան գաշտին, որի վերակ որո-
շեալ ժամանակ Հռիփսիմեանց և
Գայանեանց անշնչացած դիակները
մնում էին, Նոյնպէս հայր Սարգի-
սեանը որոնում և գտնում է, որ
Գայանէն «ստուգիւ (?! մաչը էր
և ըստ մարմնոյ Հռիփսիմէի, և սա
զուտոր նորա» (Եր. 70)։

Բաց ոչ, այս ենթաղրութիւննե-
րը հաւանականի սահմանից շատ հե-
ռու են գնում, և հեղինակը ալս նկա-
տելով երես 70 բացականչում է.
«Սական միան ալս կէտ կաչ, որ
իբրև պատւաւոր կը թւի անջատել
Վալերիանս ի Հռիփսիմեանց, ալս-
ինքն է, նոցա նահատակութեան
տեղեաց տարբերութիւնը։ Եւ կիրա-
ւի, եթէ ոռքա ի Թեսաղոնիկէ և
նոքա ի Վաղարշապատ Հայոց կա-
տարւեցան, անուհետու չէ մարթ նոյն
համարելու։ Բաց և անվէս հեղինա-
կը չէ գալթակում ոչ մի կերպով,
ալլ շարունակում է. «Սական ես ա-
ւելի կընտրեմ ալս վերջին պարա-
գակ (ալսինքն տեղերի տարբերու-
թիւնը) խնդրու և տարակուսանաց
տակ ձգել (թէպէտև ալս երկու հե-
ղինակութիւններն իբրև անտարա-

կուսելի իրողութիւն կ'աւանդեն), քանթէ միացած բոլոր քաջազիպութիւնքը (?!):

Եր. 151—154 կամենալով ցուց տալ, որ Ագաթանգեղոսի լիշած Բարձիմինա (Բարչամին) «զիցուհի էր և ոչ դիք», ապացուց է բերում այն, որ «Ագաթանգեղոս նորան կը նծածած է սպիտակ ափառ մակղիրը, որ աւելի արծաթափալ (?) լուսնին կը նմանի, քան թէ ոսկեգուն (?) արեգական»: Տէր բառը նորա բացատրութեան համաձան չառաջացել է Տիւր ասոսուծոյ անունից (Եր. 152): Հայր Սարգիսեանի հետազօտութեան մէջ աչքի է ընկնում նաև այն հանգամանքը, որ Մովսէս Խորենացին նորա աչքում իւր պատմագրական հեղինակութիւնը և կըխոր անհնապահանել է: Նա նրան երեսում է իրըն պազմանմուտ հեղինակ, առ որ ախորժելի է դիմնել միշտ իբրև Գեղփեան Ապողոնի» (Եր. 214), չնայելով, որ ինքը հայր Սարգիսեանը Մովսէս Խորենացու մօտ բազմաթիւ պատմագրական սխալներ և անհարազատութիւններ է գտել (որոնց մէջ հաշում է նաև այն տարակուսանքը, որը Հ. Սարգիս, արտաքին պատմագրութեան վերաէ հիմնելով Եր. 41 չափնում է Բագրատունեաց թագադրական և ասպետական արտօնութեան մասին):

Զենք կարող գովել և հայր Սարգիսեանի այն բանակուիը, որ նա մղում է իր հակառակորդների դէմ Հակառանեաց եկեղեցու Նւիրապետութեան մասին (Եր. 184—203): Հայր Սարգիսեանը Տրդատի ի Հըռովմ դնալն պատմական է համա-

րում իսկ Առորք Գրիգորինը՝ տարակուական, անստուգ (Եր. 254): Նա երես 186 խոստանում է Նորապետութեան հարցի մասին առանց կողմանապահութեան, իբրև քննառութիւն խօսել, սակայն շուտով իր խոստանման մոռանալով, հալոց համար մի աճնակիսի եկեղեցական պատմութիւն է գրում, որը Հալոց Ակեղեցական պատմագիրներին անձանոթ է: Նորա կարծիքով Հալոց բոլոր կաթողիկոսները՝ Լուսաւորչից սկսած մինչև «Քաղկեդոնի սուրբ (?) Ընդհանրական ժողովը» (451) հպատակ են եղել «Անօպարիու նախաթոռութեան»: Ի հարկէ այս ալլանդակութեանց պատմախանել, կը նըշանակէ գնալ նոյն ճանապարհով, որով ընթացել է հայր Սարգիսեանը, որը ինձ ախորժելի չէ: Այսքանը կ'ասեմ միայն, որ Քաղկեդոնի ժողովը, որին պաշտպան հանդիսանաւ: Լով հայր Սարգիսեանը վերովիշեալ զլուին դրած է, մեր նախնիք բացէ ի բաց նզովել և խոտել են, և պաշտպան հանդիսանալով առաջին երեք ընդհանրական ժողովներին, իրանց արիւնով ներկել են իրանց եկեղեցիների քարերը: Եւ երբ մենք ակսօր, 1443 տարուց լետու, անաշառ կերտով աղբիւրները քննում ենք, փառք ենք տալիս Նախախնամութեանը, որ Հալք սիսալած չեն, որ Քաղկեդոնի ժողովը վիրաւի հակառակ է եղել առաջին երեք ընդհանրական ժողովներին, որ Հալք ի զուրչեն աճնքան արիւն թափել: Ուր առածը ստուգելու համար թող հայր Սարգիսեան և ալլք կարգան նորագոյն և անաչառ հետազօտութիւննե-

ըը Քաղկեդոնի ժողովի մասին, թող
նոքա կարգան անաշառութեամբ
Հառնակի, Լովսի, Վալցզէկէրի և
ալցոց հետազօտութիւնները ալդ խնդ-
րի վերաբերութեամբ, և այն ժա-
մանակ նոքա կը համոզվին, որ մեր
առածը ուղիղ է:

Բայց և այնպէս մենք առացինք
և կրկնում ենք, որ հայր Սարգի-
սեանի քննադատութիւնը մի շատ
գնահատելի աշխատութիւն է, ար-
ժանի ամեն մի բանասիրի ուշադրու-
թեան: Նա հետաքրքիր է ոչ միայն ավա-
րանասէրների համար, որոնք միայն
Աղ սթանգեղոսի պատմութեամբ են
հետաքրքրում, ալլ և նոցա համար,

որոնք Դ. և Ե. գարերի հաւոց պատ-
մութեամբ և գրականութեամբ հե-
տաքրքրում են: Եւ երբ մի հաչ
բազմաշխատ (թէպէտն ոչ բազմա-
վաստակ) հեղինակի «Հաջաստանեաց
Ակեղեցին» արժանանում է Սահակ-
Մեսրոպեան մրցանակին), իսկ Հ.
Սարգիսեանի այս քրտնաշան վաս-
տակը մերժւում է, մենք բողոքում
ենք ալդ գրականական պիղատոսու-
թեան դէմ:

Հեղինակի լեզուն խիստ անսա-
հուն է, մանաւանդ մեզ Ռուսա-հա-
յերիս համար, մի տեսակ խառնուրդ
զրաբառի և Պոլտոչ բարբառի:

Յոր. Դաշտաշեան

Ա. ԲԱԼԱՋԵԱՆԻ „ԴԱՐԻՒՄԻՍՄԻ“ ԱՌԻԹՌՎ

Իմ քննադատութիւնը պ. Ա. Բալաջեանի «Դարւինիզմ» գրքի դրդեց նորան մի անհանդիստ ընդդիմախօսութեան «Մշակ» լրագրում (№ 127) «Մուրճ»-ի գրախօսին» խորագրով։ Մեր գրախօսութիւնը կազմում էր 11 երես, այդ լաւ հաշւել է պ. Սամուէլ Բալաջեանը։ բայց երեսների թիւը ազդքան լաւ հաշւողը իրան համար չարմար է գտել պատասխանել մեր քուածի բաղմաթիւ կէտերից միան երկուսին 1) թէ հասարակութեան որ խաւի համար է նշանակած նորա գրքովկը և 2) թէ ինչպէս է ըմբռնում Դարւինը սեռավիճն ընտրութեան թէորիան։

Որքան հեշտ միջոց ամեն զիսացաւանքից ազատւելու, արդարանալով թէ «մեր գրքովկը նշանակած է «հասարակութեան մեծամասնութիւնը կազմող այն միւս չրջանների համար, որոնք ազդպիսի մեծ պատրաստութիւն չունին»։ Ինչպիսի «մեծ» պատրաստութեան մասին է արդեօք խօսում պ. Բալաջեանը։ Դուք գրում էք «հանրատմատչելի գրադարանի համար մի գրքովկի, և մենք էլ քննադատել ենք ձեր գիրքը իրը հանրամատչելի գրքովկի և ոչ թէ իրը տարրական գրքովկի։ Դուք ձեր ընդդիմախօսութեան մէջ շփոթում էք հանրամատչելին՝ տարրականի հետ։ Գրքովկի վրաէ գրում էք հանրամատչելին», իսկ ընդդիմախօսութեան մէջ անւանում էք ձեր գրքովկը տարրական եւ, ի հարկէ, դուք երեակալում էք թէ հանրամատչելի և տարրական խօսքերը միւնուն գաղափարներն են արտաքալում։ Սակայն դուք կոչւած չէք խօսքերին այլ իմաստ տալու քան այն, ինչ նոքա ունեն։ Հանրամատչելի խօսքը հայերէնում ճիշդ այն է նշանակում, ինչ օտար լեզուներից շատերում պոպուլար է կոչում։ Հանրամատչելի է Ֆերրիէրի գիրքը, հանրամատչելի է Գրատ Ալլէնի գիրքը, հանրամատչելի գիտական գրքովկներ է ուզեցել հասարակել նաև Հալոց Հրատարակչական Ընկերութիւնը, որի խմբագրական մասնաժողովի անդամ և նախագահն էք դուք։ Բայց տարրական թարագրական մասնաժողովի անդամ և նախագահն էք դուք։ Դարւինիսմի մասին ես դեռ չեմ տեսել և չեմ էլ լսել թէ գոյութիւն ունենաւ որ և է լեզով, թէն պատահել է որ տարրական—ելեմենտարիալ—գասեր են տեմլ կրիտիկոսները դարւինիսմի մասին հանրամատչելի գրքովկներ գրողներին...

Դարւինիսմը մի դոքտորինսա է, մի վարդապետութիւն է, որը իւր տեսութեան հետ միասին ունի և իւր փաստաբանութիւնը: Ում համար էլ որ գրելու լինէք Դարւինի վարդապետութիւնը, դուք պարտաւոր էք տեսութեան հետ միասին տալ նաև նորա փաստաբանութիւնը—լինի ազդ ամենազարգացածների թէ ամենաանզարգացածների համար: Այլ և այլ շրջանների համար գրւածները դարւինիսմի մասին կարող են, չարմարւել լով ընթերցողների նախապատրաստութեան աստիճանին՝ լինել դիտնական ոճով գրւած կամ հեշտ ու դիւրամատշելի կերպով գրւած, և կարող են տարբերւել մանրամասնութիւնների նկարագրութեան մէջ, Բայց գըշխաւոր իրողութիւնները, որոնց վրայ կառուցւած է տեսութիւնը՝ պարտաւորիչ կերպով պէտք է լինեն թէ մէկ և թէ միւս տեսակի գրւածներում:

Արդ, մենք չանդիմաննել էինք պ. Քալաղեանին այն բանի համար, որ նշանաւոր իրողութիւնները, նշանաւոր դիտողութիւնները ընթերցով լին չաղորդած նա ահագին և աններելի թափչքներ է անում, այնպէս որ այն ինչ մի գիտուկան գրքում ամենակարեսորն է, այն է համոզելը, նա այդ մի կողմին է թողնում: Հաղորդելով միմիայն այն որ վայրենի աղաւուց ժամանակով առաջացել են մի քանի տեսակ աղաւնիներ, պ. Քալաղեանը իսկոցն եղրակացութիւն է դուրս բերում թէ «ուրեմն» (լսեցէք):

«Որդանական աշխարհի ծագման սկզբում կավին մի (կոմ ամենաշատը երկու-երեք) տեսակ էակներ, որոնք ունեին պարզ կազմւածք...» և որ այդ մի կամ երկու երեք պարզ էակներից զարդացան բոլոր բոլորը և կենդանիները, մարդն էլ ի հարկէ հետը, և որ հետեապէս բոլորի և կենդանիների բոլոր տեսակները մի ծագումից են և այլն:

Մեր ընթերցողներին չի լիշեցնում արդեօք պ. Քալաղեանի այդ գիտնական ձեզ Յովհաննէս Աւետարանչի պատմելու եղանակին աշխարհքիս ստեղծագործութեան մասին թէ՝

«Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստւած և Աստւած էր Բանն...» և այլն:

Բայց Յովհաննէս Աւետարանիչը գիտական գիրք չէր գրում, այն լաւանում էր աղգերի հաւատալիքը, խակ պ. Քալաղեանը գրում է է գիտական գիրք և անտամենացնիւ պահանջում է որ «ոչ մի նախապատրաստութիւն չունեցող ընթերցող շրջանները» միմիայն հաւատանիքան, որովհետեւ շուաչլութիւն է ազդ տեսակ շրջանների համար գիտենալ այն ինքն ըստ ինքեան շատ պարզ և գիւրըմբւնելի դիտողութիւնները և իրողութիւնները, որոնք Դարւինին հասցրել են իւր տեսութեանը...»

Եւ իսր թէ «ոչ մի նախապատրաստութիւն չունեցող շրջանները» աւելի հեշտ կ'ըմբռնին դարւինականութիւնը առանց ապացուցների, քան

եթէ նոցա ձեռքը ասպացուցներ տանք... Ալդ լետ մնացած շրջանների համար ան էլ շատ է եթէ պ. Բալաղեանը կ'ասի թէ մի տեսակ ազաւուց և մի տեսակ ճագարից մի քանի տեսակ աղաւնիներ և ճագարներ են զարգացել. թող ալդ իրողութիւնից նոքա խելքին զոռ տալով հասկանան, որ «ուրեմն» բոլոր բուսերը և կենդանիները իրար ազդական են և սոքա բոլորը «աշխարհի ծագման սկզբում եղած մի կամ մի քանի էակներից են զարգացել»...

Ալդ, պ. Բալաղեանի ասելով, նշանակում է տարրական լինել, ալդ նշանակում է հասկանալի լինել «ոչ մի նախապատրաստութիւն չունեցող շրջանների համար»:

Թէ թող հասկանան, եթէ կարող են: Մենք մեր քննադատութիւնով խօմ մարդկանցից խելու չենք նոյա ունեցած բնական խելքը!

Եւ պ. Բալաղեանը հաւատացնում է որ Հրատարակչական ընկերութիւնը չի հետեւելու մեր խորհրդին հանրամատչելի զրգերի վերաբերմամբ, և որ նա, ազդ ընկերութիւնը, ալտունետե էլ շարունակելու է տալ գիտական գրքեր, ուր սարսափեցնելու են ընթերցողներին լոգիկական թուչքներով, ֆակտերի և բովանդակութեան աղքատութիւնով. և պ. Բալաղեանը նոյնքան էլ հաւատացած է, որ ընթերցող հասարակութիւնը Ընկերութեան ազդ համեսցիքի համար չնորհակալութիւններ է չափանելու! Կ'ապրենք, կը տեսնենք, թէ նոյն խոկ զուք, պ. Բալաղեան, ձեր լուսադաշտում որքան էք հետեւելու ձեր սեփական մեթոդին: Մենք գիտենք միայն որ Հրատ. Ընկերութիւնը ազ մտքով է զեկավարւել Ֆլամմարիոնի և Լունկեիչի հանրամատչելի գրքերը հրատարակելու:

Գանք ալժմ սեռավին ընարութեան խնդրին: Սեռալին ընտրութիւնը մենք համարել ենք բնական ընտրութեան տեսակներից մէկը: Թէ ինչո՞ւ չէ բնական ընտրութիւն սեռավին ընարութիւնը—պ. Բալաղեանը ազդ չի պարզում իւր գրքում, իսկ ալժմ Գարւինից բերած կոչումներով նա միայն հաստատում է մեր ասածը. Գարւինը մի առանձին տեր մի նոր որոշում է ան կոխւը, որ լինում է որ ձերի մէջ էկ ձեռք բերելու նկատմամբ: Ինչով է արտապատում ալդ կոխւը. Շատ լաճախ Փիզիքական ովժով, լաճախ էլ անհատի ալլ լատկութիւններով և չարմարութիւններով և սեռական չարաբերութիւնների մէջ կամ էզի համար նշանակութիւն ունեցած առաւելութիւններով: Ալդ բոլորը կազմում են մի տեսակ գերազանցութիւններ գոլութեան կուի մէջ: Եւ անհատները և կենդանիների ցեղերը իրար հետ կուելիս լաղթում են որ և է գերազանցութիւնով իրանց հակառակորդների վրաւ: Կան լատկութիւններ, որոնք առանձին նշանակութիւն ունեն երբ կենդանիների մի ցեղը կուում է մի ալլ ցեղի հետ, կան լատկութիւններ, որոնք կարիորութիւն են ստանում երբ կոխւը, հետևալիս և ընտրութիւնը, մի ցեղի անհատների մէջն է միան. և կան լատ-

կութիւններ, որոնք առանձին հաշմակութիւն են սահմում, երբ կոխը մի տեսակի կենդանիների որձերի մէջն է միացն: Ազդ բոլոր կոխների ժամանակ կան ընդհաւուր զինքիր և կան կուփ տեսակին չառուկ զինքեր: Ազդ բոլորից տառաջացող ընտրութիւնը—բնական ընտրութիւնն է, որովհետեւ սերնունդ տալիս են միայն այդ բազմատեսակ կոխներում լազմողները: Եւ ահա, որովհետեւ սեռային կուփ մէջ գործող տառուկ ովմեր կան, այդ պատճառով և Դարւինը ստիպւած է տեսնել իրան կուփ և ընտրութեամ մի ձեզ կոչւլ սեռային բնարութիւն:

Եւ ազդ լողիգական կապը, որ կալսեռապին ընտրութեամ և ընդհանուր բնական ընտրութեամ մէջ, շատ լաւ հասկացել են զիտնականները և զիտնական պոստուլեարիգաստրները, որոնք էզեր ձեռք բերելու բնական ձըդտումը զնում են բնական ընտրութեամ պատճառների շարքում:

Ազդիս վարւողներից մէկը, Էմիլ Ֆերրիէր, ներկազարդել էր իւր աշխատութեամ առաջին մասը, ուր և սեռապին բնարութիւնն է խօսեցւած, Դարւինին և սա նամակով լաւանել է հեղինակին, որ իւր դոքարինի բացատրելու եղանակը «պարզ է և ճշգրիտ (claire et frapante»):

Եւ համոզւած ենք, որ եթէ Դարւինը կենդանի լինէր ու պ. Բալազեանը ներկայացնեմք նորան իւր աշխատութիւնը, մեր հեղինակը չեր արժանաբար նոր զավատանքին:

Բայց պ. Բալազեանի համար մենք ունինք նաև մի այլ հանդիմանութիւն անելու: Իբր թէ նա իւր զիրքը կազմելում՝ Դարւինին է հետեւել: Ոչ, պարտն, մենք արդէն ցուց ենք աւել որ զուք հետեւել էք Դրանու Ալլէնին, և անբարեխողձութիւն էր աւելեցել ընդունւած ձեռով չիշատակել ազդ հանդամանքը մի թէկուզ երկառող լառաջաբանով. Ալլէնին զուք հետեւել էր անպէս, ինչպէս երբ մէկը մի զրքի վրայ կազմում է մի շարադրութիւն: Դուք նորանից միտքն այն կտորները չէք փախ առել, որոնց առիթով վիշում էք Ալլէնի անունը, այլ ուղղակի հետեւել էք նորան, ինչպէս սուհասարակ ընդունւած է անետեւելը խօսքը հասկանալ: Ազդ, ի հարկէ, զու չի հանակում թէ ձեր զիրքը նորան լաւ է, որքան Ալլէնինն է, որովհետեւ օգտելու եղանակի մէջ ձեր ինքնուրուն և ոչ շատ լաջող ձերին էք հետեւել: Բայց իմ գլխաւոր ասելիքը ազդ չնչին հանդամանքը չէ, այլ առն թէ ինչ նշանակութիւն էք զուք լատկացրել սեռային ընտրաւթեամ: Ձեր զրքի մէջ զուք ամեն կերպ աշխատում էք ցուց տալ որ սեռապին ընտրութիւնը շատ էլ նշանաւոր ազդեցութիւն չի անում կենդանական աշխարհում, թէ նա պարծում է աւելի սահմանափակ չրջանում և ունի անհամեմատ աւել: Էլ թուզ աղդեցութիւն կենդանիների զրայ (էջ 112—113): Մի խօսքով, զուք սեռապին ընտրութիւնը ցուց էք տալիս ոչ որպէս զօրեղ Փակասոր էռոլիցիալի մէջ:

Արդ, զուք ազդ ասելով հետեւում էք Դարւինին թէ ուրիշների կար-

ծիքներին: Սեռավին ընտրութեանը ազդպէս թողլ ուժ վերագրելու դէմ բողոքել է ինքը Դարւինը, իւր «Մարդու ծագումը» գրքի երկրարդ տպագրութեան շառաջարանում, ուր նա հետեւալն է ասում.

«Ես գարմացած էի այն նմանութիւնով, որ գտայ սեռավին ընտրութեան թէորիայի կիսաբարեհաճ քննաղասութիւնների և այն քննաղասութիւնների մէջ, որ լուս տեսան բնական ընտրութեան թէորիայի առիթով՝—սեռավին ընտրութիւնը մեկնում է մի քանի մասնաւոր երևովթներ, բայց ի հարկէ չի կարող ունենալ այն ընդարձակ նշանակութիւնը, որ ևս էի վերագրում նորան —աչուպէս է ին խօսում քննադար առ առ առ երը: Նմ համոզմունքը սեռավին ընտրութեան ոժի նկատմամբ մնում է անլողովզ... Ես հաւատացած եմ, որ երբ քնագէտները կընտելանան այդ մոքին, նա (սեռավին ընտրութիւնը) կը առանակ շատ աւելի լայն ծաւալ. և հէնց աչժմ էլ նա արդէն բարեհած և լիակատար կերպով ընդունւած է մի քանի հեղինակաւոր գատաւորներից»:

Ազդպէս է խօսում ինքը Դարւինը իւր թէորիայի մասին, եթէ անպատճառ ուզում էք որ մենք Դարւինի իրա խօսքերով ձեզ հետ խօսինք:

Ո., Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† ԿԱՅՍԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ III

Հոկտեմբերի 20-ին ի Տէր հանգեաւ Կայս Ալեքսանդր Ալեքսանդրի սանդղովիչ, Ռուսաստանի 12-երորդ Կայսրը¹⁾: Կայսեր հիւանդութեան մասին իմացւեց, երբ բժիշկների խորհրդով նա տեղափոխւեց Պետերբուրգից, Գ.րիմի Լիւադիա ծովեզրեայ տեղը, բայց նորա ծանրութիւնը յայտնի եղաւ, երբ սկսւեցին ամենօրեայ պաշտօնական տեղեկութիւններ հաղորդւել Գահակալի հիւանդութեան ընթացքի մասին, ներկայ հոկտեմբերի 5-ին տեղի ունեցած բժշկական կոնսիլիումից յետոյ: Այդ օրից յետոյ կայսերական տան անդամների հաւաքւելը Լիւադիայում, որպէս նաև թագաժառանդի բարձրագոյն հարսնացուի աճապարելը Լիւադիա հասնելու—մի-մի նշաններ էին, որ դրութիւնը կրիտիկական էր: Եւ ամբողջ Ռուսաստանի, որպէս նաև ամբողջ աշխարհի ուշադրութիւնը արդէն գրաւաւած էր Լիւադիայից եկող պաշտօնական լուրերով Կայսեր հիւանդութեան մասին:

Մահը սակայն շատ երկար չսպասեցնել տւեց: Հոկտեմբերի 20-ին կեսօրից յետոյ 2 ժամից 15 րոպէ անց պատահածը նոյն

1) Ռուսաստանի գահակալները կալսեր տիտղոս են կրում Պետրոս Մեծից սկսած. Եղած կալսրներն են՝ Մեծն Պետրոս (1682—1725 թ.), Եկատերինա I (1725—1727), Պետրոս II (1727—1730), Աննա Իոաննովնա (1730—1740), Ելիզաւետա Պետրովնա (1741—1761), Պետրոս III (1761—1762), Եկատերինա II (1762—1796), Պատլոս I (1796—1801), Ալեքսանդր I (1801—1825), Նիկոլայ I (1825—1855), Ալեքսանդր II (1855—1881), Ալեքսանդր III (1881—1894).

օրւայ ուշ երեկոյեան արդէն իմացւեց մայրաքաղաքներում, որպէս նաև գաւառական-պրովինցիական կենտրոններու մի, ինչպիսիներից մէկն է և Թիֆլիսը՝ Պատմական բոպէն բնազմամբ զգացւեց. զգացւեց, որ նոյն այդ բոպէներին ամբողջ երկրագունդը մոքով միացած է մի եղելութիւնով, որի կարևորութիւնը ճիշդ համաշափ է կայսերութեան զիթխարի մեծութեան և այն դիրքին, որ այդ կայսերութիւնը բոնում է մի կողմից կուլտուրական աշխարհում, միւս կողմից՝ միջազգային քաղաքականութեան մէջ։ Այդ ոլայմանաւորւած է այն սերով կապով, որ կայ ուսաց Գահակալի և Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականութեան մէջ։ Եւ Կայսր Ալեքսանդր III-ի աւելի քան տասնեւերեք տարւայ գահակալութիւնը իւր դրոշմը դրեց լայնածաւալ կայսերութեան թէ արտաքին քաղաքականութեան և թէ ներքին կեանքի վրայ։ Ինչ վերաբերում է կայսր Ալեքսանդր III-ի կառավարութեան արտաքին քաղաքականութեանը, «Մուրճ»-ի մշտական ընթերցողները հնարաւորութիւն են ունեցած նրան հետեւելու։ Այդ քաղաքականութեան վերջին խօսքն էր Կրոնշտադ-Տուլն, Փրանս-ռուսական բարեկամութիւնը, որը բնական հետեւանք էր Գերմանիայի-Աւստրօ-Ռւնգարիայի և Խոալիայի երրեակ դաշնակցութեան։ Եւ որքան այդ բնական էր, սակայն այդ գործը գլուխ բերելու համար պահանջւում էր հաստատուն կամք և խոր զիտակցութիւն քաղաքական դրութեան։ Եւ Կայսր Ալեքսանդր III Փրանս-ռուսական բարեկամութիւնը գլուխ բերեց, հարթելով նախապաշտրմունքներ անգամ և մի առանձին փայլով կնքելով այդ բարեկամութիւնը, հակայական ցոյցերով Կրոնշտադտում և տունալով փոխարէնը ծուլուում և ամբողջ Ֆրանսիայում ցոյց տրւած պատիւները։

Արտաքին քաղաքականութեան մէջ այդ ընթացքը բոնելլ բնական էր և մասամբ նախատեսնեած էր կայսր Ալեքսանդր III-ի օրերով։ Բայց երկմոռութեան քողը վերացնելը և վճռողական քայլ անելու պատկանում է կայսր Ալեքսանդր III-ին։

Սակայն այդ ակտը կատարւեց ոչ Ալեքսանդր III-ի սկզբնական տարիներում, այլ մինչ տասը տարի գահակալութիւնից յետոց։

Այդ բարեկամութիւնը կարևոր էր և անհրաժեշտ՝ ի զիմաց միջին Եւրոպայի երեք պետութիւնների իրար մէջ կապած դաշնա-

դրութեան, որով այդ երեք պետութիւնները գերիշխող էին հանդիսանում արտաքին քաղաքականութեան մէջ, ի մըսս Ֆրանսիացի և Ռուսիացի շահերի և ազգեցութեան:

Ենորին այդ բարեկամութիւնը Ֆրանսիացի հետ՝ քաղաքական հաւասարակշռութիւնը վերականգնւեց՝ եւրոպական մեծ պետութիւնների մէջ, և դորանում կայանում է Կրոնշտադ-Տուլոնի քաղաքական նշանակութիւնը:

Այդ բարեկամութիւնը չհաստատած՝ պատերազմական քաղաքականութեան հետևելը Ռուսիացի կողմից մեծ անխոհեմութիւն կը լինէր. իսկ հաստատելով այդ բարեկամութիւնը և քաղաքական դիրքը ամրացնելուց յետոյ պատերազմով իւր շահերը պաշտպանել Եւրոպայում—դորա համար կամ ոկտօք եր որ թողլ լինէր եռապետեան դաշնակցութիւնը և կամ անհնարին լինէր առանց պատերազմի այդ նոյն շահերը պաշտպանել:

Կայսր Ալեքսանդր III իսկէ ապացոյցներ տւեց իւր խաղաղասիրութեան Սակայն և այնպէս՝ եթէ ի բաց առնենք բոլղարական խնդիրը, որը մեծապէս շօշափում էր ռուսական ակնկալութիւնները, բաց որը գեռ ևս առկալո խնդիր է մնացած մինչ այսօր, ինչի առիթով արդեօք պէտք կար մի եւրոպական պատերազմի այս վերջին 13—14 տարիներում? Ինչ վերաբերում է Ռուսիացին, նաև լոլէն առաջինի կայսերութեան անկումից, այն է 1815 թւականից ի վեր՝ նա ունեցել է միայն արևելիան պատերազմներ, պարսկական և տաճկական 1826—29, Ղրիմի պատերազմը 1853—56-ին, ուրեմն Աղրիանապոլսի դաշնադրութիւնից շուրջ 25 տարի յետոյ, առաջ 1877—1878-ի ռուս-տաճկական պատերազմը, որ ուրեմն Ղրիմի պատերազմի վերջանալուց 21 տարի յետոյ եղաւ։ Իսկ վերջին տաճկական պատերազմից դէս անցել են միայն 16 տարի Ալեքսանդր II-ի և Ալեքսանդր III կայսրների օրերով։ Յամենայն գէպս ներկայ դարուս վերջին 60 տարիների ռուսական պատմութեան մէջ կայսր Ալեքսանդր III-ի 13—14 տարիների խաղաղ թագաւորութիւնը մի բացառութիւն չէ։ Խաղաղութիւն պահպաննելու ջանքը վազուց կազմում է ռուսական քաղաքականութեան յառկանիշը, և այդ կողմից կայսր Ալեքսանդր III զնացել է իւր նախորդների շաւդով։ Եւ այդ արդէն նորա համար մեծապէս գնահատելի է, որ

նա թողաւ Ռուսաստունը քաղաքական դիրքով աւելի բարձր, քան նա կար 14 տարի առաջ, իւր Գահակալութեան օրում:

Դորա հետ զուգահեռաբար կայսր Ալեքսանդր III մեծապէս զօրեցրեց Ռուսաստանի զօրքը, այդ կողմից չուզենալով ետ մնալ լնդհանուր եւրոպական սպառազինութիւններից:

Գալով ներքին գործերին, յայտնի է թէ կայսր Ալեքսանդր III ինչ հանգաւանքների մէջ Գահ բարձրացաւ: Նա վերցրեց կառավարութեան ղեկը իւր ձեռը՝ Նորա օդոստափաւ ծնողի մարտիրոսական մահից յետոյ 1-ն մարտի 1881 թ.: Տէրութեան դրութիւնը ծանր էր և տխուր: Կայսր Ալեքսանդր III իւր մանիֆէստում այսպէս որոշեց իւր ծրագիրը՝ «Միասկեառութեան զօրացումն, կարգի և իշխանութեան պաշտպանութիւնը, օրինապահութիւն և տնտեթիւն, վերագարձ հնագոյն ռուսական սկզբունքներին»:—Վերջին խօսքերը կապ ունէին Ալեքսանդր II-ի կատարած մեծ ռեֆորմների գործի հետ, ռեֆորմներ, որոնք կերպարանափոխել էին Ռուսաստանի ներքին կեանքը ազատական մոքով, բայց որոնք դեռ ևս զարգացման շատ էին կարօւ կատարելապէս հաստատելու համար: Այդ ռեֆորմների նոր լինելու պատճառով՝ դեռ ևս սերունդները լաւ ընտելացած չէին նոր օրէնքների ողուն, և կայսր Ալեքսանդր III աշխատեց այդ ռեֆորմների դիմաց՝ կենդրոնական իշխանութիւնը վերստին զօրեղացնել: Հիմնւեցին և բազմացան եկեղեցական ծխական դպրոցները, զինւորական գիմնազները փոխւեցին կորպուսների, համալսարանական կանոնադրութիւնը 1863 թւականի փոխւեց 1884 թւականի կանոնադրութիւնով: Դատարանական մասում սահմանափակւեց երդւեալ զասէդատելների իրաւասութիւնը, հաշտարար դատաւորների տեղ կարգւեցին զեմստւացին նաչալնի կներ: Քաղաքացին և զեմստւացին ինքնավարութեան կանոնադրութիւնները փոխւեցին ինքնավարական իրաւունքները աւելի սահմանափակելու և նահանգապետներին աւելի լայն իրաւունքներ տալու մոքով: Դատարանական և վարչական իշխանութիւնները միացնելու մոքով կարգւեցին զեմստւացին նաչալնի կներ: (Այդ հակառակ քորմներից մի քանիսը, որոնք վերաբերութիւն ունեն զեմստւացին հաստատութեան, Կովկասին չեն վերաբերում, որովհետեւ Կովկասում զեմստւո չկայ):

Միաժամանակ ուշք դարձւեց պրոֆեսիական ստորին դպրոցների վրայ, դոցա թիւը բազմացնելու մաքով:

Ֆինանսական կողմից կատարւեցին մի քանի խոշոր փոփոխութիւններ՝ պետական արժեթղթերի կոնւերսիան, որը իջեցրեց վճարելիք տոկոսը և հետեւադէս թեթևացրեց պետական պարագի տոկոսներ վճարելը՝ գլխաւորապէս արտասահմանին. բացւեց ազնւականների և գիւղական բանկը:

Գերմանիայի հետ կապւեց նոր մաքսային դաշն՝ ռուսաց ապրանքները աւելի հովանաւորելու մտքով, և զորա համար հարկ եղաւ երկար դիմանալ մաքսային կուի Գերմանիայի հետ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ՍԱՄՆՈՅ ԴԵՊՔԵՐԸ

ԿՈՒԻԻ ՆԱԽԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. Մի քանի տարիներէ ի վեր Տալւորիկ և նորա օրինակին հետեւելով այս տարի ևս Գելիէ գուղան, Իշխնձոր, Աղբին, Հեթինք, Շէնիկ, Սէմալ բազմահայ զիւղերը կը մերժեն բացարձակօրէն կառավարութեան տուրք ու շրջակայ քիւրդ ցեղապետներուն խաչի բութեան (տարեկան կարւած) հարկ վճարել։ Նոցա կ'աշխատեն հետեւ Շատախ, Բերմի, Խուլփ ու Խիշան ու Փսանայ գաւառի հայ բնակիչները և այս նպատակաւ կ'անպատեն և կը հալածեն ամեն տեղ հարկահան ոստիկանները Փսուրի տեղապահ կառավարիչը (գայմագամ) 37 ոստիկաններով ու քիւրդ հեծեալներով մի առ մի կը ձերբակալէ բոլոր Խուլփ ու Խիշանայ հայ մեծամեծները, կուգայ Իշխնձոր, կը բռնէ 4—5 հոգի ու կը պահանջէ Տալւորիկէ Գասպար, Խաչօ, Փորխ զիւղի նորընծան, Գէլիէգուղանէն Կիրօ (Պետօյի տնէն) ու Շէնիկէն՝ ռէս (տանուաէր) Գրգօն։ Սասունցիք ոչ թէ միայն կը մերժեն ցիշեալ անձինքը ցանձնել, այլ և Խշնձորի մէջ, ցարձակելով գայմագամի վերայ, կը սպաննեն ոստիկանները և 12 քիւրդեր, միւսները մազապուրծ կը զերծան են։

2. Մի քանի տարիներէ ի վեր Սասունցի քիւրդ աշերաթներու (ցեղերի) ընդդէմ ցոյց տւած թշնամական վարժունքը, յաճախակի կռիւները և երկուստեք տեղի ունեցած աւարառութիւնները, տարեկան խաչիրութիւն կոչւած տրոյ մերժումը, նամանաւանդ Տալւորիկի անցեալ տարւայ պատերազմը, ուր հարիւրաւոր քիւրդեր ընկան, շրջակայ ցեղերը վերին աստիճանի կատղեցու ցած և ի վրէժ գրգռած էին։

Յ. Բաղեշոյ կուսակալութեան տրւած զեկոյցներէն կառավարութիւնը տեղեկացել էր թէ օտարական զանազան անձնաւորութիւնք կը պահւեն Սասնոյ մէջ, որոնք կ'աշխատեն ժողովուրդը գրգոել ընդդէմ կառավարութեան և արտասահմանէն զէնքեր կը տեղափոխեն այնտեղ և թէ արդէն Անտոք սարին մէջ կազմած է հայ հրոսակացին խումբ մի որ մշտական յարձակումներով սարսափ կ'ազդէր շրջակայ քիւրդերի վերայ:

Կ Ա. Ի Ի Ը Ն Թ Ա Յ Ք Ը

Բաղեշի կուսակալանիատ ժողովում, ուր ներկայ էին Բագարանց ւոց, Խըշկոտանցւոց, Խարըկանցւոց, Փէնջարի, Ծովասարի վերայ բնակող Խարզանցւոց, Բշէրիկի մլծաշիրապետներ, Բէլիկցւոց պետերը, Խոյթի ու Բռնաշէնի բոլոր իշխանները, Մողըկանցի, Խիզանցի գլխաւորները, Բագըկանցւոց, Ժաճըգանցւոց, Խըկանցւոց, Խեյանցւոց և Սլիվանիկի բոլոր ցեղապետները ու հիւս. քիւրդերու Համետիցէ հեծելագունդի պետ Բէհիկդին փաշան, այն որոշ եղրակացութեան յանգեցան որ Սասունը իւր անառիկ դիրքով, անմատչելի սարերով և արիւնուուշտ ժողովուրդով միշտ գլխաւոր վտանգ մը է օսմ. կառավարութեան, որոյ ըմբոստ օրինակին կրնան հետեւել դրացի գաւառացիք, ուրեմն հարկ անհրաժեշտ է որ ապստամբութիւնը խեղդւի զեռ իւր օրօրոցի մէջ, այն ինչ գեռ նոքաբոլորովին անպատրաստ են: Եւ հրաման տրւեցաւ բոլոր քիւրդ ցեղերուն որ անյապաղ գումարւ են ու չորս կողմէն յարձակւեն Սասնոյ վերայ. աներեւակայիլի արագութեամբ բոլոր շրջակայ կուսակալութեանց զօրքերը դիմեցին ի Խուշ, ուստի մի այլ 7869 հետեւակներ, 2000-ի չափ հեծեալներ, և 150 թնդանօթաձիգներ ուղեորւեցան ի Սասուն: Ուստական և պարսկական ասհմանազլուխէն սկսեալ բոլոր ցեղերը գունդ-զունդ դիմեցին այնտեղ. միայն Բայազիդի հայդարանցիք 300 հեծեալներով, որով կարելի է գաղափար կազմել այս ահեղ բազմութեան վերայ, որ մէկ ակնթարթի մէջ պաշարեցին Սասնոյ գաւառը: Տեղացիք տեսան այդ փոթորկաբեր ամպերը, որ կը կուտակւէին իրենց ազատ սարերու վերայ, չորս կողմէն դիմող լրաբերները սարսափելի տեղեկութիւններ կը հասց-

նէին. Նրանք անգիտակից չէին թշնամութեան վերայ, սակայն ուրախ սրտով կը սպասէին ազդ և ծ Որսին» ինչպէս իրենք կ'անւանէին, (առանց մաքէ անցնելու թէ իրենք ալ կարող էին ուրիշին որս լինել). դեռ արտերը չհնձած, ուրեմն մէկ օրւայ իսկ պաշար չունենալով, սուանց վառօդի և գնդակի մեծ պաշարի, բորիկ ոտներով, մէկ շապիկ հագին, ապաւինելով իրենց անասիկ սարերուն, իրենց քաջ բազուկներուն ու որոտացող շէշ և աններուն և երկսայրի նաշախներուն:

Այստեղ գումարւած քիւրդերու թիւն է մօտաւորապէս 43000, օսմաննեան կառավարութենէն զէնք ու ուազմամթերք ստացած, իրենց ցեղապետներու ու շէյխերու. (Եէլս Զելան) առաջնորդութեամբ, թուրք բանակէն 12300. իսկ հայոց թիւ անյատ, որովհետեւ կանայք և մանկունք ել կը կուէին.—այսինքն որոնք որ զէնք կարենացին ճարել—304 հրացանաւորներ Տալւորիկէն՝ իւր գիւղերով, 741 Գէլիգուզանէն, 208 Շէնիկէն, 160 Սէմալէն, 180 Իշխնձորէն, 34 Հեթինքէն ու 120 Աղբենէն, 208 Ալիանց գիւղերէն:

27 յուլ. Բաղը կ'անց ի՞ք նախայարձակ լինելով կը թալանեն Շէնիկի ոչխարները. հայերը հետապնդելով կը խեն իրենց աւարը, կ'այրեն Կուրաց կ'ամարանոցի բոլոր քիւրդ վրաններ և ահազին քանակութեամբ ոչխար և տաւար կը բերեն. Երկար, արինահեղ կուռում 2 հայ, 34 քիւրդ սպանւածներ:

2 օգոստ. Շէնիկ ու Սէմալ դաշտային, հետեաբար ոչ ամուր զիրքի տէր ու ենթակաց առաջին յարձակման գիւղերէն, կը քոչեն (գաղթել ամբողջ ունեցածով) զէպի անառիկ Գէլի. քիւրդերը ահեղ բազմութեամբ կը յարձակւեն, կ'այրեն Շէնիկ (106 տուն) ու Սէմալ (85 տուն) ու կը յարձակեն փախտականներու վերայ. կոիւը կը տեսէ 7 ժամ մինչև օգնութեան կը հասնեն Անտոքէն հրոսակները և 400 Գէլեցիներ. քիւրդերը անհնարին կոտորածով կը փախչեն օսման. վրաններու տակ, թողնելով դաշտի վերայ 354 գիակներ, որոնք մաս առ մաս կը թրատուեն կատաղի Շէնիկցւոց նաշախներու հարւածներու տակ: Հայոց կողմէն կորուստ 17 Շէնիկցի, 8 Սէմալցի, 6 Գէլեցի, 3 Ալեանցի, 8 կանայք:

3 օգոստոսին, ըստ Տաճկաց Երեկոյեան ժամը 9-ին, հնչեցին սպատերազմական փողերը. յարձակում միւնոցն ժամանակ Տալւորկի, Իշխն-

ձորի, Աղբենի, Անտոռի վերայ. կռւի կէտ նպատակն է Գէլի: Հաւասորի կ գագաթէն ոռումբեր կը տեղան կռւին անմասն Շատախի գիւղերու վերայ: Սամնոյ լեռները մեգալատ ամզերով ծածկւած են, կարծես հրաբղխային լաւաներ կը հոսեն ամեն կողմ, արեան գետեր, կարկտահար զիակներ. կէս գիշերին կը զրաւեն Ալեանցւոց գիւղը և կ'այրեն (165 տուն). կէսօրին Գէլիցի Պետօյի տունը կայրւի, Կիրօ միայնակ 27 հոգի սպանելէն յետոյ, երբ այլ ևս վառօդ չի ունենար, սուսերամերկ կը յարձակւի և կը սպանւի 13 վէրքեր ստանալուց յետոյ. Գէլիցիք կը յաջողեն յետ մղել թշնամին որ 26 ժամ անընդհատ կռւելէ յետոյ կը թողու անհամար դիակներ ամեն կողմ—միայն ի Գէլի, Վլեան և յԱնտոք 760 (բոլոր վիրաւորներ կը սպանւեն). հայոց կորուսո՛ 23 Գէլիցի, 15 Ալեանցի, 14 Շէնիկցի, 9 Սէմալցի, 7 Իշխնձորցի, 6 Աղբնեցի, 17 կանայք ու 9 մատաղերամ մանուկներ, ընդ ամենը ճիշդ 100:

4, 5, 6, օգոստ. Մշտական յարձակումներ երկուստեք. միշտ հայեր յաղթականաւ, անթիւ քիւրդ սպանւածներ. հայերու կողմէն միայն 5 մարդ, 3 կին:

7 օգոստ. Ուրբաթ լինելով՝ զինադուլ օսմանցւոց կողմէն: Հայեր՝ Գէլիցիք, Իշխնձորցիք, Ալեանցիք, Շէնիկցիք և Սէմալցիք կը գումարւեն յԱնտոք, իսկ Տալւորկցիք իրենց շրջակայքով ի Ֆըր. Փըր քար: Անտոք, Գէլիէն $\frac{3}{4}$ ժամ արևմուտք, առանձին գագաթ մը, կից հարաւէն կեփի առաւար սարի հետ, յարմար պաշտամանւելու, ընդարձակ արօտներ լերան գագաթին, պուրակներ ստորոտը, հացի և աղի բացարձակ զգալիութիւն. այսուեղ հաւաքւած զօրքի խառն եղած բազմութիւն, ծեր թէ մանուկ, այր թէ կին, իրենց քօչերով, միակ ուտեստը մածուն, բանջար ու անլի միս: Անբերելի նեղութիւն ու անտանելի ցուրտ:

8 օգոստ. Ահեղ յարձակում, ոռումբերու որոտներէն կը թնդան սար ու ձոր, Շատախի բոլոր գիւղերը, հասունցած արտերը և խոտի գէղերը կ'այրւեն քիւրդ և օսմանցի հեծեալներու ձեռքով. աննկարագրելի է կատղած մահմեդականներու բարբարոսութիւնը լժշւառ ու անպաշտպան ժողովրդեան վերայ. յուսահատութեան աղաղակները, գոռն ու ժխորը, ահեղ մարտի միջից կը հասնեն Անտոք ու կատաղի զայրոյթով կը լեցնեն բոլորի սրտերը. Գեղաշէն կ'այրի

ռումբերու հարւածներու տակ՝ Սոսկալի զուպարացք ի Սպանք (Տալւողիկ), ուր հայ մը պաշտպանել ուզելով քիւրդ ցեղապես մը յարձակողներէն, կը սպանէի հարազատ եղբօր ձեռամբ. անթւելի կորուսոներ. Յ օգոստոսէն շատ աւելի: Անթիւ զօրաց դժակներ, քիւրզերու փախուստ, օսմանցիք միւս կողմէն թնդանօթներով կը մղեն ի մարտ. անլուր շփոթ և իրարանցում. կոիւը անընդհատ 19 ժամ:

10, 11, 12 օգոստ. Մշտական յարձակում. անթիւ սպանւածներ, հայերու վառօդը իսպատ կը վերջանայ, մի քիչ Տալւողիկէն կ'ուղարկւի: Անտանելի սով:

13 օգոստ. Ամենէն ահեղ կոիւը, անընդհատ 27 ժամ. յարձակում միաժամանակ ամբողջ Սասնոյ չորս կողմէն. կեդրոն կրկին Գէլի և Անտոք. ամայի Գէլի խիստ նեղ կացութեան մէջ, Անտոքին կը հասնեն օգնութեան անհրեւակացելի քաջութիւն ու տոկունութիւն հայոց կողմանէ. նշանաւոր հանդիսացան Եկնիցի Պրգոն, հրոսակներէն Ադամ (18 տարեկան), Գէորգ և Կրպօ. կը պատմեն թէ այդ գոռ կուի ժամանակ, երբ թշնամին սկսաւ փախուստ տալ, պատանի զիւցազնը, Ազամ, կանդնած մի քարաժայրի վերայ, ճոճելով ահեղ բերդանկէն, կ'ազաղակէր այսպանելով՝ «Եներ, վասեր, « փախէք, ասէք ձեր մեծին որ զայ այստեղ իւր սե զինւորներով: « Սասունցիք բոլորի համար ունինատաք գնդակներ. անմիտներ, ինչ չու սպարապ տեղ կը թափէք ձեր արիւնը. օրը տաքցեր է և « հունձքի ժամանակ հասեր. թողէք այս երկիրը, փախէք Արա « բասուն: (այստեղ մի պող պատուած լինելով՝ անհնարին եղաւ կարդալ կէս տող, նշմարեցինք սակայն աղօտ կերպով այս խօսքերը՝ «կըսւի Գէլի (360 տուն) կը կողոպտեն և եկեղեցին»): կը հաւատին քիւրդերը թէ արծաթազգեայ հեծեալ օրիորդ նիզակ ի ձեռին, ահեղ մարտնչող, անյայտացաւ եկեղեցւոյ մէջ: Անհնարին էր երկուստէք կորուստը. միայն ի Գէլի և յԱնտոս 675 քիւրդ, 236 հայ—մեծ մասամբ Գէլիցիներ ու մի քանի հրոսակներ: Իսպատ կը հատնի հայերու ուազմամթերքը: Կուի դաշտին տէր՝ դարձեալ հայերը:

14 օգոստ. Քիւրդերը բացարձակ կը մերժեն երկարել կոիւը. ու կը սպառնան օսմ. զօրաց. փաշան պատւիրակներ կ'ուղարկէ յԱն-

տոք Սուլթանի կողմէն ամենքին ներումն չնորհել, եղած վնասները պետական գանձէն դարմանել և Սասունը հարկէ ազատ կացուցանել խոստանալով։ Մուրադ կը կանչւի Տալորիկէն, կ'առաջարկէ խաղաղութիւն, յայտնելով թէ առանց հացի ու մթերքի պաշարի անկարող են երկար զիմադրել. Դրգօն կրիւ կը ողահանջէ, յայտարարելով թէ «Օսմանին չի կարող մոռանալ իւր կորուստները. վաղ թէ անազան պիտի աշխատի պատժել մեզ, այն բապէին երբ մենք անպատճառ կը լինենք. լաւ է որ այսօր խառնենք մեր արիւնը մեր եղբայրներու հետ և գլուխ չծուենք անգութ օտարին։ Շնորհակալ ենք այն բարեսրառութենէն որ սուլթանը ցոյց կուտայ մեզ, փոխարինել ուզելով անձնական գանձէն մեր կորուստները։ Հեռացէք մեր երկրէն ու խաղաղութիւն ինքն ըստ ինքեան տեղի կունենայ։»

15 օգոստ. Փաշան յաջորդ օրը անձամբ 500 հեծեալներով կու գայ Անտոքի ստորոտը ու կը պահանջէ որ մի քանի անձինք դան բանակցութեան. ու ազմամթերքի, հացի բացարձակ զգալիութիւնը կը ստիպեն գուռող Սասունցուն զիշանել բանակցութեան. կը նաև 184 հրացանաձիգներ և կ'իջնեն դաշտ. խօսակցութեան սպահուն Դրգօն, որ կը զիտէ Անտոքի սարէն այս ամենը, կը տեսնէ զարմացմամբ որ պուրակներու միջից գունդագունդ բանակներ կը պարփակեն գնացողները, և հրացանի որոտմամբ կ'ազդարարէ նոցա. բայց էլ ուշ էր։ Յուսահատ և ահեղ կար. գաշոյներով, սուրերով և նաջախներով. կուրծ առ կուրծ, լիռնանման զիակներով կը ծածկի դաշտը կը տեսնէ Դրգօն ծերունի մը որ թեսերը քաշած, դամասկեան ահեղ խէնչարն ի ձեռին իրարու ետև զիակներ կը սփաէ և անվկանդ կը յառաջայ. նորա յետեից կը գնայ իւր որդին, յայտնելով նրանց մէջ և ազաղակելով. «Հայր, հայր, քաջազունք մյապէս կ'ոստնուն դիականց վերայէն։ Նոցանից ոչ մի կենդանի չի ձերբակալեր, ոչ կը կուէն խոյս չի տար, այլ ամենքը կ'ընդունեն նահատակի պսակը, արեամբ ներկւած, եռապատիկ թըշտամիներու հոգիներ իջեցնելով ի թափս դժոխոց։

23 օգոստ. Անտոք կը պաշարւի. Գէլիցիք, Իշխնձորցիք ու Սէմալի կէսը կը դիմեն ի Ֆլոր Փլը. Դրգօն իր Շէնըկցիներով, Ալեանցւոց ու մնացած Սէմալցւոց հետ կ'ամրանայ իւր տեղ. կուե-

լով կատաղօրէն ամբողջ 6 (վեց) օր, առանց վառօդի, քարերով և խէնջարներով։ Անօթութենէն, յոգնած ու ուժաթափ մարդիկները կընկնեն, նոցա կը փոխարինեն կանաչք կատաղած բորեաններու նման, որոնց ձագերը յափշտակել է ուզում Գելախանց (?) վազը։

22 օդոստ. անհնար լինելով այլ ևս կենալ անօթի և մերկ, Դրգօն կը յանձնէ Անուքի պաշտպանութիւնը կանանց ու ինքը մնացեալ քաջերով, բոբիկ, մերկ, անօթի, ուժասպառ, առանց վառօդի, առանց գնդակի, կ'իջնի Խուլի ու Խիյանք գաւառը՝ հաց և պարէն և ըստ կարեւոյն ռազմամթերք առնելու նպատակաւ. կ'անցի Կէֆի, կը հասնի Հեղին։

23 օդոստ. Մշտական յարձակմանց 24 ժամ շարունակ դիմանալով, Սասունցի կանաչք, բոլորովին ուժաթափ, անկարող ահեղ թշնամուն երկար դիմադրել, հետզհետէ կը քաշւին դէպի Կէփի. Անտոք կը գրաւեն. կանաչք, գրկած մատաղերամ զաւակները, կը մարտընչեն ցան և ցիր, քարերով ու խէնջարներով, կ'ընկնին վէրքերով ծածկւած, յաղշութիւն թշնամոյն։ Քստմնելի տեսարան. բոլոր մնացողները կը թրատին անխնայ. մանկանց դիակները կը ճօճան նիզակների վրայ, կանանց աղիքները՝ սրերու ծայրին։ Յուսահատութիւն վերին աստիճանի. քաջութիւն աննկարագրելի։ Երբ կը հասնին ի Կէփի՝ զիրենք չորս կողմէն շրջապատւած կը տեսնին ահագին բազմութեամբ։ Փախուստ, կամ Գրգոյին միանալ անհնարին է այլ ևս։ Քիւրդերն կ'աղաղակեն որ անձնատուր լինեն ապա թէ ոչ... Սոսկում, իրարանցում, շփոթ, աղաղակ, մանկանց ճչերը երկինք կը թնդացնեն, և Կէփի ստորոտին կը գոռան թնդանօթները։ Գրգոյի հարսը՝ Նաքէ, կռւի մէջ հերոսուհի մը հանդիսացած, կը կազնի բարձր քարաժայոի մը վրայ և կըսկսի բարձրայն գոչել. Սասունցի կանաչք, ձեզ կը մնայ արդ որոշել, թէ լաւ կը համարիք գերի գնալ քիւրդին, ընդունել Մուհամմէտի պիղծ օրէնք, թէ ուրանալ մեր անեղծ սրբութիւնը ի պարսաւանս ամբողջ Հայութեան, թէ... կը հետեւիք իմ օրինակին։ և հերարձակ, զւարթ, միամեայ մանկիկ ի ձեռին կը խոյանայ բարձր ժայռից ցած, անդունդի մէջ, քարքարու և ապառաժ, ուստի մի սոռք (աղբիւր) բղխելով կը թանար Շէնիկի ոտները՝ նորա արեամբ ներկւած... նորա օրինակին կը հետեւին իր ընկերուհիք մի առ մի, առանց արտօրալու, առանց շփոթւելու, և

խեղճ տղայք կը հետեւին իրենց մայրերու. օրինակին անդիտակից իրենց վիճակին... կը տեսնէ թշնամին ու պակուցմամբ կանդ կ'առնէ. իրարու եռևէն կը թափւին դիակները, ճօճելով օդի մէջ, անձայն, անմրմունիջ, և խոր անդունդը կը ծածկւի դիակներով... վերջինները կենդանի կը մնան իրենց քոյրերու մարմիններու վերայ... միայն 50-ի չափ կին ձերքակալւեց և մի քանի հարիւր մանկիկներ։ Տարւելով փաշայի առաջ, կը հրամայեն որ ընդունեն Մահմատի օրէնքը. ամենքը անարգանքով կը մերժեն. խիստ պատիժներով շատ հարցեր կուտայ, Մուրատի, Տալւորցոց, Կրգօյի և Գէլիցոց մասին. սակայն ոչ ոք յանձն կ'առնէ բան մը իսկ արձակել բերանից. անսաելի չարչարանք, երկաթի շիկացած կաթսաներ, ատրաշէկ շիշեր, և պժդալի ցիցեր... Վերջապէս այն ինչ որ կարող է ստեղծել վայրենի լերանց գազաններու վրէժիննդիր կատաղութիւնը անպաշտպան թշնամոյ վերայ։

24 օգոստ. Քաջ Գրգօն իր անպարտելի խումբով ի պարտութիւն կը մատնեւ Հեղինի սարը, ուստի տեսել էին Անտոքի և Կէփի տեսարանները. ովկ կարող է նկարագրել թէ ինչ անդուսպ կատաղութեամբ ճօճելով դատարկ շէշխանները, շողացնելով սուրերը, քարերով ու նաջախներով, անկարգ և շփոթ ամէն կողմէն կը յարձակէին թշնամու վերայ, արեան ծովերով իրենց պասքեալ շրթները, բոցակէզ սրտերը, վրէժիննդիր հոգինները զովացնելու. Միայն 2 վիրահար փախստականներ զերծանելով կը պատմեն այս ամենը։ Ալիանցի Վարդան, խէնջար ի ձեռին, կը թրատուի մաս առ մաս, հարիւրաւոր վէրքերով ծածկելէն յետոյ, կընկնի կիսակենդան դրութեան մէջ արիւնոտ. խէնջարը դուրս չի դար նորա ձեռքէն. կ'ընկնի Իշնձորի վարդապետը, մինչ կ'ազօթէր բազկատարած, և Փուրլս գիւղի նորընծան—արեան դիակներով ծածկելով իւր հետքերը։ Գրգօն վիրահար գերի կ'ընկնի, անօթութենէ ուժասպառ. փաշայի առաջ կը բանաց աչքերը և հաց կ'ուզէ. յանկարծ ինքն իրեն գալով կ'աղաղակէ. «Ամօթ քեզ, Գրգօն, դու էլ օտարին վիզ պիտի ծռեաց. և խլելով մէկի հրացանը կը դիմէ գէպի սուրն՝ քաշելով փաշայի վերայ. կը շողան սուրեր, կը շաչին հրացաններ ու նոցա որոտմանց միջից կը լսւի քաջազնի մի վերջին խօսքը...»

Կ Ռ Ի Ի Հ Ե Տ Ե Ւ Ա Ն Ք Ը

Գէլի 360, Շէնիկ՝ 106, Սէմալ՝ 85, Ալեան՝ 165, Իշխնձոր՝ 78, Աղբին՝ 66 տներով կ'այրին ամբողջովին, և բնակիչները բոլոր, բացի մաս մը փախստականներէ, սրէ կ'անցւին։ Նատախի, Բերմի, Խուլիք ու Խիանայ և Փսանայ գաւառի բնակիչները, ըստ պետական արձանագրութեանց 146,000 հոգի ընդ ամենը, կը հեծեն սոսկալի ու անպատմելի նեղութեանց մէջ. բոլոր արտերին քիւրդերը տիրանալով, գրաւելով աները, անդաստանները, կողոպտելով բոլոր ունեցածները, թշւառների մարմնից խլելով մէկ շապիկն էլ, մերկ և անպաշտպան, ցան և ցիր կը թողուն որ ոլոր գան սարերու վերայ—վայրի գաղանների նման, երանի տալով խարոյկի վերայ բարձրացողներուն, և զիրենք շլջապատող կուռ շղթան չի թողներ, որ գոնէ փախուստ տան ու ազատեն իրենց լոկ անձեր...

Նոյն իսկ Մշոյ գաշտի հայոց գիւղերը, Խզլաղաճ, Տատրը սգոմի, Ս. Յովհաննու վանքը, Մառնիկ, Խորոնք և այն պաշարման մէջ են, այնպէս որ չեն համարձակիլ գնալ գաշտ արտերը քաղելու համար։ Քիւրդերը արդէն Տատրըսգոմ գրաւած են, և միւսները կը պահանջեն որ թողնեն իրենց տները, իրենց կալւածները և տաւարները, ենեն երկրէն, ապա թէ ոչ, կեանքները ի չար տուժելէն յետոյ, պիտի յանձնեն այդ ամենը... Կառավարութեանը ուղած բողոքներ ի հարկէ անլսելի կը մնան։ Մառնիկ բազմահարուստ գիւղէն միայն 5000 ոչխար տարւեցաւ։ Մշոյ մէջ խիստ ձերբակալութիւնք, Նազիկի երեք հօրեղբօր որդիք, երկու հարսներ բռնի տաճկացնում են Սալի ազայի տան։ Ս. Կարապետի վանքէն երկու սարկաւագներու (Մովսէս, Յարութ.) ու երեք միաբաններու բանտարկութիւն։ Կարճ խօսքով, եթէ ժամ առաջ ազդու միջամտութիւն չլինի՝ ամբողջ 200,000 հայեր պիտի գնան ոտից ի կոխան, առանց կարենալու իսկ իրենց արեան բողոքը լսելի անել լուսաւորեալ աշխարհին...

Փախստական ուղերը կը պատմէ թէ Խէյանի (?) մէջ ոէս Յոհան տեսնելով Յ փախստական տղայք 8—10 տարեկան՝ կը յանձնէ կառավարութեան, որոնք հրապարակաւ կը զլիստուին Մշոյ մէջ։ — Քանի այսպիսի տեսարաններ... անյայտ... անորոշ. .

ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ԵՐԵՒՅՑԹ

ԱԼՔԻՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

Նոր չէ, որ օտարազգիներն սկսել են հետաքրքրւել մնջանով, որպէս մի հին քրիստոնեակազմակով, որն հեթանոսական դարերից արդէն մի շատնի գեր է խաղացել պատմութեան մէջ, իբրև անդրանիկ աշակերտող աւետարանի և սրտեռամոդ նպաստող քրիստոնէական լուսաբեր գաղա փարի զարգացման ու ապահոված Արենելքում. Սակայն օտարազգի թէ գիտնականների և թէ բանասէրների հետաքրքրութեան և ուսումնասիրութեան նիւթը համարեա միշտ եղել են մեր խորին անցեալը, հին պատմական կեանքը, հին լեզուն, հին գրականութիւնը, Նրանց ուշադրութիւնը գրաւել են զիմսաւորապէս հազկական սեղածե արձանագրութիւններն ու բնեռագրերը, աւերակների պեղումները, հին ձեռագրները, լեզուարանական հետազոտութիւնները և այնու Մի խօսքով՝ հինը և միան հինը խոկ նորը շատ քիչ է արժանացել նրանց ուշադրութեան, եթէ չասենք, բոլորովին անուշադրութեան է եղել մասնւած. Միայն վերջին ժամանակներս է, որ նկատում է մի նոր և համակրելի երեսով. Օտարազգիների հետաքրքրութիւնը դուրս է գալիս իւր նեղ միակողմանի, սահմանափակ շրջանից. Երեան են գալիս մարդիկ, որոնք զբաղւում են նաև մեր ներկալով, մեր ժամանակակից կեանքի ուսումնասիրութեամբ. յօդւածներ են նւիրւած մեր մատաղ գրականութեան և նրա մշակներին. Ժանօթացնում են իրանց հալքենակիցներին այն առաջադիմական գաղափարների, այն քաղաքակրթական ձգտումների հետ, որոնք ծնել ու զարգանում են հայկական ներկայ մտաւոր և հասարակական կեանքում. Իրաւ է, հայերիս այդ օտար բարեկամների մէջ երբեմն երբեմն, տարաբախտաբար, պատմում են Զուրովի նման սեանողի չարակամներ, բայց, ի հարկէ, Զուրովների վայրահաջութիւններին չարժէ ուշադրութիւն դարձնել, որովհետեւ այդ տեսակ մտքով կոյր ու հոգով բթացած շովին իստն երը նախատելով ու ծաղրելով այս ու այն ազգին՝ միևնուն ժամանակ իրանց գոլութեամբ ծաղր ու նախատինք են բերում թէ այն հասարակութեան,

որը դժբախտութիւն ունի նրանց իւր մէջ ընդունելու, և թէ այն մամուլին, ուր նրանք ասպարէզ են գտնում իրանց սխրագործութիւնների համար... Ի դէպս՝ չենք կարող աւտեղ չփշել այն դաշտովի և զգւանքի մասին, որ նորերս տեղական ռուսաց լեռաղէմ թերթերից մէկում կովկասեան հակերի վերաբերմամբ տպւած Զուբովի լաւոնի ցեխոտ լոդւածը լարուցեց աւտեղի մեր ճանաչած ռուսական մի քանի զարգացած ինտելլիգէնտ շրջաններում: Խակ ռուսաց գրականութեան մէջ աչքի ընկնող և ահազին կշու ունեցող մեղ ծանօթ մի պրոֆեսոր, կարդալով Զուբովի լոդւածը, խորին ցաւակցութեամբ ասաց տողերիս գրողին. «Զուբովիները—գրչով զինւած գալլեր են, որոնք ամեն բոպէ պատրաստ են նոյն խակ իրանց հարազանների միսը լափ ելու, ուր մնաց թէ օտարինը», Սական մխիթարական է, որ Զուբովիների վայրահաչութիւններին հակակիտ նոյն ռուսաց մամուլի, ի հարկէ, աւելի առողջամիտ և առաջադէմ մասում՝ մեր կեանքի մասին երբեմն լուս են տեսնում և՝ այնպիսի լոդւածներ, որոնք ներշնչւած են լինում անկեղծ համականքով և լայն, ազատ գաղափարներով:

Հէնց այս միջոցին—մեր մամուլի հարիւրամեակի լրանալու օրը, երբ գրում եմ այս տողերը, տեղական 『Ռյուսկի Ենթոմուստ』 աղատամիտ թերթում լուս է տեսել մի ընդարձակ և ամֆոփի լոդւած, որ կրում է 『Ստորագութեան արմանակով պրեսուն խորագիրը』 և որի հետ ուզում եմ ծանօթացնել 『Մուրճ»-ի ընթերցողներին: Յօդւածը պատկանում է պ. Խւրիչ Վեսելովսկու զրցին. Պր. Վեսելովսկին առաջին անգամը չէ, որ ասպարէզ է գալիս իւր մակրենի գրականութեան և մամուլի մէջ հակական կեանքի այս ու այն աչքի ընկնող երեսութներին նւիրւած խելացի, բանիբուն լոդւածներով և աղղպիտով իւր ազգակիցներին ծիցդ ու հիմնաւոր զաղափար է տալիս մեր մասին: Մի քանի աարի է արդէն, որ նա սիրով հետեւում է մեր ժամանակակից հասարակական և մտաւոր կեանքի ընթացքին և առիթ եղած ժամանակն իսկոն իւր բարի խօսքով ու բարիսիդն կարծիքով հանդէս է գալիս ռուսաց մամուլում: Այս կարծ ժամանակամիջոցում համեմատաբար նա շատ ունի գրած մեր կեանքի ու, մանաւանդ, մեր գրականութեան մասին, բաւական է լինել նրա ընդարձակ և լուրջ լոդւածներից հէնց միան հետեւեա լները. «Բաֆֆի», «Խաչատուր Աբովիեան», «Միափարէլ Պատկանեան», «Թետրոս Աղամեան», «Մկրտիչ Պէշիքթաշլեան» և «Գաբրիէլ Սունդուկեան», «Հին հակական թատրոն», «Հակական բեմի պատմութիւնից», որոնք ցրւած են ռուսական զանազան պարբերական թերթերում, ամսագրներում և իւր խմբագրութեամբ ու պ. Մ. Բերբերեանի եռանդուն աշակցութեամբ լուս ընծալած Արմանակութեան ժողովածուի մէջ: Պր. Վեսելովսկու այս վերջին գործը մանաւանդ—«Արմանակութեան ժողովածուն», որի վրա նա այնքան ջանք ու աշխատութիւն է թափել և որը գրաւեց ռուսաց համարեա ամբողջ մա-

մուլի լուրջ ուշադրութիւնը, արժանի է հայերիս առանձին համակրանքի և երախտագիտական զգացման, Պր. Վեսելովսկին առաջինն եղաւ իւր հալբենակիցների մէջ, որ աղջիսի մի գեղեցիկ և համակրելի միտք ըզացաւ—այն է՝ հայ մուքի ու հօգու արտաքատութիւնները բազմատեսակ նմուշներով թարգմանաբար ներկայացնել ուսւ հասարակութեան և ազգպիտով աշխատել վերջ դնելու ան մոլար կարծիքներին և անիմաստ նախապաշարմունքներին, որոնք վաղուց ի վեր մուտք են գործած աչդ հասարակութեան մէջ հայերիս վերաբերմամբ:

Իր „Արմանուկ Բելլետրիստի“ ժողովածուի նախաբանում պ. Վեսելովսկին, ի միջի ալլոց, ասում է. «...Սենք մեր նպատակն իրագործւած կը համարենք, եթէ մեզ չաջողի փարատել ուսւ հասարակութեան մէջ դեռ մինչեւ օրս էլ տիրող նախապաշարմունքները հայերի վերաբերմամբ, որոնց վերագրուում են միան բացասական չատկութիւններ և որոնց չաճախ չեն տալիս արժանի չարգանքը: Անհամակրելի երեսքներ և հասարակական թերութիւններ կարելի է գտնել ամեն մի ազգի մէջ և բոլոր դարերում: Դրանցից, անկատկած, ազատ չեն և հայերը. և կարծում ենք, որ աչքի առաջ ունենալով Սունդուկնեանցի իրական կեանքից առած կոմեղիաները, Պատկանեանի կծու երգիծաբանութիւնները, Շահազիզեանի սարկաստիքական տողերը, Բաֆֆիի ազնիւ նախատինքներն ու մերկացումները, Պարոնեանի վարակիչ ծիծաղը—չի կարելի ասել, որ հայերն իրանք էլ խստովանելիս չլինեն իրանց կեանքի մութ ու բացասական կողմերը և ընդունակ չլինեն տրանշալու իրանց պակասութիւնները տեսնելիս... Բայց ինչ տեսակ պակասութիւններ էլ որ գտնելիս լինենք հայ հասարակութեան առանձին ներկայացուցիչների կամ նոյն իսկ առանձին խաւերի մէջ—քանի որ խօսքը վերաբերում է բոլոր ժողովրդին, որպէս մի ամբողջութեան, ալստեղ, ինչպէս և առ հասարակ բոլոր միջազգակին չարաբերութիւնների մէջ, պէտք է հանդէս զայ ազգերի փոխադարձ չարգանք»: Ահա այն լայն գաղափարը, որով ներշնչած է երևում պ. Վեսելովսկին և որից բղխում է նրա զէպի հայերն ունեցած սիմպատիան, Պ. Վեսելովսկին դեռ երիտասարդ է և նոր է աւարտել համալսարանը: Նա իր սկզբնական ուսումն ստացել է Սոսկւաչի Լազարեան ճեմարանում, որն, անտարակոս, նոյնպէս ունեցել է իր ազգեցութիւնն այն բարի զգացում: Ների անման և զարգացման վրայ որ նա ներկայումս տարածում է զէպի մեր կեանքը: Պ. Վեսելովսկին դեռ նոր է մտնում իր հալբենի գրականական ասպարէզը և դեռ նոր է բացում նրա առաջ հասարակական գործունէութեան լայն ուղին: Պէտք է լուսալ, որ նրա լուսամիտ համակրանքը և հետաքրքրութիւնը դէպի հայերս չեն պակասիլ ու տեսողական կը լինեն նաև ապագայում:

Քաղաքածօրէն առաջ ենք բերում ակտեղ նրա „Շտունտի արմանուկ“

պրեստիկ վերջին նոր լուսածը, որ, ինչպէս վերն վիշեցինք, դրւած է հայ. կական. մամուլի հարիւրամեակի առթիւ և տպւած է Պատկան Վճարութիւն լրագրի № 286-ում:

«Աչօր լրանում է հայոց անդրանիկ «Աղջարար» լրագրի առաջին համարը լուս տեսնելու օրից, որի խմբադիրը—ըստ երեսովին բաւականին զարգացած և ձեռներէց մի մարդ—առաջուց հրաւէր է կարդում ժողովրդին, աշխատելով բացատրել նրան իր մտածած հրատարակութեան նպատակն ու ծրագիրը: Հետաքրքրական է, որ առաջին հայկական օրգագում հիմնում է հեռաւոր Հնդկաստանում, Մադրաս քաղաքում, ուր այն ժամանակի բաւականին հայեր էին ապրում և նրա խմբագիրն հանդիսանում է հոգենոր մի անձու—Հնմաւոնեան քահանանու—ու օրգանն էլ տպւում է ընդհանրութեան շատ քիչ մատչելի հայոց հին, գրաբառ լիզով: Սակայն այսպէս թէ անապէս «Աղջարարիցն» է սկիզբն առնում հայոց պարբերական մամուլն իր պատմութիւնը. ալդ մամուլն հետեւեալ տասնամեակում սկսում է աստիճանաբար,—թէն սկիզբներում բաւականին դանդաղ կեր պով՝ զարգանալ և ընդարձակել իր գործունեութեան շրջանը: Հայկական մամուլը, որպէս և ազգային բնոմ, առանձին զարգացումն են ստանում ոչ հայերի բուն հայրենիքում (եղել են մի քանի մասնաւոր փորձեր միայն ստեղծելու աշխատեղ լրագրութիւն), ալլ այն որոշ վայրերում, որոնք վայոց ի վեր սկսել էին գէալի իրանց գրաւել բազմաթիւ հայ գաղթականներ: Այսպիսի գլխաւոր գաղթավայրեր ժամանակի ընթացքում հանդիսանում են Կ. Պոլիսը, որ ներկայում էլ ծառադում է որպէս մտաւոր կենդրունը Տաճկահայերի համար, և Թիֆլիսը, որ նոյն նշանակութիւնն ունի Անդրկովկասեան հայերի համար: Այդ երկու քաղաքներից առաջինում հայկական մամուլն սկիզբն է առնում 1832 թւից, երկրորդում—1846 թւից: Զանազան ժամանակներում լուս տեսած բոլոր պարբերական հրատարակութիւններից համարեա կէսը բաժին է ընկնում ալդ կեղրոններին: Նորերս Թեհրանում նոյնպէս սկսեց հրատարակւել «Հաւորդ» անունով հայկական օրգան, որ պէտք է ծառակէ պարտկահայերի շահերի պաշտպանութեան: Սակայն, քիչ շեն եղել ե' ուրիշ քաղաքներ, ուր լուս են տեսել հայկական օրգաններ: Քանի որ ներկայում եւրոպական, ասիական և նոյն իսկ ամերիկական շատ քաղաքներում հաստատած են հայկական գաղութներ, զբա համար էլ ալդ օրգաններն սկիզբն են առել երկրագլուղիս ամենաբազմազան տեղերում—օրինակ՝ Մոսկվայում, Պնտիերբուրգում, Պարիզում, Լոնդոնում, Վիեննայում, Մարսելում, Վենետիկում, Վարնայում, Աթէնքում, Նիւ-Յորքում, Կալկաթայում, Մադրասում, Մինգարուրում և այլն: Իրանց նոր գաղթավայրում լրագիր հիմնելու ձգտումը բոլոր հայկական գաղութների համար ժամանակի ընթացքում մի բնորոշ լատկութիւն է դառել: Յաւոնի հայագէտ է. Դիւլորիէն այն միտքն է

Քակոնել, որ ուր որ էլ գաղթեն մի խումբ հայեր, նրանց առաջին հոգուը միշտ լինում է հիմնել եկեղեցի, ուսումնարան և լրագիր. Պատահել է մի անդամ, որ ընդամենը չի սուն սարդուց բաղկացած կոլոնիան ունեցել է, թէս ոչ երկարատես, իր առանձին օրգանը. Շատ կոլոնիաներ երբեմն կարեոր նշանակութիւն են տուացել հայկական մամուլի պատմութեան մէջ, Աւտափահ նշանակութիւն ունէին, օրինակի համար, զարիս առաջին կիսում հնդկական շատ քաղաքներ. 1858 թուից մինչև 1864 թիւը՝ Մոսկաւն, որտեղ պրոֆեսոր Նազարեանցը հրատարակում էր «Հիւսիսակալը» ամսուագիրը (զանազան ժամանակներ Մոսկավում՝ լուս են տեսնել հայերէն հինգ հրատարակութիւն), վերջապէս, չի կարելի չիշել բայտնի Միթրաքան Միթրանութեան անխոնջ գործունէութիւնը որ նկրւած է եղել հայկական մամուլի օգոտին. Ազգ Միթրանութիւնը, որ ծանօթէ եւրոպական հասարակութեան գլխաւորապէս Բալքնի հետ ունեցած իր չարաբերութեամբ, իսկ հայոց կեանքում կարեոր գեր և խաղում, որպէս հայկական լուսաւորութեան և գիտութեան շարժիչ ոճերից մինը, ձգտելով իր հայքենակիցների մէջ տարածել եւրոպական քաղաքակրթութիւնը, առանձին ուշք զարձրեց մամուլի զարգացման վրայ թէ Վենետիկի և թէ Վիեննայի Միթրաքաններն եռանդուն կերպով խմբագրում էին պարբերական հրատարակութիւններ. Առանձին լարգանքով պէտք է վիշենք ալստեղ ալիք հրատարակութիւններից մէկը, որ լայտնի է որպէս իր բազմաբովանդակութեամբ, նոյնպէս և իր կուլտուրական ուղղութեամբ. Դա Վենետիկի «Բազմալէպն» է, որ ամենահին օրգանն է հանդիսանում ներկայումն գոլութիւն ունեցող հայկական բոլոր օրգաններից՝ հրատարակում է 1843 թվից. Հետաքրքրական է, որ Միթրաքաններն առաջինը եղան, որ ամբողջ հայ հասարակութեան ուշադրութիւնը դարձրին աչսօրւաէ լորելեանի վրայ:

Այս հարիւր տարւաչ ընթացքում հրատարակել են ընդամենը հարիւր վիսունի չափ հայկական օրագրներ ու ամսագրներ Մամուլի ամելի լայն զարգացումը վերաբերում է վերջին վիսունամենակին, Առանձին կենդանութիւն էր նկատում 60-ական թւականներին զլիսաւրապէս ան պատճառով, որ աչ ժամանակ Ցամկաստանում հայերին տրւած էին, ևս առաւել խոստացւած էին, զանազան իրաւունքներ ու արտօնութիւններ, որոնք ի միասին առած՝ ստացել էին «Հայկական Սահմանադրութիւն» անունը և որը, սական, միայն թղթի վրայ մնաց. 1860 թ. մինչև 1870 թւականը հայկական օրգանների թիւը հասաւ մինչեւ 49 իւ ներկայումն լուս են տեսնում հայերէն լեզուով 31 հրատարակութիւններ:

Մինչև օրս լուս տեսած պարբերական հրատարակութիւնները թէ իրանց արտաքինով և թէ ներքին բովանդակութեամբ շատ բազմատեսակ են ներկայանում մեզ, կան ամսագրներ, տարեգիրներ, շաբաթաթերթեր

ու երկշաբաթաթերթեր, վերջապէս, ամենօրեակ լրագրնել։ Սական հաւէրի մէջ ամենօրեակ մամուլը շատ ուշ լաւաճնեց և երկար ժամանակ պարբերական հրատարակութեան գործածական տիպը չարաթաթերթն ու երկշաբաթաթերթն էին։ Ընդհանուր բովանդակութիւնն ունեցող հրատարակութիւնների թիւն, ինչպէս և ամեն տեղ, զգալի կերպով գերակշռում էր մասնագիտական հրատարակութիւնների թիւն։ Վերջինների բազմաքանակութեամբ աչքի է ընկնում Կ. Պոլիսը. օրինակ՝ ալսուել մենք գտնում ենք օրգաններ կրօնական, մանկավարժական, թատրոնական, երաժշտական, երգիծաբանական, առևտրական և այն. Խոր քաղաքական ուղղութեամբ հայկական մամուլը բաժանեում էր մօտաւորապէս նոյն ֆրակի աների, ինչ որ Արևմտա-եւրոպական մամուլը. Կային օրգաններ ազատամիտ-առաջդիմական, պահպանողական, կղերական, սոցալիստի կական և այլն. Կուսակցական կո-իւը, որ երբեմն շատ սուր կերպարանք էր ստանում, բաւականին բացորոշ արտաչափութիւն էր գտնում հայկական մամուլում, որն այդ պատճառով դառնում էր երթեմն կենդանի, վառվուն և անգամ չափազանց անհաշտ բանակուլի ասպարէզ...

Երկար ժամանակ հայկական մամուլը ստիպւած էր կուելու ժողովը զիմանակութեան անտարբերութեան դէմ, որ կուլտուրապէս կանգնած լինելով սոսորին տատիճանի վրայ՝ անընդունակ էր հասկանալու տպագրական խօսքի նշանակութիւնը և զգալու նրա սկանչը. Հայկական առանձնակի կեղրունների բաժան բաժան լինելը, նրանց մէջ եղած հաղորդակցութեան անգոնացուցիչ միջոցները, միւս կողմից՝ ընդհանրութեան մատչելի մի գրականական լեզուի բացակալութիւնը—այդ ամենը նոյնպէս պէտք է խանգարէին հայկական օրգանների աւելի լաջող տաճմանը:

Մենք վերը մատնացուց արինք, որ հայկական կոլոնիաներում և կուլտուրական կեղրուններում լրագիր հիմնելը հետզհետէ մի շատ սովորական ֆակտ է դառնում։ Բայց առաջինը՝ այդ երևոյթն սկսեց մի առանձին բացախատութեամբ աչքի ընկնել միան 40-ական թւականներից. իսկ երկրորդը՝ եթէ ամեն տեղ ճարտում են մի խումբ մարդիկ, որոնք իրանց սրտին մօտ են համարում մամուլի շահերը, հապա գեռ չպէտք է կարծել, որ նոր հիմնող որ և է օրգանը միշտ կարող էր լուս գնել քիչ ու շատ լաճն ծաւալ տառնալու, զգալի քանակութեամբ տարածւելու վրայ։ Մասսայի համար մամուլն երկար ժամանակ գոլութիւն չունէր։ Բաժանորդների թիւը շատ անգամ տասնեակներով էր հաշում («Ազգաբարեն» սկզբում ընդհամենը 28 բաժանորդ ունէր). Ազսպիսի մի նշանաւոր և ազգեցիկ ամսագիր, որպիսին էր «Հիւսիսափակլը», 50-ական թւականների վերջում իր բաժանորդների թիւը միան 300 էր հաշ-

ւում¹⁾։ Սակայն աստիճանաբար, քանի կուլտուրան տարածւեց հակերի մէջ, այնքան էլ սկսեց նկատելի լինել մի որոշ վտափոխութիւն դէպի լաւը, Դեռ ներկայում էլ պարբեշական հրատարակութիւնները հայերի մէջ դէթ մասամբ այնքան չեն տարածւած և այնպիսի պահանջ չեն դարձած, ինչպէս որ այդ տեսնում ենք Արևմտեան հւլողապարում։ Ոչ միայն ամսագրի ալ և լրագրի համար 2000 բաժանորդ ունենալը լուծ ցանկալի վիճակ է համարուում։ Մամուլի այդ դրութեանը բնականաբար հետեւում է համարեա բոլոր հալոց խմբագրութիւնների նիւթական անապահութիւնը։ Այդ անապահովութեան հետ սերտ կապւած է հալոց լրագրական աշխարհի մի ալ բնորոշ երևութը—խմբագրութիւնը չի կարողանում վարձատրել հոնորար տալ իւր աշխատակցին, այնպէս որ գրականական վասակն հակերի մէջ ընդհանրապէս անվար ձատը ելի է մնում։ Բայցառութիւններ են եղել երբեմն միան ամենաաչքի ընկնող մատենագրերի համար, ինչպէս զատնի վիպասան Բաֆֆին էր²⁾։ Բայց այն հոնորարն էլ որ նրանք են ստացել, չափից դուրս համեստ կը թէր թէ մեզանում, թէ Արեմուտքում։ Հակական մամուլի տարեգրութեան մէջ մենք շարունակ գտնում ենք օրինակներ այն չամառ ու կատաղի կուլի, որ պարբերաբար հրատարակութիւնների խմբագրները մղել են նիւթական դժւարութիւնների և երբեմն ուղղակի ծանր կարիքի դէմ։ Այդ կողմից խորին աղետով լի է Կ. Պոլսի երգիծաբան Պարոնեանի վիճակը, որ իւր թէրթի հրատարակութեան համար, որպէս զի կարողանաւ գէթ մի քանի գրող ձեռք բերել ստիպւած էր լինում տանել և՛ կարիք, և՛ քաղցածութիւն՝ մերթ մանրավաճառի խանութ բանալով, մերթ հաշւապահութեան դառեր տալով և ստացած ամբողջ հասութը գործազրելով իւր սիրած գործի վրաէ, նա մի ժամանակ ստիպւած էր իւր թէրթը ինքը ցրւելու բաժանութ ներին, որպէս ալնքան միջոցներ չունէր, որ ցրւիչ վարձէր։ — և այդպէս մօտ 25 տարի (1868—1891) հակական մամուլին ու գրականութեան ծառակելուց լետով, մեռաւ թոքախտից, որ մասամբ հետեանք էր նրա քաշած ծանր կեանքի... Ներկարումն բանաստեղծ Ա. Շահազի-

¹⁾ Մենք հիմք ունինք կարծելու, որ այդ թիւն իսկ չափականցեցրած է, եթէ խնդիրը վճարող բաժանորդների մասին է, Մեր հիմքը այն է որ «Հիւսիսափալը» հրատարակւում էր «Մուրճիւ-ի մօտասրապէս կէս մեծութեամբ», իսկ 300 բաժանորդով կարելի էր «Հիւսիսափալը» ծաւալով ամսագիր հրատարակել նաև տարեկան 8 ռ. բամանորդագնով։

Ծանօթ, «Մուրճիւ» Խմբ։

²⁾ Որքան էլ պ. Վենելովսկու ասածը հոնորարի մասին ընդհանրապէս ճշգրիտ է, բայց երբ իրը բայցառութիւններ բերում են միմիան ամենալավանի գրողները—զորանով ճշմարտութիւնը վնասում է, որովհետեւ հոնորար տալը այդ աստիճան միծ բայցառութիւն չի կազմում մեզանում։

Ծան., «Մուրճիւ» Խմբ։

զեանի անունով հիմնելիք գրականական ֆոնդը¹⁾ միան կարող է մի փոքր բարւոքել և թեթևացնել մամուլի աշխատաւորների վիճակը:

Հայկական մամուլի պատմութեան մէջ, մանաւանդ վերջին չիսնամեակում, պատմում են բաւականին համակրելի և նշանաւոր անուններ: Յիշենք ալսուեղ, օրինակի համար, պրոֆեսոր Ս. Նազարեանցին, որ իւր օրգանում անպիսի լամառութեամբ քարոզում էր կուլտուրական գաղափարներ և պատոպանում ժամանակիս կարիքներին լարմարեցրած նոր, հանրամատչելի հալոց լեզուն. նրա վազամեռ աշխատակցին ու աջակցին՝ երտպական կրթութեամբ և լուսաւորութեամբ գինւած, առաջնակարգ հրապարակախօս Մ. Նալբանդեանցին. հէնց նոր լիւած Պարտեանին, որ իր երգիծաբանական հրատարակութիւնների մէջ անպէս տաղանդաւոր կերպով ծաղրում ու մտրակում էր իր հայրենակիցներին. չափանի հրապարակախօս Դրիգոս Արծրունոսն, որ քսան տարի թիֆլիսում հրատարակում էր «Մշակ» լրագիրը և վաստակել էր ժողովրդականութիւն ոչ միայն հայ հասարակութեան մէջ, այլ և վաճելում էր ուսուական մամուլի լարգանքը. ներկաչ հալոց կաթողիկոս Խրիմեանին, որ 50-ական թւականների վերջերում փորձ արաւ Տաճկա-Հաւաստանի հէնց կենտրոնում պարզ, ժողովրդական լեզուվ ամսագիր հրատարակելու «Աւասպուրականի Արծիւ» անունով և ալին, Եթէ մի քանի հայկական լրագրների ու ամսագրների էջերում երեքն քարոզւել են հակալդեցիկ, չետաղիմական գաղափարներ ու հայեացքներ, հասաւ միւս կողմից՝ չնորհիւ ախն հանգամանքի, որ եղել են վերովիշեալ գործիչների պէս ուժեր, որոնք դանազան ժամանակներում աշխատել են յօպուտ մալրենի մամուլի, — միւս օրգանները կարողացել են ձեռք բերել աւելի պատւաւոր զիրք և մարդկանց մտքերի վրայ ներգործելու լաւանի կուլտուրական աղդեցութիւնն, որով և նպաստել են եւրոպական քաղաքակրթութեան և լուսաւորութեան տարածմանը ժողովրդի մէջ: Գրանումն է կալանում հայկական մամուլի ամենաառաջաւոր և լաւագոյն մասի պատմական ծառաւութիւնը: Աւելացնենք որ ամենանշանաւոր հայ բելետրիստների շատ աշխատութիւններն առաջ լուս էին տեսնում լրագրներում, որոնք ալդապիսվ աչքի ընկնող դեր էին. խաղում ժողովրդի մեծամանութիւնն ալս և ալն գրողի առեղծագործութեան հետ ծանօթացնելու գործում:

Եւ ալդպէս հայկական օրգանն հետզհետէ աւելի ու աւելի մօտենում էր ժողովրդի ու էալական կեանքին: Հին, գրաբառ լեզվոց նա կամաց կամաց անցաւ նոր, գրականական բարբառներին: Լուրերի և նորութիւնների

¹⁾ Ադ Փոնդը, եթէ հիմնելու բաղդին արժանանայ, պիտի կոչւի Հայկ գրականներին ու զիտնականներին օժանդակող ընկերութիւն»:

Ծան. «Մուրճ» Խմբ.

ժողովածուն (աղդպիսի բնաւորութիւն ունէին առաջւակ հրատարակութիւնները) փոխւելով՝ սկսեց հասարակութեան դեկավար օրգան հանդիսանալ: Եւ քանի մամուլն աւելի էր մօտենում կեանքին, այնքան նաև աւելի ու աւելի վայելում էր ժողովրդի սէրն և համազայտութիւնը, ինչպէս որ այդ պարզ արտակարուեց, օրինակ, Արծրունու ըորելեանին և ապա նրա հանդիսաւոր թաղմանը: Ժողովրդականութիւն վայելող հրապարակախօսին մատուցած այդ չարգուապատիւը, անտար նկատ, նշանաւոր և ուրախալի Փակտ է հանդիսանում հայկական կեանքում, —թէպէտ միենուն ժամանակ չպէտք է մոռանալ, որ դրանից քիչ առաջ հայկական մի ակկենտրոնում հիւծւած, ուժասպառ մեռաւ գժբաղդ Պարոնեանը...

Վերջացնելով մեր խօսքն, անհրաժեշտ ենք համարում արձանագրել ալսող նորագոյն հայկական մամուլի մի շատ համակրելի չատկութիւնը — այն է՝ որ նա միշտ գիտէ արձագանք տալ ժողովրդական շահերին ու կաքրիքներին: Հասարակական աղէտների ժամանակ, օրինակ 1879 թ. և ներկաէ 1894 թ. Հայաստանում տիրած սաստիկ սովին, շատ լրագրներ քանից անգամ ծառալութիւններ մատուցին, հասարակութեան ուշադրութիւնը դարձնելով սովատանջների վրաէ, կոչելով նրան դէպի զոհաբերութիւն և աղդպիսով հետքնետէ հանդանակելով երբեմն տասնեակ հազարներ: Օրւաէ հարց ու խնդրին արձագանք տալու այդ ընդունակութիւնը և շատ հրապարակախօսների ու մամուլի մշակների եռանդուն գործունէութիւնն ի միասին առած՝ հայկական մամուլի հարիւրամեակ ըորելեանը հետաքրքրակար են դարձնում նոյն իսկ կողմնակի զիտողի համար:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՁԻ» բաժանորդագրութիւնը 1895 թւականի համար բացւած է։
ՍԱՍՈՒՆԻ ԴիՊՔԵՐԸ. «Մուրճ»-ի ընթերցողները կը կարդան ներկայ համարում «Սամուզ դէպքերը» վերնագրով թղթակցութիւնը, որի
մէջ մանրամասնորէն նկարագրւած են Սասունի մէջ տեղի
ունեցած կոփւները։ Այդ թղթակցութիւնը բղխում է ձեռն-
հաս և տեղն ու տեղը եղած անձից։

Ի դէպ նկատենք որ նոյն ալդ թղթակցութիւնը, տեղ-
տեղ աղաւաղ, շատ տողեր կրծաստած, անուններից ոմանց ան-
ձիւտ տպած ձեռվ, լուս տեսաւ «Մշակ» լրագրում 12 նուեմ-
բերի, երեխ օգտաւած լինելով մեզ մօտ զտնւող բնագրի շտապ
արտագրածից։

Ուշադրութիւն ենք դարձնում թղթակցութեան ամսա-
թւի վրայ, որ է 25 օգոստոսի։ Դա շատ կարեոր է այն պատ-
ճառով, որ ևրոպական մամուլը նոյնեմբերին միայն ստացաւ
լուրեր Սասուզ կոտորածի մասին։ Պէտք է առ ալժմ կարծել
որ այդ նոյն դէպքերի արձագանքն էր, որ պատմած են մեր
թղթակցութեան մէջ։ Ահա ալդ լուրը՝

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՌՈՒԱԾԸ. Լուր է ստացւած, և ալդ լուրը ճշգրած է, որ
տաճկական զօրքերը կարողացան ներս մտնել Սասուն, մեծ կո-
տորած անելով թէ Սասունի շրջակալքումն թէ բուն Սասունի
մէջ։ Ընկած հայերի թիւը ըստ մի տեղեկութեան՝ 3000 է, տղա-
մարդ, կին և երեխաց, ըստ այլ աղբիւրի՝ 5000-ից աւելի։ Տե-
ղական քրդերից ևս կան կոտորւածներ, որովհետև չէին միա-
ցել տաճկական զօրքերի հետ։

ՍԱՍՈՒՆԻ. «Մուրճ» ներկայ համարից սկսում ենք տպագրել պ. Սէլլանի
մի նկարագրութիւնը, որ կարող է վերջանալ միան մի քանի
ամսում։ Դա մի ընդարձակ աշխատասիրութիւն է, գրած դեռ
ևս 1892 թւականին։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄՈՒՄ հաստատւած է հոգեոր Ատեան, որի անդամնե-
րին, առաջարկութեամբ Ատրպատականի թեմի առաջնորդ
Առոքիաս արքեպիսոս Պարուանցի՝ հաստատած է վեհ. կաթո-

գիկոսը, կոնդակով առ. 12 հոկտ. 1894 թ.: Այդ ատե անը կոչւած է օգնական լինելու թեմակալ առաջնորդին՝ թեմի կառավարութեան գործում, որպէս մեր կոնսիստորիաներն են:

ԷջՄԻԱԾՆԻ ՈԽՍՈՒՄՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ, որ լուծւած էր վերջին ամիսներում, վերակազմելոց, հրամանով Վեհափառ կաթողիկոսի հետեւալ կերպ. Նախագահ՝ Կարապետ Կոստանեանց, տեսուչ Էջմիածնի Գէորգեան ձեմարանի. ալ անդամներ՝ Յովհաննէս Տէր-Միրաքեանց, Կարապետ աբեղակ Տէր-Մկրտչեան, Յովհաննէս Յովհաննիսեան, Տիրակը աբեղակ Տէր-Յովհաննիսեան:

Արձանագրելով հանդերձ այս նշանակումները, մենք կը կրկնենք նոյնը, ինչ ասել էինք նոյն լանձնաժողի նախորդ կազմի մասին (տես «Մուրճ» 1893 թ. № 11, էջ 1780—81), այն է որ «մեզ հարկաւոր է ներկայ Ուսումնական մասնաժողովից աւելի կալուն մի հաստատութիւն, մի «Ուսումնական հոգաբարձութիւն», որի անդամները ընտրւած կը լինեն առնւազն բոլոր թեմական դպրանոցների հոգաբարձութիւններից, նախագահութեամբ Վեհափառ կաթողիկոսից նշանակւած մի անդամի»: Իսկ ճանաչել որ և է բարովական հեղինակութիւն շարունակ փոփոխւող և պատահական անձերից բաղկացած մի ուսումնական մասնաժողովի համար, որի կոչումը պիտի լինէր զեկավարել հայոց ուսումնարանները, —մենք չենք կարող և չենք ցանկանալ: Ինչ հեղինակութիւն որ ունեցան անցեալ կազմերը և ինչ որ շինեցին նոքա—նոյնը սպասում ենք և մասնաժողովի աշխատան կազմից: Թերևս աշխատանի կատարելիքը աւելի ես չնչին, եթէ չասենք վնասակար լինի, եթէ ի նկատ առնենք մասնաժողովը կազմող անդամների անձնաւութիւնները:

ՇՈՒՇԻԱՑ ԴՊԲԱՆՈՑԻ դրութիւնը: 15-Ն հոկտեմբերի Շուշուց ստացանք հետեւալ հեռագիրը.

«Դպրանոցի ուսուցչական կազմը և հոգաբարձութիւնը հրաժարական տվին ձեզ չափոնի պատճառներով»:

Իսկ մեզ չափոնի պատճառները սոքա էին. 1) Հոգաբարձութիւնը արձակած էր անցեալ տարւաչ կրօնուսուցին (տէր-Ալեքսանդր Բաղդասարեանց), 2) Արձակած էր դպրանոցից 7 աշակերտներին՝ մանկավարժական խորհրդի և հոգաբարձութեան միաձայն վճիռներով: Սակայն թեմական առաջնորդ կարապետ եպ. Ալքազեան, հակառակւելով աչդ որոշումներին, դիմում է Նորին Վեհափառութեանը, որը կարգադրում է արձակած կրօնուսուցին և արձակւած 7 աշակերտներին նորից ընդունել:

Դպրանոցի հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը՝
անկարելի համարելով դպրանոցի կանոնաւոր կառավարու-
թիւնը ացղպիսի պահմաններում, տւեցին իրանց հրաժարական-
ները:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՏԵՍՉԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԻՆՎԻՐԸ, որ արդէն եր-
կու ամսից աւելի զբաղեցնում է նորընտիր հոգաբարձութեանը,
մնում է զեռ ևս չլուծւած: Հոգաբարձութիւնը սակայն մի
քայլ անելով աշխատել է մերձենալ ինդրի լուծմանը, որի
լետաձգելը կարող ենք ասել հաստատապէս, չի ծառալիլ լո-
գուտ հոգաբարձութեան: Փոխանակ տեսուչ ընտրելով՝ նա ձեռ-
նամուխ եղաւ տեսչի պաշտօնակատարի ընտրութեան, որ,
ինքն ըստ ինքեան, մի անհամականալի պաշտօն է կեանքի սո-
սովորական ընթացքում: Սակայն թուզ տալով անդամ որ
լատուկ հանգամանքներից ստիպւած հոգաբարձութիւնը տեսչի
պաշտօնակատարի ընտրութիւն է կատարել, մենք մեր պարտքն
ենք համարում բացարձակ կերպով պախարակելու ան օրը
որ ընտրել է հոգաբարձութիւնը տեսչի պաշտօնակատա-
րի ընտրութեան համար: Մենք հաստատ չգիտենք թէ որ-
քան օրինաւոր է մի նիստ, որին չի նախագահել նա, ով ըստ
կանոնադրութեան (թեմակալ առաջնորդը կամ նորա փոխա-
նորդը), կոչւած է նիտուերին նախագահելու: Մենք մինչեւ ան-
գաս թուզ ենք տալիս որ նիստը կարող է նաև օրինական
համարւել հիմնւելով թերևս բարձմաթիւ պրեցեդէնցիների վրաց:
Սակայն կատարել մի կարսոր ընտրութիւն, ինչպիսին ընտ-
րութիւնն է այն անձի, որը կոչւած է դպրանոցի պատաս-
խանատու ղեկավարողը լինելու, միենո՞ն է թէ ինչ տիտղո-
սով կը կնքենք այդ անձին — տեսչի թէ տեսչի պաշտօնակա-
տարի տիտղոսով — ացղպիսի պատասխանատու անձի ընտրու-
թիւնը կատարել առանց ներկալութեան հոգաբարձութեան
օրինական նախագահի, — եթէ ապօրինութիւն չանւանենք,
ապօրինութեան հաւասար մի վարմոնք է: Եթէ օրինական
նախագահը սովորութիւն դարձրած լինէր նիստերին չգալ և
դորանով պատճառ հանդիսանար գործերի խանգարման — մենք
ոչինչ պախարակելի բան չէինք նկատիլ, եթէ հոգաբարձու-
թիւնը իւր ընտրութիւնը կատարելու համար՝ օգտուէր եղած
օրինակներից: Բայց քանի որ ացղպիսի հանգամանք չկայ,
քանի որ թեմակալ առաջնորդը բացակաչ էր նիստից թիֆ-
լուում չլինելու պատճառով, իսկ թիֆլիսից նա բացակաչ էր
մի ամենալարգելի պատճառով — Վեհափառի հրամանով կայսեր

թաղման ներկայ վիճակու համար Պետերբուրգ գնալը — կատարել աշդպիսի մի օր ընտրութիւնը վերին աստիճանի անտաքտվարմունք է, մի վարմունք, որի համար հոգաբարձութեան ընտրողները չնորհակալ լինել չենք կարող Մինք որ միասին աշխատել ենք հրապարակաւ ներկայ հոգաբարձութեան համար — մեր պարտքն ենք համարում մեր զգացմունքը նաև հրապարակապէս արտաքալսել ներկայ հոգաբարձութեան այդ տգեղ վարմունքի մասին:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ տեսչի պաշտօնակատարի պաշտօնով ընտրեց պ. Յովհանն. Սաղաթելեան, որ 1891—94 թւականների դըպրոցական տարիներում տեսչի օգնական էր Էջմիածնի Գէորգեան ճեմարանում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՎԱՆ ՊԱՏԳԱՄԱՆՈՐ Կայսր Ա.Ն.Յ.Ք.Ս.Ա.Ն.Դ.Ր. III-ի թաղման հանդիսին նշանակւեց Վեհափառ Կաթողիկոսի կողմից Թիֆլիսի թեմի առաջնորդ Գէորգ եպ. Սուրբէնեան, որ և ուղևորել է Պետերբուրգ նույնիմբերի 2-ին:

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԱՆԴՐԻԱՍՊՈԽԱՆ երկրում և ԹՈՒՐՖԵՍՏԱՆՈՒՄ: Պետական խորհուրդը հետևեալ որոշումն է արել Անդրկաստեան երկրում և Թուրքեստանում հայոց եկեղ. ծխական ուսումնարաններ հաստատելու նկատմամբ. Օրէնսդրքի ԽI-դ հատորի 975-դ լոգւածին աւելացնել հետևեալ ծանօթութիւնը.

«Առջն լոգւածում ուսումնարանները Թուրքեստանում և Անդրկաստեան երկրում կարող են բացել միայն և եթ համաձայնութեամբ Թուրքեստանի ընդհանուր նահանգապետի կամ Անդրկաստեան երկրի նահանգապետի՝ ըստ պատկանելուն: Այս ուսումնարաններում բոլոր առարկաների դասաւանդութիւնը, բացի կրօնից, պէտք է կատարի ուսուաց լեզով»:

ԳՐԱԿԱՆՆԵՐԻՆ 09ՆԵԼՈՒ ՖՈՆԴ. Կանոնադրութեան ծրագիրը քննելու համար հոկտեմբերի 2-ի ժողովը (տես «Մուլք» № 9: Լուրեր էջ 1337—38) ունեցաւ երկու շարունակութիւններ՝ հոկտեմբերի 9-ին և 16-ին նոյն քաղաքական խորհրդարանի դահլիճում: Ծրագիրը, որ բաղկացած էր 69 լոգւածներից, այդ երեք նիստերում ամբողջապէս քննեց: Ժողովներին ամենից շատ զբաղեցրին լոգւածները՝ § 1 (նպատակ), § 10 (թէ ում և ինչպէս տալ փոխատութիւն), § 17 (թէ ինչ ձեերով կարող են լարուցւել խորհրդները օգնութեան մասին), § 19, 20 (ընդհանուր ժողովների մասին), § 37 (թէ ինչ հակողութիւն պիտի լինի ալն անձերի նկատմամբ, որոնք ընկերութեան հաշւով

կատարելագործւում են կամ պատրաստում են գրական գործունէութեան մէջ), § 39 (որով ընկերութեան կոմիտէտը — վարչութիւնը միջնորդ և ընկերական ղատարան է հանդիսանում այն վէճերի համար որ ծագում են գրողների և հրատարակիչների ու խմբագրութիւնների միջն), § 54 և 56 (վերաբերեալ կոմիտէտի անդամ քարտուղարի և նորա օգնականի պարտաւորութիւններին):

Կանոնագրութեան ծրագիրը քննելուց և փոփոխութիւներով ընդունելուց իւսով, ժողովի նախագահը առաջարկեց ժողովին նշանակել մի կամ մի քանի անձեր, նոր կազմած ծրագիրը խմբագրելու և ապա բարձրագուն կառավարութեանը առաջարկել ի հաստատութիւն: Ժողովը միաբերան խնդրեց նախագահ պ. Ա. Արասիսանեանցին: Խմբագրել նոր ծրագիրը, կարդալ այն իւր կողմից հրաւիրած մի խումբ ժողովականների առաջ, և իւր վրայ առնել կառավարութեանը առաջարկելու դործը, թույլ տալով նրան վարելու ըստ իւր բարեհաջեցողութեան, առանց նշանակելու դորա համար որոշ ժամանակամիջոց:

Ի վերջոյ հարկ ենք համարում ներկայացնել հետևեալ հաշվութեալ ցամացմեան ծախքերին:

	Բ. կ.
1. Ժողով 7-ն լունիսի 1892 թ., քաղաքավին տան ծառաներին.	3 —
2. " 2 հոկտեմբերի 1894 թ. "	2 —
3. " 9 հնկտ. 1894 թ. քաղաք. տան ծառան, և լուսաւորութ.	8 —
4. " 16 " " "	2 —
5. Յեղորդներին ներկայացնելու համար ուստերէնը և հայերէնը 80 ական կոպէկ.	1 60
6. Ժողով կայացնելու խնդիրք պ. նահանգապետին, 2 մարկա. .	1 60
7. Ռեմբէն ծրագիրը արտագրելու վճարւած է	5 —
8. Ծրագիրը հայերէն թարգմանելու համար վճարւած է	6 —
9. Դիտեատրովակուն վճարւած է ռմբէնը տպելու թղթի համար 5 50	
10. Մ. Ռոտինեանցի տպարանին ռմբէնը տպելու և կազմարարին. 24 —	
11. Թղթակցութիւններ և հեռագիրներ.	2 20

Ծախքի գումարն է՝ 60 90

Այդ ծախքը ծածկելու համար ստացւած է՝	
1. Պր. Ալեքսանդր Խուզավէրդեանից (ծախք № 7, 8, 9) . .	16 50
2. Ժողովարարութիւն 9 ին հոկտեմբերի ժողովում.	11 —

Ընդամենը ստացւած է՝ 27 50

Յանկացողները մասնակցել նախապատրաստութիւնների համար եղած և լինելիք ծախքերին, թող բարեհաճեն իրանց լուման հասցնել պ. Ա. Արասխաննեանցին (խմբագրութիւն «Մուրճ» ամսագրի), որը ստացած և մոխած գումարների հաշվները կը հրատարակի իւր ժամանակին.

ԴՈՔՏՈՐ ՌՈՒՇԻ դտած միջոցը ընդգէմ զիփտերլոտի, որի մասին հաղորդեցինք անցեալ ամիս, ոկտոբեր գործադրուել ամբողջ լուսաւոր աշխարհում:

ՓՈԹԻՒ ՔԱՂԱՔԱԴԻ գաղտնի քէշարկութեամբ միաձան ընտրւած է լայտնի հրապարակախօս Ն. Նիկոլաձէ:

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ, Ահա ցուցակը Ախալցիակարութեան համար ընտրւած ձախնաւորների (լիազօրներ) և նոցա կանդիդատների 1894—1893 թ. թ. համար: 1) Տէր-Գրիգորիան, 2) Ղազարոսեան, 3) Մովսէսեան Գ. Ն., 4) Արաբաջեան Ա., 5) Ալիխաննեան Մ. Բ., 6) Ղասարաշեան Ա., 7) Մովսէսեան Մ. Ն., 8) Հակոբետեան Ա. Թ., 9) Պետրոսեան Մ. Պ., 10) Աղաջաննեան Գ. Խ., 11) Զիլինգարեան Ա. Մ., 12) Բալբուրթեան Մ. Ս., 13) Կիւրբենիեան Մ. Մ., 14) Գանալանով Ա. Կ., 15) Տէր-Կարապետեանց Ա. Ս.

Կանդիդատներ՝ 1) Մելիոնեան Մ. Պ., 2) Գոռեան Խ. Ա., 3) Խզարչիեւ Գ. Դ., 4) Կուպալով Դ. Մ.. 5) Մուրաղեան Մ. Կ..

ԳԱՆՉԱԿԻ քաղաքակին դեպուտատների ընտրութիւն: Հոկտեմբերի 26-ին կատարեց ազդ ընտրութիւնը: Ընտրւած են հակերից՝ Կ. Յովհաննիսեան, թուրքերից՝ Ռւսովի-բէկ Ռւսովի-բէկով: Հակերի ժողովը կատարեց ո. Գէորգ եկեղեցու բաղում, թուրքերինը՝ Շահ-Արաս մղկիթի բագում:

ՎԱՐԴՐՈՊ, Նորերս թիֆլոսումն էր գտանւում անգլիացի Օլիմբ Վարդրոպ, լազանի սիրողը վրաց գրականութեան: Նորա աշխատութիւններից լայտնի է „The Kingdom of Georgia“ (վրաց թագաւորութիւնը):

ՊՈԼՍԻ ԵՐԿՐԱՆԱՐԺԻՑ ԱՐԱՎԾԱԼՆԵՐԻ օգտին, Սուլթանի բարձր նախադահութեամբ կազմւած նպաստամատուց լանձնաժողովը ժողոված էր մինչ հոկտեմբերի 10 ը 5,935,253 դրուշ 20 վարա, որ հաւասար է մոտ 350,000 ոսկի ռուբլու: Այդ գումարից մինչ այդ ժամանակ բաշխւած էր ընդամենը 1,606,660 դրուշ 20 վարա:

ՆԻՖԻԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Թիֆլիսի քաղաքացի պ. Գրիգոր Սարուխաննեան, մի կտակով 19 փետրւարից, նոյեմբերի է Հայոց Բարեգործական

Ընկերութեանը կովկասում իւր սեպհական երկարկանի տունը, Թիֆլիսի Անդրէեւակալա փողոցում, 362 քառակուսի սաժէն գետինով. տունը արժէ 30—40000 ռուբլի և տալիս է մուտք տարեկան մօս 2000 ռուբլի: Ազդ եկամուտից օգտվելու է նւիրաբերողը մինչ իւր մահը, իսկ նորա մահից լետով նա կ'անցնի զիշեալ ընկերութեան ի սեպհականութիւն: Տան եկամուտը պիտի զործաղրսի աղքատ աշակերտների վրաէ:

Բաքւայ բնակիչ պ. Մելիքեան նւիրեց էջմիածնի թանգարանին և վաճառքի ազ մասերին 2,400 ռուբլի:

Բաքւեցի հանգուցեալ Սարգիս Եղիազարեանցի վիշատակին նորա եղբաւը Եղիա Եղիազարեան միանւագ նւիրեց 5000 ռուբլի բարնգործական նպատակներով:

Պ. Առ. Ծառուրեանը նւիրել է էջմիածնին 5000 ռուբլ. Ն. ԴԱՐՍԿԻՑ, դիրեկտորը ժողովրդական ուսումնարանների Թիֆլիսի նահանգի, տեղափոխում է նոյն պաշտօնով Ռուսաստանի կուրսկի նահանգը:

Խ. ԳՐՈԶԴՈՎ: Թիֆլիսի նահանգի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորի պաշտօնով, Ն. Դարսկու փոխարէն, նշանակւում է Խ. Խ. Գրոզդով, որ ցալժմ նոյն պաշտօնն ունէր Բաքւի նահանգում:

ՀՈՂԱԶԱՓՈՒԹԻՒՆԸ. ԱՆԴՐԿՈՎԱԿԱՍՈՒՄ: Պետերբուրդի «Նովոստի» օրագրի ասելով Անդրկովկասուն երկրի հողաչափութեան վերաբերեալ կանոնադրութեան 81-երդ չորսամը մոտադրութիւն կաէ լրացնել հետեւեալ կերպ, Երբ գիւղական հասարակութիւնների մէջ վէճեր են ծադում հողաչափութեան ժամանակ արգունական հողերի և կալւածքների վրաէ ունեցած իրանց իրաւունքների մասին և երբ պետական կալւածների տեղական վարչութիւնները վճիռներ են կալացնում ազդ վէճերի առիթով, գիւղական հասարակութիւնները կարող են զանգատ ներկայացնել այդ վճիռների դէմ չորս ամսւադ ընթացքում, վճիռը լայտարարելու օրից սկսած:

«ՆԵՐՀԱԿ ԱՌԵ.ՔԵԼ» մեր աշխատակից պ. Ա. Աղելեանի, որ տպագրւեց «Մուրճ» №№ 7—8 և 9, արդարացի կերպով իւր վրաէ ընդհանուր ուշադրութիւն է դարձրել մեր ընթերցողների կողմից: ԲՈՇԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 80ԴԻԱԾԸ մեր աշխատակից պ. Գրիգոր Վանցեանի, որ տպւած էր «Մուրճ»-ի № 7—8-ում «Պատմական ակնարկ բոշաների անցեալից» խորագրով, ամբողջապէս աղել ս արտատպւեց Պոլսի «Հայրենիք» օրագրում, հետեւեալ խմբագրական ծանօթութիւնով: «Ա. մուաթերթի մը մէջ ը բոշաներու վրաէ ուշագրաւ չողւած մը հասարակւած ըլլալով մաս-մաս բակ'.

տատպենքու Ալդ «Ամսաթերթի մը մէջ» խօսքերը վերաբերում են «Մուրճ»-ին, որի վիշտակութիւնը Թիւրքիայի մամուլի մէջ կառավարութեան կողմից արգելւած է, թէև մուտքը, ինչպէս երեսում է, արգելւած չէ գէթ ծովեղրեաչ քաղաքներում: Ուրեմն դրանով պէտք է բացառորել որ պ. Վ. Փափաղեանի «Աննա» վիպիկը երբ «Հայրենիք»-ը արտապից, «Մուրճ»-ից արտասապած լինելը չէր վիշտակւած:

Կ. Պ. ԵԱՆՈՎՍԿՈՒ 50-ամեաց ծառալութեան լորելեանը տօնւեց նոգեմբերի 13, Պ. Կ. Եանովսկի վերջին 16 տարիները Կովկասեան դպրոցական շրջանի զլուխն է (Հոգաբարձու):

ՆԱԽԹԱԳՈՐԾՆԵՐԻ ԺՈՂՈՎ: 24 հոկտ. Բաքրում բացւեց նաւթագործների IX-րդ հերթական ժողովը, նախագահութեամբ Կովկասի հանքակին մասի կառավարիչ խոկական պետական խորհրդական Պ. Պ. Դեկուի, որ նշանակւած է ալդ պաշտօնին երկրագործութեան և պետական կալւածների մինիստրի կողմից:

† ԻՄԵՐԵՑԻՆԱԿԻՅ: 24-ն հոկտեմբերի վախճանւեց Պետերբուրգում պահծառակալ իշխան Նիկոլայ Կոստանտինովիչ Լմերետինսկիի: Հանգուցեալը թուն էր նմերեթիալի թագաւոր Դաւթի և որդին Նմերեթիալի թագաժառանդ Կոնստանտինի (որպէս բազունի է, նմերեթիան միացեց Ռուսաստանին՝ 1810 թւականին, երբ 1800 թ.-ին արդէն միացրած էր Վրաստանը): Հանգուցեալը ծնւած էր 1830 թւին, կրթւած էր Նորին Մեծութեան պամապին կորպուսում, ուստից նա մտաւ լէլք-գվարդիալի Պրէորութեանսկիի պոլկը: Հանգուցեալը վարել է ամենատիսակ և միշտ պատասխանատու պաշտօններ, սկսած զինուրական պետի օգնականից մինչ նահանգապետական պաշտօնը, 1886-ից նա հեռացաւ գործերից և գրեթէ ամբողջապէս նւիրեց իրան գրականութեանը, զինաւորապէս պատմական:

† ԳՐԻԳՈՐ ԽՃՄԻՐԵԱՆ, Հոկտեմբերի 28-ին վախճանւեց Թիֆլիսում իւր կեանքի 77-րդ տարում Գրիգոր Յովհաննիսեան Խղմիրեանց, Հանգուցեալը մէկն էր առաջիններից Թիֆլիսի բնիկների մէջ, որոնք ստացան համալսարանական ուսումն կուրսը աւարտելուց հետ Գր. Խղմիրեանը մտաւ ծառալութեան մէջ և 50 ական թւականներին առանձին լանձնարարութիւնների պաշտօնեալ էր Թիֆլիսի նախկին զինուրական նահանգապետի մօտ: Երբ բացւեցին նոր դատարանները, 60 ական թւականներին, նա մտաւ երգւեալ հաւատարմատարների դասակարգը: Հասարակական կեանքում հանգուցեալը լայտնի էր որպէս զինաւորներից մէկը հայոց մշտական թատրոնական բեմի հիմնադիրներ:

րից 60-ական թւականներին և մէկը ինքնավարութեան նախանձալինդիրներից Թիֆլիս քաղաքի համար, ուր նա մի ժամանակ քաղաքագլխի պաշտօնակատար էր, Գր. Խզմիրեանը, որ որոշ չափով ժողովրդականութիւն վաստակած ունէր, մինչ իւր կեանքի վերջը պահպանեց ջերմ հետաքրքրութիւն հակական հասարակական կեանքի համար, մասնակցելով ծխական ընտրութիւններին և ընտրելի հանդիսանալով իր թեկնածու երեխն աւա, երբեմն այն կուսակցութեան, բաց միշտ պահպանելով անկախ դիրք և զործելով խորին համոզմունքով, իւր ողու անկախութեան համար նա վերջին տարիներում երկու նշանաւոր ապացուցներ տեսց. մէկը՝ 1891 թւականին երդման խնդրում զատարանի մէջ, երբ, հրաժարւելով ընդունել նահանգական զատարանի նախագահի առաջարկը՝ ելույել ուղղափառ եկեղեցու քահանավի ճեռքով, չարուցեց նաև երդման նշանաւոր խնդիրը (տես «Մուրճ» 1891 № 9). Երկրորդ դէպքը նույն այս տարին էր, երբ ընտրւած վիճելով ծխական պատգամաւոր Զրկինենց եկեղեցում, իր թեկնածու «Նոր-Դար» «Արձագանք»-ի կուսակիցների, հրաժարւեց և բողոքեց կատարւած ընտրողական զեղծումների դէմ, որով և ընտրութիւնը բեկանել տախիցեց (տես «Մուրճ» 1894 թ. № 6, էջ 953—934), որի համար և լուլիսի 3-ի ընտրութիւններին վարձատրեց չառաջդիմականների պաշտպանութիւնով ու ընտրւեց ոչ որպէս կուսակից, այլ իրեն շխատ, անխարդախ մարդ:

† ԱՆՁՈՆ ՌՈՒԲԻՆԵՏԻՅՆ վախճանւելց նույներերի 8-ին Պետերբուրգում, 65 տարեկան հասակում, Անտօն Ռուբինշտէնը ժամանակիս նշանաւորագուն դաշնակահար վիրտուոզներիցն է, նշանաւոր երաժշտադէտ և լավոնի կոմպոզիտոր, Ծնունդով հրէալ էր Ռուսատանի Բերդիչև քաղաքից Ռուբինշտէնը դիրեկտոր է-Պետերբուրգի կոնսերւատորիալի Երաժշտական բարձր դըպք րոց։ Անազին է նորա նշանակութիւնը երաժշտական գործի Ռուսատանում ծաւալելու համար, Թաղումը կը կատարւի նորա ծննդեան որը, նոյ. 18-ին, Ալեքսանդրո-Նեւսկալայարանում, ուր թաղւած է նաև կոմպոզիտոր Չավկովսկին։

ՎՐԻՊԱԿՆԵՐ: «Մուրճ» № 7—8. պ. Վանցեանի չողւածում, Շնորհալուց քաղած տողերում՝ «Նովնայիս և որ զպիդ...» և այն նախադասութեան մէջ «խառնեալ» խօսքից իմտու բաց է թողւած տաւ բաւը։

Նոյն չողւածում, էջ 1085, «Արձագանք» ում տպւած չողւածի առիթով («Տիգրանակերտ և իր զիւղեր») «որ և է թեր-

թից երեխ արտատպւած» խօսքեր պէտք է լինէին փակագծերի մէջ իբր նկատողութիւն Խմբագրութեան:

«Մուրճ» № 9, էջ 1339, տող 9 ներքեմից տպւած է «քննուում է», ուղղել «շարունակում է»:

№ 9-ում: Դրախմանի «Աղջիկը մեռաւ և նրան թաղեցին» պատմւածքում սպրդել են հետեւեալ վրիպակները. էջ 1212 տող, 12 Վագակում (ուղղել՝ Վանդալում). 1213 տող 1 վրակի (վրակից). տող 2-3 Կարդալ՝ «նա սեփական խանութկ'ունենալու». տող 23, զբութիւնն (զբութեան). տող 28, էք (են). էջ 1215, տող 14, պէտք է լինի՝ «զրսից չները». էջ 1217, քերծ (քերծէ), տող 12, քորացած (քորաչած), էջ 1218 տող 1, դալխաներով (դալիաներով). էջ 1220, տող 19, դիակները (դիակակիրները), տող 24, պատորը (պաստորը). էջ 1221, տող 12, կողքի (կողքում):

«Ֆլամարիոնը Ժըննում» յօդւածի գլխագրերի մէջ սխալմամբ տպւած է «Ֆլամամարիոն»:


«Ներսիսեան դպրանոցի կազմը» յօդւածում էջ 1317—18 հիմնական դասատների բաժնում տպւած է՝ I, II և այն «բաժանմունք», ուղղել՝ «դասատնու»:

ՏԻՐԱԾ պետական կալւածական բանկի գրաւական թղթերի Յ-ն նուեմբ.

Սերիաների №.ներ	Տոմսերի №-ներ	Տարած գումար	Սերիաների №-ներ	Տոմսեր գումար
8593	34	200000	1618	50 1000
7623	49	75000	11920	36 1000
13217	23	40000	685	9
10422	45	25000	1187	22
12174	12	10000	12805	46
8404	17	10000	2832	24
6923	45	10000	13830	17
8366	22	8000	13895	27
8275	4	8000	4150	30
2897	38	8000	3279	36
13671	19	8000	14830	50
40	46	8000	5876	36
14404	4		4387	11
6347	40		6848	49
8458	44		11777	30
7466	22		3349	34
14121	46		9323	23
9991	36		6315	32
1702	15		14882	31
13147	33		6202	39
5000-ականն ուութ.			1,000 ո. իւրաքանչիւր	

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԴՐ-ՔԵՐ

- 1) ՏՈՂԴԻ, դր.—«Մեղքի զղջումն», մանուկների ընթերցանութեան համար։ Թարգմ. Խորեն քան. Խամզաղեանի, Տպ. Մալր Ա. թոռու; Ս. Եջ-մլածնի, 1894 թ., գինն է 5 կոպէկ.
- 2) ԳՐԱՑՈՒՑԱԿ Նո 1 Կովկասի Հայոց Բարեկ. ընկերութեան գրադարանի Շուշի քաղաքում։ Նուշի, տպար. Հայոց Հոգեոր Տեսչութեան 1894 թ., գինն է 15 կոպէկ.
- 3) ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ, բարձրագուն հաստատւած 11 ն լունիսի 1892 թ. թարգմանեց Վահան Գ. Նազարեանց (ոչ պաշտօնական հրատարակութիւն)։ Թիֆլիս, տպ. Յովհ. Մարտիրոսեանցի, 1894 թ., գինն է 40 կոպէկ.
- 4) ՀԱՐՏՄԱՆ, Մորից.—«Շիլիոնի կալանաւորլու»։ Թարգմ. Կ. Գիւլնազարեանցի, Հրատ. Թիֆլ. Հ. Հ. Յնկեր. Թիֆլիս, տպ. Շարաձէի, գինն է 60 կոպէկ.
- 5) ԽԱՏԻՍԵԱՆ, Մ.—«Փեսակ որսողներ»։ Վէսլ, Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1894 թ., գինն է 50 կոպէկ.
- 6) ՇԵՐՍՊԻՐ.—«Համլէտ» թարգման. Յովհաննէս Խան Մասէհեանի։ Հր. Թիֆլ. Հրատ. Յնկ. Թիֆլիս, 1894 թ., գինն է 75 կոպէկ.



„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ է

Տարեկան գինն է 10 ռ.

Ուսուցիչների և ուսանողների համար 8 ռ.

Վճարել կարելի է նաև մաս-մաս, ակզբում 5 .(կամ 4) ռուբլի,
մնացեալը լրացնելով մինչ յունիսի վերջը:

Բաժանորդագրութեան համար զիմել՝

ԽՄԲԱԳՐԱՑՈՒՆԸ Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“